

Ա. Ա. ԲՈԶՈՅԱՆ

ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆ ԴԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԻ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
(1165-1178 թթ.)

ԵՐԵՎԱՆ 1995

Սույն գրքի տպագրական ծախսերը հոգացել է
Ամերիկայի Հայաստանյայց եկեղեցու Արևելյան թեմի
ԶԳՕՆ ԵՊՍ. ՏԷՐ ՅԱԿՈԲԵԱՆ
Հիմնադրամը

Գիրքը նվիրում եմ
հարապատներիս՝
ԵՐՎԱՆԴ և ՀԱՅԿ
ՍԵՂՈՍԿԱՆՆԵՐԻ
հիշատակին

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

Azat A.Bozoian

DOCUMENTS ON THE ARMENIAN-BYZANTINE
ECCLESIASTICAL NEGOTIATIONS

(1165 - 1178)

"GITOUTIOUN" PRESS
YEREVAN

1995

281.6 (091)

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**



Ա.Ա.ԲՈՁՈՅԱՆ

**ՀԱՅ-ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԱԿԱՆ
ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ
(1165 - 1178 թթ.)**

A II
83818



**«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1995**

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր., պրոֆ.

Պ.Մ.Մուրադյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
փիլիսոփայական գիտությունների դոկտոր **Կ.Ա.Միրուսյան**
պատմական գիտությունների թեկնածու **Պ.Ա.Չոքանյան**

Բողոյան, Ա.Ա.

Բ-802 **Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վա-
կերագրերը (1165-1178) / Պատ. խմբ.՝ Պ.Մ.Մուրադյան. - Եր.:
ՀՀ ԳԱԱ հրատ., 1995. - 256 էջ:**

Հետազոտության մեջ ուսումնասիրվում են Հայ-բյուզանդական բանակցու-
թյունների մի խումբ փաստաթղթեր, որոնք նկարագրվում են, թվագրվում և ենթարկվում
մանրակրկիտ վավերագրագիտական և պատմաբանասիրական քննություն: Այստեղ
սկզբնաղբյուրների թույլ տված Հնարավորությունների սահմաններում Հետազոտու-
թյան են ենթարկվում Կոստանդնուպոլսի կայսերական և պատրիարքական ու Հոռոմկլայի
Հայոց կաթողիկոսարանի նոտարատների պրոնունցիությունը և աշխատանքի սկզբունք-
ները: Աշխատանքում բնութագրվում են նաև Հայ-բյուզանդական եկեղեցական փոխ-
Հարաբերությունների վավերագրերի ժողովածուները, ճշգրտվում է բանակցություննե-
րին մասնակցած եկեղեցական և աշխարհիկ պործիչների ինքնությունը, բացահայտվում
են նրանց դիրքորոշման Հասարակական, քաղաքական ու Հոդեոթ-եկեղեցական զըր-
դապատճառները: Հայ-բյուզանդական բանակցությունները քննարկվում են Մերձավոր
Արևելքի և Բալկանների այդ ժամանակաշրջանի քաղաքական պատմության ետնախոր-
քի վրա: Վավերագրերի և պատմական մյուս սկզբնաղբյուրների ընձեռած նյութի Հի-
ման վրա ցույց են տրվում եկեղեցական բանակցությունների քաղաքական շարժա-
սիթները այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Կիլիկիայում զրվում էին Հայոց անկախ
պետականության Հիմքերը:

Գիրքը Հասցեագրված է Հայազեռներին, բյուզանդազեռներին և Մերձավոր
Արևելքի պատմությանը ու զբաղվող մշակույթով Հետաքրքրվող ընթերցող լայն շրջան-
ներին:

0503020913

Բ _____ 29-91

ԳՄԴ 63.3(2Հ)4+63.3(0)4

703(02)-95

ISBN 5-8080-0238-9

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1995 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան վավերագրերի նկարագրության և հետազոտության ասպարեզում հայագիտությանը չունի էական ձեռքբերումներ, մինչդեռ այդ բնագավառի բացը լրացնող աշխատությունների երևան դալը կարող է նոր լիցք հաղորդել հայոց միջնադարյան փաստաթղթերի ուսումնասիրությանը և անփոխարինելի նյութ տրամադրել պատմագրությանը, բանասիրությանը, բնագրագիտությանը և հնագրագիտությանը: Առանց վավերագրագիտության (diplomatica) հնարավոր չէ հասկանալ միջնադարյան նոտարատների աշխատանքը, դարաշրջանի քաղաքական և հասարակական փոխհարաբերությունների նշանաբանությունը բացահայտող միջնադարում գործած բանաձևային համակարգերը:

Հայոց մատենագրությունն իր սկզբնավորման օրից ծանոթ է թուղթ-ուղերձի դրատեսակին՝ նոր կտակարանում տեղ դառած նամակաների թարգմանություններով: Սակայն դա չի նշանակում, թե մեզանում այդ գրատեսակը սկսում է կիրառվել հենց այդ ժամանակներից (այն է Ե դարից): Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի և հետագայի մյուս մատենագիրների ու հատկապես պատմիչների երկերում հաճախ բերվում են թղթեր, որոնք վերագրվում են մեր հեթանոս ու քրիստոնյա թագավորներին, աշխարհիկ ու հոգևոր գործիչներին¹: Սըրանք ինքնատիպ վավերագրեր են և հայագիտության խնդիրներից մեկը պետք է համարել դրանց վավերականության աստիճանի ճշտումն ու օգտագործված բանաձևային համակարգերի համապարփակ, պատմաբանասիրական և վավերագրագիտական ուսումնասիրությունը:

1

Այդ վավերագրերին առաջին անգամ ուշադրություն է դարձրել և արժեքավորել է ֆրանսիացի հայագետ Վիկտոր Լանգլուան: Նա է քիչ թե շատ համակարգված մտտեցում ցուցաբերել հին Հայաստանի նոտարատների գործունեությանը (տե՛ս Langlois, Le trésor, p. 1-4):

Ե դարից սկսած Հայալեզու մատենագրությանը Հայտնի են «Թուղթ» նշանակությամբ բազմաբնույթ վավերագրեր, որոնք երբեմն կրում են նաև նամակ, կոնդակ, Հրովարտակ, կանոն, շրջաբերական Թուղթ (կամ նամակ), ուղերձ, տոմար, մատյան և այլ անուններ: Հայագրիտության առաջին կանոններից մեկն է նմանատիպ փաստաթղթերի նկարագրությունը, դասակարգումն ու քննությունը, որը կարող է նոր ուղիներ մատնանշել պատմության օժանդակ բնագավառների՝ վավերագրագրիտության, տոմարագրիտության, միջնադարում Հասարակական մտքի Հետազոտության ասպարեզում:

Հայ միջնադարյան վավերագրի ուսումնասիրությունը՝ վավերագրագրիտությունը մեզանում դեռևս չի ձևավորվել², սակայն նյութի առատությունն ու բազմազանությունը հույս են ներշնչում, որ ուսումնասիրությունը խոստումնալի կարող է լինել: Ամբողջական թղթերի, վավերագրերում կանոնական դարձած թվագրման Համակարգերի, թղթառաջների³ ու թղթավարտների Համեմատական Հետազոտությունն անգնահատելի նյութ կարող է մատուցել Հին Հայաստանի քաղաքական և տնտեսական պատմության, առանձին նոտարական գրասենյակներում աշխատանքի կազմակերպման, միջնադարում աշխարհիկ և եկեղեցական դիվանագիտական գործունեության ու միջնադարյան փոխհարաբերությունների, Հայոց եկեղեցու որդեգրած ծեսերի և դավանաբանության ուսումնասիրության Համար: Այդ իսկ պատճառով Հայագրիտության զարգացման ժամանակակից փուլում առաջնահերթ նշանակություն ունի թուղթ-ուղերձների գիտական բնագրերի կազմումն ու վավերագրերի մանրակրկիտ ձևաբանական և պատմաաղբյուրագիտական Հետազոտությունը: Այդ աշխատանքին պիտի Հաջորդեն փաստաթղթերի գիտական լիակատար նկարագրություն-ցանկերի (Regeste) պատրաստումը՝ խիստ ժամանակագրական Հերթականությամբ, ինչպես այդ կատարվում է արդի բյուզանդագիտության և եվրոպական միջնադարագրիտության բնագավառում: Հետևելով այդ ավանդներին, սույն մենագրության մեջ փորձել ենք մշակել Հայոց միջնադարյան վավերագրի Հետազոտության և նկարա-

2 Իհարկե Ռուսական առաջնորդ կա Մատենադարանում պահպանվող հայալեզու և պարսկալեզու կալվածագրերի (Արրահանդան, Կալվածագրեր, Փարիզյան, Կալվածագրեր) և պարսկերեն հրովարտակների հրատարակության (Папазян, Указы) և ուսումնասիրության բնագավառում:

3 Ուշ միջնադարյան գրառաքների գրականագիտական որոշ խնդիրների անդրադարձել է Ա.Գ.Դյուրխանյանը (Տե՛ս Դյուրխանյան, «Գրառաքները», էջ 66-74):

զըրման համապատասխան մոտեցումներ և սկզբունքներ, որոնց կարիքը վաղուց ի վեր զգուս էր հայագիտությունը:

Թղթերի ժանրի զարգացումը պետք է պարբերացնել մեզ հասած նյութով, ինչպես նաև թղթառաջներում և թղթավերջերում դրերի ընթացքում կատարվող բանաձևային համակարգերի օրինաչափ փոփոխություններով: Մեծ կարևորություն է ստանում թղթերի տեսական բաժանումը վավերադրերի և համապատասխանաբար՝ գրական երկերի: Թեև միջնադարյան գրական գործունեությունից այս երկու բնագավառներն էլ հայագիտական ժառանգություն անքակտելի մասն են, այնուամենայնիվ՝ թղթերի վավերագրատական ուսումնասիրությունն իր առջև առաջին հերթին խնդիր է դնում, որպես օժանդակ գիտաճյուղ ծառայել պատմագիտության և պատմագրության կարիքներին:

Մեզանում թղթագրական ժանրի զարգացման առաջին փուլը կապված է Արտաշիսյան և Արշակունի⁴ թագավորների դիվանատներում ձևավորված փաստաթղթի տեսակների հետ, որոնցից միայն հատուկենտ նմուշներ են մեզ հասել անտիկ հեղինակների և Ե դարի Հայոց պատմիչների աշխատություններում: Դրանցից շատերի վավերականությունը հարցը դեռևս խնդրո առարկա է: Այնուամենայնիվ, զբրանք հետաքրքիր են այդ գրական տեսակի ուսումնասիրության համար, քանի որ պատճենում են հիշյալ ժամանակաշրջաններում հունական և հռոմեական մատենագրություններում տարածված ուղերձի հիմնական տեսակների բանաձևերը, որոնք գրված են նույն սկզբունքներով, ինչ պահանջում էին այդ ժանրի հունալատինական դասագրքերը⁵: Համեմատությունը ցույց է տալիս, որ զբանց բանաձևային համակարգերը կրկնում են Մերձավոր Արևելքի հելլենիստական նոտարատներում շրջանառության մեջ գրված կաղապարները⁶:

Հայ մատենագրության մեջ թուղթ-ուղերձի զարգացման երկրորդ փուլն անկասկած կապվում է առաքելական և սուրբ հայրերի թողած նամակագրական ժառանգության Հայաստան մուտք գործելու

4 Արտաշիսյան և Արշակունյաց Հայաստանում արքունական դիվանատան որոշ սկզբունքների մասին հետաքրքիր են Գ.Խ.Սարգսյանի դիտարկումները (տե՛ս ՀԺՊ, հտ. Ա, էջ 537, 683-686):

5 Տե՛ս Hunger, Die hochsprachliche, S. 203-207, Сметанин, Эпистолагафия, с. 35-41:

6 Ե դարի հայ մատենագրությանը հայտնի թղթերի գրական տեսակի ուսումնասիրության հարցերին, միջնադարյան պատմագրության և նամակի ժանրի սերտագնաց խնդիրներին, թղթի ժանրային առանձնատեսակություններին անդրադարձել է Ա.Վ.Ալեքսանյանը (տե՛ս Ալեքսանյան, Պաշտոնական, էջ 127 - 138):

և թարգմանվելու փաստի հետ: Սրանց թղթառաջքային և թղթա-
վարտային բանաձևերը ինչպես և այլ քրիստոնեական մատենագրու-
թյուններում և պաշտոնական նոտարատներում, երկար ժամանակ կի-
րառվեցին նաև մեզանում, իսկ մի շարք բանաձևային տարրեր օգտա-
գործվում են նաև այժմ՝ կաթողիկոսական դիվանից ելած վավերագրե-
րում: Ե դարի երկրորդ կեսից Հայոց եկեղեցին աստիճանաբար տարո-
րոշվեց և՛ արևմտյան, և՛ արևելյան քրիստոնեությունից, իսկ Զ դարում
պատմության ընթացքի բերումով ստեղծվեց թղթագրական ժանրի մի
նոր տեսակ՝ ծիսագավանական կամ հակաճառական թուղթը, որի նոր-
մերով գրված վավերագրերը Հայոց եկեղեցին պարբերաբար փոխանա-
կում էր բյուզանդական, վրացական և ասորական եկեղեցիների հետ՝
ծիսագավանական վեճերի ընթացքում: Թղթագրական այս տեսակը
երբեմն օգտագործվում էր նաև Հայոց եկեղեցու շրջանակներում, իսկ
հաճախ՝ քաղկեդոնականություն ընդունած հայերի հետ դավանական
վեճերի ժամանակ:

Թ դարում պատմական Հայաստանի տարածքի վրա ձևավոր-
վում է Բագրատունիների թագավորությունը, որն Արծրունյաց, Սյունի-
յաց և այլ քաղաքական և վարչական կազմավորումների հետ միասին
ստեղծեց նաև սեփական պաշտոնական նոտարատներ: Այս հաստա-
տություններից դուրս են եկել բազմաթիվ փաստաթղթեր, որոնց մի-
այն մի մասն է մեզ հասել: Դրանց համապարփակ հետազոտությունը
կնշանակեի Հայկական վավերագրիտության մի ամբողջ ժամանակա-
հատվածի ուսումնասիրություն: Պակաս հետաքրքիր չի լինի այդ շըր-
ջանում գործող կաթողիկոսական դիվանատան գործունեության, ինչ-
պես նաև՝ արդեն առանձնացած մի շարք վանական կենտրոններում
ստեղծված վավերագրագրիտական ժառանգության ուսումնասիրու-
թյունը, մանավանդ, որ դեռևս անհայտներով են ծածկված այդ և
նախորդ դարաշրջանների կաթողիկոսական, եպիսկոպոսական և վա-
նական նոտարատների գործունեության առանձնահատկությունները:

Նոր ու թարմ միտումներ են ձևավորվում Հայկական վավերա-
գրի ու թղթագրական ժանրի զարգացման մեջ ԺԲ դարում: Կիսելով
սեփական ժողովրդի ճակատագիրը, Հայոց կաթողիկոսարանը փոխա-
գրելով է տարազգի ժողովուրդներով բնակեցված մի տարածաշրջան,
ուր նոր քաղաքական հողի վրա է գրվում նաև կաթողիկոսական դի-
վանատան գործունեությունը: Պաշտոնական հարաբերություններ են
հաստատվում Բյուզանդիայի, Արևելքի խաչակիրների, Հռոմի և Արև-
ելքի կաթողիկ հոգևոր պետերի, Եվրոպայի թագավորների, Արևելքի
մուսուլմանական իշխանավորների և քրիստոնեական համայնքների

Հետ: Ծիսադավանական թուղթ-վավերագրի զարգացման այս փուլում թղթի գրական տեսակը մեզանում հասավ իր զարգացման բարձրակետին:

1198 թ. Կիլիկիայի տարածքի վրա Հայոց նոր թագավորութան ստեղծումով, իսկ ԺԳ դարի վերջին Հայոց կաթողիկոսարանի Միս տեղափոխվելուց հետո, ստեղծվեցին պետութայնը և կաթողիկոսարանին կից դպրատուն-նոտարատներ, որոնք մշակում էին վավերագրերի ու թղթերի կազմման նոր բանաձևեր: Թագավորական նոտարատներում փաստաթղթեր էին տրվում նաև լատիներեն և հին ֆրանսերեն լեզուներով: Այդ գրասենյակներում ստեղծված վավերագրերն իրենց արձագանքն են գտել բազմաթիվ ձեռագրերում ընդօրինակված թղթառաջներին և թղթավարտների բանաձևերի ժողովածուներում: Մեր կարծիքով թղթի զարգացման այս փուլը շարունակվում է մինչև 1444 թ., երբ էջմիածին տեղափոխվելով, Հայոց կաթողիկոսարանը ստեղծում է նոր դպրատուն և ժամանակաշրջանի քաղաքական պայմաններին համակերպվելով, կազմակերպում է նախորդից որոշակիորեն տարբեր ձեռագիր ունեցող նոտարատուն:

Թուղթ-ուղերձի զարգացման հաջորդ փուլը կապվում է ուշ միջնադարում (ԺԵ-ԺԸ դդ.) Հայոց կաթողիկոսական դիվանատան, առանձին վանական հաստատությունների և աշխարհով մեկ սփռված բազմաթիվ երեւելի անհատների ու հայկական դաղթօջախներից մեզ հասած ժառանգութայն հետ: Եվրոպայում հասարակական նոր հարաբերությունների զարգացումը և փոստային ծառայութայն բարելավումը խթանեց նաև մեզ հետաքրքրող ժանրի զարգացումը: Նոր էական ու կառուցվածքային փոփոխություններ կատարվեցին ոչ միայն վավերագրերի բանաձևային կառուցվածքում, այլև աննկատելիորեն փոխվեց նաև թուղթ-նամակի դերը⁷: Հասարակական կյանքում տեղի ունեցած հետագա փոփոխություններն իրենց ազդեցությունն են թողել նաև հայկական վավերագրի զարգացման միտումների վրա:

Մեզանում, ինչպես ասվեց, դեռևս փորձ չի կատարվել համակողմանիորեն ուսումնասիրել տարբեր նոտարատներից դուրս եկած վավերագրերը և համադրման միջոցով պարզել յուրաքանչյուրի կողմից փաստաթղթերի և հատկապես թուղթ-ուղերձի կազմման սկզբունքներն ու առանձնահատկությունները: Հայկական վավերագրա-

7 Այս առումով ուշագրավ են Գյուտ քահանա Աղանյանցի «Դիվան Հայոց պատմութեան» (Ա-ԺԲ, Թիֆլիս 1893-1915) շարքի հատորները, որոնք ընդգրկում են այդ ժամանակաշրջանի վավերագրերը: Ընդհատված այս հրատարակության բացերը լրացնելու միտում ունի սկսված նոր շարքը, որի հրատարակիչն է Վարդան Գրիգորյանը:

դիտութեան համար կարևոր է նաև ընդհանրապես մեզ հասած բոլոր թղթառաջը-թղթավարտների ուսումնասիրութեանը, որը կարող է նոր խթան հանդիսանալ այդ ժանրի բոլոր հիմնական բնագրերի դիտական հրատարակման և հետազոտութեան համար:

Ներկա ուսումնասիրութեան մեջ առաջին անգամ փորձ է կատարված ներկայացնել միջնադարյան հայկական և բյուզանդական նոտարատներում ստեղծված կամ պահպանված վավերագրերի տեսակներից միայն մի քանիսը (այն էլ ժամանակագրական խիստ սահմանափակ դարաշրջանում)⁸ կաթողիկոսական, կայսերական և պատրիարքական թղթերը: Ավելի ճիշտ՝ 1165-1178 թթ. հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցութեանների ընթացքում Հայոց կաթողիկոսների փոխանակած (բյուզանդական կայսր Մանուել Ա Կոմնենոսին և պատրիարք Միքայել Գ Անքիալոսին առաքված և Հռոմիլլայում նրանցից ստացված) վավերագրերը: Մեր նպատակն է այդ փաստաթղթերի կառուցվածքային ուսումնասիրութեան արդյունքները, թե այս աշխատանքում և թե հետագայում, ծառայեցնել ԺԲ դարի Բ կեսի միջադաշին փոխհարաբերութեանների ոլորտում Հայոց կաթողիկոսարանի տեղը, դերն ու կշիռը որոշելու խնդրին: Նշված ժամանակաշրջանում հայերեն և հունարեն լեզուներով գրված ու պահպանված վավերագրադիտական նյութի առատութեանն ու համապարփակութեանը թույլ են տալիս ընդհանուր պատկերացում կազմել Հռոմիլլայի կաթողիկոսական դիվանի, Կոստանդնուպոլսի պատրիարքական և կայսերական գրասենյակների, իսկ հետագայում՝ Հռոմի պապական և հակոբեկասորական եկեղեցու նոտարական դիվաններում վավերագրեր գրելու ավանդների և փաստաթղթի կազմման և մշակման սկզբունքների մասին⁸: Այս խնդիրներին են նվիրված մենագրութեան առաջին և մասամբ երկրորդ մասերը:

8 Կոստանդնուպոլսի կայսերական և պատրիարքական նոտարատների գործունեությունը քավակամ լուրջ ըմբռնությամբ է եմբարկվել Ի դարի ընթացքում: Բյուզանդիայի կայսերական նոտարատան աշխատանքներին մվիրված հիմնական աշխատությունները պատկանում են գերմանացի գիտնական Ֆրանց Դյուլգերին և հույն բյուզանդագետ Հովհաննես Կարայանոպոլոսին. *Dölger-Karavannopoulos, Byzantinische, Dölger, Regesten*: Այստեղ օգտագործվում է վերջին գրքի միայն երկրորդ պրակը, որը հրատարակվել է 1925 թ., (*Dölger, Zur Form*, S. 83-90): Նշանավոր բյուզանդագետի վավերագրագիտությանը մվիրված մնացած հիմնարար աշխատանքները հավաքված են մեկ հատորում (տե՛ս *Dölger, Diplomantik*):

Պատրիարքական վավերագրերի ուսումնասիրության համար օգտագործվել է Վ. Գրյունեյի վավերագրերի նկարագրության երկրորդ հրատարակություն, երկրորդ և երրորդ միացյալ պրակը (տե՛ս *Grumel-Darrouzès*): Այդ բնագավառի վերջին տարիներից լույս տեսած ուսումնասիրություններից ուշագրավ է *Mazal, Prooimien*:

Բյուզանդական կայսրութիւնը ժԲ դարի ընթացքում և մասնավանդ Մանուել Ա Կոմնենոսի իշխանութեան տարիներին, ելնելով կայսրութեան արտաքին-քաղաքական նպատակներից, բազմիցս փորձում է սերտ դիվանագիտական փոխհարաբերութիւններ հաստատել Հռոմի պապական եկեղեցու, Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի և ասորիների հակօրինկյան պատրիարքարանի հետ: 1171 թ., Կոստանդնուպոլսի Միքայել Գ Անքիալոս պատրիարքի օրոք, հրավիրվել է Հռոմի և բյուզանդական-օրթոդոքս եկեղեցիների միավորման անհրաժեշտութիւնը հաստատող կղերական ժողով⁹: Սակայն և՛ Հռոմը, և՛ Կոստանդնուպոլիսը ժամանակի ընթացքում դավանանքով ու ծեսով այնքան էին հեռացել միմյանցից, որ ծիսադավանական այս տարբերութիւններին էլ դումարվելով քաղաքական հակամարտութիւնը, եկեղեցական միութեան հարցը դրական լուծում չէր կարող ստանալ, քանի որ երկու եկեղեցական կազմակերպութիւններին հուզող հիմնական հարցը մնում էր գերագահութեան խնդիրը¹⁰: Բյուզանդական կայսրութեան և Հռոմի պապական եկեղեցու միջև ժԲ դարի 60 - 70-ական թթ. բանակցութիւնների քաղաքական շարժառիթը Գերմանական կայսր Ֆրիդրիխ Բարբարոսայի Իտալական պատերազմն էր, որը Բյուզանդական կայսրութիւնը և Հռոմի պապութիւնը ակամա դաշնակիցներ էր դարձրել Գերմանական կայսրութեան դեմ պայքարում¹¹:

Եվրաստանի դավառի անառիկ ամրոց Հռոմկլայում հաստատված Հայոց կաթողիկոսարանը ժԲ դարի 50-ական թվականներից Հալեպի աթարեկութեանը ստորակա առանձին քաղաքական միավոր էր և տիրում էր կաթողիկոսանիստ բերդաքաղաքին ու նրա շրջակայքին: Երբեմն, նորընտիր կաթողիկոսն աթոռին տիրում էր գերակա Հալեպի աթարեկութեան միջնորդութեամբ¹², սակայն այս հանգամանքը չէր խանգարում, որ ժԲ դարի 60 - 70-ական թթ. Հայոց եկեղեցին փորձեր մտնել եկեղեցական հարաբերութիւններին միջազգային ոլորտ, բա-

9 Beck, Kirche, S. 58.

10 Այդ մասին տե՛ս Spiteris, La Critica, p. 3-24:

11 Տե՛ս Chalandon, Les Comnènes, t. II, p. 563-570, 653-654.

12 Գրիգոր Գ Տղայի կաթողիկոս ձեռնադրվելու իրադարձությունների մասին Միքայել Ասորի հակօրինկ ասորական պատրիարքի հաղորդումը Հռոմկլայի կաթողիկոսարանի հանդէպ Հալեպի արքեպիսկոպոսի գերակայութեան փաստարկ է (տե՛ս M.S., t. III, p. 353-354, հմմտ. նաև Մ.Ա., 1871 էջ 472): Ասորի պատմիչի վկայութեամբ «Մլխեն էառ գնա (Գրիգոր Գ Տղային-Ա.Բ.) և տարա առ Նորադինն, և նորին օգնակաւորեամբն եմոյժ գնա ի Հռոմկլայն. և նստալ յայտապետութեան փորեթորն» Գրիգոր անուն: Հայ մատենագրութեան մեջ այս վկայությունը կրկնվում է ևս երկու անգամ. ժԳ դարի ժամանակագիր Ստեփանոս եպիսկոպոսի և ԺԷ դարի մատենագիր Դավիթ Բաղիշեցու մոտ (տե՛ս Մամր ժամանակագրութիւններ, հտ. I, էջ 35, հտ. II, էջ 342):

նակցութիւններ վարեր բյուզանդական, պապական և Հակոբիկյան եկեղեցիների առաջնորդների հետ:

Հայոց կաթողիկոսարանը մեզ հետաքրքրող պատմաշրջանում հայերին միավորող միակ Համազգային իրավական կաղմակերպութիւնն էր, այն փաստորեն կառավարման մի շարք լծակներ պահպանած Հաստատութիւնն էր պետականութիւնը կորցրած ժողովրդի համար: Կաթողիկոսարանը վեր էր կանգնած Կիլիկիայում և այլուր իշխանութիւն Հասած բոլոր Հայկական իշխանական տներից և երբեմն միջնորդ դատավորի դեր էր ստանձնում՝ միմյանց դեմ կռիւղ Հայ իշխանների միջև բորբոքված երկպառակոտչական պատերազմները դադարեցնելու մտահոգութիւնով: Հռոմկլայի իշխան Հայոց կաթողիկոսը միաժամանակ դերազահ դիրք ուներ Հայքնիքում և նրանից դուրս գտնվող բոլոր Հայկական իշխանութիւնների նկատմամբ: Նրա իշխանութիւն մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ կաթողիկոսարանի ազդեցութիւնը տարածվում էր Հայազգի բոլոր հավատացյալներին վրա. «որք յարեւելս՝ ի սեփական աշխարհս Հայաստանեայց բնակեալք, և որք յարեւմտեան կողմանս սահեալք նշդհհհհհհհհհ, և որք ի Միջերկրայս՝ ի մէջ ալլալեզու ազանց տարաբերեալք»¹³: Հայաստանում և Հայաբնակ շրջաններում Հայոց եկեղեցու և կաթողիկոսարանի միջոցով էին լուծվում Հայ ազգաբնակչութիւն և օտարազգի իշխանութիւնների միջև ծագած վարչական, տնտեսական և նույնիսկ քաղաքական հարցերը¹⁴: Հռոմկլայի կաթողիկոսարանի հոգածութիւն առարկան էին նաև Համազգային հոգևոր և մշակութային խնդիրները:

Ի Հակակչիս սելջուկ-թուրքերի ռազմարշավների հետևանքով կորցրած տարածքներին, բյուզանդական պետական կառույցները շարունակում էին հարատեւել Կիլիկիայում և Կիպրոսում: Կայսրութիւնը ԺԲ դարի առաջին կեսին, մինչև 1176 թ. Միրիոկեֆալոնի ճակատամարտում¹⁵ Իկոնիայի սուլթանութիւնն ղեկավարում էր ռազմարշավներ կաղմակերպել Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք: Մերձավոր Արևելքի այս հատվածում (նկատի ունենք Կիլիկիայի, Կիպրոսի, Միջերկրական ծովի ափամերձ լատինական իշխանութիւնների տարածքը) ստեղծվել էր Բյուզանդա-

13 Տե՛ս ԹԸ, 1871, էջ 1: Հիմնականում օգտագործել ենք այս հրատարակությունը, մյուսներից օգտվելու դեպքում նշում ենք թվականը:

14 Այդ մասին է վկայում օրինակ Բարսեղ Ա. կաթողիկոսի այցը սելջուկյան սուլթան Մելիք Օսմին (տե՛ս Մատթեոս, էջ 240, Մատթեոս, էջ 117):

15 Միրիոկեֆալոնի ճակատամարտի և Բյուզանդական կայսրության պատմության մեջ այդ իրադարձության նշանակության մասին տե՛ս Lilie, Die Schlacht, p. 257-275.

կան կայսրութեան գերակայութիւնն ընդունող իշխանութիւնները բավական լայն մի ցանց, որն իբրև կանոն գործում էր Տարսոնում նըստող բյուզանդական զինվորական հրամանատարի Հետ դաշնակցած¹⁶: Այս առումով կարելի է մասնագետների ուշադրութիւնը հրավիրել Կիլիկիայում գործող Լամբրոնյան, Նաթանայելյան և այլ իշխանական տների բյուզանդամետ ձգտումների վրա: Նրանց քաղաքական թևին պատկանող մյուս Հայ իշխանական տների մասին Հետաքրքիր տեղեկութիւններ են պահպանել Հայկական պատմական սկզբնաղբյուրները¹⁷:

Մանուէլ Ա Կոմնենոս կայսրը 1158 - 1159 թթ. Կիլիկիայի վրայով Հյուսիսային Ասորիք կատարած ռազմարշավի ժամանակ կարողացավ ստորակայական կախման մեջ դնել անկախութեան ձգտող Թորոս Բ Ռուբինյանին, նրան տալով սևաստոսի պատվանուն: Բյուզանդական կայսրութիւնից Ռուբինյան իշխանութեան կախվածութեան մասին Հետաքրքիր վկայութիւններ են պահպանել բյուզանդական պատմիչներ Հովհաննես Կիննամոսը¹⁸, Նիկետաս Խոնիատեսը¹⁹, կիլիկիայն Հայաստանի ժամանակագիր Սմբատ Սպարապետը²⁰ և «Պատճառ խնդրոյ միարանութեան» (այսուհետև՝ ՊԽՄ)²¹ վավերագրերի ժողովածուն: Սակայն Ռուբինյան իշխանական տունը Թորոս Բ-ի ղեկավարութեամբ ԺԲ դարի 60-ական թվականներին էլ շարունակում է Կիլիկիայում զլխավորել Հակաբյուզանդական քաղաքական թևը, որի ծրագրերը և փայփայած հույսերը Համահունչ էին ժամանակի պատմական կացութեանը: ԺԲ դարի 60-70-ական թվականներին

16 Այդ մասին տե՛ս Բոգոսլան, Բյուզանդիայի, էջ 190-216:

17 Նշենք այդ իշխաններից միայն ոմանց անունները. ա) պարոն Սմբատ՝ տեր Պապեռոնցի, բ) պարոն Վասիլ՝ տեր Բարձրաբերդի, գ) պարոն Տերին, դ) պարոն Տիգրան (տե՛ս Ամրատ, 1859, էջ 83): ԺԳ դարի հայ ժամանակագիրներից մեկը բյուզանդական գերակայությունը ընդունած տոհմերին կոչում է. «զԱյլակառնան, գՆաթանեղեանան, գտեարսն Ասկոտայ...» (Ալիշան, Հայաստան, էջ 345): Սմբատի վեներելիյան ձեռագրում հիշատակված Տիգրանը կոչվում է. «գտերն Պականու զՏիգրանն» (Ամրատ, 1956, էջ 171): Պետք է նաև նշել, որ Պապեռոնցի տեր Սմբատը Լամբրոնցի տեր Օշինցի եղբայրն է (Ամրատ, 1956, էջ 187): Կիլիկիայում, Կապադովկիայում և Հյուսիսային Ասորիքում ԺԱ դարի երկրորդ կեսին ստեղծված ու մինչև ԺԲ դարի կեսերը գոյատևած հայկական իշխանությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Dédéyan, Les Pouvoires, հմմտ. նաև Բասուցի, Կիլիկիայի, էջ 17 և հտև.:

18 ԼԸ, p. 186.

19 ՆՇ, p. 102-103.

20 Սմբատի Տարեգրքի ընդարձակ տարբերակում այս ռազմարշավը թվագրված է 1159 թ. (տե՛ս Ամրատ, 1956, էջ 177-178): Այս իրադարձության մասին տե՛ս նաև Մատթեոս, էջ 417-419:

21 ԹԸ, 1871, էջ 86:

Բյուզանդական կայսրության նվաճողական միտումները Կիլիկիայում աներկբա էին, քանի որ չէին դադարում բյուզանդական զորահրամանատարների հետ դաշնակցած հունամետ կողմի և Ռուբինյան իշխանության միջև բորբոքվող ռազմական բախումները: Նման ընդհարումները թույլ չտալու միտումով էր, որ 1165 թ. Կիլիկիայի զորահրամանատար նշանակված Ալեքս Աքսուխը և Գրիգոր Գ կաթողիկոսի եղբայր Ներսես Շնորհալին բանակցություններ են սկսում եկեղեցական միության խնդրի շուրջ: Սկսված երկխոսությունը շարունակվեց մինչև 1178 թ.: Այդ ընթացքում Բյուզանդական կայսրությունը փորձում է Հայոց կաթողիկոսարանի վզին փաթաթել եկեղեցական միության մի այնպիսի ծրագիր, որը Հայոց կաթողիկոսական աթոռը կախման մեջ կդնեի Կոստանդնուպոլսի պատրիարքությունից²²: 1165-1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցական միությանը վերաբերող վավերագրերում բյուզանդական կայսրը և Կոստանդնուպոլսի պատրիարքը Հայերի հետ վարվող բանակցությունները և եկեղեցական միության խնդիրը երբեք չեն փորձում կապել Հռոմի պապության հետ կայսրության վարած դիվանագիտական փոխհարաբերությունների հետ: Սակայն հակառակ միտումն է նկատվում Ներսես Շնորհալու թղթերից մեկում, որը 1165 թ. Սմբատ ներքինու Հռոմիկա բերած նամակի պատասխանն է: Հռոմի և Կոստանդնուպոլսի եկեղեցական հարաբերությունների նկատմամբ կաթողիկոսի շահագրգռությունն ակնհայտ է. «Նա զի և լուաք՝ թէ Հայրապետն Հռովմայ և փոխանորդն Պետրոսի առաքելոյ յիւրոց անտի իմաստնոց առաքեաց խօսել առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ վասն միաբանութեան հաւատոյ»²³:

Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն, ապա նա շահագրգռված էր բանակցություններին ուրտի մեջ ներգրավել նաև ասորիների հակորիկ եկեղեցուն, որի մասին Սմբատ ներքինու Հռոմիկա բերած թղթում ասվում է. «...առաքեցան առ մեզ երկու եպիսկոպոսք վասն միաբանելոյ ընդ ազգիս մերում, զոր եւ ընկալաք սիրով եւ սահմանեցաք ի

²² Այս միտումի լավագույն ապացույցը 1171 թ. մագիստրոս Թեորիանոսի կողմից Հռոմիկա բերված «Գլխակարգութեան» պահանջներից իններորդն է, որի մասին տե՛ս ստորև:

²³ ԹԸ, 1871, էջ 117: Հայոց եկեղեցին ժԲ դարի սկզբներից բավականին սերտ դիվանագիտական փոխհարաբերություններ է պահպանել Հռոմի պապական եկեղեցու հետ, այս տեսակետից հետաքրքրական է Ինոկենտիոս Բ պապի նամակը Հայոց Գրիգոր Գ կաթողիկոսին (տե՛ս Տեղ-Միքելեան, Միջին, էջ 133-138), սակայն, ինչ վերաբերում է անդրոմեջ հարաբերություններին, մեր ձեռքի տակ եղած ցուրք չափազանց սակավ է և թույլ չի տալիս լրացնել տասնամյակներ ոչ մի տեղեկություն չհաղորդող սկզբնաղբյուրների բացը:

պատշաճ ժամու ժողով լինել առաջի մեր եւ խաւսել առ միմեանս
յԱստուածաշունչ գրոց, զի թէ գտանիցի աւանդութիւն ինչ ի միջի մե-
րում արտաքոյ աստուածադիր կանոնաց, բարձցուք յերկոցունց կող-
մանց, եւ զնուազութիւնն լցցուք միաբանական սիրով...»²⁴:

Հարց է առաջանում, թե ինչո՞վ կարելի է բացատրել Հայոց
կաթողիկոսարանի նման եկեղեցաքաղաքական վարքագիծը: Մեր կար-
ծիքով, այս Հարցի լավագուշկն պատասխան կարող է հանդիսանալ
Հռոմկլայի կաթողիկոսարանի հեռու գտնվելը Մեծ Հայքի տարած-
քից²⁵: Հայոց հոգևոր բարձրագուշկն իշխանության նոր նստավայրը
չըջապատված էր Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի բազմատարր
մուսուլմանական և քրիստոնեական բնակչությամբ, որոնց հետ առօր-
յա շփման մեջ էր այս տարածքներում հաստատված հայկական էթնիկ
տարրը՝ հասարակ ժողովուրդը, իշխող դասակարգը և եկեղեցին: Շըր-
ջապատի հետ հայերի փոխհարաբերությունները, պատմիչների վկա-
յությամբ, մերթ բարեկամական էին, մերթ՝ թշնամական: Հայոց եկե-
ղեցու հոգևոր պետերն զգում էին, որ առանց հարևան ժողովուրդների
հետ տանելի փոխհարաբերությունների հաստատման անհնար է հաս-
նել եկեղեցաքաղաքական և պետական ինքնուրույնության:

Այս դրությունը Հայոց եկեղեցուն թույլ էր տալիս հանդես գալ
ողջ ժողովրդի անունից, միավորել հայկական իշխանություններին
ուժերը՝ իրագործելու համար պետականությունը կորցրած ժողովրդի
քաղաքական ձգտումները: Կաթողիկոսարանը քրիստոնյա և մահմե-
դական պետությունների հետ բանակցություններում օգտագործու՞մ էր
բոլոր հնարավորությունները՝ իր առջև դրված եկեղեցական և քա-
ղաքական խնդիրները լուծելու համար: Այդ քաղաքականության հե-
ռավոր նպատակն էր, ըստ իս՝ պետականության վերականգնումը:

Եկեղեցական միության համար բանակցություններ սկսելով,
Բյուզանդական կայսրությունը մտադիր էր Հայոց կաթողիկոսարանը

24 ԹԸ, էջ 117: Հայ-ասորական եկեղեցական հարաբերությունների մասին տե՛ս Տեռ-
Միմասեանց, Հայոց:

25 Այս անապահով դրության մասին վկայություն է պահպանել Ներսես Դ Օճորհալու
1166 թ. գրած Ընդհանրական թուղթը. «Եւ քաղաք թագաւորական եւ բազմաժողով ոչ
գոյ ազգի մերում, որպէս զի անդամար նստելով յաթոռ հայրապետութեան եւ վարդա-
պետութեան՝ ուսուցանէաք ժողովրդեան մերում յաստուածային պատուիրանս ըստ ա-
ռաջին հայրապետացն և վարդապետաց: Այլ եմք իբրև զայծեամն յորտղաց և ի
շանց փախուցեալք ի քարանձառս յայս բնակելով. յորում ոչ և մարմնական հարկատր
պիտոյիք շատացեալք ի գիւղից, կամ յազարակաց, յորոց ունիմք և ոչ մի: Նաև ոչ
անդաստան հողոյ, զի վաստակալք եւ աշխատութեամբ զպէտս մեր լճուաք, եւ ոչ ազ-
նութիւն ուստէք՝ որպէս արժանի էր ի թագաւորաց եւ յիշխանաց ի հրիստոս հաւա-
տացելոց»(ԹԸ, 1871, էջ 6-7):

ենթարկել իր իշխանությանը և հետապնդում էր երկու հիմնական նպատակ.

ա) ձեռք բերել Բյուզանդական կայսրության ներսում ապրող Հայերի աջակցությունը (Հայտնի է կայսրության սահմաններում Հայկական տարրի առկայությունը և նրա դերը երկրի կառավարման հարցերում)²⁶: Եկեղեցական միություն հաստատելով՝ համաձայնություն գալ կայսրության սահմաններում հաստատված Հայկական գաղթօջախների բնակչության հետ, որը մինչ այդ հակադրվում էր բյուզանդական պաշտոնական եկեղեցուն և դրա համար մեղադրվում էր աղանդավորության մեջ²⁷:

բ) Հաջորդ և հիմնական նպատակը Բյուզանդիայի արևելյան քաղաքականության հանգուցակետերից մեկում՝ Կիլիկիայում, Հայերի աջակցության ձեռքբերումն էր:

ԺԲ դարի Բ կեսին արդեն Հայոց եկեղեցական կազմակերպության մեջ ձևավորվել էին երկու իրարամերժ տեսակետներ, որոնց շուրջ բորբոքվում էր տարբեր թեմերի միջև ծայր առած կղերաքաղաքական պայքարը: Ծիշտ է՝ երկու տեսակետների կողմնակիցներն էլ Հայոց եկեղեցին և նրա դավանանքը համարում էին ուղղափառ, սակայն կողմերից մեկի համար դա միակ ուղղափառ եկեղեցին էր, մյուսի համար՝ ուղղափառ եկեղեցիներից մեկը, որին հարկավոր էր վերագտնել իր տեղը Տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցում: Առաջինները բացահայտորեն մերժում էին Քաղկեդոնի ժողովն ընդունող բոլոր եկեղեցական կազմակերպությունները, իսկ երկրորդները՝ փորձում էին, պահպանելով սեփական եկեղեցու ինքնուրույնությունը և ինքնակա (αὐτοκέφαλη) նվիրապետական կառույցը, Հաշտության եզրեր գտնել հարևան եկեղեցիների և մանավանդ բյուզանդական եկեղեցու հետ: Առաջինները դեմ էին ծիսադավանական որևէ ղիջման, իսկ երկրորդները, բյուզանդական եկեղեցու հետ միություն հաստատելու համար, պատրաստ էին կատարել որոշ էական զիջումներ:

26 Տե՛ս Каждан, Армяне; Каждан, Социальный; Charanis, The Armenians:

27 ԺԲ դարի բյուզանդական մատենագրությունը հարուստ է Հայոց «աղանդի» դեմ գրած երկերով (Beck, Kirche, S. 609-663): Տե՛ս նաև Մուրադյան, Եվթիմիոս Ձիղաբեմոս, էջ 266-295, Հայությունովա, Գրիգոր Պակուրիանը, էջ 175 և հտև.:


Բյուզանդական կայսրության արևմուտքում հայադավան գաղթօջախներից մեծագույնը Փիլիպուպոլիսն էր (այժմ՝ Պլովդիվ): ԺԱ-ԺԲ դդ. այդ տարածքի հայ բնակչության մասին տե՛ս Март, Аркаун, с. 25; Բարթիկյան, Մամիկոնյան, էջ 39-44: ԺԲ դարի հայ բյուզանդական բանակցություններում այս գաղթօջախի դերին կանոնադրապետաբար այս աշխատության երրորդ մասում:

ԺԲ դարի 60-ական թվականներից Հայոց եկեղեցական կազմակերպությունը Հռոմկլայի կաթողիկոսարանի ղեկավարությունը ընտրեց սեփական եկեղեցու ինքնուրույնություն պահպանության, սակայն Հարևան եկեղեցիների հետ Հաշտության եզրեր գտնելու ճանապարհը: Նման դիրքորոշումը բխում էր կաթողիկոսարանի եկեղեցաքաղաքական ծրագրերից. այն է՝ Կիլիկիայում քիչ թե շատ ամուր Հայկական պետությունն ստեղծելու անհրաժեշտությունից, որի համար Հարկավոր էր նաև երկրամասը բնակեցնող մյուս, Հատկապես քրիստոնյա, ժողովուրդների աջակցությունը: Գրիգոր Գ Պահլավունին, Ներսես Դ Ծնորհալին, Գրիգոր Դ Տղան և Ներսես Լամբրոնացին ու այդ թեևին պատկանող մյուս բարձրաստիճան Հայ հոգևորականները ջանք չէին խնայում Հաշտեցնելու Կիլիկիայում գործող եկեղեցիներ ունեցող ժողովուրդներին Հայկական իշխանությունների ու Հայոց եկեղեցու հետ: Այդ նպատակով 1165 թ. Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանը բնակցություններ է սկսում բյուզանդական արքունիքի և Կոստանդնուպոլսի օրթոդոքս պատրիարքարանի հետ:

Ներսես Դ Ծնորհալին և նրա հետևորդները ճանաչում էին բյուզանդական եկեղեցու ուղղափառությունը և պայքարում՝ երկարնակություն ընդունած Հայազգի գործիչների դեմ, որոնք. «...Հայրենի աւանդութեանն բամբասանօք, և այն ստութեամբ և ոչ ճշմարտութեամբ, յարգոյ լինել կարծելով ներհակացն ուր չոգաւ, որպէս և բազումք ի յառաջագունից Հատուածելոցն ի մէջը արարին այսպիսիս:... և որք նովին ատելութեամբ զգածեալք ի մերասերիցս՝ ախորժելով լսէին զայնոսիկ և Հաւատային. և յայսպիսի սերմանեաց աճեցեալ և պողաբերեալ՝ որպէս թուի իմաստուն քննողաց, այսքան խաւարին ատելութիւն ի մէջ երկուց ազգացս»²⁸: Ներսես Ծնորհալին, որ տարբեր եկեղեցիների և ժողովուրդների համերաշխության գաղափարախոսներից է, բյուզանդական ուղղափառությունն ընդունած Հայերին նույնացնում է պատերազմի ժամանակ Հակառակորդի կողմն անցած դավաճանների հետ: Առ Պողոս քահանա Հայկազն նամակում իր թըղթակցին պարսավելով երկարնակություն ընդունելու և Հայոց եկեղեցուն ամեն տեսակ մեղադրանքներ ներկայացնելու մեջ, Ներսես Ծնորհալին գրում է. «...նմանողք եղեք դուք՝ որպէս ինձ թուի...որպէս թէ երկուց Հարազատաց խռովութեամբ պատերազմելով ընդ միմեանս. և եթէ ոք ի զօրսն ի խռովութեանն ժամանակ Հատուածեալ յիւրոյն առ

28 ԹՂ. 1871, էջ 207:

11
23818



օտարն անցանիցէ, ի լինել խաղաղութեանն նախատանս յամենեցուն կրէ զգրծողս տերանց...»²⁹:

Հետեւելով բյուզանդական եկեղեցու մարտավարութեանը, որով նա հրաժարվում էր Հայոց եկեղեցին եվտիքեական կոչել, Ներսես Շնորհալին և նրա հետևորդներն էլ նահանջում էին մինչ այդ Հայոց եկեղեցու որդեգրած պնդումից, թե իբր օրթոդոքս-բյուզանդական հոգևորականութունը նեստորականութուն է քարոզում:

Ներսես Շնորհալին և նրա հետևորդները կենտրոնացնում են իրենց ուժերը՝ Հաշտեցնելու համար միմյանց հարեանութեամբ ապրող քրիստոնյա տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներին: Ներսես Լամբրոնացին հենց այդ մասին է, որ գրում է. «Ընդէ՞ր այսչափ զայլս խոտեալ՝ խորշիմք և խուսափեմք ի միմեանց քրիստոնեայքս, որ այլ ազգաց վիճակեցաք կենակիցս»³⁰: Ըստ Տարսոնի արքեպիսկոպոսի, քրիստոնյա երկու եկեղեցիների միջև խմորված հակակրանքն այնտեղ է հասել, որ. «Հայն միշտ աղաղակէ. Աստուած իմ, զոհանամ զքեհն, որ չարարէր զիս Հոռոմ. և Հոռոմն զնոյն բանն երկրորդէ, թէ՛ որ ո՛չ արարեր զիս Հայ»³¹: Դավանական հանդուրժողականութեան քաղաքականութունը, որը որդեգրել էին Հռոմկլայի կաթողիկոսարանը և Ռուբինյան իշխանութունը, հետզհետե խոր արմատներ էր ձգում Կիլիկիայում և մերձակա Հայաբնակ շրջաններում: Սակայն պետք է նկատել, որ Հայոց պաշտոնական եկեղեցու դիրքը որքան լոյալ էր երկաբնակների (հույների և լատինների) նկատմամբ, նույնքան էլ մերժողական էր երկաբնակութունը ընդունած և բյուզանդական եկեղեցուն ապաստանած Հայերի նկատմամբ:

Այդ հանդուրժողականութեան ընդգծված դրսևորումն էր Հայոց եկեղեցու պահվածքը Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում գործող Հակոբիկ-ասորական, օրթոդոքս-բյուզանդական և կաթողիկ-հոռոմեական եկեղեցիների նկատմամբ: Այդ մասին են վկայում Ներսես Դ Շնորհալու, Գրիգոր Դ Տղայի և Ներսես Լամբրոնացու, աշխատութուններն ու թղթերը: Տարբեր եկեղեցիների ծիսադավանական տարբերութունները համարելով դարեր շարունակ իրարից անկախ ապրած ժողովուրդների պատմամշակութային ավանդներից արտածված սովորութուններ, Հայոց կաթողիկոսարանը, ի տարբերութունը հարեան եկեղեցիների, դրանց վերացման հարցը կտրուկ չէր դնում և կոչ էր

29 ԹԸ, 1871, էջ 208:

30 Ատեճարացուցիմ, էջ 150:

31 Ատեճարացուցիմ, էջ 152:

անուամ մեղմացնել միմյանց նկատմամբ դրսևորվող անհանդուրժողական վերաբերմունքը: Հայ մատենագրության մեջ այս դաղափարախոսության հետագա շարունակողները դարձան Մխիթար Գոշը և Վարդան Այգեկցին, որոնք իրենց աշխատություններում հաշտության կոչ էին անում կողք-կողքի ապրող տարբեր եկեղեցիների ներկայացուցիչներին³²: Այս և նմանօրինակ խնդիրների քննարկմանն է նվիրված մենագրության երրորդ մասը:

★

★ ★

ԺԲ դարի երկրորդ կեսի Հայ-բյուզանդական բանակցությունների վավերագրերին նոր պատմագրության մեջ առաջինն անդրադարձել է Կղեմես Գալանոսը³³: Նա իր աշխատանքի ժԲ դարի երկրորդ կեսին վերաբերող հատվածը գրելու համար օգտագործել է կաթողիկոսական գավազանագիրք-ցանկի Ներսես Շնորհալուև և Գրիգոր Տղային վերաբերող հատվածները³⁴, Հայոց Հայսմավուրքի տեղեկությունները³⁵, Թեորիանոսի «ΔΙΔΑΧΕΣΙΣ»-ի լատիներեն թարգմանությունը³⁶, Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութիւնը», «Գլխագրութիւնք Հոռոմոց, զորս պահանջին առ ի մէնջ ի պէտս խաղաղութեան. ընդ որս և լուծմունք առնթեր եղեալ» և «Խնդիրք Հայոց ի Հոռոմոց»³⁷ մատենագրական սկզբնաղբյուրները և, իհարկե, եկեղեցու պատմության իր ժամանակի հիմնական ձեռնարկը՝ Բարոնիուսի պատմությունը³⁸: Կ. Գալանոսը դեռևս չգիտե ՊԽՄ ժողովածուն, քանի որ, հիմնվելով սեփական ենթադրության և Թեորիանոսի երկի վրա, պնդում է. «... զերկու դաւանութիւնս առաքեաց կաթողիկոսն Ներսէս առ թաշաւորն Յունաց. զմինն առաջ քան զգալուստն Տրիանէի (իմա՛ Թեորիանոս - Ա.Բ.), որում ոչ հաւանեցան Յոյնք. և զերկրորդն առաքեաց ի ձեռն

32 Տե՛ս Անաստան, Մանր, էջ 216-220, Մուրադեան, Դասանական, էջ 95-108:

33 Գալանոս, Միաբանութիւն, հտ. Ա, էջ 238-345:

34 Նույն տեղում, էջ 238, 324:

35 Նույն տեղում, էջ 240-241, 323, 325:

36 Նույն տեղում, էջ 241-322: Օգտագործված է միայն Թեորիանոսի առաջին «ΔΙΔΑΧΕΣΙΣ»-ի բնագիրը: Սկզբում Կղեմես Գալանոսը հավաստում է, որ այդ բնագիրը ինքը թարգմանել է լատիներեցից, իսկ հատվածի վերջում վկայում է. «քաղցմանեցի գնասս ի լուծաց բարբառէ ի հայս հաւատարմաբար և առանց ստոթեան ինչ» (էջ 322):

37 Նույն տեղում, էջ 326-345: Կղեմես Գալանոսը այս երկի առաջին հրատարակիչն է:

38 Նույն տեղում, էջ 345:

Տրիանէի՝ յորժամ դարձաւ առ Թագաւորն. և սմա Յոյնք յոյժ Հաւանեցան...»³⁹: Եթե նրա ձեռքի տակ լինեք ՊԽՄ ժողովածուն, ապա կիմանար, որ մինչև Թեորիանոսի գալուստը, Ներսես Շնորհալին առնչվածն երկու Հավատո Հանգանակ է ներկայացրել Բյուզանդական կայսրութեանը:

Հիմնվելով Ներսես Լամբրոնացու «Ատենաբանութեան» որոշ եղծված ձևազրեբի վրա Կ.Գալանոսը Հռոմկլայի եկեղեցական ժողովի վայրն է Համարում Տարսոն քաղաքը⁴⁰:

ՊԽՄ ժողովածոյում արծարծված պատմական և դավանական խնդիրներին առաջինն անդրադարձել է Հայ նոր պատմագրութեան հիմնադիր Հ. Միքայել Չամչյանցը իր «Պատմութիւն Հայոց» մենագրութեան Գ Հատորի ԺԶ և ԺԷ գլուխներում⁴¹: Դրանցից առաջինն անվանված է. «Յաղագս Հաշտութեանն՝ զոր արար Շնորհալին ի մէջ Թորոսի և Օշնի. և թղթակցութեան նորա ընդ Կիո Մանուէլի կայսեր վասն միաբանութեան: Եւս և յաղագս վախճանի նորա. և կաթողիկոսութեան Գրիգորի Տղայ կոչեցելոյ»: Այստեղ պատմաբանը մանրամասնորեն անդրադառնում է 1165-1173 թթ. տեղի ունեցած պատմական իրադարձութիւններին: Էջ 97-ի լուսանցագրութեան մեջ Հեղինակը թվարկում է նաև օգտագործված սկզբնաղբբերը. «[1] Ժող. պատ. ի կարգ թղթոց շնորհա: [2] Լամբրոն: [3] Յունի. 13: [4] օգոստ. 5: [5] Սեպտ. 25: [6] Յիշատ: [7] Պատմ»⁴²: Մ.Չամչյանցի մոտ հիշատակված առաջին սկզբնաղբբերը ՊԽՄ ժողովածուն է, իսկ նշած 3, 4, 5-ը Հայսմափութի Համապատասխան ամսաթիւերի տակ դասակարգված նյութերն են: Դրանցից երկուսը՝ Հունիսի 13-ը և օգոստոսի 5-ը Հայոց եկեղեցիներում Ներսես Շնորհալու Հիշատակութեան օրերն են⁴³, իսկ երրորդը՝ Մանուէլ Կոմնենոսի Հիշատակի օրն է⁴⁴: ՊԽՄ ժողովածուն վերոհիշյալ հղումներում կարելի է նույնացնել «Ժող. պատ. ի կարգ թղթոց շնորհա.» երկի հետ: Վերոհիշյալ գլխի հիմնական նյութը քաղված է ՊԽՄ-ից: Խոսելով Օշին Հեթումյանի և Թորոս Ռուբինյանի միջև 1165 թ. ծավալված պատերազմի մասին, Հեղինակը մի շարք վերապահութիւններով շարադրում է ՊԽՄ-ի առաջաբանում Ներսես

39 Նույն տեղում, էջ 326-345:

40 Նույն տեղում, էջ 325-326, 331, 345: Հռոմկլայի և Տարսոնի ժողովներին վերաբերող շփոթը, որն առկա է հայագիտության մեջ, սկիզբ է առնում հենց Կղեմես Գալանոսից:

41 Տե՛ս Չամչյանց, Պատմութիւն, 97-139:

42 Տե՛ս նույն տեղում, էջ 97: Ուղիղ փակագծերի թվահամարները իմն են:

43 Յայսմափութ, էջ զԳԺ(612), էջ զԳԸԷ(685):

44 Նույն տեղում, էջ ձԲ(89):

Լամբրոնացու պատմածը: Մ. Չամչյանցն այս բնագրից շեղվում է մի-
 այն այն դեպքում, երբ փորձում է այլ վիպաբանություններով լրացնել իր
 շարադրանքը: Խոսելով վերոհիշյալ երկպառակտչական պատերազմնե-
 րի շարժառիթների մասին և նշելով, որ երկու իշխանների բախման
 պատճառը Օշինի հնազանդությունն էր Բյուզանդական կայսրություն-
 նը, Մ. Չամչյանցն ավելացնում է. «Թորոս ստիպէր զՕշին՝ հնազանդիլ
 ինքեան, և ոչ լինել Հարկատու յունաց. իսկ Օշին լաւ Համարելով ան-
 ճին՝ ընդ ձեռամբ կալ կայսեր, ոչինչ անսայր Թորոսի. այլև խրատ
 տայր նմա մի մնալ ինքնիշխան, այլ՝ մտանել ընդ Հպատակութեամբ
 յունաց. զի թէպէտ նա Հաշտ էր յայնժամ ընդ յոյնս, բայց չէր նոցա
 Հարկատու»⁴⁵: Մեզ Հասած որևէ սկզբնաղբյուրով անկարելի է ստու-
 ղել ընդգծված Հատվածները, ուստի, կարծում ենք, որ դրանք պատ-
 մարան Մ. Չամչյանցի տրամաբանական եզրահանգումներն են: Ելնե-
 լով ՊԽՄ-ում տեղ գտած առաջին թղթի բովանդակությունից, նա եղ-
 րակացնում է, թե ըստ Ներսես Շնորհալու «այս պառակտմունք ի բառս
 են և ի ծէսս. և յայտ արար նմա, թէ զոր ինչ դաւանին Յոյնք, զնոյն
 դաւանին և Հայք»⁴⁶: Մ. Չամչյանցը ենթադրում է նաև, որ «Գիր Հա-
 ւատոյ խոստովանութեան» թուղթը Ալեքս Աքսուլար Կ. պոլիս տանելով
 «եցոյց Մանուէլ կայսեր և Միքայելի պատրիարզին»⁴⁷, իսկ նրանք
 փաստաթուղթը թարգմանել են տալիս հունարեն⁴⁸: Այս ենթադրու-
 թյունը և նմանօրինակ շատերը Հաստատվում են: Սակայն այսօր, երբ
 հիշված դրքի հրատարակումից անցել է ավելի քան երկու Հարյուր
 տարի, Մ. Չամչյանցի թվագրումներից և նույնացումներից շատերն
 այլևս քննություն չեն բռնում⁴⁹:

Այս բանակցություններին վերաբերող Հաջորդ գլուխը (Ժէ) Մ.
 Չամչյանցը վերնագրել է «Յազազս մեծի ժողովոյն Հոռմկլայու վասն
 միաբանութեան Հայոց ընդ Յունաց»: Այստեղ լուսանցքում նշված
 սկզբնաղբյուրներն են. «[1] ի կարգ թղթոց Շնորհա. և Գրիգորի, [2]
 Լամբրոն, [3] Յիշատ.»: Ինչպես տեսնում ենք, հիշատակվածների մեջ
 ամենաառաջինը կրկին ՊԽՄ ժողովածուն է: Այս գլխում Հոռմկլայի

45 Չամչյանց, Պատմութիւն, էջ 97:

46 Նույն տեղում, էջ 98:

47 Նույն տեղում, էջ 99: Պետք է նշել, որ այստեղ Մ. Չամչյանցը սխալվում է, քանի որ
 այս թուղթը Կ. Պոլիս պետք է հասներ ամենաուշը 1166 թ., իսկ Միքայել Գ Անքիալուք
 պատրիարքական զանգն է բազմել 1170 թ. (տե՛ս Grumel, La Chronologie, p. 436):

48 Այս եզրակացությունը հաստատվում է Թերրիանոսի առաջին «Διάλεξις»-ի բնագ-
 րով:

49 Տե՛ս, օրինակ, վավերագրագիտական ցանկ, հ. 3, 11-13 և այլն:

ժողովը Մ.Չամչեանցը թվագրում է 1179 թ. ապրիլով, ուր նրա կարծիքով իր Ատենաբանությունն է արտասանել Ներսես Լամբրոնացին⁵⁰: Հայ-բյուզանդական բանակցությունների ձախողումը Մ.Չամչյանցը վերագրում է նախախնամությանը, մտածելով, որ եթե միությունը կայանար՝ ապա կխափանվեր Հայերի դարավոր հպատակությունը կաթոլիկ եկեղեցուն⁵¹: Մ. Չամչեանցը ՊԽՄ ժողովածուի կազմումը սխալմամբ վերագրում է Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ատենադպրին:

1165-1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցա-քաղաքական բանակցություններին 1786 թ. անդրադարձել է նաև Ջիովանի դը Սերպուսը իր «Համառոտ պատմութեան» երկրորդ հատորում⁵², ուր շարադրանքը հիմնականում հենված է Կղեմես Գալանոսի գրքի վրա:

Հովսեփ Արղությանի շահագրգիռ մեկենասությամբ Ներսես Շընորհալու նամակների և ՊԽՄ ժողովածուի առաջին հրատարակումից հետո⁵³ ԺԲ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների ուսումնասիրությունը նոր որակ ստացավ:

ԺԲ դարի երկրորդ կեսի Հայ-բյուզանդական բանակցությունները թուզցիկ կերպով քննարկվել են էդուարդ Դյուլորիեի կողմից⁵⁴: Ըստ նրա, մինչև 1160 թ. հունական եկեղեցին ծայրագույն հանդուրժողականություն էր հանդես բերում Հայոց եկեղեցու նկատմամբ և 1160 - 1179 թթ.: մինչև Հռոմիլյայի ժողովը բանակցություններ էր վարում նրա հետ: Հեղինակին ծանոթ է ՊԽՄ ժողովածուն և Թեոփիանոսի միայն առաջին «Տրամախօսութեան» (Διάλογος) բնագիրը⁵⁵, թեպետ երևում է, որ հեղինակը առաջնությունը տալիս է հունարենով պահպանված սկզբնաղբյուրին, քանի որ դավանական հարցերին անդրադառնալիս օգտագործում է միայն բյուզանդական աստվածաբանի երկը:

50 Չամչեանց, Պատմութիւն, էջ 123-124:

51 Նույն տեղում, էջ 135: Այնուհետև մեջբերում է Ներսես Լամբրոնացու «առ Յուսկան» թուղթը և եզրակացնում, թե հայերը երբեք գծտություն չեն ունեցել կաթոլիկների հետ: «այլ ընդ յոյս միայն»:

52 Serpos, Compedio, p. 63-88.

53 Այդ ժողովածուն լույս է տեսել 1788 թ. (նկարագրությունը տես Ոսկանյան-Կոռկոտյան-Կոթլյուցները, որոնք լույս են տեսել 1825, 1865 և 1871 (ԹԸ, 1871) թվականներին, ավելի ամբողջական են:

54 Dulaurier, Histoire, p. 39-53:

55 Է.Դյուլորիեի գիտն Թեոփիանոսի միայն մեկ այցելությունը Հռոմիլյա, որն էլ թվագրում է 1172 թ. (Dulaurier, Histoire, p. 47):

ՊԽՄ-ի բնագիրը Հովսեփ Արղունթյանի հրատարակութունից առաջին անգամ 1847թ. Հատվածաբար ռուս ընթերցողին է ներկայացրել Ալեքսանդր Խուդաբաշևը⁵⁶: ԺԲ դարի Հայ-բյուզանդական բանակցություններին նա անդրադարձել է նաև 1859 թ. հրատարակված իր մեծագրության մեջ⁵⁷: 1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցությունները Ա. Խուդաբաշևն անվանում է «Հոսմկլայի ժողով» և այն համարում է ամենանշանավորը և ամենակարևորը Հայաստանում եղած բոլոր եկեղեցական ժողովներից: Իր աշխատանքում նա հաճախ է օգտագործում Մ. Չամչյանցի գիրքը:

ԺԲ դարի 60-70-ական թթ. Հայ-բյուզանդական բանակցություններին Ա. Խուդաբաշևի «Обозрение Армении» գրքի առիթով անդրադարձել է նաև Միքայել Նալբանդյանը⁵⁸: Ըստ Մ. Նալբանդյանի, այս փոխհարաբերությունների մասին. «միմիայն Ընդհանրական գիրքը ունինք, իսկ նորանից ավելի ոչինչ»⁵⁹: Քննադատելով Ա. Խուդաբաշևին, Մ. Նալբանդյանը գրում է. «...որպէս ստոյգ պատմութիւն ընդունելով մի հունական գիրք, նորա ռուս թարգմանութիւնից, որ ունեւր ինքը, և ուր որպէս թէ գրուած էին Ծնորհալու և Թեորիանոս արեղայի⁶⁰ խոսակցութիւնքը, իւր ներկա աշխատութեան մէջ նկարագրում է Ներսէս Ծնորհալին, որպէս մի երկդիմի մարդ, իւր ազգը խաբող, յունական օգուտը պաշտող և աւելի յոյն քան Հայ»⁶¹: Մ. Նալբանդյանը մերժում է Մանուել Ա Կոմնենոս կայսրին ուղղված Ներսէս Դ Ծնորհալու դադտնի նամակի գոյությունը: Նա եզրակացնում է. «Թէորիանոսի Ծնորհալու հետ խոսակցութիւնը բովանդակող գիրքը, որ Խուդաբաշևն ընդունում է որպէս պատգամ սրբութեան, և որի վերա

56 Худобашев, Исторические, с. 119-280. Այս թարգմանությունը ինքնանպատակ չէր: 1828 թ. Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալուց հետո, ռուս հոգևորականության և մտավորականության շրջաններում մեծացել էր հետաքրքրությունը Հայոց եկեղեցու նկատմամբ: Ա. Խուդաբաշևի ձեռնարկած ՊԽՄ ժողովածուի թարգմանությունը նպատակ էր հետապնդում ցրել Հայոց եկեղեցու վերաբերմամբ ռուս հավատացյալների միջավայրում ձևավորված թյուր պատկերացումները, որոնք ռուսական միջավայր էին թափանցել բյուզանդական գրականությունից:

57 Худобашев, Обозрение, с. 216-271.

58 Նալբանդյան, Հիշատակարան, ԺԴ, էջ 482-485: «Հիշատակարանը» հաջորդաբար տպագրված է «Հիսիսուփայլ» ամսագրի 1858 - 1860 թթ., համարներում և նույնությամբ արտատպված է նրա «Երկերի» առաջին հատորում:

59 Նույն տեղում, էջ 483:

60 Թեորիանոսը հոգևորական չի եղել:

61 Նույն տեղում:

Հիմնվելով Հայերի և օտարների առջև սեփական է ներսէս Շնորհալին, գիտութիւնը չէ կարող ընդունել»⁶²:

Իվան Տրոիցկին ևս անդրադարձել է ԺԲ դարի երկրորդ կեսի Հայ-բյուզանդական բանակցությունների ծիսադավանական խնդիրներին⁶³: Ռուս աստվածաբանը իր «Изложение веры церкви армян-СКИЯ» դոկտորական մեծագրության մեջ խնդիր է դրել պարզել, թե Հայ և բյուզանդական եկեղեցիներն ունե՞ն արդյոք ծիսական և դավանական էական տարբերություններ: Միջնադարյան բնագրերից Հեղինակի բացարձակ վստահությունն է վայելում Հունարենով հասած Թեոփրանոսի «Տրամատիստիկան» բնագիրը: Ի. Տրոիցկին օգտագործում է նաև ՊիՄ-ի ուսուցիչներն թարգմանությունը: Նրա ուսումնասիրության Հիմնական նպատակն է պարզել, թե Հայոց դավանանքն արդյո՞ք նույնն է Կ. Պոլսի եկեղեցու դավանաբանության հետ, ինչպես այդ, ըստ նրա, փորձում է ներկայացնել Ներսես Դ Շնորհալին: Ապա, կատարելով Հսկայական աղբյուրագիտական-Համեմատական աշխատանք⁶⁴, Հեղինակը դալիս է այն եզրակացության, որ Ներսես Շնորհալու և Հայոց եկեղեցու բոլոր Հավատո Հանգանակներն իրենց բազմաթիվ արտահայտչամիջոցներով մնում են միաբնակ և չեն կարող Կոստանդնուպոլսի և Ռուսիո եկեղեցիների կողմից ուղղափառ դիտվել: Ի. Տրոիցկին փորձել է նաև պարզել երկու եկեղեցիների ծիսական տարածայնությունների էությունը և դրանք կապի մե՞ջ են արդյոք միաբնակության պատմության և դավանաբանության հետ: Ծիսական տարբերությունների ծագումնաբանական արմատները Հավատո Հանգանակում, Հեղինակն եկել է այն Համոզման, որ Հայկական և բյուզանդական եկեղեցիներն ունեն դավանաբանության բնագավառում էական տարբերություններ, որոնք արտահայտված են նաև ծեսում: Նրա աշխատանքն ուսուցիչական է համարում Համար ուներ խիստ գործնական նշանակություն. պարզել թե Հնարավո՞ր է արդյոք ապահովել Հայոց առաքելական եկեղեցու միությունը օրթոդոքս եկեղեցու հետ⁶⁵: Այս Հարցին Ի. Տրոիցկին տալիս է բացասական պատասխան:

62 Նույն տեղում, էջ 484:

63 Ст'у Троицкий, К вопросу; Его же, Изложение.

64 Պետք է նշել, որ հեղինակն օգտվում է միայն հայերեն սկզբնաղբյուրների ուսերեն և նյութական թարգմանություններից:

65 Ի.Տրոիցկուց առաջ օրթոդոքս եկեղեցու սպասավորներից մի քանիսը ևս անդրադարձել են այս խնդրին: ԺԹ դարի երկրորդ կեսին երկու եկեղեցիների միության անհրաժեշտությանը անդրադարձել է ռուս հոգևորական և արևելագետ Պորֆիրի Ոսպենսկին, իսկ 1864 թ. Քրիստի հույն մետրոպոլիտ Գրիգորի Վիզանտոսը հրատարակել է Հայոց եկեղեցու հետ միության սեփական ծրագիրը «Περὶ ἐνώσεως τῶν Ἀρμενίων μετὰ

Ռուս աստվածաբանի գրքի դատավորական խիստ կեցվածքը, Հայոց եկեղեցու ծիսադավանական առանձնահատկությունների քննարկման ընթացքում, լուրջ քննադատության է ենթարկվել Հենց ռուսական միջավայրում⁶⁶:

ԺԲ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերադրերին անդրադարձել է նաև բազմավաստակ Հայագետ Հ. Ղևոնդ Ալիշանը⁶⁷: Նա առաջինն է, որը Ներսես Լամբրոնացուն է վերագրում ՊԽՄ ժողովածոյի կազմումը⁶⁸: Գիտնականը օգտվում է նաև Թեոդորիանոսի երկու դեսպանագնացությունների Տրամախոսությունների բնագրից, սակայն մասնակի վերապահումով⁶⁹, գտնելով, որ դրա Հեղինակը. «չըսեմք թէ խորդախած և փոփոխած, այլ գէթ տեղ տեղ այնպէս յարմարցուցած՝ որ ինքն միշտ յաղթող երևի»⁷⁰: Ղ. Ալիշանը թվագրում է ՊԽՄ ժողովածոյում պահպանված վավերագրերից շատերը և անդրադառնում է դրանց Հիմնականում որպես պատմական իրադարձությունների ճշգրտման վկայագրերի և ոչ որպես Հայոց եկեղեցու դավանաբանության Հետազոտման սկզբնաղբյուրի: Հայ-բյուզանդական բանակցությունների մոտիվները վերլուծելու նպատակով վենետիկյան Հայագետը օգտագործում է նաև Միքայել Ասորու Ժամանակագրությունը, որն այդ ժամանակ գիտական աշխարհին Հայտնի էր միայն Հայերեն բնագրով: Ղ. Ալիշանը վերապահ է մտնել դավանական վեճի մանրամասներին մեջ և, նկատի ունենալով Թեոդորիանոսի Տրամախոսությունները, գրում է. «աստուածաբանութիւն կարծուածն խածուածաբանութիւն մը կ'ըլլայ»⁷¹:

ՊԽՄ ժողովածոյի նկատմամբ Հետաքրքրությունը էջմիածնում մեծացավ միայն այդ բնագրի Ս. Աթոռում Հրապարակվելուց (1865 թ.)⁷² Հետո: Արևի արքեպիսկոպոս Մխիթարյանցն առաջին էջմիած-

тїѣς 'Ανατολικїѣς ὀρθοδοξου 'Εκκλησίας. 'Εν Κωνσταντινουπόλει» (հղումը տե՛ս Троицкий, Изложение, с. VIII, нумерн рѣшайрл) Христианское чтение, 1866, с. 791-853, 1861, с. 19-20):

66 St'us Церковный Вестник, 1875, номер 17, И. Чельцов, Диспут в духовной Академии (письмо к редактору), Церковный Вестник, 1875, номер 129:

67 St'us Ալիշան, Օտրոխալի, էջ 408-440:

68 Նույն տեղում, էջ 409, ծան. 1:

69 Նույն տեղում, էջ 409:

70 Նույն տեղում:

71 Նույն տեղում, էջ 412:

72 Նշված և ապա՝ 1871 թ. երուսաղեմյան հրապարակումները ՊԽՄ ժողովածոյի լավագույն հրատարակություններն են և գիտական շրջանառության մեջ են միգել այսօր:

նական գիտնականն էր, որ իր «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ» գրքում օգտագործեց ՊԽՄ ժողովածուն, ի մասնավորի անդրադառնալով Հռոմկլայի ժողովին և այնտեղ արծարծված խնդիրներին⁷³:

Թեորիանոսի Տրամախոսությունների ամբողջական բնագիրը 1878 թ. Հայ ընթերցողին ներկայացրեց Հ. Աղեքսանդր Պալճյանը⁷⁴: Կղեմես Գալանոսից Հետո, նա ևս մեկ անգամ գիտական շրջանառության մեջ դրեց Հռոմկլայի ժողովի առիթով ստեղծված բյուզանդական ինը կետերի պատասխանները: Ա. Պալճյանը նախապատվություն է տալիս Թեորիանոսի Տրամախոսություններին, երբեմն՝ շրջանցելով ՊԽՄ ժողովածուն:

ԺԲ դարի երկրորդ կեսի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին անդրադառնում է նաև Արշակ Տէր-Միքելյանը⁷⁵: Հավատ չընծայելով Թեորիանոսի Տրամախոսություններին, նա բարձրացնում է Հայերենով պահպանված վավերագրերի նշանակությունը⁷⁶: Հայագիտությունը նրան է պարտական բազմաթիվ բնագրերի ու հատկապես Գրիգոր Դ Տղայի՝ Մանուել Ա Կոմնենոսին առաքած թղթերից մեկի Հայտնաբերման և Հրապարակման Համար, թեև գիտնականը Հնարավորություն չի ունեցել ճշտել այդ վավերագրի հեղինակային պատկանելությունը⁷⁷:

Եվրոպական Հայագիտության առաջընթացում նոր փուլ նշանավորեց Յր. Թուրնբերգի «Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությունը», ուր հեղինակն անդրադառնալով մեզ հետաքրքրող սկզբնաղբյուրներին, առաջնությունը տալիս է Թեորիանոսի «Տրամախոսութիւնների» բնագրին⁷⁸:

Մեզ հետաքրքրող խնդրին, ռուսական օրթոդոքս եկեղեցու միջավայրում, քսաներորդ դարի սկզբին անդրադարձավ եկեղեցու պատմաբան Աղեքսանդր Անիսիկին⁷⁹: Նրա գիրքը ռուսական միջավայրում Հայոց եկեղեցու պատմության վերաբերյալ առաջին ամբողջական շա-

73 Մխիթարեանց, Պատմութիւն, էջ 112-117:

74 Պալճեան, Պատմութիւն, էջ 30-48, 204-266:

75 Ter-Mikelian, Die armenische Kirche, S. 87-105. Այս երկի հայերեն թարգմանությունը տե՛ս Տեր-Միքելեան, Հայաստանեայց, էջ 161-196:

76 Ա. Տեր-Միքելյանը Թեորիանոսի «Տրամախոսութիւն»-ները ընդհանրապես չի օգտագործում իր վերոհիշյալ մեծագրության հայերեն տարբերակի մեջ:

77 Տեր-Միքելեան, Միջին, էջ 27-48: Տե՛ս նաև Բոգոսյան, Գրիգոր, էջ 96:

78 Tournebize, Histoire, p.239-257:

79 Аниинский, История, 183-208/

բաղրանքն է: Հեղինակն անգրադառնում է նաև 1165-1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին, սակայն նրա մտածեցումը միակողմանի է: Նա ևս շարունակում է օգտագործել ՊիսՄ-ի խուզարաչևյան թարգմանությունը և օգտվում է Կղ. Գալանոսի գրքի Համապատասխան մասից, մնալով Ի. Տրոիցկու գրքի ազդեցության ներքո:

Թեորիանոսի բնագրին Հավատ չընծայելու գծի ամենազորեղ պաշտպանը⁸⁰ Մաղաքիա պատրիարք Օրմանյանն է, որն էլ «Ազգապատում» աշխատության մեջ բավական Հանդամանորեն է անդրադարձել մեղ Հետաքրքրող պատմական սկզբնաղբյուրներին⁸¹: Նա կարողացել է Հայագիտությանը մատնացույց անել եկեղեցական փոխհարաբերությունների ուսումնասիրության մի ճանապարհ, ըստ որի ԺԲ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների Հետազոտության Համար պետք է Հաշվի առնել նաև տարածաշրջանում տվյալ ժամանակաշրջանի քաղաքական իրադրությունն ու շահագրգռվու կողմերի ակնկալիքները:

Մեր դարի ընթացքում բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակվել, որտեղ քննարկվել են ԺԲ դարի Բ կեսի Հայ-բյուզանդական փոխհարաբերությունները: Այդ աշխատանքների մեջ Հիշարժան են Հ. Լ. Կոզյանի⁸², Հ. Պ. Թեքեյանի⁸³, Հ. Ա. Քեշիշյանի⁸⁴, Հ. Լ. Ջեքիյանի⁸⁵ և Հր. Բարթիկյանի աշխատությունները: Եթե Հիշատակված առաջին երկու Հեղինակները Հիմնական շեշտը դնում են դավանաբանության Հարցերի վրա և փորձում են ապացուցել, որ ԺԲ դարում Հայոց եկեղեցու դավանանքը մոտենում է Քաղկեդոնի դավանաբանությանը, ապա վերջին երեք Հեղինակները մանրակրկիտ պատմաաղբյուրագիտական Հետազոտությամբ բացահայտում են դարաշրջանի մտայնության մի շարք կարևոր Հարցադրումներ և լուծում Հայ պատմագրության առջև ծառայած էական խնդիրներ:

80 Արտավազ Գալեմստրյանը ևս անգրադառնալով Թեորիանոսի «Տրամախոսութիւններին» և ՊիսՄ ժողովածոյին, առաջնությունը տալիս է վերջինին (տե՛ս Գալեմստրեան, Միութեանական, էջ 35, 53-54:)

81 Տե՛ս Օրմանյան, Ազգապատում, էջ 1338-1477:

82 Առգեան, Հայոց, էջ 409-422:

83 Tekeyan, Controverses:

84 Keshishian, The problem.

85 Չեքեյան, Համամիութեանական, Zekyan, St.Nerses:



Գրքի բուն բովանդակութեանն անցնելուց առաջ պարտքս եմ Համարում երախտագիտութեանս Հայտնել իմ ուսուցիչ, ներկա աշխատանքի առաջին ընթերցող և խմբագիր, պրոֆ. Պ.Մ. Մուրադյանին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտութեան ինստիտուտի Քրիստոնյա Արևելք բաժնի իմ գործընկերներին, որոնք ընթերցել են այս աշխատանքն ու իրենց շահեկան խորհուրդներով և ղիտողութեաններով օգտակար եղել:

Հայաստանյան դրատպութեան սուղ պայմաններում այս գրքի հրատարակութեանը հոգացել է Հայոց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի Արևելյան թեմի «Զգօն եպիսկոպոս Տէր Թակոբեան Հիմնադրամի» Հոգաբարձուների խորհուրդը, որի հարգարժան անդամներին և թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Խաթակ արքեպիսկոպոս Պարսամյանին Հայտնում եմ անմնացորդ շնորհակալութեանս:

Շնորհակալութեան նաև «Պարբերական» հրատարակչութեան տնօրեն Վ.Վ.Մարկոսյանին, որը Հանձն առավ գրքի տպագրումը:

ՄԱՍՆ Ա.

1165 - 1178 ԹԹ. ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ ՓՈՒՆԱՆԱԿՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան փաստաթղթերի գիտական ուսումնասիրության բնագավառում չափազանց կարևոր նշանակություն ունեն վավերագրագիտական ստույգ ցանկերի կազմման աշխատանքները, որոնց միջոցով միջնադարագետ պատմաբան, վավերագրագետ և բանասեր մասնագետները ճշգրիտ տեղեկություններ են ստանում պահպանված կամ կորած յուրաքանչյուր վավերագրի, դրանց պատճենների կամ մատենագրության մեջ նրանց մասին պահպանված վկայությունների, յուրաքանչյուր փաստաթղթի գրման շարժառիթների, թվականի և հնագրական տվյալների վերաբերյալ: Այս բնագավառում բավական արդյունավետ աշխատանք են կատարել եվրոպական միջնադարագետները, որոնք ուսումնասիրողների սեղանին են դրել Հռոմի պապական¹, բյուզանդական-կայսերական² և պատրիարքական³ և այլ նոտարա-

¹ Մասնավորապես տե՛ս Jaffé, Regesta; Pothast, Regesta, Dölger-Karavannopoulos, Byzantinische, S. 10, n. 3 und 4):

² Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի վավերագրերի մասին տե՛ս Dölger, Regesten, Teil 2:

³ Տե՛ս Grumel-Darrouzès, Vol I, Fasc., II, III.

աներից դուրս եկած փաստաթղթերի ցանկ-նկարագրությունները (Register)⁴:

Հայադիտության մեջ նման, սակայն, միայն մեզ Հեռաքրքրող ժամանակահատվածի վավերագրերի ուսումնասիրության և ցանկերի կազմման նախնական աշխատանքի առաջին փորձ կարելի է համարել Հ. Լևոն Զեքրյանի հրատարակած ուսումնասիրության «Ժամանակագրութիւն ս.Ներսէս Շնորհալիի Յոյն եկեղեցիին Հետ միութեան առընչակից թղթակցութեան» հատվածը⁵: Կարելի է հիշատակել նաև Հայադեա Ասատուր Մնացականյանի կազմած Գրիգոր Դ Տղայի և նրա թղթակիցների փոխանակած գրությունների մատենագիտական ցանկը⁶: Ի տարբերություն նախորդի, վերջինս իր կառուցվածքով ավելի մոտենում է բնագրագիտական պարզ մատենագիտության:

Ստորև բերվող նկարագրությունը սոսկ առաջին փորձն է ժԲ դարում Հոռմկլայի կաթողիկոսական (մասամբ նաև Կոստանդնուպոլսի կայսերական և պատրիարքական) նոտարատուն մուտք դորձած որոշ վավերագրերի նկարագրության և գիտական դասակարգման⁷:

Նկարագրությունը կազմելիս փորձել ենք հնարավորին չափ ամբողջական ներկայացնել յուրաքանչյուր վավերագիր, բացահայտել դրանց բնույթն ու էությունը: Անշուշտ, հաճախ տուրք ենք տվել Ֆր. Դյուրբերի և Վ. Գրյունելի կազմած ցանկերի կառուցվածքին: Այնուամենայնիվ, ի տարբերություն նրանց⁸, մեր ցանկում հիշատակվում են միայն այն փաստաթղթերը, որոնք զրված են 1165 - 1178 թթ., ունեն պաշտոնական բնույթ և դուրս են եկել Հայոց կաթողիկոսական (N), բյուզանդական կայսերական (X), և Կոստանդնուպոլսի պատրիարքական (Y) նոտարատներից և անպայման վերաբերում են Հայ-բյուզան-

4 Այսօր ևս Բյուզանդական վավերագրերի ուսումնասիրության և հրատարակման գործը շարունակվում է, տե՛ս *Hunger*, Register, S. 29-35.

5 Տե՛ս *Չեքրեան*, Համամիութենական, էջ 55-58:

6 Տե՛ս *Գրգոր Տրա*, Բանաստեղծություններ, էջ 48-53:

7 Գրքիս հեղինակն արդեն ձեռնարկել է մնացած մի աշխատանք, սկսելով Ե դարում կաթողիկոսական դիվանից մեզ հասած վավերագրերի գիտական հրատարակումից և նկարագրությունից: Պետք է նկատի ունենալ, որ պահպանվել են մեծ քանակության վավերագրեր, որոնք մինչև այսօր նկարագրված չեն: Ի տարբերություն ձեռագիր մատյանների նկատմամբ հայագիտության, գրեթե ցուցադրական, արտակարգ խնամքին, վավերագրերը շատ ու շատ դիվանատներում ու արխիվներում դեռևս նույնիսկ դասակարգված չեն և պահվում են առանց նկարագրության:

8 Այդ ցանկերում նկարագրվում են միայն կայսերական կամ պատրիարքական նոտարատներից դուրս եկած անխտիր բոլոր վավերագրերը:

դական եկեղեցաքաղաքական առնչություններին, այսինքն՝ նշված միջնադարյան նոտարատները միջև փոխանակված վավերագրեր են⁹։

Յանկը չժանրաբեռնելու նպատակով, հրատարակություններ և թարգմանություններ խորագրի տակ բերում ենք միայն. Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ (Երուսաղէմ 1871, էջ 85-201)¹⁰ գրքի և Թեորիանոսի հունարեն բնագրի վերջին հրատարակության (J.-P.Migne, Patrologiae Graecae, tomus 133, p.113-298) էջերը, քանի որ մյուս հրատարակություններն ու թարգմանությունները վավերագրագիտության առումով նորույթ չեն բերում։ Տեղ խնայելու նպատակով, գրականությունը նշելիս խոստովել ենք բերել Ֆր. Դյուլգերի և Վ. Գրյունելի աշխատություններում յուրաքանչյուր փաստաթղթի վերաբերյալ հիշատակված բոլոր ուսումնասիրությունները¹¹, և վավերագրերի ԺԹ-ի դարերում կատարված թարգմանությունները։

№ 1

1165 թ. սեպտեմբեր

Սկսելով հայ-բյուզանդական երկխոսությունը, Բյուզանդական կայսրությունը Կիլիկիայի 1165/66 թ. դուքս Ալեքս Աքսուխի միջոցով Ներսես Շնորհալի արքեպիսկոպոսին է ներկայացնում ծիսադավանական հարցերի մի խումբ, որոնց տրվելիք պատասխանների հիման վրա Կոստանդնուպոլսի եկեղեցին նպատակ էր դրել պարզել Հայոց եկեղեցու ուղղափառ լինելու կամ չլինելու խնդիրը, հստակեցնելու համար Բյուզանդական եկեղեցու և կայսրության դիրքը Հռոմկլայի կաթողիկոսարանի հետ փոխհարաբերություններում։ Այս հարցաշարն առանձին վավերագրի տեսքով մեզ չի հասել, սակայն հաջորդ (№ 2) վավերագրում պահպանված հատվածներից կարելի է մոտավորապես վերականգնել դրա բովանդակությունը։ Պատասխան վավերագրում (№ 2), յուրաքանչյուր ծիսադավանական խնդրի անդրադառնալուց առաջ, Ներսես Շնորհալին բերում է մեզ չհասած այս փաստաթղթում ար-

⁹ Չեն բերվում այն վավերագրերը, որոնք չեն գրվել դրանցից մեկի կողմից կամ չեն ուղարկվել այս երեք՝ հոգևոր և աշխարհիկ գահերին։ Միակ բացառությունը համար 2 (Ալեքս Աքսուխ բյուզանդական պաշտոնյային հանձնված) վավերագիրն է, որով սկսվել են 1165-1178 թթ. հայ-բյուզանդական բանակցությունները։

¹⁰ Այս հրատարակության հիմքի վրա է կազմված Պոլսի մոդուլածոյի մեր կազմած համեմատական բնագիրը։

¹¹ Բավարարվել ենք միայն վերջին մի քանի հրատարակությունների և ուսումնասիրությունների հղումներով։

ձանազրված Հարցապնդումը կամ մեղադրանքը և ապա անցնում իր նյութին:

Բովանդակություն.

ա) «Գրեալ էր առաջին, թէ ի Յունվարի ի Հինգն տօնեն վաղիւն Աւետեաց եւ երկոյն Մննդեանն, եւ ի միւս վաղիւն՝ որ է վեց Յունվարի, Մկրտութեան Բրիստոսի» (ԹԸ, 1871, էջ 94):

բ) «Զերգս սրբոյ Աստուածածնին, գրեալ էր ի թղթի աստ, ոչ ասել յեկեղեցի մեր...» (ԹԸ, 1871, էջ 95):

գ) «Դարձեալ՝ ի թղթի աստ գրեալ էր վասն մեր եւ այս ինչ, եթէ մի բնութիւն դաւանեն Բանին եւ մարմնոյն, յորմէ Ապողինար ասեն ի մէնջ ամբաստանի...» (ԹԸ, 1871, էջ 96):

դ) «Դարձեալ՝ գրեալ էր ի գիրս, ի բուսարէր ձիթոյ, զոր շուշմայ անուանեն, լինել Միւռոնի մերոյ եւ ոչ ի ծառոց ձիթենեաց» (ԹԸ, 1871, էջ 97):

ե) «Էր ի գիրս ասացեալ եւ վասն սրբոց պատկերաց, եթէ ոչ ընդունին Հայք ամենեւին» (ԹԸ, 1871, էջ 98):

զ) «Գրեալ էր եւ զայս ինչ, թէ զամենայն խաչս բեւեռէն» (ԹԸ, 1871, էջ 98):

է) «Վասն երկոց Սրբասացութեանցն գրեալ էր, զի խաչեցար ասեմք» (ԹԸ, 1871, էջ 98):

ը) «Նաեւ այս եւս ամբաստանութիւն գրեալ էր զմէնջ, թէ ի սուրբ քառասնորդսն զկիթս անասնոց եւ զձու ճաշակէն ի շաբաթ եւ ի կիրակէ» (ԹԸ, 1871, էջ 99):

թ) «Գրեալ էր ի գիրս վասն մեր եւ այս ինչ, եթէ՝ գինեաւ միայն առանց ջրոյ խառնման մատուցանեն զպատարագն» (ԹԸ, 1871, էջ 100):

ժ) «Դարձեալ՝ էր ի գիրս եւ ծիծաղական իրս, թէ զամենայն խաչս իւրեանց յամենայն ամի նորոգ մկրտեն եւ աւրհնեն» (ԹԸ, 1871, էջ 101):

ժա) «Եցոյց մեզ գրեալքս եւ զայս ինչ, թէ՝ լուսք յոմանց ի նոցանէ ասել, թէ Բրիստոս՝ մարմին Համադոյակից մեզ թանձր մակհանացու չարչարելի երկրային ապականացու եւ եղանելի ոչ ա՛ն ի Կուսէն, այլ անապական անօսր անչարչարելի և անեղանելի, և թէ՝ երեւեցաւ մարդ որպէս կամեցաւ, եկեր եւ արբ իբրիւ առ Աբրահամու» (ԹԸ, 1871, էջ 102)

ժբ) «Դարձեալ՝ զի վկայի ի դիրս, եթէ զկիրս ոչ ակամայ այլ կամաւոր կրեաց. և այս կիրք պակասութեան ոչ կամաւոր, այլ ակամայ և բռնութեամբ ներգործի ի բնութիւնս...» (ԹԸ, 1871, էջ 104):

ժգ) «Գրեալ էր վերստին զմէնջ, եթէ՛ վասն այնորիկ ասեն մի բնութիւն Քրիստոսի, որպէս թէ ամենեւին ընկղմեցաւ մարդկութիւնն յաստուածութիւն անդր, ըստ օրինակի՝ զի կաթիլ մի քացախոյ և մեղեր ի ծով անկեալ աներեւութանայ» (ԹԸ, 1871, էջ 104):

ժդ) «Ասացուք փոքր ինչ և վասն Առաջաւորացն ի մէնջ անուանեալ պահոց, զոր Հայհոյէք տգիտաբար, Սարգսի ուրուամն սսելով կախարդի՛ էջ և սկունդ ունողի. ի յապստամբելոցն ի Հաւատոյս մերոյ առասպելաբանելով ի զանազան իրս վասն սորին, և պատմելով ստասոգ բանիւ առաջի ձեր» (ԹԸ, 1871, էջ 105):

Մտտավորապես սա է մեզ չհասած վավերագիր-հարցաշարի բովանդակութիւնը¹²:

Պարագաներ. Վերևում մասամբ վերականգնված վավերագիրն, ամենայն Հավանականությամբ, կազմված է եղել Կոստանդնուպոլսի պատրիարքութեան նոտարատանը կամ նրա կողմից շրջանապատրիարքութեան նոտարատանը կամ նրա կողմից շրջանապատրիարքութեան մեջ դրված ինչ-որ փաստաթղթի հիման վրա: Իհարկե, չի բացառվում, որ վերականգնված այս փաստաթղթի հեղինակ կարող էր լինել նաև Ալեքս Աքսուխ զորահրամանատար-կառավարիչը, որը փորձել է ի մի Հավաքել Հայոց եկեղեցուն Կոստանդնուպոլսի պատրիարքութեան կողմից ներկայացվող մեղադրանքները¹³: Այս վերջին վարկածը հուշող միակ ակնարկը Հանդիպում ենք ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու երկում. «Դարձեալ զրեաց (իմա՛ Ալեքս Աքսուխ - Ա.Բ.) առ նա (իմա՛ Ներսես Շնորհալի - Ա.Բ.)»¹⁴: Հնարավոր է նաև, որ վավերագիրը «Հայոց Հերձվածի» դեմ օրթոդոքս եկեղեցում ԺԱ-ԺԲ դարերում շրջանառութեան մեջ դրված բազմաթիվ մեղադրական երկերից մեկն է: Նման ենթադրութեան ապացույց կարող է լինել բերված ԺԴ կետերից ամենավերջինը: Նմանատիպ Հակահայկական երկերով հարուստ են միջնադարի և՛ բյուզանդական, և՛ վրացական մատենագրութունները¹⁵:

¹² Վերևում ընդգծված են Ներսես Շնորհալուն պատկանող արտահայտությունները:

¹³ Հետաքրքիր է, որ նրա հայրը հայտնի է բյուզանդական մատենագրությանը իր դավանաբանական երկերով, տե՛ս Beck, Kirche, S. 625:

¹⁴ Տե՛ս Կիրակոս, էջ 121:

¹⁵ Բիզանդական մատենագրության մեջ պահպանվել են բազմաթիվ երկեր, ուր կետ առ կետ հիշատակվում և «հերքվում» են Հայոց դավանանքի և ծիսակարգի իրենց կարծիքով ոչ ուղղափառ դրույթները: Մի շարք նմանատիպ երկեր միջնադարում թարգման-

Թվականը. Ալեքս Աքսուխը Կիլիկիայի բյուզանդական կառավարիչ է նշանակվել 1165 թ. սեպտեմբերին և իր պաշտոնը վարել է, Հավանաբար, մինչև Հաջորդ տարվա նույն ամիսը: Ելնելով այս հանգամանքից և նկատի ունենալով, որ Հաջորդ վավերագիրը (№ 2) գրված է 1165 թ., առաջարկում ենք վերոբերյալ թվագրումը, այսինքն՝ 1165 թ. սեպտեմբեր:

Գրականություն. ԹԸ, 1871, էջ 94-105, Բողոյան, Բյուզանդիայի, էջ 207-210, 214, 233

№ 2

1165 թ. սեպտեմբերից հետո:

Վերնագիր. «Գիր Հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ՝ գրեալ ի ներսիսէ արքեպիսկոպոսէ, յեղբարէ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց, / ի խնդրոյ, գերապատիւ փեսայի ինքնակալ Թագաւորին Հռոմոց Մանուէլի, Ալէքսի մեծի պաւատոստրատաււի, / յորժամ ել յԱրեւելս եւ էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկեցւոց, / ի թուականութեան Հայոց՝ վեց Հարիւր չորեքտասան»:

Ի տարբերություն կաթողիկոսական նոտարատանը պահպանվող մյուս վավերագրերի, այստեղ՝ խորագրում հիշատակվում է նամակի գրման տեղը և տարեթիվը:

Բանաձև. Գիր N ի խնդրոյ X: Ունի քառամասն բանաձև. Հեղինակ / Հասցեատեր / տեղ / թվական:

Թղթառաջք. Քանի որ այս փաստաթուղթը պաշտոնական բնույթ չի կրում և ընդամենը Հայոց Հավատքի ընդարձակ խոստովանություն է և որոշ ծիսական խնդիրների բացատրություն, այդ իսկ պատճառով բացակայում է կաթողիկոսական թղթերին բնորոշ թղթառաջքը և թղթառաջ-ողջոյնը:

վել են ցանկ վրացերեն: Դրանցից մեկը, որը վերագրված է Հովհան Դամասկացուն, Սիմեոն Պղնձահանեցու կողմից, վրացերենից թարգմանվել է հայերեն (տե՛ս ԱԿԻՃԵԱՆ, Սիմեոն Պղնձահանեցի, էջ 96-98, ԱԿԻՃԵԱՆ, Կիրիոն, էջ 69-70): Այդ երկի հայերեն թարգմանության բնագիրը տե՛ս ԿԻՒԿԵՆՈՒՄԵԱՆ, Հիմ: Բյուզանդական և վրացական գրականության մեջ հակահայկական երկերի մասին տե՛ս Beck, Kirche, p. 609-663, Caritte, La source, p. 111-116, ԱԿԵՐԻՃԻՆ, Արսեն Վաչե-ձեի, էջ 133-158, ԸՄԿԻՍԿԱ, Կեղծ Խսահակ, էջ 64-76:

Բովանդակություն.

Այլ.-Բանիւք դուզնաքեայ իմն խաւսելով ի լսելիս խոհեմագու-
նիդ...

Վրջ...Եւ որ ոք յետ զայսոսիկ լսելոյ ի մէնջ դայթակղեցի
դարձեալ ի մեզ՝ ոչ հաւատալով ասացելոցս, ինքն տացէ պատասխանի
Քրիստոսի յաւուր դատաստանի նորա իբրեւ զպառակտող անգամոց
նորին. իսկ այն՝ զոր միանգամ լսէ և հաւատայ և ոչ դատի՝ որպէս ա-
սաց քննողն սրտից, ընդ ճշմարիտ հաւատացելոցն ընկալցի վարձս բա-
րեաց ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք եւ զօրութիւն՝ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն:

Այս վավերագրի բովանդակութիւնը հստակորեն կարելի է խըմ-
բավորել հետևյալ բանաձևի ներքո.

ա) Մուտք (prooimion) - Ներսես Ծնորհալին արձանագրում է. որ
թեպետ և բանավոր պատասխաններ տվեցի բոլոր հարցումներին, սա-
կայն դրանք կարող են մոռացութեան մատնվել: Այդ իսկ պատճառով
խնդրեցիք պատասխանները գրավոր ներկայացնել, որը համառոտա-
բար կատարում եմ, շարադրելով մեր ճշմարիտ հավատը, սուրբ Հայրերի
ավանդներին հավատարիմ եկեղեցու ծիսակարգը:

բ) Բուն խնդիր (narratio) - Բերվում է Հայոց եկեղեցու Հավատո
խոստովանութիւնը (ԹԸ, 1871, էջ 88-93), ապա անդրադառնում է
այն բոլոր ծիսական հարցերին (տե՛ս № 1), որոնց գրավոր պատաս-
խանները Ներսես Ծնորհալուց խնդրել էր Ալեքս Աքսուխը:

գ) Վերջաբան-ամփոփում (corroboratio) - Ահա ձեր խնդրածի
համաձայն ներկայացնում եմ Հայոց եկեղեցու ճշմարիտ զավանու-
թիւնը: Ու եթե որևէ բան թաքցրել կամ ավելացրել եմ, թող ենթարկ-
վեմ Աստծո դատաստանին, կամ ով չհավատա ասածներին, թող ինքը
Դատաստանի օրը պատասխան տա Քրիստոսին:

Թղթավարտ-հրաժեշտի բանաձև. - Այս վավերագիրը պաշ-
տոնական որևէ բանաձև չունի, այդ բացը լրացնում է որպես Վրջ.
բերված հատվածը:

Շարահյուսական առանձնահատկություններ. - Ներսես
Ծնորհալի արքեպիսկոպոսը բյուզանդական դուքսին է դիմում հոգնա-
կի թվի երկրորդ դեմքի դերանունով (ԹԸ, 1871, էջ 8728, 10626), իսկ իր
և Հայոց եկեղեցու մասին խոսում է հոգնակի առաջին դեմքով:

Վավերականություն. Ինչպես այս խմբի բոլոր վավերագրերի,
այնպես էլ սույն թղթի բնօրինակը մեզ չի հասել: Նրա ամբողջական և

մասնակի ընդօրինակությունները առկա են Հայերեն և Հունարեն մասենագրական երկերում:

ա) ՊիՄ ժողովածու,

բ) Կիրակոս, էջ 121-147:

գ) Կոստանդնուպոլսի կայսերական նոտարատանը պահվող Հունարեն տարբերակից Հատվածական ընդօրինակություն կարելի է Համարել Թեոդորանոս մագիստրոսի առաջին «Տրամախօսութեան» բնագրում պահպանված Հատվածները (տե՛ս PG, t. 133, p. 124 C, 181 B, 184 A, 192 A, 192 B):

Թվական և գրման պարագաներ. Այս ծիսահավատարանական թուղթը, ինչպես որ վկայում է վերնագիրը, գրվել է Հայոց ՌԺԳԹ: Հայոց տոմարի այս թվականը Համապատասխանում է 1165թ. փետրվարի 8 - 1166թ. փետրվարի 7 ժամանակամիջոցին: Նամակն ամենայն Հավանականությամբ գրվել է 1165 թ. սեպտեմբեր ամսից Հետո, սակայն ավելի վաղ քան 1166 թ. փետրվարը: Հաջորդ թղթի (N^o 3) թվագրումից կարելի է կռահել, որ այս նամակը Կոստանդնուպոլսիս պետք է Հասած լիներ կամ 1165 թ. վերջին, կամ ամենաուշը 1166թ. սկզբին (առաջին կեսին), որովհետև N^o 3 վավերագիրը դեռևս չգրիտ է Գրիգոր Գ-ի մահը: Այս նամակն անկասկած Հասել է Կոստանդնուպոլսիս: Այդ են վկայում ոչ միայն Թեոդորանոսի առաջին «Տրամախօսութեան» մեջ պահպանված Հատվածները, այլ նաև Մանուել Ա Կոմնենոսի նամակի (N^o 3) Հետևյալ վկայությունները.

ա) «...ընկալաւ թագաւորութիւնս մեր գրով տուեալ առ ի ձէնջ» (ԹԼ, 1871, էջ 108¹⁷⁻¹⁸):

բ) «...ի դիրս բարեպաշտութեան ձերոյ, որ թարգմանեալ ցուցաւ» (ԹԼ, 1871, էջ 108²¹⁻²²):

Վավերագրագիտական նույնացումներ. Այս Հավատոխոստովանությունը ևս մի քանի անգամ օգտագործվել է Հայոց եկեղեցու կողմից՝ Հռոմի և Կոստանդնուպոլսի քույր եկեղեցիներին ապացուցելու Հայոց դավանանքի ուղղափառությունը.

ա) Վավերագրի Հավատոխոստովանության Հատվածը Կոստանդին Ա Բարձրաբերդցին (1221-1267) չնչին խմբագրական փոփոխություններով առաքել է Կոստանդնուպոլսիս, Մանուել Ա պատրիարքին (1244-1255)¹⁶:

¹⁶ Տե՛ս ՄՄ-2174, էջ 151ա-155բ: Այս շրջանին պատկանող, դեռևս չհրատարակված, հայ-բյուզանդական բանակցությունների նոր հունարեն վավերագրերի մասին տե՛ս Bartikian, Relations, p. 50-53, Бартикий, Неизданный, с. 109-110:

Վերնագիրը - Դաւանութիւն զոր գրեաց Հայոց եկեղեցին եւ տէր Կոստանդին կաթողիկոսն ի Կոստանդինուպալսոյ ի պատրիարզն եւ ի ժողովն այսպէս:

Ալ. - Մեծի Աստուծոյ եկեղեցւոյդ պատուական գլխոյդ Մանուէլի սրբազան Կոստանդնուպալսի Նոր Հռոմա եւ տիեզերական պատրիարզի եւ ամենայն սուրբ ժողովոյդ Կոստանդին կաթողիկոս Հայոց մերով ժողովրդովս ծանուցանեմք: Զի խոստովանիմք զամենասուրբ զերրորդութիւնն...

Վրջ. - ...եւ զմեռեալս արգարութեամբ, որում փառք եւ զաւրութիւն յաւիտեանս. ամէն:

բ) Կոստանդին Ա Բարձրաբերդցին վավերագրի հաւատո խոստովանութեան հատվածը Տիմանչ լիկաթի (պապական նվիրակ)¹⁷ ձեռքով ուղարկել է նաև Հռոմ, Ինոկենտիոս Դ պապին (1243-1254): Այս փաստաթղթի բնօրինակը պահպանվել է Վատիկանի առաքելական արխիվում (Archivum secretum. Apostol. Vaticanum)¹⁸: Այն գրված է մագաղաթի վրա:

Վերնագիրը - Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեաց եկեղեցւոյ. զոր խնդրեաց ի մէնջ առաքելական հայրն մեր Պապն Հռոմա Ինոկենցունցն ի ձեռն խոհեմագոյն լիկատին փրբեր Տիմանչին, որ է ի կարգի փրբեր մնուրացն:

Ալ. - Բանիւք դուզնաքեայ իմն խաւսելով...

Վրջ. - ...երկաքանչիւրքն ի սահմանի են ուղղափառութեան: Այս գիրը ձեռնին իմոյ է Կոստանդեա ծառայի եւ շնորհաւքն նորին կաթողիկոսի Հայոց¹⁹:

Այս վավերագիրն իրեն կից ունի նաև ԺԶ-ԺԷ դարերի իտալերեն թարգմանութիւն, որի վերնագրում փաստաթուղթը թվագրված է 1225 թվականով²⁰:

17 Այս գործիչը հիշատակվում է նաև Վարդան Արևելցու «առ Հեթում» թղթում (ԳԹ. 1901, էջ 503-509, 1994, էջ 657-665): Վարդանի գրած թղթի գրման պարագաների մասին տե՛ս Օրոնացեան, Ազգապատում, էջ 1642-1643:

18 Տե՛ս AA. Arm.-I-XVIII 1804: Վավերագրի լուսապատճենը մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող Մերուժան Կարապետյանին:

19 Վերնագիրը, սկսվածքն ու կաթողիկոսի անձնական ստորագրությունը կարմիր թանաքով են:

20 Իտալերեն բնագիրը իմ խնդրանքով վերծանել և սիրով մեզ է տրամադրել Բոլոնիայի համալսարանի պրոֆ. Գաբրիելա Ուլուիոջլանը, որին էլ հայտնում ենք մեր երախտագիտությունը:

դ) Այս նույն Հավատո խոստովանությունը եռալեզու (Հայերեն, Հունարեն և լատիներեն) գուգահեռ բնագրերով 1574 թ., որպես Հայոց եկեղեցու ուղղափառ Հավատքի Հավաստագիր, Լեմբերգի Հայոց Համայնքի կողմից ներկայացված է Լեհաստանի Թագավոր Հենրի Գ-ին: Այդ փաստաթուղթը կցված է Լեհաստանի Թագավորին Հասցեագրված նամակին: Վավերագրին այժմ պահվում է Սանկտ Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանի օտարալեզու վավերագրերի ֆոնդում ²¹:

Վրն. - Բան Հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ՝ ի Հարցն սըրբոց աւանդից ընկալեալ եւ գրեալ դոյզն ինչ առ սրբազան պատրիարզն Կոստանդնուպոլսի հրամանաւ Տեառն Կոստանդեայ կաթողիկոսի Հայոց:

Սկ. - Խոստովանիմք զամենասուրբ զերրորդութիւն. զՀայր և զորդի...

Վրջ. - ...իրբե զկաթիլ մի ի դուլէ (այսպե՛ս - Ա.Բ.) առ ծովացեալ իմաստութեան ձերում. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871, էջ 87-107:

Գրականություն. Keshishian, The problem, էջ 91-93, Ջէքիեան, Համամիութենական, էջ 55, Բողոյան, Բյուզանդիայի, էջ 233-236:

№ 3

1166 թ. ապրիլ-հուլիս (°)

Վերնագիր. «Թուղթ առաջին՝ Թագաւորին Հոռոմոց Մանուէլի / առ սրբազան կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս»:

Բանաձևը երկմաս է (նամակագիր / Հասցեատեր). Թուղթ X » N:

Թղթառաջք - Մանուէլ ծիրանածնունդ արքայ, կարող եւ բարձրը միշտ. օգոստոս ինքնակալ Հոռոմոց Կոմնինոս եւ Քրիստոսի Աս-

21 Վավերագիրը պատկանել է Պյոտր Դուրրովսկու հավաքածուին: Այդ է հաստատում նաև ձեռագրի կազմի ներսի կողմի լատինատառ հիշատակագրությունը «Ex Museo Petri Dubrowsky»: Սակայն արդեն դարասկզբին վավերագիրը պահվում էր Սանկտ Պետերբուրգի նշանավոր Կայսերական (Սալտիկով-Շչեդրինի անվան) գրադարանում «Բետոյալ՝ Q. v. I. № 01 ձեռագրահամարի տակ: Ձեռագրի միկրոժապավենն ունի նաև Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանը (ՄՄ դրսի ժապավենների ֆոնդ № 1003): Հենրի Գ-ի անունը և հավատո հանգանակի լատիններեն բնագրի հրատարակությունը տե՛ս Staerk, Die Confessio, p. 192-196.

տուժոյ Հաւատարիմ Թագաւոր, / առ շնորհիւ նորին պատուական եւ սրբազան կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս, / ողջոյն սիրոյ առաքեմք:

Բանաձևը եռամաս է . X \gg N, իսկ վերջում ողջույնի բանաձևն է:
Բովանդակություն.

Սկ. - Պարտ է ամենեցուն, որք ի ձեռն աստուածային մկրտութեանն զԳրիստոս զգեցեալ են...

Վրջ. - ... կարող էք Հաւատալ առ ի դմանէ ասացելոցն:

Բանաձև. մուտք-բուն խնդիր - վերջաբան (ամփոփում):

Կառուցուածք.

ա) Մուտք - Եկեղեցիների միութեան անհրաժեշտութեան մասին:

բ) Բուն խնդիր - Ընթերցելով Ալեքս պրոտոստրատորի միջոցով իրեն Հասած Թուղթը (№ 2), կայսրը խոստանում է միջնորդ լինել երկու եկեղեցիների միութեան խնդրում: Գործը Հաջողութեամբ ավարտին Հասցնելու Համար առաջարկում է կաթողիկոսին Կոստանդնուպոլիս առաքել իր եղբորը (իմա՝ Ներսէս Շնորհալուն): Ու եթէ ամէն ինչ բարեհաջող ընթանա, կայսրը կարծում է, որ բոլորը վարձատրված կլինեն:

գ) Վերջաբան-ամփոփում - Եկեղեցիների միութեան խնդրի շուրջ բանակցություններ վարելու Համար կայսրը կաթողիկոսի մոտ է ուղարկում իր պալատի սպասաւոր Սմբատին, որին Հանձնարարված է ելել նաև ուղեկցել կաթողիկոսի եղբորը Կոստանդնուպոլիս, բանակցությունները շարունակելու Համար: Խնդրում է նաև ուշադիր ունկընդել իր զեսպանադնացի բանավոր ասածներին:

Ծր.Դյուլգերը նամակի բովանդակությունը Համարում է կարգադրագիր (Praeceptum):

Թղթավարտ. - Ողջ լերուք: / Գրեցաւ յամսեանն սեպտեմբերի՝ յընդիքաիոնին ի ԺԵ:

Պահպանվել է Թղթավարտի երկմասն կառուցվածքը. ա) Հրածեղտի բանաձև, բ) Թվական:

Թվականը. - Թղթավարտում պահպանվածը Համապատասխանում է 1166 թ. սեպտեմբերին: Լ. Զեքիյանը, ճիշտ թվագրելով վավերագիրը, բերում է նաև փաստաթղթի գրման ամսաթիվը (սեպտեմբերի 14), որն, իմ կարծիքով, Հնարավոր չէ պարզել մեզ Հասած սկզբնաղբյուրների անբավարար վկայությունների պատճառով: «Գրե-

ցաւ»-ը ՊիՍՄ ժողովածու մուտք գործած օտար դիվանատներէց դուրս եկած վավերագրերի համար, մեր կարծիքով, նշանակուած է Հռոմիլլայի նոտարատուն մուտք գործելու (մուտքագրվելու) կամ ըստ Լ. Զեքիյանի. «Թարգմանութեան թուակահանք» (տե՛ս Զէքիեան, Համամիութենական, էջ 15, ծան. 8): Քանի որ այս թղթում Մանուէլ Ա Կոմնենոսը դեռևս չի առել Գրիգոր Գ կաթողիկոսի մահվան լուրը, ապա վավերագիրը գրված է ամենաուշը 1166 թ. ապրիլ-հունիս ամիսներին: Յր. Դյուգերը, հետեւելով Ա. Տեր-Միքելյանին, սխալմամբ վավերագիրը թվագրել է 1167 թ. սեպտեմբերով: Թուղթը 1166 թ. սեպտեմբեր ամսով է թվագրուած Ղ. Ալիշանը:

Պարագանները.— Թուղթը Հռոմիլլա է հասցրել բյուզանդական պալատի սպասավոր Սմբատը, ամենայն հավանականութեամբ 1166 թ. սեպտեմբերին (Կայսերական մյուս թղթերի հայերէն թարգմանությունների թվագրումները ևս ցույց են տալիս, որ դրանք թվագրված են անմիջապէս Հռոմիլլա հասնելու պահին): Դեսպանագնաց Սմբատը երկար ճանապարհորդութիւնից հետո, Հռոմիլլա հասնելիս «գտանէր վախճանեալ յայնմ ամի զկաթողիկոսն տէր Գրիգորիս, ի վեց հարիւր տասն եւ հինգ թուականին Հայոց»: Գրիգոր Գ կաթողիկոսի մահվան թվականը ԹԸ, 1871-ի հրատարակութեան մեջ (էջ 109) և ձեռագրերի մի նշանակալի մասում գրվում է Հայոց ՌԺԴ (=1165/6) թվականին, որը հակասում է պատմական իրականութեանը: Հ.Պողոս Անանյանը Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի մահը իրավասցիորեն թվագրում է 1166 թ. օգոստոսի 8-ով (տե՛ս «Բազմավէպ», 1975, էջ 351): Այդ իսկ պատճառով, հիմք ընդունելով մի շարք ձեռագրական վկայութիւններ և, հատկապէս, հնագույն ձեռագրերից մեկի՝ Փարիզի Ազգային մատենադարանի թ. 179 ձեռագրի ընթերցումը, հրատարակվող ընդգրուած առաջարկում ենք վերականգնել ՌԺԵ ընթերցումը (ԹԸ, 1871, էջ 109):

Հրատարակութիւններ և ընթերցումներ. Այս նամակի հունարէն ընդգրքը դեռևս գիտութեանը հայտնի չէ, հայերէնը պահպանվել է միայն ՊիՍՄ ժողովածոյում (ԹԸ, 1871, էջ 107-109):

Գրականութիւն. Չամչեանց, Պատմութիւն, հտ. Գ, էջ 99, Ալիշան, Շնորհալի, էջ 415-416, Ter-Mikelian, Die armenische, S. 87, Dölger, Regesten, S. 81, n°1478, Զէքիեան, Համամիութենական, էջ 55, Բոզոյան, Բյուզանդիայի, էջ 236-237:

Վերնագիր. - Պատասխանի առաջին թղթոյն թագաւորին Հո-
ռոմոց Մանուէլի, / գրեալ Ներսիսի կաթողիկոսին Հայոց: (Բանաձև. X
«N):

Թղթառաջք. - Այս նամակի թղթառաջքը (Protokoll) ամենայն
Հափանականութեամբ չի պահպանվել: Թղթի սկիզբը, որը մուտք (Pro-
oimion) ենք Համարում, Հիշեցնում է թղթառաջք. «Քրիստոսապսակեալ
ինքնակալ ծիրանածին եւ օգոստափառ սուրբ թագաւորի, երկնաւորին
յերկրի անուանակրի եւ աթոռակալի, գիր պատուական Հրամանի որ /
առ Հայրն մեր ըստ Հոգւոյ եւ եղբայրն ըստ մարմնոյ՝ Գրիգորիս
կաթողիկոս, եհաս առ մեր նուաստութիւնս ի փոխանակ Հարցն եղեալ
որդիս»:

Բանաձև. X » N, որը Հատուկ է կայսերական թղթին: Չնայած
պահպանվել են կայսերին բնորոշող գրեթե բոլոր տիտղոսները, այնու-
ամենայնիվ, սա թղթառաջք չէ, որովհետև Հեղինակն այստեղ սոսկ
Հիշեցնում է, որ կայսեր ուղարկած թուղթն արդեն մահացած Գրիգոր
Գ Պահլավունուն Հասնելու փոխարեն, ստացել է Հաջորդ կաթողիկոսը՝
Ներսես Դ ԾնորՀալին: Այնուամենայնիվ բանաձևը, Հնարավորութիւն
է տալիս վերականգնել թղթառաջքի գոնե մեկ մասը՝ կայսերական
տիտղոսաշարի Հռոմկլայի կաթողիկոսարանում ձևված բանաձևը:

Բովանդակութիւն.

Սկ. - Քրիստոսապսակեալ ինքնակալ...:

Վրջ. - ...եւ զմարմնաւոր կրից մեր տաժանումն՝ զոր ունիմք ի
չուրջ եղելոցս զմեաւք:

Կառուցվածքը՝ մուտք-բուն խնդիր-վերջաբան (ամփոփում).

ա) Մուտք - ամբողջութեամբ բերվեց վերևում:

բ) Բուն խնդիր - Ներսես ԾնորՀալին Հրաժարվում է այցելել
Կոստանդնուպոլիս և առաջարկում է Մանուէլ Ա-ին անձամբ գալ Ա-
րևելք և միութիւն Հաստատել, Հրաժարվել Հայերին Հալածելու քա-
րեկելք և միութիւն Հաստատել, Հրաժարվել բաժանումը թվագրում է 450
Պաշականութիւնից: Իրենց եկեղեցիներէ բաժանումը թվագրում է 450
ական թվականներով²², ասում է, որ ինքը տեղյակ է Կոստանդնուպոլ-
սի և Հռոմի²³ եկեղեցական բանակցութիւններէ ընթացքին և Հայտ-

22 «...եւթն հարիւր ամ տելի եղելոյ ժամանակաց բաժանման...» (տե՛ս ԹԸ, 1871, էջ 114):

23 «Սուրբ եւ առաջին ամենայն եպիսկոպոսապե-
թԸ, 1871, էջ 117-ում բացակայում է «Սուրբ եւ առաջին ամենայն եպիսկոպոսապե-
թԸ» բանաձևը (այս մասին տե՛ս Չէրիան, Համամիութեանական, էջ 40, ծան. 47), որն
սովա է բնագրի հնագույն ձեռագրերում (ՄՄ-4207, ՄՄ-2496, ՄՄ-2607, ՄՄ-3651,
ՄՄ-581, ՓԱԳ - 179):

նում, որ նման երկխոսությունն է սկսել ինքը Հակոբիկ եկեղեցու նոր պատրիարքի (իմա՝ Միքայել Ասորու) հետ: Եվ որպեսզի բանակցող կողմերն իրենց տեսակետները միմյանց չպարտադրեն, առաջարկում է բանակցութիւնների կանոնակարգ (reglement):

դ) Վերջաբան-ամփոփում - Հավաստիացնում է, որ այն Հարցերը, որոնք թղթում պատասխան չեն ստացել, կայսրը կարող է ավելի մանրամասն տեղեկանալ դեսպանազնացների պատմածից:

Թղթավարտ. Ողջ էր թագաւոր աւգոստէ, երկնաւոր թագաւորին պահպանեալ զաւրութեամբ:

Բաղկացած է միայն Հրածեղի բանաձևից:

Թվականը. - Վավերագիրը թվագրում չունի: Ամենայն Հավանականությամբ նամակը գրված է 1166 թ. սեպտեմբեր-դեկտեմբերամիսներին, Սմբատ դեսպանի Կիլիկիա դալու նախօրյակին: Մ. Օրմանյանը, Լ.Զեքիյանը և Ա.Քէչիշյանը այս և Հաջորդ երկու վավերագրերը, առանց փաստարկման թվագրում են 1167/68 թ.: Վավերագիրը թվագրելու իմ միակ կովանը ասորիների հետ բանակցելու մասին Ներսես Շնորհալու տողերն են: Այստեղ հստակ երևում է, որ շատ կարճ ժամանակ է անցել, երբ առաջնորդների մահվան պատճառով թափուր էին մնացել և՛ Հայոց կաթողիկոսական, և՛ Հակոբիկ-ասորական պատրիարքական դահերը: Միքայել Ա. Ասորին ժամանակադրության մեջ իր նախորդ՝ Աթանաս Ը-ի մահը թվագրում է 1166 թ. հուլիսի 14-ով, իսկ սեփական օծումը և դահակալությունը՝ նույն թվականի հոկտեմբերի 18-ով²⁴:

Պարագաները. - Նամակն ամենայն Հավանականությամբ Կոստանդնուպոլիս է առաքվել Սմբատ դեսպանի հետ ուղևորված կաթողիկոսի բանազնացների միջոցով: Այդ մասին է վկայում վերջաբան-ամփոփումում առկա. «բանականքդ պատմեսցին բանիւ» արտահայտությունը (ԹԸ, 1871, էջ 119-120): Հենվելով այս թղթի «...եւ արժանաւոր իսկ էք՝ որպէս լուաք ի բազմաց, մանաւանդ ի սուրբ թագաւորութեանդ Հաւատարիմ ծառայէ՝ յԱրուխէդ» արտահայտության վրա, Ղ. Ալիշանը նախորդ նամակի (№ 4) մասին գրում է. «Հրովարտակը յանձնեց Սմբատ Արուխ անուամբ պատուաւոր պալատականի մը, որ յանուանէն կ'իմացուի մեզի ազգակից ըլլալ»²⁵: Ա-

24 Տե՛ս *M.S.*, p. 327, 329:

25 *Անշան*, Ծնրբալի, էջ 415:

ուղարկում ենք ՊԽՄ բնագրում Արուխ ընթերցումը սրբադրել Աքսու-
խով, որով կարծում ենք կհարթվի բնագիր մտած վրիպումը²⁶:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871,
էջ 109-120:

Գրականություն. - Օրմանեան, Ազգապատում, էջ 1416-1417,
Ջէ.բի.եան, Համամիութենական, էջ 55, Keshishian, The problem, p.94:

№ 5

1166 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր (°)

Վերնագիր. - Սահմանք Հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ՝
/ գրեալ Ներսիսի կաթողիկոսի Հայոց, / ի խնդրոյ աստուածասէր թա-
գաւորին Հոռոմոց Մանուէլի:

Բանաձևը եռամասն է: Բնորոշող վերնագիր - Թղթակից կողմեր
(N » X)

Թղթառաջք. չունի:

Բովանդակություն.

Սկ. - Թէպէտ եւ աղքատութիւն մտաց եւ բանի ոչ տայ թոյլ...

Վրջ. - ...ըստ խրատու իմաստնոյն՝ իմաստնագոյն եւս լինել:

Վավերագիրը բաղկացած է երեք մասից.

ա) Մուտք. կաթողիկոսը թեև իր համեստ Հնարավորություննե-
րից վեր է համարում Հայոց եկեղեցու Հավատո Հանգանակը ներկա-
յացնելը, սակայն քանի որ կայսրն է այդ հրամայել «ի ձեռն մեծի
պալատանդ ծառայի»²⁷, Համարձակվում է շարադրել: Իհարկե, Աստ-
վածային հրաման է՝ բացատրել բոլորին, թե՛ մեծին, թե՛ փոքրին, ա-
ռավել ևս «բարձրագունին ամենայնի»²⁸: Հիմնվելով առաքյալների,
մարգարեների և ուղղափառ վարդապետների ասածներին, որոնց Հնուց
ի վեր հետևում է Հայոց եկեղեցին, ճշմարտությամբ շարադրում է Հա-
վատո դավանությունը: Նշում է նաև, որ ինքը մեկ անգամ էլ է այն
շարադրել «ի խնդրոյ աստուածասիրին»²⁹, որն ընթերցել է ինքը՝

26 Բողոքանք, Բյուզանդիայի, էջ 237-238:

27 Նկատի ունի Սմբատ դեսպանագնացից:

28 Իմա՝ բյուզանդական կայսերը:

29 Նկատի ունի Ալեքս Աքսուխից:

կայսրը, սակայն քանի որ կրկին պահանջում է՝ ստիպված է մեկանգամ ևս շարադրել:

բ) Բուեն խնդիր՝ Հավատո խոստովանություն:

գ) Վերջաբան-ամփոփում. հայտնում է, որ վերոշարադրյալը՝ «յաղագս համագոյ Երրորդութեանն և միաստուածութեանն և վասն տնաւրինութեանն Որդւոյ», Հայոց Հավատո դավանությունն է:

Վավերագրի վերջում պահպանվել է ինքնատիպ շ.գ. (= Post scriptum):

Թղթավարտ. չուհի:

Թվական - Այս վավերագիրը ևս գրված և առաքված է Կոստանդնուպոլիս նախորդ (տե՛ս № 4) թղթի հետ միաժամանակ:

Պարագաները - Մուսթում Ներսես Ենորհալին վկայում է, որ այս և Հաջորդ (№ 6) վավերագրերը գրված են կայսր Մանուել Ա Կոմնենոսի հրամանով. «սակայն ինքնակալ Թադաւորութեանդ Հրաման՝ որ ի ձեռն մեծի պալատանդ ծառայի, առ մերս հասեալ նուաստութիւն, տալ գրով զհաւատոյ մեր դաւանութեան բան...» (ԹԸ, 1871, էջ 120): Ուրեմն՝ «հաւատոյ խոստովանութեան» գիրը Մանուել Ա կայսեր անունից պահանջել է Սմբատ դեսպանը, որի հորդորով էլ Ներսես Դ Ենորհալին գրում է այս վավերագիրը. «զի ձերով հրամանաւ պնդագոյնս պահանջեաց թղթաբեր սուրբ Թադաւորութեանդ ի մէնջ, ոչ ընդդիմացաք հրամանին, այլ հաւելեաք եւ դայս ևս ի նոյն...» (ԹԸ, 1871, էջ 121): Այսպիսով, այս վավերագիրը ևս Կոստանդնուպոլիս է առաքվել նախորդի հետ միաժամանակ:

Հրատարակություններն ու թարգմանությունները. - Պահպանվել է ՊԽՄ (ԹԸ, 1871, էջ 120-130) ժողովածոյում և նրանից արտագրված միջնադարյան դավանական բազմաթիվ մատյաններում:

Գրականություն.- Троицкий, Изложение, с. 21-176.; Tekeyan, Controverses, p. 73-119:

№ 6

1166թ. սեպտեմբեր-դեկտեմբեր (°)

Վերնագիր - Նորին՝ յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ:

Բովանդակություն.

Սկ. - Ասասցուք սակաւուք եւ յաղագս աւանդութեանց եկեղեցւոյ՝ զոր ունիմք ի հարցն առաջնոց...

Վրջ. - ...եւ վարձս ընդ բանաւոր երկրի մշակացն ըստ չափոյ պտղաբերութեանն ընկալջիք ի Քրիստոսէ Աստուծոյ. որում փառք եւ զաւրութիւն ընդ հաւր եւ ընդ հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Կառուցվածք.

ա) Մուտք. կաթողիկոսն առաջարկում է առանց միմիանց խաբելու, ճշմարտությամբ քննել ձեսերի խնդիրը:

բ) Բուն խնդիր. արժարժված են ծիսական հարցեր. 1) պատարազի հաց, 2) պատարազի գինի, 3) ծննդյան և մկրտության տոն, 4) «որ խաչեցար», 5) Ս. Նաչը բեւեռել թե՞ առանց բեւեռի, 6) Նաչի օրհնություն, 7) պատկերապաշտություն և պատկերամարտություն, 8) առաջավորաց պահք և ս. Սարգսի տոն:

գ) Վերջարան-ամփոփում՝ նշույնում է, եթե հավատի և եկեղեցու կարգերի մասին իր այս գրվածքներում դուրս ինչ մեղանչել է ճշմարտության դեմ: Հույս է հայտնում, որ եկեղեցիների միությանը վերաբերող կայսեր նախաձեռնությունը պարարտ հող ընկած սերմի նման կբազմապատկվի:

Թվական - Այս վավերագիրը ևս գրված է նախորդ երկու փաստաթղթերի (N^o 4 և 5) հետ միաժամանակ և նրանց հետ առաքվել է Կոստանդնուպոլիս:

Պարագաներ - Կարելի է նաև ենթադրել, որ N^o 5 և 6 վավերագրերը սկզբում միասնական են եղել, սակայն Ներսէս Լամբրոնացին, ՊՆՄ ժողովածու մուծելով առանձնացրել է դրանք: Այս ենթադրության համար կռվան կարող է ծառայել վավերագրի վերջարան-ամփոփման մէջ առկա հետևյալ արտահայտությունը. «Արդ՝ այս, ինչ որ յաղագս աւանդութեան հաւատոյ և կարգաց եկեղեցւոյ գրեցաւ ի մէջ սակաւուք, յորժամ ընթերցցի առաջի գերակատար իմաստութեան սուրբ թագաւորութեան ձերոյ...» (ԹԸ, 1871, էջ 143):

Հրատարակութիւններ և թարգմանութիւններ. Պահպանվել է ՊՆՄ ժողովածոյում (ԹԸ, 1871, էջ 130-143) և նրանից ընդօրինակված միջնադարյան դավանական բազմաթիվ մատյաններում:

Գրականություն. Троицкий, Изложение, с. 177-221:

Վերնագիր - «²⁷ Ἴσον βασιλικοῦ καὶ θείου γράμματος πρὸς τὸν Καθολικὸν Ἀρμενίων [Κατέστρωται δὲ ἐν τῷ παρόντι βιβλίῳ τῆς διαλέξεως οὐ μάλιστα· δηλοῦται γὰρ ἐκ τῆς αὐτοῦ περιλήψεως ἢ τοῦ συγγραμματος ὑπόθεσις ἅπασιν]»: *Փակագծում բերված արտա-
շայտությունը որևէ կապ չունի վավերագրի վերնագրի հետ, և մեր
կարծիքով, հետսամուկ է: Այն բացատրում է միայն, թէ ինչու՞ է այս
վավերագիրը գրված Թեոդորանոսի առաջին «Տրամախուսութեան» (Διά-
λεξις) գրքի սկզբում:*

Բանաձև. (X) » N

Այս նամակի վերջում ընդօրինակողն (ամենայն Հավանականու-
թյամբ Թեոդորանոսը) բերել է նաև այն վերնագիրը, որը թերևս եղել է
նոտարատանը պահպանվող վավերագիր-պատճենի վրա. «²⁸ Ἡ ἐπιγρα-
φή· Βασιλικόν εἰς τὸν τιμωτάτον καὶ εὐλαβέστατον Καθολικὸν
τῶν Ἀρμενίων»³⁰: *Հետաքրքիր է, որ այս վերնագիրը, բացի սկզբի
«Βασιλικόν» բառից, որը տվյալ վավերագրի տեսակի անվանումն է,
քաղված է նամակի թղթառաջի այն մասից, որն ուղղված է Հասցե-
ատիրոջը: Նոտարական այս նշումի բանաձևն է. X » N:*

*ՊԽՄ-ում վավերագիրը վերնագրված է այսպես. «Թուղթ առա-
ջին՝ Թագաւորին Հռոմոց Մանուէլի, / առ տէր Ներսէս կաթողիկոս
Հայոց / յաղաքս խնդրելոյ զմիաբանութիւն երկաքանչիւրոցս ազ-
անց»: Բանաձևը եռամասն է. X » N, որին հետևում է կաթողիկո-
սական նոտարատանը տրված վերնագիրը: Կայսերական թղթի Համա-
րակալումը («Թուղթ առաջին») ամենայն Հավանականությամբ Ներ-
սես Լամբրոնացունն է:*

Թղթառաջք.- Μανουήλ ἐν Χριστῷ τῷ Θεῷ πιστὸς βασιλεὺς
Πορφυρογέννητος, θεοστεφής, ἄναξ, κραταῖος, ὑψηλός, ἀεὶ αὖγουσ-
τος καὶ αὐτοκράτωρ Ῥωμαίων ὁ Κομνηνός, τῷ τιμωτάτῳ καὶ εὐλα-
βεστάτῳ Καθολικῷ τῶν Ἀρμενίων τὴν χάριν αὐτοῦ. *ՊԽՄ-ում
թղթառաջի թարգմանությունը գրեթե բառացի է: Հավելումները
բերում ենք անկյունափոր փակագծերում.*

*«Մանուէլ Բրիտանոսի Աստուծոյ Հաւատարիմ Թագաւոր ծիրա-
նածին, աստուածապսակեալ արքայ, հզաւր եւ բարձր միշտ, աւգոստոս
եւ ինքնակալ Հռոմոց Կոմնիենոս. / [յԱստուծոյ Հաստատեալ] պա-
տուական եւ իմաստուն կաթողիկոսի Հայոց [տեառն Ներսիսի՝] /
ողջոյն սիրոյ առաքեմք»:*

30 «Վերնագիր. Թուղթ (թագավորական) ուղղված հայերի պատվավոր և բարեպաշտ կա-
թողիկոսին»:

եկեղեցու տեսակետներն «օրթոդոքս» եկեղեցու դավանանքին Համապատասխան և վերադառնալ ուղղափառութեան գիրկը, Հայերենում խոսվում է միայն եկեղեցական միությունն Հաստատելու անհրաժեշտութեան մասին: Հաջորդ նախադասութեան մեջ չի թարգմանված Թեորիանոսի ΦΙΛΛΟΣΟΦΟΝ (փիլիսոփա կամ իմաստասեր) պատվանունը³¹: Հունարեն բնագրում Աթմանոսը Փիլիպուպոլսի Հայկական վանքի վանահայր է (Τῷ καθηγουμένῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν Φιλιππουπόλει, Հայերեն բնագրում՝ «զհայր վանաց Հայոց, որ ի Փիլիպուպոլսեաց աշխարհէն»), որը երբեմն սխալմամբ ընկալվել է որպես Փիլիպուպոլսի շրջապատի Հայկական վանքերի վանահայր:

Մեր կարծիքով Հայերեն բնագիրն էլ կարելի է բացատրել՝ ելնելով Հունարեն բնագրի տառից, քանի որ «վանք» բառը զբաբարում ևս անեզական է³²: Թեորիանոսի գործակիցը, որը վավերագրի Հունարեն բնագրում անվանվում է ἈΤΜΑΝΟΣ (Աթմանոս), Հայերեն թարգմանութեան մեջ բացատրված է. «ըՅովՀաննէս, մականուն Ութման»: Հունարեն բնագրում Հավաստվում է, որ վերոհիշյալ երկու դեսպանագնացները իրավասություն ունեն ներկայացնելու թագավորի և բյուզանդական եկեղեցու գիրքորոշումը, իսկ Հայերենում մոտավորապես նույն միտքն արտահայտելով, չի թարգմանվել τῆς ἀγλωτᾶτης Ἐκκλησίας (սրբազնագուլյն եկեղեցի) արտահայտութեանը: Չորրորդ նախադասութեանը ևս ամենամոտավոր ձևով է կապվում Հունարեն բնագրի Հետ: Նամակի շարունակութեան մեջ կայսրը առաջարկում է ընդառաջ դնալ դեսպանագնացների խորհուրդներին, իսկ Հայերեն թարգմանութեան մեջ միայն եկեղեցիները միավորելու կոչ է անում: Հունարենում կայսրն իր և սեփական թագավորութեան մասին խոսում է եզակի թրվով, Հայերենում՝ հոգնակի: Երկու լեզուներով Հասած բնագրերում կաթողիկոսի և Հայոց եկեղեցու մասին խոսվում է հոգնակի թրվով: Վերևում ասվածից կարելի է մակարբերել.

ա) Վավերագրի ՊՈՄ ժողովածոյում Հասած թարգմանութեան մեջ ձևափոխված են այն մտքերը, որոնք կարող էին ընթերցողի մոտ դուրս գնալ ինչ կասկած հարուցել Հայոց եկեղեցու դավանանքի ուղղափառութեան վերաբերյալ կամ իրենց մեջ կոչեր են պարունակում՝ վերանայելու Հայոց եկեղեցու ծիսադավանական այն խնդիրները, որոնք

31 Այս փաստը նկատել է Հր.Բարթիկյանը (տե՛ս Բար்தикян, Поль, էջ 79):

32 Հովհաննես Աթմանի դավանական պատկանելության և նրա հետ կապված մի շարք այլ խնդիրների մասին տե՛ս Բար்தикян, Поль, էջ 78-88, Zekıyan, The Armenian, pp. 363-373, Տե՛ս նաև այս աշխատության վերջին մասը:

չեն նույնանում Կոստանդնուպոլսի եկեղեցու ավանդական պատկերացումների հետ:

բ)Վավերագրի Հայերեն թարգմանություն մեջ նմանատիպ բոլոր ակնարկները փոխարինվել են եկեղեցական միութայն կարևորությունը Հավաստող մտքերով: Հետևապես՝ մեզ Հասած Հայերեն բնագիրը կարելի է Համարել այս վավերագրի ազատ թարգմանություն: Այն, մեր կարծիքով, ստացել է այնպիսի տեսք, ինչպիսին կցանկանային ունենալ Ներսես Լամբրոնացին և իրենց գործունեությունը բյուզանդական եկեղեցու հետ Հարաբերությունները բարելավելու ոգով սնվող, Հռոմկլայի կաթողիկոսարանի շուրջ Համախմբված հոգևորականների խումբը³³:

Կարծում ենք՝ այս թղթի Հունարեն բնագիրը բառացի Հայերեն թարգմանության հետ միասին ժամանակին պետք է պահպանված լիներ Հռոմկլայի նոտարատանը: Այդ են վկայում վավերագրում առկա բազմաթիվ արտահայտություններ, որոնք պատճենում են Հունարեն բնագրին Հարազատ բառակապակցությունները:

Թղթավարտ. Καλῶς ἔχε. | Τῷ μηνὶ Νοεμβρίῳ Ἰνδικτιῶνος Τρίτης (Ողջ լերուք: / Գրեցաւ յամսեանս Մայիս, յԼնդիքտիոնին յերեքն):

Բանաձևը երկմասն է, բաղկացած է թղթավարտ-ողջունից և թվականից:

Թվական.- Եթե Հայերեն թարգմանության թղթավարտ-ողջունի բանաձևը պատճենում է Հունարենը, ապա թվագրումը առաջին Հայացքից Հակասում է դրան: Հունարեն բնագրի թվականը՝ երրորդ ինդիքտիոնի (1169 թ. սեպտեմբեր-1170 թ. սեպտեմբեր)³⁴ նոյեմբեր ամիսը, Համընկնում է 1169 թ. նոյեմբերին, պետք է Համարել վավերամայիս, ամենայն Հավանականությամբ փաստաթղթի Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատուն մուտք գործելու տարեթիվն է: Հետաքրքիր է, որ Հայերեն թարգմանության մեջ ևս պահպանվել է բյուզանդական թվագրման Համակարգը:

³³ Չի բացառվում, որ վավերագրերը ՊիՄ ժողովածոյում դասակարգող Ներսես Լամբրոնացին, Հերապոլիս արքեպիսկոպոս Կոստանդինի հետ, ճան այս և մյուս վավերագրերի թարգմանիչն է: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս աշխատության թարգմանիչներից նվիրված հատվածը:

³⁴ Ըստ Վ.Գրյունեյի բյուզանդական ծիսական տարին սկսվում էր սեպտեմբերի 23/24-ին: Թվագրման այս համակարգի մասին ավելի մանրամասն տե՛ս Grumel. La Chronologie, p.193-203, մանրագույն, էջ 199:

Նոտարական նշումներ. Վալերազրի Հուներեն բնագրի վերջում, փաստաթղթի գրման թվականից հետո, նշված է ևս մեկ տարբերակիչ գիծ. *Տι' έρυσθῶν γραμμάτων τῆς βασιλικῆς χειρός (կարելի է բառացի թարգմանել. թագավորական ձեռագրի կարմիր տառերով)*³⁵:

Այս նշումը խոսում է այն մասին, որ Թեոդրանոսը վալերազրին ընդօրինակել է Հռոմիլա բերված նախօրինակից և ոչ թե Հեոագայում՝ կայսերական դիվանի փաստաթղթերից:

Հրատարակություններ և թարգմանություններ. *PG*, t. 133, p. 120-121, ԹԸ, 1871, էջ 144-145:

Գրականություն. *Dölger*, *Regesten*, S.82, *վավ. 1489*, Ջեքիեան, *Համամիլոթենական*, էջ 56, Բոգոյան, *Բյուզանդիայի*. էջ 243:

№ 8

1170 թ. հոկտեմբեր 1-5

Վերնագիր. «Պատասխանի թղթոյն մեծի թագաւորին Հռոմոց կիռ Մանուէլի, / գրեալ սրբոյն Ներսիսի կաթողիկոսի / վասն ճշմարիտ դաւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ»: *Կառուցվածքը եռամասն է. X*» N *բանաձև և թղթի նկարագրական վերնագիր: Հունարեն թարգմանության վերնագիրն է «Πιττάκιον τοῦ Καθολικοῦ τῆς Ἀρμενίας Νοσέρσου | πρὸς τὸν βασιλέα κύρον Μανουήλ | σταλὲν δι' ἀνθρώπων αὐτοῦ τοῦ βραχαμίων, | καὶ ἐξελληνισθὲν παρὰ τοῦ μοναχοῦ τοῦ Ἀτμάνου τοῦ ἀπὸ Φιλιππουπόλεως, | παρουσία καὶ τοῦ μαΐστωρος Θεωριανοῦ, | μηνὶ Δεκεμβρίῳ ἰνδικτιῶνος τετάρτης*³⁶: *Կառուցվածքը վեցամասն է. 1-2. N*» X *բանաձև, 3. նամակաբերի, 4. թարգմանչի և 5. խմբագրի նշում, 6. թվական և ժամանակի ճշգրտում: Վալերազրի հայերեն պաշտոնական վերնագիրն է «Պատասխանի թուղթ», Հուներենինը՝ Πιττάκιον (նամակ, թուղթ):*

35 Կայսերական վավերագրերի թանաքի գույնի մասին տե՛ս *Dölger-Karayanopoulos*, *Byzantinische*, S. 97, 99:

36 «Թուղթ՝ Ներսէսի Կաթողիկոսի Հայոց / առ մեծագոր թագաւորն Մանուէլ, / առսրեալ ի ձեռն բանակաւանագ իրոց, / յեղեալ ի Յոյն բարբառ յԱղմանոսէ միանձնէ Փիլիպպոպոլսեցոյ, / առաջի Թէորիանեայ Մագիստրոսի, / ի Դեկտեմբեր ամսեան, ի չորրորդ ընդիկտոնի» (նմստ. *Պատճեան*, Պատմութիւն, էջ 33, ծան. 1, բնագրի բաժանումներն ու ընդգծումը իմն են - Ա.Բ.):

Հունարեն վերնագրի վերջում նշում կա նաև այն մասին, որ այս վավերագրի թարգմանութունը հետևում է Թեոփրիանոսի «Տրամախոսութեան» բնագրին *Τοῦτο μετὰ τὴν διαλέξιν τοῦ Θεωριανοῦ*³⁷: Այս հավելումը հավանաբար պատահանում է հետագայի ընդօրինակողներից մեկին:

Պաշտոնական թղթառաջը (Protocoll) չի պահպանվել ո՛չ Հայերեն, ո՛չ էլ Հունարեն բնագրերում: Այս փաստը խոսում է այն մասին, որ Հռոմիլայի նոտարատանը դեռևս չէր մշակվել համապատասխան վավերագրի թղթառաջը: Փաստաթղթի մուտքի (Prooimion) սկզբում պահպանվել են թղթառաջը հիշեցնող բանաձևումներ, որոնք էլ մեջ ենք բերում. «Հրամանք ինքնակալութեանն ձերոյ, ո՛վ քրիստոսապսակեալ արքայ Հռովմայեցոյ միշտ յաղթող աւգոստէ, սիրող բարեպաշտութեան եւ խաղաղութեան եկեղեցոյ եհաս առ նուաստս՝ յաղաթարարս սուրբ թագաւորութեանդ, յորմէ ծանէաք զկամս ձերատուածայնոյն հետեւող կամաց»: Այս հատվածի հունարեն թարգմանության մեջ ավելացված է երկու տրոպոս՝ ծիրանածին և ռազմա-նուխի (τροπαιοῦχε)³⁸, որոնք դրել են ուղիղ փակագծերի մէջ՝ ὄρισμὸς τῆς αὐτοκρατορίας σου, θεόστυπτε βασιλέων τῆς Ῥώμης (πορφυρογέννητε, τροπαιοῦχε), νικητὰ, ἀεὶ αὖγουστε, φίλε τῆς εὐσεβείας καὶ τῆς εἰρήνης τῶν Ἐκκλησιῶν, κατέλαβε καὶ πρὸς ἡμᾶς τοὺς εὐτελεῖς εὐχέτας τῆς ἁγίας βασιλείας σου, ἐξ οὗ διεγνώμεν τὸ θέλημα αὐτῆς ἐπόμενον τῷ θεῷ θελήματι³⁹:

Բովանդակություն.

Ավ.-Հրամանք ինքնակալութեան ձերոյ, ո՛վ քրիստոսապսակեալ արքայ...

Վրջ.-...ի հաւաքումն ժողովոյն ըստ վերագրելոցդ՝ գրեալ տա-ցուք առաջի սուրբ թագաւորութեան ձերոյ:

Կառուցվածք.

ա) Մուտք. Կաթողիկոսը հայտնում է, որ իրեն է հասել կայսեր նամակը, որից երևում է, որ Մանուել Ա-ն ջանում է նմանվել երկնային էմանուելին: Հայտնում է, որ դեսպանագնացներ Թեոփրիանոսը և

37 «Գրեալ յետ առաջնոյ բանակցութեան ընդ Թեոփրիանայ» (տե՛ս ճոյն տեղում):

38 Այս վերջին տիտղոսը հետո է գալիս, այն կրում էին դեռևս Հռոմի կայսրերը (տե՛ս Realencyclopædie, Bd. VIIA1, p. 673, հմտ. Treitinger, Die oströmische Kaiser):

39 Հունարեն թարգմանության բերված հատվածում կա նաև շարահյուսական մի տարբերություն, հայերեն բնագրի «միշտ յաղթող»-ը թարգմանված է. նիկիտա, ձե՛լ, որը հիմք է տվել հրատարակողի՞ն ժԲ դարի թարգմանիչների ստեղծած բնագրում, ձե՛լ ածականը կապել αὖγουστε պատվանվան հետ:

Հովհաննեսը Հայտնել են կայսեր բանավոր ցանկութունը՝ միաբան տեսնել կաթողիկե-ընդհանրական եկեղեցին:

բ) Բուն խնդիր. Բաղկացած է երկու մասից. 1. Քանի որ միության խնդիրը ավելի շատ աստվածային խնդիր է, քան մարդկային, այդ իսկ պատճառով բանակցելով դեսպանազնացների հետ, ողջամտությամբ լսեցինք Հոռոմոց (իմա՛ Բյուզանդական) եկեղեցու Հավատքին վերաբերող բացատրությունները: Քանզի ծովի այս կողմում գտնվող որոշ Հոռոմներից անառողջ մաքեր էինք լսել Քրիստոսի տնօրինության Ձեր պատկերացումների մասին և մտածում էինք, թե դուք Հարում էք Նեստորին: Նույնպես և Դուք մեզնից բաժանված որոշ տգետներից լսել էիք, թե իբր մենք Համախոհ ենք Եվտիքեսին: Բանակցությունների ընթացքում պարզվեց ճշմարտությունը, ըստ որի Հայտնի դարձավ, որ Դուք հեռու եք «Նեստորի բաժանմանէն», իսկ մենք՝ «Եւտիքեսայ շփոթմանէն»: Սակայն քանի որ այժմ, չունենալով թագավորական իշխանություն, Հայածված ենք Հայրենի Հողից և հեռու ենք բուն Հայաստանի եպիսկոպոսներից և վարդապետներից, Հնարավոր չէ միայն մեզ շրջապատող աստվածաբաններով պատասխանել Ձեր Հարցումներին: Այդ իսկ պատճառով նամակ կգրենք Մեծ Հայք և այլուր, կհավաքենք բոլոր առաջնորդներին, նրանց կներկայացնենք Հավատքին և եկեղեցական կարգին վերաբերող Ձեր պահանջները և դրանից հետո կփորձենք հասնել Համաձայնության: Ու քանի որ դեսպանազնացները խնդրեցին առայժմ թղթին Հանձնել մեր եկեղեցու դավանությունը և ուղարկել Ձեզ, այդպես էլ վարվում եմ, հենվելով նախքան եկեղեցական բաժանումը զործած վարդապետների ասածների վրա, 2. Հավատո խոստովանություն:

գ) Վերջաբան-ամփոփում. Այսպիսով շարադրեցի Երրորդության և Քրիստոսի տնօրինության մասին մեր դավանությունը, իսկ ավելի կատարյալը կառաքվի վերոհիշյալ ժողովի հրավիրումից անմիջապես հետո:

Պարագաներ. Մուտքը և բուն խնդիրը հունարեն է թարգմանված բավական մեծ ճշգրտությամբ, թեև կարելի է մատնացույց անել նաև որոշ շեղումներ, որոնք էական իմաստային հակասությունների տեղի չեն տալիս, կամ սովորական գրչական վրիպումներ են⁴⁰: Հայե-

40 Օրինակ. երբեմն կաթողիկոսի օգտագործած Ձեր կամ Դուք դերանունը թարգմանվել է օսս - ով (@Ը, 1871, էջ 14525, 14611, 1479, ԲԳ, t. III, p. 213A7, 213C1): Հաճախ այս կամ այն բնագրում նկատելի են իմաստային բացթողումներ: Առաջիկա հայերեն կամ հունարեն հրատարակությունների ժամանակ պետք է հաշվի առնել երկու բնագրերն էլ, որոնք լրացնում են միմյանց:

պնդում է, որ ինքն է Կոստանդնուպոլիս տարել կաթողիկոսի թուղթը⁴⁶:

Թրքալարտ. Հունարեն թարգմանությունը պահպանել է ոչ միայն թղթի վերջին պարբերությունը, այլ նաև թղթավարտի բանաձևը. καὶ ἀγαλλιασθῆναι εἰς δόξαν Χριστοῦ τοῦ Θεοῦ (և փառք տամք անուանի Գրիստոս Աստուծոյ):

Հայերեն բնագրում պահպանվել է միայն թվականը. «Գրեցաւ ի թուականութեանս Հայոց վեց Հարիւր ինն եւ տասն. յամսեանն Հայոց՝ Արեգ, եւ Հոռոմոց՝ Հոկտեմբեր»: Սա ՊԽՄ-ի միակ վավերագիրն է, ուր Հոռոմոց ամսանունի կողքին օգտագործված է բնիկ Հայկականը:

Թվականը. Ըստ վերոբերյալ թվագրման, վավերագիրը գրված է 1170 թ. Հոկտեմբերի 1-5-ը, քանի որ այդ օրերին են Համընկնում այդ կրկու ամսանունները⁴⁷: Ինչպես տեսանք, Հունարեն թարգմանության վերնագրում վավերագիրը թվագրված է չորրորդ ինդիքտիոնի դեկտեմբեր ամսով, որը Համապատասխանում է 1170 թ. դեկտեմբերին: Այն ցույց է տալիս, որ արդեն այդ ամսին դեսպանագնացները Հասել են Կ.Պոլիս և թարգմանել թուղթը: Թվագրումը Հավանաբար ցույց է տալիս կայսերական նոտարատանը վավերագրի մուտքագրման ժամանակը:

Այս նամակի թվագրման խնդրում որոշակի անելիքներ դեռ առջևում են: Բանազնաց Վրախամյաններին վերաբերող Հր. Բարթիկյանի կռահումը դեռևս վերջնական ճշգրտման կարիք է զգում: Ուշագրավ է, որ ըստ այդ ենթադրության Թեորիանոսի դեսպանախմբից անկախ Կ.Պոլիս կարող էր մեկնել նաև բանազնացների մի այլ խումբ:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871, էջ 145-153, PG, t. 133, p. 212-224:

Գրականութիւն. Бартикян, Роль, с. 81, Ջէքիեան, Համամիութենական, էջ 56, Բոզոյան, Բյուզանդիայի, էջ 244:

№ 9

1170 թ. հոկտեմբերի 1-5 (°)

46 Ավելի մանրամասն տե՛ս № 9: Եթե հետևենք Հր. Բարթիկյանի կռահմանը և լրացնենք այն «Տրամախօսութեան» այս վկայությամբ, ապա Վրախամյան տոհմի ներկայացուցիչ պետք է համարենք նաև Թեորիանոսին:

47 Բաղսալամ, Օրացույցի, էջ 364:

Հաղանաբար այս նույն ժամանակ Թեորիանոսի ձեռքով⁴⁸ կայսրին է առաքվել նաև կաթողիկոսի գաղտնի նամակը, որի բնագիրը չի պահպանվել: Այդ մասին առաջին «Տրամախոսութեան» վերջում պահպանվել է Թեորիանոսի Հետեյալ վկայութունը. Καὶ δούς ἡμῶν γραφήν αὐτοῦ πρὸς τὸν εὐσεβέστατον, καὶ ἅγιον, καὶ φιλόχριστον ἡμῶν αὐτοκράτορα, περιέχουσαν τό· ὅτι Δέχομαι τὴν τετάρτην μεγάλην καὶ οἰκουμεικὴν ἀγίαν σύνοδον τὴν ἐν Χαλκηδόνι... (=θայն-ժամ ետ մեզ (Կաթողիկոսն) զթուղթն գրեալ առ բարեպաշտօն, եւ սուրբ, և քրիստոսասէր ինքնակալն մեր, յորում բովանդակէր եւ այն, եթէ ընդունէր նա զսուրբ զտիեզերական (եւ զմեծ) Սիւնհոգոսն Քաղկեդոնի...)⁴⁹: Այս վկայութունը չի կարելի վերագրել նախորդ նամակին (N^o 8), որովհետև այնտեղ ակնարկ անգամ չկա Քաղկեդոնի ժողովի մասին: Այս թղթի գոյութունը Հաստատող Հիմնական փաստաբան վերորդայալ վկայութունն է, և կայսեր գաղտնի նամակի (N^o 11) մասին Թեորիանոսի Հետեյալ տեղեկութունը. ...Τὴν μυστικὴν γραφήν τοῦ βασιλέως, ἣτις ἦν ἀντίγραμμα πρὸς τὴν μυστικὴν γραφήν τοῦ Καθολικοῦ (=Գաղտնի գիր ինքնակալին (իմա՛ թագավորի - Ա.Բ.), որ էր պատասխանի խորհրդական (գաղտնի-Ա.Բ.) թղթոյ (Կաթողիկոսին)⁵⁰: Կա նաև երրորդ վկայութունը. դա Թեորիանոսի կողմից այս վավերագրի գրման և ուղարկման պարագաների մասին բացատրութունն է Գրիգոր (Տղա) և Սահակ եպիսկոպոսներին ու Ստեփանոս վարդապետին. Գινώσκω ὅτι γραφήν ἀπέστειλεν ὁ Καθολικὸς δι' ἐμοῦ πρὸς τὸν βασιλέα ἐσφραγισμένην, ἣν καὶ ἀνέγνω μοι κατὰ μόνας· γινώσκω ὅτι καὶ ἀγράφως ἐμήνυσε δι' ἐμοῦ πρὸς τὸν βασιλέα περὶ τῆς ἐνώσεως· ὁμολογῶ ὅτι καὶ παρήγγειλέ μοι μηδεὶν εἰπεῖν τὴν γραφήν ἀλλ' ἢ τῷ βασιλεῖ, καὶ τοὺς λόγους αὐτοῦ εἰπεῖν αὐτῷ μυστικῶς (=Թիշեմ, եթէ առաքեաց կաթողիկոսն իմով (ձե-ճամբ) թուղթ կնքեալ առ ինքնակալն, զոր ինձ առանձին ընթերցեալ էր· յիշեմ, եթէ անգիր ինեւ յանձն արար ինքնակալին զգործ միաբանութեան. խոստովան լինիմ, եթէ եւ պատուէր եւս ետ, ոչ ումեք յայտ-

48 Շատ Հր.Բարթեղիյանի այդ նամակը ևս Հռոմիլա պետք է հասցրած լիներ Որա հատուկ բանագնացը, որը հունարեն բնագրում վրախախյան ածուցն է կրում (տե՛ս **БАРТИКАН**, Роль, ծան. 30): Պետք է նաև հաշվի առնել, որ ըստ Թեորիանոսի վկայության այդ թուղթը անձամբ իրեն է հանձնվել կաթողիկոսի կողմից:

49 PG, t. 133, p. 212: Փակագծում, դասական ուղղագրությամբ բերված հայերեն թարգմանությունները Ալ. Պալճյանից են:

50 PG, t. 133, p. 233 B:

նել ինչ զթղթոյն բաց յինքնակալէ, եւ զբան իւր ի ծածուկ յայտնել նմա միայն⁵¹:

Գրականութիւն. PG, t. 133, p. 212B10, 233B4-6, 249A4-11, Պալճեան, Պատմութիւն, էջ 236, 237, 244, Бартикян, Роль, էջ 78-79:

№ 10

1171 թ. ամառ

Վերնագիր. 'Αντίγραμμα πρὸς τοῦτον τὸν Καθολικὸν | τοῦ ἀγιωτάτου πατριάρχου κύρου Μιχαὴν τοῦ γεγονότος ὑπάτου τῶν φιλοσόφων, | γραφὲν ὡς ἐκ προσώπου τοῦ κραταοῦ καὶ ἀγίου ἡμῶν βασιλέως κύρου Μανουήλ.

Վերնագիրը եռամսն է՝ բանաձև. N «(Y)X: Վերնագրում նըշ-ված է, որ կայսեր անունից կաթողիկոսին գրված թղթի պատասխանի Հեղինակն է Կոստանդնուպոլսի պատրիարքը: Վավերագիրն անվան-ված է 'Αντίγραμμα (Պատասխանի):

Թղթառաջք. Վավերագիրը չի ունեցել կամ չի պահպանվել:

Բովանդակություն.

Սի...:Η γραφή σου ἀπεκομίσθη τῇ βασιλείᾳ μου, Καθολικὲ τιμώτατε...

Վրջ...καὶ κατὰ μηδὴν τὸ ἐλλιπὴς ἔχουσαν, εἰς δόξαν τοῦ ἀγίου αὐτοῦ ὀνόματος, καὶ αἰσχύνην τοῦ ἀοράτου ἔχθροῦ.

Կառուցվածք.

ա) Մուտք. Կայսրը Հայտնում է, որ իրեն Հասել է կաթողիկոսական նամակը,

բ) Բուն խնդիր 1. Քաղկեդոնի ժողովի և նրա ընդունած դավանանքի ուղղափառության, 2. Երկու բնություն բանաձևի սահմանումների շուրջ,

գ) Վերջաբան-ամփոփում. Հույս է Հայտնում, որ կհասնեն եկեղեցական միության:

Վավերագիրը ներսես ԾնորՀայու № 8 նամակի պատասխանն է: Թղթում բավական Հանդամանորեն է խոսվում բյուզանդական եկեղեցու Հավատարանության Հարցերի շուրջ և Հայոց եկեղեցու դավանան-

51 Այս վկայություններից պարզ երևում է, որ ներսես Ծնորհայու գաղտնի թուղթ ուղարկվել է Թերիաճոսի հետ, և մերժվում է Հր.Բարթիկյանի ենթադրությունը, որի համաձայն նամակը Ծնորհային Կ.Պոլիս է ուղարկել իրեն հավատարիմ մարդկանց՝ այս դեպքում Վրախանյանների ձեռքով (տե՛ս Бартикян, Роль, с. 81):

քի դրույթների նկատմամբ օրթոդոքս եկեղեցու վերաբերմունքի մասին:

Թղթի Հարդարման արտաքին ձևական կողմին անդրադառնալով, պէտք է նշել, որ միայն սկզբում է կայսրն իր մասին խոսում եղակի թվով (տե՛ս սկ. ԽՊ՝ βασιλεία), իսկ ապամիայն Հոգնակիրով (տե՛ս PG, t. 133, p. 224 C8 τὸ κράτος ἡμῶν, 225 B7, D2, 228 A14 βασιλεία ἡμῶν): Վավերագրի բոլոր մյուս հատվածներում կայսրը կաթողիկոսին է դիմում եղակի երկրորդ դեմքով (PG, t. 133, 225 B5, 228 A13, 232A12, C13-15 σὴ τιμότης):

Թղթավարտ. Չունի:

Թվականը. տե՛ս Հաջորդ՝ N^o 11 վավերագիրը:

Հրատարակություններ և թարգմանություններ. PG, t. 133, p. 224-232:

Գրականություն. Նամակը վրիպել է և՛ Յ. Դյուլգերի, և՛ Վ. Գրյունելի ուշադրությունից և չի մտել նրանց նկարագրությունների մեջ:

N^o 11

1171 թ. անտառ

Վերնագիր. Βασιλικὸν θεῖον γράμμα (μυστικὴ γραφή)⁵² αἰ-
պεὶς է նամակը վերնագրել Յր. Դյուլգերը: Թեորիանոսն իր երկրորդ «Տրամախոսութեան» մեջ թուղթը ներկայացնելուց առաջ գրում է. «...τὴν μυστικὴν γραφὴν τοῦ βασιλέως,| ἥτις ἦν ἀντίγραμμα πρὸς τὴν μυστικὴν γραφὴν τοῦ Καθολικοῦ⁵³. (բանաձև. X » N): Թեորիանոսը վավերագիրն անվանում է երկու ձևով. կամ ἀντίγραμμα (պատասխանի), կամ էլ ἡ μυστικὴ γραφὴν τοῦ βασιλέως (գաղտնի թուղթ թաղավորի):

Թղթառար. Μανουὴλ, ἐν Χριστῷ τῷ θεῷ πιστὸς, βασιλεὺς Πορφυρογέννητος θεοστεφής, ἀναξ κραταῶς, ὑψηλός, αἰὲ αὔγουστος καὶ αὐτοκράτωρ Ῥωμαίων, ὁ Κομνηνός,| τῷ τιμιωτάτῳ καὶ εὐλαβεστάτῳ τῶν Ἀρμενίων Καθολικῷ τὴν χάριν αὐτοῦ (բանաձև. X → N)

Բովանդակություն.

Սկ. - 'H γραφή τῆς σῆς τιμότητος...

52 Կարելի է թարգմանել. «Թուղթ աստուածային թագաւորի՝ ի գաղտ գրեալ»:

53 =Թագաւորի գաղտնի թուղթը, որը պատասխանն էր կաթողիկոսի գաղտնի թղթի:

Վրջ.-...πρὸς τὴν τῆς ἀληθείας καὶ ὀρθοδοξίας ἡμέραν καθο-
δηγῶν.

կառուցվածք.

ա) Մուտք. նամակն ուղարկելու համար շնորհակալություն է
հայտնում:

բ) Բուն խնդիր. դո՛հ է, որ կաթողիկոսը ճանաչում է ոչ միայն
երեք տիեզերական ժողովները, այլ նաև չորրորդը՝ Քաղկեդոնինը:
Հայտնում է, որ բանակցություններ վարելու համար կրկին Հռոմ կլա է
ուղարկում Թեոփիանոսին և Աթմանին:

գ) Վերջաբան-ամփոփում. հույս է հայտնում, որ կաթողիկոսն
իր հավաքած եկեղեցական ժողովում հաստատել կտա իրենց առաք-
ված ուղղափառ հավատո հանգանակը:

Այս նամակում կայսրը և՛ իր (PG, t. 133, p. 233 C1, 2, D4), և՛
կաթողիկոսի մասին խոսում է եղակի թվով (PG, 133, p. 233 B14,
C4,12): Թղթում բանագնաց Թեոփիանոսը անվանված է τὸν λίζιον
τῆς βασιλείας μου (ծառայ թագաւորութեան իմոյ), իսկ Աթմանոսը՝
սոսկ τὸν μοναχόν (վանական):

Թրթաւարտ. Ἐχε καλῶς. | Τῷ μὴν αὐτῷ ἰνδ. δ'.

Բանաձևը երկու մաս ունի՝ ա) հրածեշտ, բ) թվական:

Թվականը. Թեոփիանոսի երկրորդ դեսպանագնացության հետ
Կոստանդնուպոլիս առաքված նամակներից (տէ՛ս № 10-13) միայն սա
է թվագրված: Առաջնորդվելով թղթավարտում բերված թվականով,
կարելի է վավերադիրը թվագրել 1170 թ. սեպտեմբերի 1 - 1171 թ.
օգոստոսի 31 ժամանակահատվածով, քանի որ Թեոփիանոսը չի ցան-
կացել կրկնել ամիսը: Հավանաբար նույն ամսով է թվագրված եղել
կամ կայսեր «յայտնի» նամակը (№ 12), կամ էլ՝ պատրիարքի (№ 13)
պաշտոնական թուղթը, որոնց թվագրման բանաձևը Թեոփիանոսի
«Տրամախօսութիւնների» հետագա ընդօրինակությունների ժամանակ
ընկել է: Համենայն դեպս, ելնելով այն հանգամանքից, որ դեսպանա-
խմբերը Կոստանդնուպոլսից Հռոմ կլա էին հասնում 2 - 3 ամսվա ըն-
թացքում, իսկ Թեոփիանոսը հավատում է, որ այս անգամ ինքը կաթո-
ղիկոսական ամբոց (այսինքն՝ Հռոմ կլա) է հասել Ե ինդիքտիոնի երկ-
րորդ ամսվա 20-ին (ինճ. ε' κατὰ τὴν κ' δευτ. μενός), այն է 1171 թ.
հոկտեմբերի 20-ին (տե՛ս նաև Ջէքիեան, Համամիութենական, էջ 57),
սպա ամենայն հավանականութեամբ այս 4 թղթերը (№ 10-13) գրվել
են 1171 թ. ամռանը:

Հարկ ենք համարում այստեղ նշել, որ Թեոփրիանոսն իր երկրորդ
 դեսպանագնացութունը Հռոմից թվագրում է նաև այլ տոմարական
 համակարգերով. « Έν έτει από κτίσεως κόσμου 'σχπ', έν έτει δὴ
 τριακοστῷ τῆς αυτοκρατορίας του έν βασιλευσιν ευσεβεστατου
 και φιλοχριστου και θεοστεπτου κυριου Μανουηλ του Πορφυρογεν-
 νητου και Κομνηνου, ανυοντος δευτερον έτος κατὰ μηνας τρεις του
 θεοστεπτου βασιλεως ημων κυρου Αλεξιου του Κομνηνου και υιου
 αυτου » (« Յամի 8Ո2 (6680) յարարչութենէ աշխարհի, յամի երես-
 ներորդի ինքնակալութեան բարեպաշտոն քրիստոսասէր և աստուածա-
 պսակ արքայի, ծիրանածին տեառն Մանուէլի Կոմնենայ, յամսեանն
 երրորդի, յերկրորդում ամի աստուածապսակ թագաւորի մերոյ Տեառն
 Ալէքսի Կոմնենայ՝ որդւոյ նորա... » տե՛ս PG, t. 133, p. 232 - 233, Հմմտ.
 Պալճեան, Պատմութիւն, էջ 237): Արարչության բյուզանդական 6680
 թվականը ինչպես և Ե (5) ինդիքտիոնը համընկնում են այժմյան 1171
 թ. սեպտեմբերի 14 - 1172 թ. սեպտեմբերի 13 ժամանակամիջոցին:
 Մանուէլ Կոմնենոսը գահ է բարձրացել 1143 թ. ապրիլի 8-ին (որը Հա-
 մապատասխանում է բյուզանդական 6650 թվականի նույն ամսա-
 թվին): Սուլյին եթե գումարենք 30 տարի՝ կստանանք կրկին նույն
 6680 բյուզանդական արարչության թվականը, որը համընկնում է 1171
 թ. սեպտեմբերի 14 - 1172 թ. սեպտեմբերի 13 ժամանակամիջոցին:
 Ալեքս Բ Կոմնենոսի ծննդյան թվական է համարվում 1169 թ.
 սեպտեմբերի 14-ը (տե՛ս Wirth, Wann, S. 67), իսկ երկու տարի երեք ամիս
 գումարելիս կստանանք 1171 թ. նոյեմբեր-դեկտեմբերը, որն ամսով
 արդեն չի համապատասխանում ինդիքտիոնի թվագրմանը: Եթե
 հետևելով Հ.Լ.Ջեքիյանին (տե՛ս Ջեքիեան, Համամիութենական, էջ 57),
 վրիպակ համարենք այս անհամաձայնութիւնը և ճկատի ունենանք,
 որ կայսեր Հայտնի թղթի թարգմանութիւնը տեղի է ունեցել 1171 թ.
 դեկտեմբերին (տե՛ս № 12), ապա կարելի է վերապահությամբ ասել, որ
 դեկտեմբերին է հասել 1171 թ. հոկտեմբեր-դեկտեմբերին:
 դեսպանախումբը Հռոմից է հասել 1171 թ. թուղթը կարելի է թվագրել 1171 թ. ամ-
 Հետևապես կայսերական այս թուղթը կարելի է թվագրել 1171 թ. ամ-
 բարգամանիչ Միքայելը (տե՛ս PG, t. 133, p. 236 A5):

Պարագաներ. նամակը կաթողիկոսի համար ընթերցել է
 թարգմանիչ Միքայելը (տե՛ս PG, t. 133, p. 236 A5):

Հրատարակություններ և թարգմանություններ. PG, t. 133,
 p. 233-236

Գրականություն. Dölger, Regesten, S. 84, վավ. 15115:

1171 թ. ամառ

Վերնագիր. Կայսեր պաշտոնական Հայտնի թղթի վերնագիրն ու թղթառաջըբ Հունարենն բնագրով մեղ չեն Հասել: Գիտենք միայն, որ Թեոբրիանոսն այն անվանում է ի ֆաներά (Հայտնի, բաց): Այդ պատճառով էլ բերում ենք միայն վերնագրի Հայերեն թարգմանությունը, որը պահպանել է ՊԽՄ ժողովածուն. «Թուղթ կրկին անգամ՝ պատասխանի դարձեալ ի թագաւորէն Հոռոմոց ի Կիւ Մանուէլէ, / Ներսիսի կաթողիկոսի Հայոց, / յաղագս նոյն խնդրոյ միաբանութեան երկաքանչիւրոց ազգաց եկեղեցւոյ ի տէր մեր Քրիստոս»: Բանաձևը եռամասն է. X » N, և վերնագիր: Կայսերական թղթերի Համարակալումը (այս դեպքում՝ «կրկին անգամ»), ամենայն Հավանականությամբ, ՊԽՄ ժողովածոյի կազմող Ներսես Լամբրոնացուն է:

Ճր. Դյուգերը Հունարեն բնագրի վերնագիրը վերականգնում է ըստ Թեոբրիանոսի «Տրամախօսութեան» բնագրի. Φανερά βασιλέως γραφή⁵⁴ (տե՛ս PG, t. 133, p. 236 B1, Հմմտ. Dölger, Regesten, S. 84, վավ. 1506):

Թղթառաջը. Այս թղթի Հունարեն տարբերակում բացակայում է թղթառաջըբ, որն, ամենայն Հավանականությամբ, Թեոբրիանոսը բաց է թողել, որովհետև այն պետք է կրկին «գաղտնի» թղթի (N^o 11) նույնանման Հատվածը: Նամակի թղթառաջըբի Հայերեն տարբերակը պահպանվել է ՊԽՄ ժողովածոյում. « Մանուէլ ի Քրիստոս Աստուած Հաւատացեալ թագաւոր ծիրանածին աստուածապսակեալ արքայ, զաւրաւոր եւ բարձր միշտ, եւ ինքնակալ Հոռոմոց Կոմնինոս. / պատուական եւ սրբազան կաթողիկոսիդ Հայոց տեառն Ներսիսի՝ / զչնորսս նորին»:

Կառուցվածքը եռամասն է. X » N, ողջույնի բանաձև:

Բովանդակություն.

Աղ. Τὸ μετὰ τῶν ἀνθρώπων τῆς σῆς τιμότητος σταλὲν γράμμα τῆ βασιλεία μου... / Առ ի քէն առաքեալ գիր թագաւորութեանս իմոյ ընդ արս պատուականութեան քո... /

Վրջ. ...καὶ δύναται πιστεῦσαι ἢ σὴ τιμότης τοῖς παρ' αὐτῶν λαληθησομένοις [... եւ կարացէ Հաւատալ քո պատուականութիւնդ առ ի դոցանէ ասացելոցն]:

54 = Թագաւորական յայտնի գիր:

Կառուցվածքը.

ա) Մուտք. Հայտնում է, որ ստացել է կաթողիկոսի նամակը և ցույց է տվել Կոստանդնուպոլսի պատրիարքին և սինոդին: Հայերեն բնագրում պահասում է միայն պատրիարքի «Տիեզերական»- ΟΙΚΟΥΜΕΝΙΚΩ պատվանունը:

բ) Բուն խնդիր. Հայոց եկեղեցու օգտագործած «մի բնութիւն» բանաձևի շուրջ: Թեորիանոսին և Աթմանին կրկին Հոռոմկա ուղարկելու և այդ ու մի շարք այլ խնդիրների շուրջ բանակցությունների առաքելու մասին:

գ) Վերջաբան-ամփոփում. Հույս է Հայտնում, որ երկու եկեղեցիների միջև միություն կհաստատվի: Խնդրում է կաթողիկոսին Հավատ ընծայել դեսպանագնացների պատմածին:

Այս նամակը չափազանց խնամքով է թարգմանված Հայերեն: Միայն մի տեղում Հունարենի եզակիով դրված առաջին դեմքի դերանունը թարգմանվել է հոգնակի (տե՛ս ԹԸ, 1871, էջ 15525 մերոյ = PG, t. 133, p. 236 C1, μου): ՊԽՄ-ի նախորդ Հրատարակությունների մեջ տեղ գտած «Հայր» սխալ ընթերցումը մի շարք Հնագույն ձեռագրերի տեղ ման վրա պետք է վերականգնել «Հայ» (այս Հակադրությունը առաջինը նկատել է բյուզանդագետ Հր. Բարթիկյանը, Հայերեն թարգմանությունը Հունարեն բնագրի հետ Համեմատելիս (տե՛ս Бартикийн, Роль, էջ 82, ծան. 7): Հայերեն թարգմանության մեջ չենք կարող ցույց տալ որևէ նախադասություն, որը միտումնավոր կերպով շեղվի Հունարեն բնագրի մտքից: Այնուհանդերձ կան որոշ բնագրական Հավելումներ կամ շեղումներ.

ա) Հայերեն թարգմանության մեջ երբեմն մեղմված են Հունարեն բնագրում Հայոց եկեղեցու դավանանքը օրթոդոքս-բյուզանդական եկեղեցու վարդապետությանը ստորադասելու կամ այն մերժելու փորձերը.

1) ...ἐπει δὲ τὸ μίαν φύσιν λέγειν ἐπὶ τῆς ἐκ δύο φύσεων μᾶς τοῦ Χριστοῦ ὑποστάσεως... (PG, t. 133, p. 236 B11).

«Այլ՝ քանզի գտի վրձ պատուականութիւնդ ոչ խոտան գոլ ասել եւ զմի բնութիւնն ի վերայ միոյ անձնաւորութեանն Քրիստոսի՝ որ է յերկուց բնութեանց...» (ԹԸ, 1871, էջ 155):

Ընդգծված Հատվածը թարգմանչի կամ ՊԽՄ ծողովածուի կազմողի Հավելումն է, որով նպատակ ունի ասել, թէ «մի բնութիւն» բանաձևն էլ մերժելի չէ:

2)...ἀλλ' οὐχ ὡς παρὰ τῆς τῶν Ἀρμενίων Ἐκκλησίας ἡ τοιαύτη
ῥῆσις ἐκλαμβάνεται, οὕτω καὶ παρὰ τῆς Ἐκκλησίας ἑρμηνεύ-
ται... (PG, t. 133, p. 236 C5).

«...այլ ոչ որպէս իմանի եւ ընդունելի լինի ասացուածս այս յե-
կեղեցւոջ Հայոց, ոչ թէ այնպէս եւ ի կաթողիկէ եկեղեցւոջ վարդապե-
տի...» (ԹԸ, 1871, էջ 155):

Ընդգծված բառակապակցութիւնը բացակայում է Հունարենում,
սակայն փորձելով ճշտել Հունարեն բնագրի միտքը՝ թարգմանիչն
ափելի է խճճում այն, այնինչ եթե առանց այդ Հավելման «այնպէս եւ
ի կաթողիկէ եկեղեցւոջ վարդապետի» հատվածը դրվեր վերևում
բերված հատվածի սկզբում՝ «այլ ոչ որպէս իմանի»-ից առաջ,
կունենայինք Հայերեն և Հունարեն վավերագրերի ճշգրիտ բնագրա-
կան համապատասխանութիւն: Գումարելով «ոչ թէ» շարահյուսական
միավորը, ձեռքի տակ Հունարեն բնագիրը չունեցող ընթերցողը
Հավասարապես սխալ պետք է համարի և Հայոց եկեղեցու, և օրթոդոքս
Հունական եկեղեցու դիրքորոշումը (պէտք է նշել նաև, որ «կաթողիկէ»
բառը ևս Հայտնվում է միայն Հայերեն բնագրում):

բ) Վավերագրի ՊԽՄ ժողովածու մտած բնագրում Հավելված են
արտահայտութիւններ, որոնք լրացնում են Հունարեն բնագրի միտքը
(օրինակ՝ Հայերենում Հավելված է Թեորիանոսի «մայիստո» պատվա-
նունը, օ՝ ΑΤΜΑΝΟΣ-ի փոխարեն նույն անձնավորութիւնը Հայերեն
տարբերակում կոչված է «Յովհաննէս անուն» և այլն):

Թղթի Հունարեն բնագրում կայսրը կաթողիկոսին դիմում է եր-
րորդ դեմքի եզակի թվի անձնական դերանունով (տե՛ս PG, t. 133, p.
236 B2, B10, C10, C13, D9), երբեմն՝ հոգնակի երկրորդ դեմքով (տե՛ս
նույն տեղում ,p. C14, D1): Կայսրն իր մասին խոսում է եզակի թվի ա-
ռաջին դեմքով (տե՛ս PG, t. 133, 236 B3, B7, C11), երբեմն՝ առաջին
դեմքի հոգնակիով (տե՛ս նույն տեղում, p. 236 D1) :

Թղթավարտ. Այս հատվածի Հունարեն բնագիրը բացակայում
է, իսկ Հայերենն ունի հետևյալ տեսքը. «Ողջ լէք ի Քրիստոս: / Գրե-
ցաւ յամսեանն Դեկտեմբերի, յընդիքտինին ի Հինգն»: Բանաձևը երկ-
մասն է. բաղկացած է հրաժեշտից և թվագրումից):

Թվականը. Հայերենով պահպանված թվականն ամենայն հա-
վանականութամբ փաստաթղթի թարգմանութիւն կամ Հռոմիլայի ե-
կեղեցական դիվան մուծելու ժամանակն է: Հինգերորդ ինդիքտինի
դեկտեմբերը համընկնում է 1171 թ. դեկտեմբերին, որը համապատաս-
խանում է նույն ամսվան, որով դեսպանագնացութիւն Հռոմիլա հաս-
նելը Թեորիանոսը կապում է Ալեքս Բ Կոմնենոսի ծննդյան երկրորդ

տարվա երրորդ ամսի հետ: Կասկածի տեղի է տալիս Թեորիանոսի բերած Ե (5) ինդիքսիոնի երկրորդ ամիսը (ε' κατὰ τὴν κ' δευτ. μήνος) Թվագրումը, ուր հնարավոր է թվում, որ բնագրի հեղինակային ձեռագրում ճշտ. (երկրորդի) փոխարեն եղած լինի Ծ՝, ինչը կհամապատասխաներ այդ ինդիքսիոնի չորրորդ ամսին՝ դեկտեմբերին և կվերացներ Հունարենում առկա հակասությունը: Այնուամենայնիվ, մեր այս ենթադրությունը դեռևս վերջնական համարել չի կարելի (տես նաև Grumel-Darrouzès, p. 550-551):

Հրապարակումներ և թարգմանություններ. ԹԸ, 1871, էջ 154 - 156, PG, t. 133, p. 236:

Գրականություն. Ջեքիեան, Համամիութենական, էջ 57⁵⁵, Dölger, Regesten, S. 84, վավ. 1506):

№ 13

1171 թ. ամսո

Վերնագիր. Հունարեն բնագրի վերնագիրը Վ. Գրյունցիլը վերականգնում է ըստ Թեորիանոս մաղիստրոսի «Տրամախսուութեան»՝ Τὸ Πατριαρχικὸν [γράμμα]: Պես ժողովածոյում պահպանված Հայերեն վերնագիրն ունի հետևյալ տեսքը. «Թուղթ տեսուն Միքայէլի պատրիարքին Կոստանդինուպալսոյ՝ / սակս այսր խնդրոյ, / առ սուրբ Հայրապետն Ներսէս»: Կառուցվածքը եռամասն է. բանաձև՝ Y » N, միջնամասում՝ վերնագրի բովանդակային նկարագրությունն է:

Թղթի Հայերեն տարբերակի սկզբում՝ Թղթառաջբից առաջ, պահպանվել է նաև վավերագրի Հռոմկլայի կաթողիկոսական նոտաբատանը պահվող թարգմանության վերնագիրը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ պատրիարքական նամակի Թղթառաջ-դիմումի մի Հատվածի մը՝ շակված տարբերակը. «Պատուական եւ սուրբ սիրեցելոյ սրբասնեալ կաթողիկոսին ամենայն Հայաստանեայց տեսուն Ներսիսի»: Բանաձևում (» N) բացակայում է նամակագրին վերաբերող Հատվածը:

Թղթառաջք. Պահպանվել է միայն Հայերեն թարգմանությամբ. «Միքայէլ ողորմութեամբն Աստուծոյ արքեպիսկոպոս Կոստանդինուպալսի Նոր Հռովմայ եւ տիեզերական պատրիարք: / Պատուական եւ սուրբ սիրեցեալ յաջորդ բարձր աթոռոյն սրբոյ եւ սքանչելի

55 Հ. Լ. Ջեքիյանը սխալմամբ կարծում է, թէ. «Լամբրոնացի միացուցած է կայսերական երկու նամակները», հավանաբար նկատի ունենալով գաղտնի (№ 11) եւ հայտնի (№ 12) թղթերը:

մեծահռչակ հաւերն մերոյ սրբոյն Գրիգորի Հայոց Մեծաց Լուսաւորչի»:
Կառուցվածքը երկմասն է. բանաձև՝ Y » N:

Բովանդակութիւն.

Ալ. Էւրինյ թողի, փոյ, տոյս աճաթոս տոն ոմոն, կա ուկ էս-
տւն աւտոյս սկանձալոն...« Խաղաղութիւն բաղոմ, աւէ՛ որք սիրէն
զաւրէնս [Աստուծոյ], եւ ոչ գոյ ի նոսա գայթակղութիւն...»

Վրջ. ...կա՛ ճոջան ոմոյ տօ՛ն ոմոնաւն աւտոյս աւնեւնկոյմեւ. «...եւ
փառս համանգամայն նորին անուանն վերառաքեսցուք»:

Կառուցվածքը.

ա) Մուտք. մեկնում է Դավթի ճժԸ Սաղմոսի 165-րդ տունը.
Էւրինյ թողի տոյս աճաթոս տոն ոմոն, կա ուկ էստւն աւտոյս
սկանձալոն (հունարեն Աստվածաշնչային բնագրում ոմոն-ից հետո
գրված է սոյ գերանունը, որը բացակայում է թղթի բնագրում): Այս
մեջբերումը հայերեն է թարգմանված. «Խաղաղութիւն բաղոմ, որք
սիրէն զաւրէնս Աստուծոյ, եւ ոչ գոյ ի նոսա գայթակղութիւն»: Հայե-
րեն բնագրում Աստուծոյ-ի փոխարեն «քո» գերանունն է, իսկ բաղու-
մից հետո՝ «է այնոցիկ» արտահայտութիւնը, որոնք թույլ են տալիս
մեզ ենթադրել, որ թե՛ հունարեն բնագրում, և թե՛ հայերեն թարգմա-
նութեան մեջ Աստվածաշնչային մեջբերումը կատարված է հիշողու-
թեամբ:

բ) Բուն խնդիր. Պատրիարքը սահմանում է բյուզանդական կայ-
սեր գիրքը տիրակալների ընտանիքում, բացատրում է Քրիստոսի բա-
ժանված եկեղեցին միավորելու նրա ձգտումը, գովում է այս հարցի
շուրջ կաթողիկոսի ուղարկած նամակները, բարի ավարտ է մաղթում
կաթողիկոսի և կայսեր բռնած գործին:

գ) Վերջաբան-ամփոփում. հավաստիացնում է, որ բյուզանդա-
կան եկեղեցին պատրաստ է իր գիրքը ընդունել Հայոց եկեղեցական
կազմակերպութիւնը: . .

Թուղթը հայերեն է թարգմանված մեծ խնամքով, թեև կարելի է
նշել նաև որոշ շեղումներ: Օրինակ. «սուրբ» (ԹԸ, 1871, էջ 158A) է
թարգմանվել հունարեն բնագրի *θειότατος* -ը (ամենաստվածային)
«մեր մեծ եւ ինքնակալ թաղաւորս» (ԹԸ, 1871, էջ 158A-5)՝ ἡμῶν αὐ-
τοκράτωρ և այլն: Ամբողջովին չի թարգմանվել. *Πρὸς δὲ καὶ ταῖς*
ἐπιστημονικαῖς τῶν θείων Γραφῶν ἀναπτύξεσι... արտահայտու-
թիւնը (տե՛ս *PG*, t.133, p. 237C10-11): Պատրիարքը իր, բյուզանդական
եկեղեցու և կայսեր մասին խոսում է հոգնակի առաջին դեմքի դեր-
անունով (*PG*, t. 133, p. 237 A14, 7, 9, D1, 239 A8), իսկ կաթողիկոսին է

դիմում երկրորդ դեմքի եզակի թվի դերանունով (PG, t. 3, p. 237 B14, 15, 9) ու միայն մեկ անգամ՝ նույն դեմքի հոգնակի դերանունով (PG, t. 133, p. 240 A9):

Փղթալարտ. Ἐρῶσο, τιμώτατε καὶ ἐν Κυρίῳ ἀγαπητὲ καὶ Καθολικῆ ἄνερ ὀσιώτατε. «Ողջ լիբ պատուական եւ սուրբ սիրեցեալ կաթողիկոս, այր սրբանեալ»:

Չնայած ողջույնի բանաձևը հունարենի պատճենումն է, այնուամենայնիվ, այստեղ էլ շեղում կա ընդ $\text{Kyri}\omega\text{-}\acute{\nu}$ թարգմանվել է «սուրբ»:

Փլակաւը. տե՛ս Grumel-Darrouzès, p. 550-551:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871, էջ 157-159, PG, t. 133, p. 236-240:

Գրականություն. Grumel-Darrouzès, p. 550-551, տե՛ս նաև Mazal, Prooimien, S. 30:

N^o 14

1171թ. ամստ

Վերնագիր. Պաշպանվել է միայն Հայերեն բնագրի վերնագիրը. «Գլխակարգեալ խնդիրք առ ի Հռոմոց առաքեալ ի թագաւորէն, զի ի գումարել ժողովոյն Հայոց՝ ընտրեսցէն զոր արժան է ընդունել սակս միաբանութեան»:

Բանաձև. X(Y) \gg (N).

Ամբողջական հունարեն վերնագիրը չի պաշպանվել: Թեորիանոսն իր ուղղակի խոսքում այս վավերագիրն անվանում է «Գլխակարգութիւն» (Κεφάλαια), իսկ կաթողիկոսն այդ վավերագրի մասին ստում է. «...δὸς ἡμῖν ἐγγράφως τὰ κεφάλαια ἅπαντα ὅσα ὁ ἅγιος βασιλεὺς καὶ ἡ ἀγία Ἐκκλησία τῶν Ῥωμαίων ζητεῖ παρ' ἡμῶν...[= սուր մեղ արձանագրուած բոլոր գլուխները (կամ կետերը), որոնք մեզին պաշանջում են սուրբ թագաւորը եւ Հռոմէացիների սուրբ եկեղեցին] (PG, t. 133, p. 268 D, հմմտ. Պալճեան, Պատմութիւն, էջ 255):

Բանաձև. N \ll X(Y)

Թղթառաջք և թղթալարտ. չունի:

Բովանդակություն.

Սղ. - α) Ἴνα ἀναθεματίζωσι τοὺς λέγοντας μίαν φύσιν τὸν Χριστὸν, Εὐτυχέα τε καὶ Διόσκορον, Σεβήρον καὶ Τιμόθεον τὸν Αἰλουρον καὶ πάντας τοὺς ὁμόφρονas τούτου...[ա) նորոգեցէք զա-

սաւղսն մի բնութիւն զՔրիստոս. զԵւտիքէս եւ զԴէսուհորոս եւ զՍեւե-
րիանոս եւ զՏիմոթէոս զԿուղզն եւ զամենայն Համախոհ նոցունց...]:

Վրջ. - Յ) Կնա δέχωνται τὴν πρόβλησιν τοῦ καθολικοῦ μόνου
παρὰ τοῦ βασιλέως τῶν Ῥωμαίων. [Թ] Եւ զի ընդունիցիք զառաջար-
կութիւն կաթողիկոսին՝ միայն ի Թագաւորէն Հռոմոց]:

Վազեբրագիրը ներկայացնում է բյուզանդական եկեղեցու պա-
հանջները Հայոց կաթողիկոսին: Այս վազեբրագիրը թե՛ Հայերեն, թե՛
Հունարեն տարբերակներում ունի ինը դավանական մեղադրանք-կետ
(Միքայել Ասորուց վերցված Բար Հերբեստի Ժամանակագրության բը-
նագրում հիշվում է 10 կետ⁵⁶): Հունարեն բնագրի Հետ Համեմատած
Հայերենում տեղափոխված են «Ե» և «Զ» մեղադրանքների տեղերը:
Թեև Հայերեն Թարգմանությունը բառացի է, այնուամենայնիվ Հարկ
կա անդրադառնալ մի շարք շեղումների.

ա) Երկրորդ կետում ...ἕνα Χριστὸν ἔχοντα δύο θελήσεις φυσι-
κάς -ը սխալմամբ Թարգմանվել է «մի Քրիստոս ունելով երկուս ներ-
գործութիւնս բնականս» Θελήσεις - «կամք» բառը Թարգմանելով՝
«ներգործութիւն»):

բ) Յոթներորդ կետում οἱ Χριστιανοί («քրիստոնեայք») բառը
Թարգմանիչը Հայերեն բնագրում բացատրել է, ալիբացնելով՝ «քահա-
նայք եւ ժողովրդականք» բառերը:

գ) Ութերորդ կետ. «Կնա δέχωνται τὰς ἐπιτὰ οἰκουμενικάς συ-
νόδους» Հատվածի Հայերեն Թարգմանությունը թվում է, թե պահ-
պանել է Հունարեն վազեբրագրի նախնական տեսքը. «Եւ զի ընդունի-
ցիք զչորրորդ եւ զհինգերորդ եւ զվեցերորդ եւ զեւթներորդ զտիեզե-
րական ժողովսն»: Հայերենով ներկայացված բնագրի բովանդակու-
թյունը կրկնում է նաև Բար Հերբեստը իր Ժամանակագրության մեջ,
որը մեր առաջարկած վարկածը Հաստատող փաստարկ կարելի է Հա-
մարել⁵⁷:

Թվականը. Վազեբրագիրը Հռոմից է Հասել նախորդ չորս
վազեբրագրերի Հետ միաժամանակ:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871,
էջ 156-157, PG, t. 133, p. 269, MS, t. III, p. 335:

Գրականություն. Tekeyan, Controverses, p. 29, Zekiyán, St. Ner-
ses, p. 866-867, Grumel-Darrouzès, p. 551:

56 Տե՛ս MS, t. III, p.335, Հմմտ. Գաև ԼՄ, 1870, էջ 460 և ԼՄ, 1871, էջ 459:

57 Տե՛ս MS, t. III, p.335:

1172 թ. սկիզբ (հունվար-մարտ^o)

Վերնագիր. Պատասխանի թագաւորական գրոյս / տեառն Ներսիսի՝ / երրորդ անգամ:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. X « N, և վավերագրի հերթական համարը: Մեզ համար պարզ է, թե արդյոք կայսերական նամակի հերթական համարով համարակալուժը նոտարական ղիվանինն է, թե՞ Ներսես Լամբրոնացունը: Հակված ենք երկրորդ ենթադրությանը: Վավերագիրն անվանված է « Պատասխանի »:

Թղթառաջք. Բրիտոսապասկեալ բարձր եւ յաղթող ինքնակալին Հոռոմոց՝ ծիրանածին սուրբ թագաւորին Կիո Մանուէլի՝ / խնդալ միշտ, / ի Ներսիսէ նուաստէ ծառայից Աստուծոյ եւ շնորհիւ եւ ողորմութեամբ նորին կաթուղիկոսէ Հայոց:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. X « N, հասցեատիրոջ և նամակագրի միջև ողջունի բանաձևն է: Այս թղթառաջքը յուրահասուկ կառուցվածք ունի. թղթառաջք-ողջունը գտնվում է թղթառաջք-գիմումի և թղթառաջք-բանաձևի միջև:

Բովանդակություն.

Սկ. - Երկրորդ յետ աստուածեղէն մատանցն գրաւորութեան...

Վրջ. - ...թող թէ զարգելեալսն յաւրինաց եւ ի կանոնաց:

ՊԽՄ բնագրի մեջ պահպանված այս նամակում վերականգնել ենք մի նշանակալի հատված, որն արդեն ԺԳ դարում ընկած է եղել Ընդօրինակությունների մի նշանակալի մասից, իսկ հետագայում՝ վրլընդօրինակությունների մի նշանակալի մասից: Մեզ հայտնի է այս պեղ է նաև Հրատարակողների ուշագրությունից: Մեզ հայտնի է այս հատվածը պարունակող երեք գրչագիր մատյան (մեր կողմից համեմատության ընթացքում օգտագործված A [ՄՄ-500] և b [ՄՄ-524] ձեռագրերը ու Երուսաղեմի Ս. Յակոբեանց Մատենադարանի թ. 633 մատյանը):

Կառուցվածքը.

ա) Մուտք. Հայտնում է, որ ստացել է կայսեր նամակը և լսել

զեսպանադնացների պատմածը:

բ) Բուն խնդիր. Խոսում է «մի բնութիւն» բանաձևի շուրջ: Հավաստիացնում է, որ իր բացատրությունը վերցրել է Ս. Կյուրեղից և խնդրում է չպարտադրել «երկրորդ բնութիւն» բանաձևը: Ակնարկում է, որ այդ հարցը և բյուզանդացիների պահպանված ծիսադավանական կետերը կքննարկվեն Հայոց եկեղեցու կողմից Հրավիրված ժողովում,

որի որոշումները կաթողիկոսը խոստանում է ուղարկել այդ իրադարձութիւնը մասնակցած եպիսկոպոսների և վարդապետների ձեռքով:

դ) Վերջաբան-ամփոփում. Բյուզանդացիներին կոչ է անում ավելի հանդուրժող լինել:

Նամակի մուտքում ավելի ամբողջական տեսքով է վերաշարադրված թղթառաջը-դիմումը. «Ով քրիստոսապսակեալ ծիրանածին բարձր եւ յաղթող միշտ աւգոստոս եւ ինքնակալ Հոռոմոց Կոմնինոս՝ տէր Մանուէլ, պարունակող զերապատուութեամբ ընդհանուր թագաւորութեանց, որ ի ներքոյ երկնից...»:

Կաթողիկոսն իր մասին խոսում է հոգնակի առաջին դեմքի դերանունով (ԹԸ, էջ 160^{12,28}, 161^{15,18}): Կայսրին դիմում է հոգնակի երկրորդ դեմքի դերանունով (ԹԸ, էջ 161^{17,20}):

Այս նամակի համառոտ վերաշարադրանքը փորձել է տալ նաև Թեորիանոսն իր Բ Տրամախոսութիւն վերջում (PG, t. 133, p. 276 C15-D6):

Թղթավարտ-բանաձև. Ողջ լեր աւծեալդ Աստուծոյ, յաղթող եղեալ Հակառակամարտիցն՝ զաւրութեամբ ճշմարիտ աւծելոյն Յիսուսի:

Առկա է միայն հրաժեշտի բանաձևը:

Թվականը. Նամակը թվագրված չէ: Ներսես Լամբրոնացին այս նամակին նախորդող ծանոթագրութիւն մեջ հայտնում է, որ կաթողիկոսը փաստաթղթերը (N^oN^o 12,13,14, նաև այլ տեղերից հայտնի N^oN^o 10,11), ստանալուց հետո հրավիրել է եկեղեցական ժողով: Այս իրադարձութիւնը հավանաբար տեղի է ունեցել 1171 թ. դեկտեմբեր - 1172 թ. գարուն ժամանակամիջոցին: Եվ քանի որ կայսեր դեսպանագնացները չեն համաձայնվել սպասել մինչև ժողովի հրավիրումը («քանզի ժողովոյն գումարումն ի յամառնային պատշաճէր եղանակ»), կաթողիկոսը ներկա և հաջորդ (N^o 16) նամակները հանձնում է մագիստրոս Թեորիանոսին և Հովհաննես Աթմանին՝ իրենց դեսպանագնացութեամբ Կ.Պոլիս տանելու համար: Պատրիարքական նամակից հետո դրված է Ներսես Լամբրոնացու ծանոթագրութիւնը, ուր հեղինակը հայտնում է, որ նամակներն ուղարկելուց հետո կաթողիկոսը եկեղեցական ժողով հրավիրելու հրաման է արձակում («Աղուանից մինչև ի կողմանս Սուրացուց եւ մինչև ցԱրեւմտային կողմանս»), սակայն մահանում է նույն տարվա (622=1173թ.) օգոստոսի 13-ին («...ի նոյն ամի վերափոխէր զերանելի Հայրապետն ... յամսեանն օգոստոսի, որ աւր երեքտասան էր, յաւուր Հինգշաբթուջ, եւ ի թուականիս Հայոց ի վեց հարիւր քսան եւ երկու...»):

Հրատարակությունները և թարգմանությունները. ԹԸ,
1871, էջ 160-161, PG, t. 133, p. 276 C12-D7:

Գրականություն. PG, t. 133, p. 274 B1-3, Ջեքիեան, Համամիու-
թենական, էջ 57-58, Բոզոյան, Բյուզանդիայի, էջ 245-246:

№ 16

1172 թ. սկիզբ (հունվար-մարտ^o)

Վերնագիր. Թուղթ Տեառն Ներսիսի կաթողիկոսի՝ / առ տէր

Միքայել պատրիարքն Հոռոմոց:

Կառուցվածքը երկմաս է՝ բանաձև. N » Y : Վավերագիրն ան-
վանված է «Թուղթ»:

Թղթառաջք. Սուրբ եւ ընդհանրական կաթողիկէ եկեղեցւոյ
Թագաւորական քաղաքին Կոստանդինուպուլսի պատրիարքի տէր Մի-
խայէլի՝ / ողջ լինել ի Քրիստոս. / ի նուաստէ ծառայից Քրիստոսի եւ
ողորմութեամբ եւ կամաւք նորին կաթողիկոսէ Հայոց Ներսիսէ, յաթո-
ռակալէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. Y « N , թղթառաջք-ող-
ջույնի բանաձևը զրված է Հասցեատիրոջ և նամակագրի միջև:

Այստեղ ևս պետք է նշել, որ նախորդ վավերագրի (№ 15)
Թղթառաջքի նման թղթառաջք - ողջույնը զրված է թղթառաջք-
դիմումի և թղթառաջք - բանաձևի միջև:

Բովանդակություն.

Սկ. - Ի մաւրդ իմաստութեան ստեանց ընկալաք զցաւղ կաթին
տղայական մտաց մեր յարբումն...

Վ.բ.ջ. - ...Աստուած փառաւորեսցի յամենայն լեզուս ազգաց յե-
կեղեցիս արդարոց ի մի միաբանութիւն հաւատոց:

Կառուցվածքը.

ա) Մուտք. Հայրապետը հիշեցնում է, որ Հայոց եկեղեցին ժամա-
նակին եղել է տիեզերական եկեղեցու գրկում և այժմ էլ ցանկություն
ունի միավորվել նրա հետ:

բ) Բուն խնդիր. Կաթողիկոսը Հավաստիացնում է, որ Հայոց եկե-
ղեցին ցանկություն ունի դեռ ուղղափառ-բյուզանդական եկեղեցու
հետ միևնույն ճանապարհով, մանավանդ, երկու կողմի վարդապետ-
ները բանակցություններին հետո: Ներսիս Դ Շնորհալին իր ուրախու-
թյունն է Հայանում, որ նույն միտքն է արծարծում նաև պատրիար-
քական նամակը («գրաւորական Ձեր բան»): Գալով սուրբ Երրորդու-

Թեանը, կաթողիկոսը վերադրում է նրան մեկ կամք, մեկ իշխանություն և մեկ տերություն, որից բխում են երկնային քահանայության ինը դասերը, բաժանված երեք խմբի: Կաթողիկոսն այնուհետև Հույս է Հայտնում, որ երկնային քահանայության օրինակով բյուզանդական կայսեր («գանուանակրի նորին եւ զաթուակալի զքրիստոսապակեալ սուրբ Թադաուրիդ») գլխավորությամբ կմիավորվեն տիեզերական եկեղեցու իրարից անջատված թևերը: Ներսես Շնորհալին Հավատացած է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքը ևս իր հոգևոր դործունեությամբ ամեն ինչ կանի միությունը գլուխ բերելու և երկու եկեղեցիները միավորելու համար: Նա այդպիսի բարի սերմ է համարում պատրիարքի նամակը և Հավաստիացնում է, որ Հայոց եկեղեցական ժողովում ինքն ամեն ինչ կանի, որպեսզի միություն և խաղաղություն Հաստատվի եկեղեցիների միջև:

դ) Վերջաբան-ամփոփում. Հորդորում է պատրիարքին Հրավիրել բյուզանդական-օրթոդոքս հոգևորականների եկեղեցական ժողով, ուր կկայանա երկու եկեղեցիների միության խորհուրդը:

Կաթողիկոսն իր անձի և սեփական եկեղեցու մասին խոսում է հոգնակի առաջին դեմքի դերանունով (ԹԸ, 1871, էջ 1624, 11, 17, 25, 29, 35, 1632, 20, 16428, 33, 1656, 14), պատրիարքի մասին արտահայտվում է հոգնակի երկրորդ դեմքի դերանունով (ԹԸ, 1871, էջ 16227, 1631, 8, 9, 13, 16418, 22, 23, 26, 30, 1654, 5, 15):

Թղթավարտ. Ողջ լէր (մի քանի զրչազրերում զբան Հաջորդում է Հետևեալ արտահայտությունը. գլուխ յետ գլխոյն եկեղեցոյ):

Առկա է միայն Հրաժեշտի բանաձևը:

Թվականը. Նամակը թվագրված է: Տե՛ս նախորդ (№ 15) նամակի թվագրումը:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871, էջ 161-165:

Գրականություն. Բողոյան, Բյուզանդիայի, էջ 245-246:

№ 17

1173 թ. օգոստոսից հետո՞

Այս վավերագիրը մեզ չի հասել: Սրա գոյության մասին տեղեկացնում է Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի թղթերից մեկի (№ 19) հետևյալ վկայությունը. «...քանզի որպէս ծանուցաւ նախ քում բարեպաշ-

տուլթեանդ յառաքեալ մեր գրոյն...»: Գրիգոր Դ-ն այս նամակով Մանուել Ա Կոմնենոսին տեղեկացրել է Ներսես Դ Շնորհալու մահը:

Գրականություն. ԹԸ, 1871, էջ 166, Բողոյան, Գրիգոր, էջ 93:

№ 18

1173 (1174^o) թ.

Վերնագիր. - Վերականգնում ենք ըստ Ներսես Լամբրոնացու ծանոթագրութեան. «Թուղթ մխիթարութեան (նոյն ինքն) բարեպաշտ Թագաւորն ի Հարազատ որդի նորին սրբոյ աթոռոյն ի տէր Գրիգոր» (ԹԸ, 1871, էջ 166-5-6):

Բանաձև. X » N:

Պարագաներ. Վավերագրի բնագիրը մեզ չի հասել: Ներսես Լամբրոնացին Հիւշյալ ծանոթագրութեան մեջ պատմում է, որ Մանուել Ա Կոմնենոսը տեղեկանալով Ներսես Դ Շնորհալու մահվան մասին, նրա անունն էլ է մուծում օրթոգոքս եկեղեցու կողմից սրբացված անձնավորութեանների շարքը, այսինքն՝ Թեորիանոսին տալով մեզ չհասած այս թղթի բնագիրը, ուղարկում է Հռոմկլա՝ ողջունելու նորընտիր կաթողիկոսին: Այնուհետև Ներսես Լամբրոնացին միայն մեկ արտահայտություն է բերում այդ թղթից. «սկսեալն ի նախնոյն եւ յերանելի տուլթուլն է բերում այդ թղթից. «սկսեալն ի նախնոյն եւ յերանելի Հաւրէն քո՝ ի ձեռն քո կատարեսցի»⁵⁸: Թեորիանոսը փաստաթուղթը չի կարողանում հասցնել Հռոմկլա և ուղարկում է ուրիշների ձեռքով. «Իսկ նորա (իմա՝ Թեորիանոսին) եկեալ յԱրեւելս, ի խոսովութենէ ճանապարհացն արգելաւ եւ ոչ կարաց հասանել ի Հայրապետական Աթոռն առ նորապսակ Հայրապետն, այլ միայն զնամակն Թագաւորական առաքեաց ի ձեռն Հետիոտաց ոմանց ճարտարաց եւ Հմտից ճանապարհին»:

Գրականություն. Այս նամակն արտացոլված է Թեորիանոսի «Տրամախօսութիւններում» և Ֆր. Դյուլգերի ցանկերում: Թղթի մասին տե՛ս № 19, Բողոյան, Բյուզանդիայի, էջ 246:

№ 19

1174 (1175^o) թ.

⁵⁸ ԹԸ, 1871, էջ 166:

Վերնագիր. Թուղթ Գրիգորի կաթողիկոսի Հայոց, որ դիմել տե-
առն Ներսիսի յաջորդեաց զաթոռն, / առ բարեպաշտ Թագաւորն Հոռո-
մոց Մանուէլ:

Կառուցվածքը երկմասն է՝ բանաձև. N » X, բանաձևի առաջին
մասը ևս երկմասն է. գահակալ կաթողիկոսի հետ հիշատակվում է նաև
նախորդ կաթողիկոսը:

Թղթառաջք. Քրիստոսապսակ աստուածասէր արքայիդ Հոռոմոց
Մանուէլի, որ նստիս գլուխ ընդհանուր տիեզերաց ծայրագոյն
պատուով եւ իշխանութեամբ. / Գրիգոր նուսատ կաթողիկոս Հայոց եւ
որ ընդ ինեւ լրումն ժողովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, / աղաւթիւք
ողջոյն առաքեմք:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. X « N, և թղթառաջք-ող-
ջուն: Թղթառաջք-բանաձևի երկրորդ մասը («Եւ որ ինեւ լրումն ժո-
ղովոյ Հայաստանեայց եկեղեցւոյ») ցույց է տալիս, որ այս թուղթը ա-
ռաքված է եղել եկեղեցական ժողովի անունից:

Բովանդակութիւն.

Սկ. - Հիմն բարի՛ գոր արկ քո աստուածասիրութիւնդ ի ձեռն ի-
մաստուն ճարտարապետին հասարակաց մեր հաւրն եւ Հայրապետի,
ցարդ եւս անկատար է...

Վ.ը. - ...քանդի եւ արժան իսկ է սրբութեամբ եւ իմաստութեամբ
եւ հասակաւ կատարեալ գոլով:

Կառուցվածքը.

ա) Մուտք. Կաթողիկոսն հիշեցնում է, որ այն բարի հիմքը (նկա-
տի ունի եկեղեցիներին միութեան հարցը), որ դրել էին կայսրը և Ներսես
Շնորհալի կաթողիկոսը, ավարտին է հասավ: Իսկ ինչ վերաբերում է ի-
րեն (իմա՛ Գրիգոր Դ Տղա հայրապետին), ապա՝ Ներսես Դ Շնորհալու
աշակերտը լինելով, փափաղում է ավարտին հասցնել այդ գործը: Կա-
թողիկոսն այդ ձեռնարկի ձգձգման երկու պատճառ է մատնանշում.
նախ՝ երկու կողմերի միմյանց նկատմամբ կուտակած չարութիւնը,
երկրորդ՝ կայսեր հեռու լինելու հանգամանքը:

բ) Բուն խնդիր. Ծանուցում է, որ Հայոց եկեղեցու քննարկմանն
ու ընդունման համար պարտադրված դանազան ծիսագավանական
կետերը շատերին հտ են պահում միութեանը զորավիգ լինելուց, որով-
հետև մի շարք հարցերում Հայոց եկեղեցու ավանդույթը շատ հին է:
Կաթողիկոսը նկատում է նաև, որ պարտադրված կետերի մեջ կան նաև
խնդիրներ, որոնք հոգևոր չեն, այլ աշխարհիկ-քաղաքական, և խընդ-
րում է դրանց քննարկումը հետաձգել այնքան ժամանակ, մինչև որ

երկու եկեղեցիներն արդեն իրար Հետ իսկապես միավորված կլինեն: Կաթողիկոսը բաղձում է արքային տեսնել պատերազմում հաղթած և եկեղեցիների միության խնդիրը լուծած: Հայրապետն անիմաստ է համարում կրկնել հավատո խոստովանությունը, քանի որ ինքն էլ է հետևում Ներսես Գ Շնորհալու հավատո խոստովանությանը, որը հավանության է արժանացել:

դ) Վերջաբան-ամփոփում. Կաթողիկոսը նշում է, որ վերևում ասվածը կարող է հաստատել պատվական Կոստանդին քահանան: Նա ծանոթ է Հայոց եկեղեցու ծիսադավանական յուրահատկություններին, քանի որ դաստիարակվել է իր մոտ: Ապա խնդրում է Անտիոքի պատրիարքի ձեռքով նրան ձեռնադրել Հերապոլսի թեմի արքեպիսկոպոս:

Կաթողիկոսը կայսերն է դիմում եզակի (ԹԸ, 1871, էջ 16627, 1673,5), երբեմն էլ հոգնակի երկրորդ դեմքի դերանունով (էջ 1676,26, 29): Ներսես Շնորհալի կաթողիկոսի մասին խոսում է հոգնակի առաջին (էջ 16628, 16723) և եզակի երրորդ դեմքի դերանուններով (էջ 16633): Կոստանդին քահանայի մասին խոսում է եզակի երրորդ (էջ 16732) և երկրորդ դեմքի դերանուններով (էջ 16735): Կաթողիկոսն իր մասին խոսում է եզակի (16633,35, 167,32) և հոգնակի (16628, 16725) դերանուններով:

Վերջաբան-բանաձև. Ողջ լիք / յարքունական տէրութեանդ պարագայց ամաւք, կարող եւ ինքնակալ բարձր աստուածասէր թաղաւոր:

Հրաժեշտի բանաձևին հաջորդում է օրհնություն Հիշեցնող բանաձև՝ հասցեատիրոջ տիտղոսաշարով, որը հատուկ չէ պահպանված մյուս վավերագրերին:

Թվականը և պարագաները. Ներսես Լամբրոնացին այս թրղթին հաջորդող պատճառ-ծանոթագրությունում հաղորդում է նաև ժամանակագրական հետևյալ տեղեկությունը. «Առեալ զայս գիր քահանայն Կոստանդին եւ ընդ նմա իշխանք ի տիրական Աթոռոյն, եւ հՀաս առ թագաւորն՝ յորժամ ել (տողատակում՝ էր - Ա.Բ.) յԱրեւելս ի պատերազմ ընդդէմ այլազգի սուլտանին Իկոնիոյ, զոր ընթերցեալ բարեպաշտ թագաւորն՝ ուրախ եղեւ, եւ առաքեաց զնա ի քաղաքն թագաւորական՝ մինչև ի դարձն իւր ի պատերազմէն Իսմայէլական ազգին, եւ ընդ մտելն նորա ծանոյց պատրիարքացն զոր ի Հայս ճշմարտութիւն հաւատոյ եւ վարուց: Եւ քանզի էր ազգաւ Հոռոմ եւ քահանայ ի նոցանէ, տեղեակ եւ Հայոց աւրինաց, հաւանեցուցանէր զբարեպաշտն եւ յամաւթ առնէր զտկարամիրտ չարախաւսսն: Եւ եղև յամել

թագաւորին ի պատերազմ զամ մի, եւ նորա մնալ ի քաղաքին»: Ներսէս Լամբրոնացու այս «պատճառ-ծանոթագրութիւնից» Հայտնի է դառնում, որ Մանուէլ Ա Կոմնենոսը մայրաքաղաք է վերադարձել Միրիոկեֆալոնի (ըստ Ներսէս Լամբրոնացու՝ Մելիտենէի) ճակատամարտում պարտութիւն կրելուց հետո, այն է 1176 թ. սեպտեմբերի 17-ից հետո⁵⁹:

Մանուէլ Ա Կոմնենոսը Կոստանդնուպոլիս է վերադարձել 1176 թ. վերջին (դեկտեմբերի⁶⁰), ուրեմն՝ եթէ Կոստանդինը մեկ տարի անցկացրել է Կոստանդնուպոլսում, հետեւապես նա Հռոմկլայից դուրս է եկել մոտավորապես 1175 թ. սեպտեմբերին, իսկ այս նամակը կարող էր գրվել նույն տարվա(1175 թ.) ամռանը (°): Հետաքրքիր է նաև այն պարագան, որ Մանուէլը գտնվել է Արևելքում, Իկոնիայի սուլթանի հետ պատերազմելիս: Կոստանդին քահանան Հռոմկլայից Կոստանդնուպոլիս է գնացել դեսպանախմբով («ընդ նմա իշխանք ի տիրական Աթոռոյն») և Կոստանդնուպոլսում գտնվելու ժամանակամիջոցում բանակցութիւններ է վարել բյուզանդական աստվածաբանների հետ:

Հրատարակություններ և թարգմանություններ. ԹԸ, 1871, էջ 166-168:

Գրականություն. Բողոյան, Բյուզանդիայի, էջ 247-248:

№ 20

1175 / 1176 (°) թվական

Պարագաներ. Մանուէլ Ա Կոմնենոսի՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին առաքված այս թուղթը ևս մեզ չի հասել: Այս վավերագրի մասին տեղեկութիւններ են պահպանվել ՊիՄ Ժողովածու չմտած Գրիգոր Դ Տղայի թղթում (տե՛ս № 21): Ըստ այդ վավերագրի (№ 21) կարելի է մոտավորապես վերականգնել այս փաստաթղթի մոտավոր բովանդակութիւնը.

ա) Նամակում ի թիվս այլ խնդիրների խոսվել է նաև Մանուէլ Ա Կոմնենոսի Իկոնիայի սուլթանութիւնի դեմ ձեռնարկված ռազմարշավի մասին. «Հրաման ինքնակալութեանդ Ձերոյ եհաս առ մերս նուստտութիւն, զոր ընկալեալ եւ ընթերցեալ ջերմագոյն սրտիւ եւ աշխատասէր մտաւք, ծանեաք զոր ի նմա յամբարեալ կային զանազան Հոսոց եւ Համոց որակութիւնք. ըստ նմանութեան Ձեր եւ աշխատասէր

59 Տե՛ս Բողոյան, Բյուզանդիայի, էջ 250:

1176 թ. ամառ կամ աշուն

Վերնագիր. Թագաւորին Հռոմոց Մանուէլի, / պատասխանի գրեալ ի Գրիգորէ կաթողիկոսէ Հայոց, / յոր ի Կլայն Հռոմէականի:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. X « N, նշված է նաև նամակագրի նստավայրը՝ Հռոմկա ամրոցը: Այս հանգամանքը ևս խոսում է այն մասին, որ փաստաթղթի վերնագիրը դրվել է հավանաբար Հռոմկայի նոտարատանը: Վավերագիրն անվանված է «պատասխանի»:

Թղթառաջք. Պահպանվել է միայն թղթառաջք-զիմունտի պակասավոր տարբերակը. «Բրիստոսիւ պսակեալ առ ի նմանէ դաւրացեալ արքայից արքայ, ծիրանածնունդ թագաւոր կարող եւ բարձր միշտ աւգոստոս եւ ինքնակալ Հռոմոց զբաւորական պատուելի»:

Բանաձևում պակասում է կայսեր անունը: Թղթառաջքում բացակայում է նաև նամակագրի՝ կաթողիկոս Գրիգոր Դ-ի անունը և տիտղոսաշարը (թղթառաջք-բանաձև) և ողջունի բանաձևը:

Թղթի մուտքում պահպանվել է Մանուել Ա-ի որդի Ալեքս Բ-ին ուղղված օրհնանքի բանաձևը՝ տիտղոսաշարով. «...եւ խնդրեմք յարածամ առաջի աստուածընկալ սրբոցս, որոց սպասաւոր եմս հանդերձ միարանական բազմութեամբս որ ընդ մեզ են կախկոպոսաւք եւ վարդապետաւք եւ խաչակիր ճշնող միանձամբք տալ զՁեզ պարագայձ ամաւք եւ խաղաղական կենդանութեամբ յաղթութեամբ հանդերձ մանուիլպարգեւ եւ մանուիլածնունդ ծիրանածնունդ սուրբ եւ բարեփառ թագաւորաւ Ալէքսիոսիւ...»:

Բովանդակություն.

Ակ.- Հրաման ինքնակալութեանդ Ձերոյ եհաս առ մերս նուստութիւն...

Վրջ.-...եւ մեաւք հանդերձ արժանի լինել փառաւորել զամենասուրբ զերրորդութիւն այժմ եւ... (ամենայն հավանականությամբ թուղթը վերջից պակասավոր է, քանի որ բացակայում է հրաժեշտի բանաձևը):

Կառուցվածք.

ա) Մուտք. հավաստիացնում է, թե ստացել է կայսերական նամակը, որի մեջ բազում հարցերի շարքում «ի նմա յամբարեալ կային զանազան որակութիւն», խոսվում է նաև մեծ հաղթությամբ խաղաղության հասնելու իր փափագի մասին, որին մերձենալու համար աղոթում է թագավորի և նրա Ալեքս որդու արևշատության համար: Կաթողիկոսն ակնարկում է 1175/6 թ. բյուզանդական ռազմարշավը

ի կոնիսայի սուլթանութեան դեմ, որը թմրութեանից արթնացրել է իրենց:

բ) Բուն խնդիր. Կաթողիկոսն անցնում է Քրիստոսի բնութեան խնդրի քննարկմանը, սկսելով Սուրբ Գրքից և առաքելական թղթերից բերված հատվածներից, անդրադառնում է Նիկիայի առաջին ժողովի հավատո հանդանակին և հատված է բերում նրանից, թվարկում է Հայոց եկեղեցու կողմից ճանաչված մյուս, այսպես կոչված տեղական և տիեզերական եկեղեցական ժողովները (Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանդրայի, Անտիոքի, Լատրիկիայի, Սաղրիկեի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի), նշում է, թե՛ դրանք որ Հերձվածների դեմ են տանդնուպոլսի, Եփեսոսի), նշում է, թե՛ դրանք որ Հերձվածների դեմ են հռոմարվել, և որ Հերձվածողական շարժումներն են նշողվել: Բերվում է Հայոց եկեղեցու կողմից ընդունելի Աթանաս Աղեքսանդրացու հավատո հանգանակը: Մեջբերում է Գրիգոր Նյուսացու, Պորփյուրի, Դիոնեսիոսի, Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Աղեքսանդրացու, Գրիգոր Լուսավորչի երկերից հատվածներ, որոնք դավանական վիճելի հարցերի լուծման հիմք է համարում Հայոց եկեղեցին: Ապա ավելացնում է, որ վերոբերյալ դավանաբանական հատվածները բերում է ոչ թե նրա համար, որ դարձացնի իր գիտելիքներով, վածները բերում է ոչ թե նրա համար, որ դարձացնի իր գիտելիքներով, այլ որ տեղեկացնի, թե այս բոլորը իր հայրենի եկեղեցու պաշտոնյաներն էլ գիտեն և առաջնորդվում են դրանցով: Այդ իսկ պատճառով, Կոստանդնուպոլսի է ուղարկում նաև Հովհաննես կաթողիկոսի (Օձնեցու) երկերից մեկը, խնդրելով լավ թարգմանչի ձեռքով փոխադրել հունարեն և հավաստիանալ Հայոց հավատամքի ուղղափառութեան հանդեպ: Անդրադառնալով Քաղկեդոնի ժողովի խնդրին, նշում է, որ դրա մասին ոչ վատը կարող է ասել, ոչ էլ լավը, քանի որ դրան ներկա չեն եղել Հայոց եկեղեցու հայրերը: Միայն նշում է, որ Պետրոսի առ Ակակ թուղթը, Ջենոնի Հենետիկոնը և Անտիոքի ժողովի որոշումները բացառաբար են արտահայտվում Քաղկեդոնի ժողովի և Լեոնի տոմարի վերաբերյալ:

գ) Վերջարան-ամփոփում. Կաթողիկոսն անդրադառնում է երկու Քրիստոսայ ժողովուրդների միջև բորբոքված թշնամութեանը և նշում է թե ինչ թյուրիմացութեանների տեղիք կարող է տալ «երկու բնութիւն» բանաձևի պարտադրումը Հայոց եկեղեցուն, կայսերն համոզում է ամեն ինչ անել ուղղափառ եկեղեցու բաժանված երկու թևերը միմյանց հետ հաշտեցնելու համար:

Կաթողիկոսը կայսրին դիմում է հոգնակի երկրորդ դեմքի (Տէր-Միքեիկան, Միջին, էջ 282,5,6,13,15,20 և այլն), իր մասին արտահայտ-

վում է Հոգնակի առաջին դեմքով (Տէր-Միքեիկեան, Միջին, էջ 282, 19, 23, 30 եւ այլն):

Թղթավարտ. Այս թղթի բանաձևը մեզ չի հասել:

Թվականը. Թուղթը գրված պետք է լինի ամենաուշը 1175 թ. վերջին, կամ էլ՝ որն ավելի հավանական է թվում մեզ, 1176 թ.՝ մինչև սեպտեմբերի 17-ը, երբ բյուզանդական զորքերը պարտութուն կրեցին Միրիոկեֆալոսի մոտ (Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս Բողոյան, Գրիգոր, էջ 96):

Հրատարակություն. Տէր-Միքեիկեան, Միջին, էջ 27-48:

Գրականություն. Օրմանեան, Ազգապատում, էջ 1473-1474, Զէքիեան, Համամիութենական, էջ 8, ծան. 2, Բողոյան, Գրիգոր, էջ 92-98:

N^o 22

1176 թ. հոկտեմբեր-նոյեմբեր (°)

Վերնագիր. Թուղթ բարեպաշտ թագաւորին Հոռոմոց Մանուէլի, / զոր գրեաց պատասխանի Գրիգոր կաթողիկոսի Հայոց: Կառուցվածքն երկմաս է՝ բանաձև. X » N : Վավերագիրն անվանված է. «Թուղթ»:

Թղթառաջք. Մանուէլ, Քրիստոսի Աստուծոյ Հաւատարիմ թագաւոր, ծիրանածին աստուածապսակեալ արքայ, կարող եւ բարձր միշտ, աւգոստոս ինքնակալ Հոռոմոց Կոմնինոս. / Գրիգորիոս պատուական կաթողիկոս Հայոց, / փրկութեամբ եւ շնորհաւք նորին բարերարութեանն՝ ողջ լեր:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. X » N, և ողջուն-գիմում: Բովանդակություն.

Սկ. - Զառաքեալ գիրս Զեր թագաւորութիւնս մեր ընթերցաւ...

Վրջ. - ...քանզի վարձս մեծ ի վարձատուէն Աստուծոյ աստուածահաճոյ գործոյս այսորիկ աղազաւ կայ մեր առաջի:

Կառուցվածք.

ա) Մուտք. Կայսրը զոհունակությամբ է արտահայտվում կաթողիկոսի ուղարկած թղթի առիթով, քանզի որքան խորամուխ է հղել դրա բովանդակության մեջ՝ այնքան ավելի է համոզվել եկեղեցիները միավորելու Հայոց Հայրապետի ցանկության մեջ: Նշում է, որ Հայերը սխալվել են՝ կարծելով, թե օրթոդոքս եկեղեցին Հետևել է Նեստորի Հերձվածին, պաշտելով «երկու Քրիստոս»: Միաժամանակ սխալված

երկրորդ դեմքով (17019,21,24,26, 17312,15, 1749, 17516,18), իսկ իր մասին խոսում է Հոգնակի առաջին դեմքով (16916,33, 1708,10,16,22, 1741,10,11,12,21,28, 1753,8,17,19,23,25), երբեմն էլ եզակի առաջին դեմքով (17025):

Թղթավարտ. - Ողջ լեր: / Գրեցաւ յամսեանն ի Յունվարի եւ յընդիքտիոնին ի տասն:

Կառուցվածքը երկմասն է. հրաժեշտի բանաձև և թվական:

Թվականը. Այս նամակը ըստ վերոբերյալ թղթավարտի թվագրության Հռոմկլայի նոտարատանն արձանագրվել է 1177 թ. հունվար ամսին (10-րդ ինդիքտիոնի հունվար): Ուրեմն՝ նամակը պետք է գրված լիներ 1176 թ. հոկտեմբեր-նոյեմբերից ոչ ուշ, քանի որ Կոստանդնուպոլսից մինչև Հռոմկլա կարող էր հասնել երկու-երեք ամսվա ընթացքում, ինչպես տեսանք մյուս թվագրված նամակների օրինակով: Այդ իսկ պատճառով, պետք է վերանայել Յր.Դյուլգերի 1177 թ. հունվար թվագրումը: 1176 թ. հոկտեմբեր-նոյեմբեր թվագրության կողմ է խոսում նաև Ներսես Լամբրոնացու այն հաղորդումը, ըստ որի նամակը գրվել է Միրիոկեֆալոնի ճակատամարտից անմիջապես հետո, երբ Մանուել Ա Կոմնենոսը վերադարձել էր մայրաքաղաք Կոստանդնուպոլիս: Հայտնի է, որ ճակատամարտից հետո բյուզանդական կայսրը մեկ ամիս, գուցե և մի քիչ ավելի, մնացել է Արևելքում, Իկոնիայի սուլթան Ղլիճ Արսլանի հետ պայմանագիր կնքելու համար (տե՛ս Բոզոյան, Բյուզանդիայի, էջ 249):

Թղթի վերջում առկա թվականը միայն հավաստում է, որ փաստաթուղթը Հռոմկլա է հասել ամենաուշը 1177 թ հունվարին և կաթողիկոսական նոտարատանը գրանցում է ստացել հենց այդ ամսին:

Պարագաներ. Ըստ Ներսես Լամբրոնացու ՊԽՄ-ի ծանոթագրության այս նամակը հաջորդ՝ պատրիարքական նամակի հետ Հռոմկլա է բերել Կ.Պոլսում Հերապոլսի մետրոպոլիտ օծված Կոստանդինը:

Հրատարակություններ և թարգմանություններ. նամակը մեզ է հասել միայն հայերեն թարգմանությամբ. ԹԸ, 1871, էջ 169-175:

Գրականություն. նամակը հիշատակվում է նաև № 23-ում, Հմմտ. նաև Dölger, Regesten, S. 87, վավեր. 1527:

Վերնագիր. Թուղթ պատրիարքին Կոստանդինուպոլսի / առ կաթողիկոսն Հայոց Գրիգոր, / Համաձայնութեամբ ամենայն ժողովոյն:

Կառուցվածքը եռամասն է, բանաձև. Y >> N, վերջում օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոսական ժողովում Հաստատված լինելու փաստի արձանագրումն է: Վավերագիրն անվանված է «Թուղթ»:

Թղթառաջը. Միքայէլ, ողորմութեամբն Աստուծոյ արքեպիսկոպոս Կոստանդինուպոլսի նոր Հռովմայ, եւ տիեզերական պատրիարք. / տեառն Գրիգորի սուրբ սիրեցելոյ պատուական կաթողիկոսի ամենայն Հայոց / ուրախ լինելի Տէր:

Կառուցվածքն եռամասն է՝ բանաձև. Y >> N, և թղթառաջողջույնի բանաձևը: Այս թղթառաջբանաձևը նույնությամբ կրկընվում է նաև պատրիարքի ստորագրութեան Հատվածում:

Բովանդակություն.

Ակ. - Միրեցեալի մէջջ կաթողիկոս պատուական...

Վրջ. - ...ի փառս Աստուծոյ ձայնակցիմք ի մի եկեղեցի ամենասուրբ անուանն Աստուծոյ Հասարակ եւ Համախոհ փառատրութեամբ:

Կառուցվածքը.

ա) Մուտք. Պատրիարքը ողջունում է կաթողիկոսին, միաժամանակ Հիշեցնելով, որ իրենք առաքեալներ զործի շարունակողն են և պարտավոր են Հետևել նրանցից ժառանգություն մնացած ավանդներին, սեր և զուխ Հղելով միմյանց: Միայն սիրով կարելի է Հասնել եկեղեցու միասնությանը և բուժել բաժանման վնասները: Թագավորին առաքված կաթողիկոսական նամակից պատրիարքը տեղեկացել է Հայոց եկեղեցու ուղղափառութեան մասին և ուրախացել միութեան առաջարկի Համար:

բ) Բուն խնդիր. Պատրիարքը Հայտնում է, որ ընդունում է թագավորի կողմից կաթողիկոսին ուղարկված թղթի ուղղափառ դավանությունը: Ձևակերպում է Երրորդութեան մասին Կոստանդնուպոլսի եկեղեցու դավանաբանությունը, անդրադառնում է Աստուածութեան եկեղեցին և այն որակում է որպես «մի բնութիւն, մի էութիւն, մի գալսութիւն, մի իշխանութիւն, մի տէրութիւն, մի թագաւորութիւն»: Այնուհետև անցնում է բյուզանդական եկեղեցու Հավատոյ խոստովանութեանը, ուր երկու բնություն, կամք և ներգործություն է վերաբերում Քրիստոսին, սակայն շեշտում է. «մի է երկու բնութեանցն անձնաւորութիւն»:

գ) Վերջաբան-ամփոփում. Պատրիարքը Հիշեցնում է, որ իրեն Համախոհ եպիսկոպոսների Հետ անձամբ է ստորագրել կաթողիկոսին

ուղղված այս նամակը: Հույս է հայտնում, որ Հայոց եկեղեցին ևս իր եպիսկոպոսներով ու հոգևորականներով ընթացք կտա միավորության գործին՝ բյուզանդական եկեղեցու օրինակով ստորագրելով պատասխան նամակը: Պատրիարքն հավատացած է, որ երկու եկեղեցիները միության գործը ավարտին կհասնի:

Թղթավարտ. - Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ Ձեզ եւ ընդ մեզ. ամէն:

Հրաժեշտի բանաձևն ինքնատիպ է և չի կրկնում պատրիարքական մյուս նամակների համապատասխան բանաձևը:

Ստորագրություններ. Թղթի վերջում դրված է 20 բարձրատիճան հոգևորականի ստորագրություն, ներառյալ Կոստանդնուպոլսի և Անտիոքի պատրիարքներինը (այստեղ չափազանց հետաքրքիր են Վ.Գրյումեիլի և Ժ.Դարուցեզի զիտողությունները⁶⁴:

Պարագաներ. Ներսես Լամբրոնացին այս Թղթի ծանոթադրության (պատճառի) մեջ հայտնում է, որ ստանալով կայսեր և պատրիարքի (№ 22 և 23) Թղթերը, կաթողիկոսը և իր շուրջը հավաքված հոգևորականներն ուրախացան, որովհետև այլևս չէր պահանջվում ընդունել բոլոր ինը կետերը. «միայն զայս խնդրեցին զհաւատոյս բանն իւր միաբանութեան»⁶⁵:

Այս թուղթը ևս, ըստ Ներսես Լամբրոնացու, Հռոմկլա է բերել Կոստանդին Հերապոլսեցին:

Թվականը. Նամակի գրման մոտավոր թվականը ճշտված է № 22-ի առիթով: Պետք է նշել միայն, որ Վ.Գրյումեիլը և Ժ.Դարուցեզը սխալ են թվագրել փաստաթուղթը, հետևելով Պր.Դյուլգերին: Նույն իսկ մեկ քայլ էլ առաջ են գնացել, չգիտես որտեղից՝ ճշտելով նամակի գրման ամսաթիվը. «10 Janvier»⁶⁶:

Հրատարակություններ. Նամակը պահպանվել է միայն Հայերեն թարգմանությունում, տե՛ս ԹԸ, 1871, էջ 175-181:

Գրականություն. Բողոյան, Բյուզանդիայի, էջ 250-251, Grumel-Darrouzès, p. 558-559.

64 Տե՛ս Grumel-Darrouzès, p. 558-559, վավեր. 1132:

65 ԹԸ, 1871, էջ 180:

66 Grumel-Darrouzès, p. 558:

Վերնագիր. [1]Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց՝ [2] ձայնակցութեամբ ընդհանուր ժողովոյ Հայոց, [3] պատասխանի թագաւորին Հոռոմոց Մանուէլի, [4] յորում եւ ուղղափառ դաւանութիւն ըստ խնդրոյ արքային՝ [5] ձայնակցութեամբ եւ ձեռնագրով ամենայն Հայաստանեայց եկեղեցւոյ:

Կառուցվածքը Հնգամասն է: $N(1) \gg X(3)$ բանաձևը, նամակի բովանդակութեան մասին ակնարկը(4), և եկեղեցական ժողովի կողմից գրված լինելու նշումը(2, 5): Վավերագիրն անվանված է «Թուղթ ...պատասխանի»: Հավանաբար պահպանված է կաթողիկոսական դիվանատանը գրված վերնագիրը:

Թղթառաջք. Բրիստոսիւ զաւրացեալ եւ նովաւ սլաակեալ արքայից արքայ, կարող եւ բարձր միշտ, աւգոստոս եւ ինքնակալ թագաւոր Հոռոմոց Մանուէլ Կոմնինոս./ Գրիգորիոս նուաստ ծառայ Բրիստոսի եւ շնորհիւ նորին կաթողիկոս Հայոց, / եւ որ ընդ ինեւ սուրբ ժողովս:

Կառուցվածքը եռամասն է՝ բանաձև. $X \gg N$, ժողովի կողմից գրված լինելու նշումը:

Այս թղթառաջքը չունի ողջունի բանաձև:

Նամակի Հաջորդ պարբերութեան մեջ (մուտք) պահպանվել է ևս մեկ բանաձև՝ Մանուէլ Ա-ի որդի Ալեքս Բ Կոմնենոսի արևշատութեան մատղիանքով. «...գոհութիւն Ամենատեառն խնամոց մատղացաք, երկայն ժամանակաւ յերկարիլ ի նոյնդ խնդրեմք յԱստուծոյ, եւս գերականց զաւրութեամբ եւ փառաւք Հանդերձ Մանուիլածնունդ եւ Մանուիլապարգեւ ծիրանածին արքայիւդ Հարազատ անդրանկաւ Ձեր նուիրապարգեւ եւ բովանդակ մեծապատիւ գարմիւք» (այս բանաձևը Հավանաբար № 21-ում առկա նմանատիպ ձևակերպման Հետ):

Բովանդակութիւն.

Այլ.-Ձգիր Հրամանի Ձեր ծանեայ Հանդերձ սուրբ ժողովովս եւ ամենայն եպիսկոպոսակցաւք...
Վրջ. - ...եւ մաղթանաւք անդրանկացն եկեղեցւոյ եւ ստորնայնոյս:

Կառուցվածքը.

ա) Մուտք. Կաթողիկոսը Հայտնում է, որ Մանուէլ Ա-ի թղթին ծանոթացել են սուրբ ժողովը և բոլոր եպիսկոպոսակիցները: Գրիգոր Դ կաթողիկոսը Հավաստում է, որ մինչ բարեփառ թագավորը խաղաղութիւն էր Հաստատում իր տիեզերական իշխանութեան ներքո գրառվող տարածքներում, ինքն աղոթում էր նրա և գահածառանգ Ալեքսի արևշատութեան Համար):

բ) Բուն խնդիր. Կաթողիկոսն իր դոհուենակությունն է Հայտնում կայսեր ուղարկած թղթում առկա հավատի խոստովանության ուղղափառ դավանության զրույթներին և հավաստում, որ դրան ճայնակից է նաև Հայոց եկեղեցին, որի դավանանքը կայսրին քաջահայտ պետք է լինի ներսես Դ Շնորհալու նամակներից: Այնուհետև, կրկնելով իր ուսուցչի գրածը, Հայտարարում է, որ Հայոց եկեղեցու դավանանքը մեղ է հասել առանց արատի, իսկ ուղղափառությունը ավանդ է ստացել մեր նախնիներից: Այնուհետև անդրադառնում է Հայոց եկեղեցու ուղղափառության հիմքը դարձած եկեղեցական ժողովներում (Նիկիայի, Կոստանդնուպոլսի, Եփեսոսի, ապա՝ Անկյուրիայի, Կեսարիայի, Նեոկեսարիայի, Գանգրայի, Լաոդիկիայի, Սարգիկեի) քննարկված հարցերին, ընդունած որոշումներին, նշում է, թե այդ հավաքներին ովքեր են մասնակցել Հայ կղերականներից, որ հերձվածներն են նզովվել դրանցից յուրաքանչյուրում և այլն: Հավաստացնում է, որ Հայոց եկեղեցին նշված ժողովների ընդունած որոշումներից երբեք չի հեռացել՝ ոչ աջ, ոչ էլ ձախ և միշտ հետևել է հերձվածների դեմ պայքարող սուրբ Հայրերի ուղղափառ դավանությանը: Այնուհետև հերթով թվարկում է այն հերձվածները, որոնց նզովում է Հայոց եկեղեցին (Արիոսի, Մակեդոնի, Պաղոս Եամշտացու, Նեստորի, Եվտիքեսի), ու նշում, որ Հայոց հավատո խոստովանությունը կազմված է նրանց դեմ պայքարող սուրբ Հայրերի դավանած հավատամքի վրա: Բերվում է Հայոց եկեղեցու և իր հրավիրած ժողովում ընդունված հավատամքի բանաձևը, ուր խոսվում է Քրիստոսի և՛ մարդկային, և՛ աստվածային բնության մասին, սակայն չի շեշտվում «երկու բնութիւն» բանաձևը: Ապա հատվածներ են բերվում սուրբ գրքից և առաքելական թղթերից Քրիստոսի Աստուածային և մարդկային բնության մասին: Քաղվածքներ են բերվում Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նյուսացու աշխատություններից «երկուց միացելոց» բնությունների մասին: Առանձին-առանձին խոսում է Քրիստոսի և՛ մարդկային, և՛ աստվածային բնության մասին: Ապա նզովքի է ենթարկում նրանց, ովքեր կհակառակվեն ճանաչել այս ուղղափառ դավանությունը: Կաթողիկոսը և եկեղեցական՝ ժողովը բյուզանդական եկեղեցու հավատոյ խոստովանությունը համարում են ուղղափառ, միաժամանակ նշելով, որ իրենք կայսրին են ուղարկում Հայոց Յովհաննես կաթողիկոսի (Հավանաբար Օձնեցու, այս մասին տե՛ս նաև № 21) հավատաբանական երկը, որով բյուզանդական կողմը կարող է համոզվել, որ ուղղափառությունը Հնուց ի վեր մուտք է գործել Հայոց եկեղեցի: Դրա համար հարկավոր է միայն ճշգրիտ և հավատարիմ թարգմանությամբ ընթերցել և տեսնել,

1178 թ. ապրիլ

Վերնագիր. [1] Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց [2] եւ ընդհանուր Հայաստանեայց ժողովոյ, [3] ի կաթողիկէ եկեղեցին Հոռոմոց եւ յոր ի նմա սուրբ ժողովն, [4] պատասխանի թղթոյն Միքայէլի պատրիարքին՝ [5] որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Բրիտոս:

Կառուցվածքը հնգամասն է՝ N(1) » Y(4) բանաձև, ընդգծված է Հայոց եկեղեցական ժողովի կողմից հաստատված (2) և Կ.Պոլսի եկեղեցական ժողովին ուղղված լինելու(3) փաստը, պատրիարքի մահվան մասին նշումով(5):

Թղթառաջք. - Սրբոյ եւ մեծի Աստուծոյ եկեղեցւոյդ՝ որ ի զլուսիդ տիեզերաց, ի Թագաւորական մայրաքաղաքդ Կոստանդինուպաւլիս, տէրանց եւ պաշտաւնակից եղբարց, նախաթոռ պատրիարքաց սրբոց, եւ եպիսկոպոսակցաց պատուականաց, քահանայականաց դասուց եւ համագումար ամենայն ժողովոց կղերիկոսաց՝ ըստ իւրաքանչիւր կարգի եւ աստիճանի դանազանելոց, որք յիմաստութեանդ տաճար զիմանալին Աստուած համազղափար իմանալիացն դասուց ի նիւթական բնութիւնս պաշտէք, երեք յերիսս բաժանեալք եւ ի մի լրութիւն աստուածեղէն սպասաւորութեանն միաւորեալք, անդամք զգայականք ճշմարիտ գլխոյն, եւ աճեցեալք ի պատճառս փառաբանութեան անկարաւտ բնութեանն: / Գրիգորիոս նուաստ ծառայ Բրիտոսի, եւ ողորմութեամբ նորին Կաթողիկոս Հայոց, / եւ որք ինեւ եկեղեցւոյս Բրիտոսի որ ի մեզ ժողով արքեպիսկոպոսակցաց, եպիսկոպոսակցաց, հարց եւ վարդապետաց, քահանայից եւ կրաւնաւորաց եւ ամենայն լրութեանս Հայոց, / զշնորհս եւ զխաղաղութիւն ի Բրիտոսէ Աստուծոյ մաղթեմք ձեզ, եւ աղաւթիւք Ձերովք մեզ:

Կառուցվածքը քառամասն է՝ բանաձև. Y « N: Նամակն ուղղված է ողջ բյուզանդական եկեղեցուն (Y): Անմիջապես հաջորդում է կաթողիկոսի անունն ու տիտղոսը (N) և նշված է Հայոց ողջ եկեղեցական հանրութիւնը: Վերջում՝ ողջույնի-բանաձևն է:

Բովանդակութիւն.

Սկ. - Ընկալաք զնամակս խաղաղութեան եւ որ ի Տէր մեր Յիսուս Բրիտոս ուղղափառ խոստովանութեան...

Վրջ.-...եւ առ եղբարս զսէր եւ զխաղաղութիւն պայծառացուցէք:

Կառուցվածքը.

ա) Մուտք. Հոռոմկլայի եկեղեցական ժողովի մասնակիցներն Հավաստում են, որ ստացել են բյուզանդական եկեղեցական ժողովի Համաձայնությամբ գրված երանելի պատրիարքի նամակը, ուր բերված է Կոստանդնուպոլսի եկեղեցու Հավատի ուղղափառ խոստովանությունը, ինչը և նպաստում է եկեղեցիների միության խնդրին: Նամակագիրներն բարեմաղթություն են Հղում բյուզանդական պետությանը (և եկեղեցուն) և իրենց վիշտն ու ցավակցությունն են Հայտնում Միքայել պատրիարքի մահվան կապակցությամբ:

բ) Բուն խնդիր. Փառաբանում են Աստծուն, որ երկու եկեղեցիների միջև եղած անհանդուրժողականությունը, պատրիարքի և բյուզանդական եկեղեցու ջանքերով և ուղարկված թղթով Հալածվեց, ու Հոռոմկլայի ժողովն ընդունում է բյուզանդական կողմի ուղարկած աստվածաբանությունը, որը Համաձայն է սուրբ և առաջին Հայրերի դավանաբանութեան Հետ: Այդ թղթով փարատվում են ժողովականները բոլոր կասկածները և նրանք իրենց Համաձայնությունն են Հայտնում Կ.Պոլսից ստացված դավանաբանությունը, ուր մասժողովի կողմից ընդունված Հավատո խոստովանությունը, ուր մասնավորապես շեշտված է. «...խոստովանիմք Համաձայն Ձեզ ի Քրիստոսի անճառ միութիւնն երկու բնութեան տեսութիւն»⁷²: Այնուհետև դավաբանում են եկեղեցիների միություն Հաստատելու Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովի կողմից գրված թղթի՝ իրենց Հղված կոչը, որին ընդառաջ է գնում Հոռոմկլայի եկեղեցական ժողովը:

գ) Վերջաբան-ամփոփում. Մաղթում են Աստծուն ավարտին Հասցնել սկսված գործը, պահանջում են բյուզանդական Հոգևորականներից ջանք չխնայել կայսերն Համոզելու Համար և Հակահարված տալ յուրաքանչյուրին, ով կփորձի կրկին թշնամանք սերմանել երկու եկեղեցիների փոխհարաբերություններում:

Թղթավարտ. Եւ նոյն ինքն Աստուած խաղաղութեան եւ սիրոյ ճղիցի ընդ Ձեզ ամենեսեան. ամէն:

Թղթավեարտին Հաջորդող ստորագրություններից առաջ գրված է Հետևյալ պարբերությունը. «Արդ՝ ի Հաստատուն ուղղափառ խոստովանութեանս կարեւոր Համարեցաք ըստ կամացն Աստուծոյ եւ իրավացի Ձեր խնդրոյ եւ բարիոք ավացուցի, ստորագրել իւրաքանչիւր ձեւացի Ձեր խնդրոյ եւ բարիոք ամալ կամաւք եւ միով շնչով եւ խորհրդով ումբ զանուանս մեր, որք միով կամաւք եւ մեծի եկեղեցւոյոց առ ի յերկուց եւ զայս բողոքեցաք Հաւատ ի լուր մեծի եկեղեցւոյոց նախագրեալ այսերից վկայելոց՝ ճշմարիտ եւ Հաստատուն երեւելոյ նախագրեալ աս-

⁷²Նույն տեղում, էջ 196:

տուածաբանութեանդ»: Վավերագիրը թվագրված է: Թղթավարտը պարունակում է միայն հրաժեշտի բանաձևը: Թղթավարտի շարունակութունը Հանդիսացող վերոբերյալ պարբերությունը այսօրվա իմաստով Հետ գրութուն (= P.S.) է հիշեցնում:

Ստորագրություններ. Նամակի տակ ստորագրել են Հայոց եկեղեցու երկու կաթողիկոս, ինը՝ արքեպիսկոպոս, քսաներկու՝ եպիսկոպոս: Հռոմիլլայում նստող կաթողիկոսի տիտղոսաշարի մեջ Հետաքրքրութիւն է ներկայացնում «Կաթողիկոս Հայոց Մեծաց» տիտղոսը, որը շատ հին ծագում ունի և արձանագրված է արդեն Զ-է դարերի վավերագրերում: Ամբողջությամբ բերում ենք Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի տիտղոսաշարը. «Գրիգորիոս ողորմութեամբն Աստուծոյ Կաթողիկոս Հայոց Մեծաց եւ յաջորդ մեծի Աթոռոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»: Ինքնատիպ է և պատմական արմատներ ունի Աղվանից կաթողիկոսի ստորագրությունը. «Ստեփանոս նուսատ Կաթողիկոս տանն Աղուանից»: Արքեպիսկոպոսական ստորագրություններից առաջինը Անիի Հոգևոր առաջնորդին է (Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Անւոյ), երկրորդը՝ Անտիոքինը (Գրիգորիոս արքեպիսկոպոս աստուածայնոյ քաղաքին մեծին Անտիոքայ), երրորդը՝ Երուսաղեմինը (Մահակ արքեպիսկոպոս աստուածակոխ քաղաքին Երուսաղեմի), չորրորդը՝ Տարսոնինը (Ներսէս արքեպիսկոպոս մայրաքաղաքին Կիւլիկեցոց Տարսոնի), հինգերորդը՝ Եղեսիայինը (Ստեփանոս արքեպիսկոպոս Եղեսիայ), վեցերորդը՝ Տիխիսինը (Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ քաղաքին Վրաց Տիղեաց), յոթներորդը՝ Սյունիքինը (Ստեփանոս արքեպիսկոպոս Սիւնեաց), ութերորդը՝ Կապադովկյան Կեսարիայինը (Յովհաննէս արքեպիսկոպոս Կեսարու Կապադովկացոց): Այս ստորագրություններում արտացոլված է մի շարք քաղաքների Հայոց եկեղեցու մշակութային, հոգևոր և քաղաքական կյանքում ունեցած կարգավիճակը (աստտուս): Օրինակ՝ Անին և Տիղիսը անվանված են թագավորանիստ քաղաքներ, Տարսոնը՝ Կիլիկեցիների մայրաքաղաք, իսկ Անտիոքը և Երուսաղեմը Համապատասխանաբար՝ աստվածային և աստվածակոխ քաղաքներ: Հիշատակված արքեպիսկոպոսություններից երեքը գտնվում են Մեծ Հայքի տարածքում (Անի, Սիւնիք[Տաթև], Դուին), երեքը՝ Ասորիքում (Անտիոք, Երուսաղէմ, Եղեսիա), մեկը՝ Կապադովկիայում (Կեսարիա), միւսը՝ Կիլիկիայում (Տարսոն), մեկ ուրիշը՝ Վրաստանում (Տիղիս): Իրենց ստորագրությունը դրած եպիսկոպոսներից տասնմեկը Մեծ Հայքից են (Կարին, Նախճավան, Բղնունիք, Մանազկերտ, Տարոն, Ծոփք, Հեր և Զարեանդ, Թեոդոսուպոլիս, Մելիտենե, Աշմուշատ, Նփրկերտ), չորսը՝ Կիլիկիայից (Անարզաբա, Սելևկիա, Մամեստիա, Կոկիտոն), երեքը՝ Հյու-

սիսային Ասորիք (Սամոսատ, Ապամեա, Լաոդիկիա), մեկը՝ Պարսկաստանից (Սալմաստիայ և Դրանն Պարսից), մեկը՝ Կիլիկիայից, երկուսը՝ Կապադոկիայից և Փոքր Հայքից (Սերաստիայ, Նեոկեսարիայ): Ուրեմն՝ Հռոմկլայի եկեղեցական ժողովում կազմված վավերագրերի հաստատմանը մասնակցել են երեսուն բարձրաստիճան հոգևորական, որոնք ներկայացնում էին Հայոց առաքելական եկեղեցուն ևնթակա գրեթե բոլոր գլխավոր թեմերը:

Թվականի մասին տե՛ս № 24:

Պարագաներ. Այս և նախորդ նամակները (№ 24 և 25) հավանաբար չեն հասել Կոստանդնուպոլիս, որովհետև Ներսես Լամբրոնացին Պետր-ի վերջաբանում հայտնում է, որ դրանք սկզբում շտապ ուղարկվել են կայսրության մայրաքաղաք, սակայն դեսպանադնացները հասնելով Կեսարիա, չեն կարողացել ավելի առաջ շարժվել և ետ են վերադարձել: Ու երբ կրկին են ցանկացել դրանք առաքել հասցնելու, Հռոմկլա է հասել կայսեր մահվան բոթը, որով անկատար ցեատիրոջը, Հռոմկլա է հասել կայսեր մահվան բոթը, որով անկատար են մնացել միության բանակցությունները: Այս և նախորդ նամակը չեն հասել Կ.Պոլիս և պահպանվել են միայն Հռոմկլայի նոտարական գրասենյակում:

Հրատարակություններ. ԹԸ, 1871, էջ 192-199:

Գրականություն . Օրմանեան, Ազգապատում, սյուն 1474-1475: Բողոյան, Բյուզանդիայի, էջ 250-251:

★

★

★

Հիմք ընդունելով Բյուզանդիայի քաղաքական շահերը, դիվանագիտական փոխհարաբերությունների այս ժամանակաշրջանը պայմանականորեն հնարավոր է բաժանել հետևյալ փուլերի:

ա) 1165-1166 թթ. Հսյ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերությունների սկզբնավորման փուլ: Բյուզանդիայի միտումն է ամրապնդել իր դիրքերը Կիլիկիայում, շահագրգռել հայկական բնակչությանը: Այդ իսկ պատճառով քննվում են դավանածիսական հարցեր, սակայն բյուզանդացիները որևէ սլահանջ չեն պարտադրում: Բանակցությունները վարում են բյուզանդական աշխարհիկ պաշտոնյաները:

բ) 1166-1169 թթ. Բյուզանդիան իր ուշադրությունը սեռել է արևմուտքին, Հայոց եկեղեցու հետ հարաբերությունները ժամանակավորապես դադարեցվում են:

գ) 1169-1175 թթ. Մանուել Ա Կոմնենոսը վերսկսում է բանակցությունները հայերի հետ: Քաղաքական տեսանկյունից Մանուելին

կրկին հրապուրում է արևելքը: 1169 թ. Երուսաղեմի թագավորի հետ արկածախնդրական արշավանք է ձեռնարկվում դեպի Եգիպտոս, սըրվում են փոխհարաբերությունները Պրիդրիխ Բարբարոսայի դաշնակից Իկոնիայի սուլթանության հետ: Բյուզանդիան քայլեր է ձեռնարկում մոտենալու Հռոմի պապական եկեղեցուն: Մանուել կայսրը որոշում է հարձակման անցնել հայոց եկեղեցու դեմ և պարտադրում է ինը ծիսադավանական պահանջ: Բյուզանդական դեսպանագնացությունները ղեկավարում է թագավորական ծառա (Λ(ΣΟΥ) Թեոփիանոսը: Բանակցություններին մասնակցում է նաև Փիլիպուպոլսի հայկական վանքերից մեկի առաջնորդ Հովհաննես Ութմանը:

դ) 1175-1176 թթ. Մանուելն արշավում է արևելք՝ պատերազմելու Իկոնիայի սուլթանության դեմ: Առաջին անգամ այս բանակցությունների պատմության մեջ դեսպանագնացություն է ձեռնարկում Հայոց կաթողիկոսը: Բանագնացն է Հռոմկլայում մեծացած Կոստանդին հույն քահանան:

ե) 1176-1178 թթ. Բյուզանդիան ամբողջովին կորցնում է իր դիրքերը Կիլիկիայում և Փոքր Ասիայում: Մանուելը Ա Կոմնենոսը 1176 թ. սեպտեմբերին պարտվում է Միլրիոկեֆալոնի մոտ: Հայոց եկեղեցու հետ հարաբերություններում բյուզանդական կայսրը ստիպված էր հրաժարվել ութ ծիսական պահանջներից և խնդրել, որ կաթողիկոսն ընդունի միայն մեկ՝ դավանական կետ: Ակնառու է արևելքում Բյուզանդիայի քաղաքական դերը եկեղեցական բանակցություններում զիջումներ կատարելու, իր դիրքերը վերանայելու գործում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում գործավարած միջնադարյան պաշտոնական փաստաթղթերի նշանակալի մասն ընդօրինակվել է ձեռագրերում, իսկ հիմնական դանգվածը դիվանատների տեղափոխուլթյունների, կողո-
կոտների, լուծարման հետևանքով՝ ոչնչացել է: Այնուամենայնիվ, պահպանված ընդօրինակուլթյուններն հնարավորուլթյուն են ընձեռում մոտավոր պատկերացում կազմել մեր նոտարատներում պահպանված մոտար և Հայկական միջնադարյան պաշտոնական վավերագրերի կա-
ռուցվածքի և բանաձևային համակարգերի մասին: Դրանց ուսումնա-
սիրուլթյունը թույլ է տալիս պարզաբանել յուրաքանչյուր փաստա-
թղթի վավերականուլթյան հարցը և որոշել թե ինչ չափով դրանք կարելի է օգտագործել պատմագրուլթյան տարբեր բնագավառներում:

Այս դարաշրջանին վերաբերող փաստաթղթերը մեզ են հասել երկու լեզվով. հունարեն և հայերեն: Վավերագրերի մի մասն էլ ա-
վանդվել է հակոբեկ-ասորական եկեղեցու պատրիարք Միքայել Ասորու (1166-1199) մեկնաբանուլթյուններով, նրա ղրջին պատկանող ժա-
մանակագրուլթյան բնագրում¹:

1165-1178 թթ. բանակցուլթյունների ընթացքում գրվել է մոտ 25 նամակ և փաստաթուղթ, որոնք դուրս են եկել կայսր Մանուել Ա Կոմնենոսի (1143-1180), պատրիարք Միքայել Գ Անքիալոսի (1170-1178) և Հայոց կաթողիկոսներ Ներսես Դ Շնորհալու (1165-1173) ու Գրիգոր Դ

¹ Պետք է նշել, որ Միքայել Ասորու ժամանակագրության մեզ հետաքրքրող մասը չի պահպանվել ատորներն բնագրով: Այս հուշարձանի հրատարակիչ և ֆրանսերենի թարգմանիչ Ժ.-Պ. Օաթոն հիշյալ հատվածը վերականգնում է, հետևելով Բար Լեյբրե-
նսի ժամանակագրությանը (տես *MS.*, t. III, p. 334-336): Հայ-բյուզանդական փոխհա-
րաբերությունների ուսումնասիրության տեսանկյունից ուրույն հետաքրքրություն են ներ-
կայացնում նաև Միքայել Ասորու երկի միջնադարյան հայերեն թարգմանության երկու
խմբագրությունները (տես *ՄԱ*, 1870, էջ 459-463, և հմտ. *ՄԱ*, 1871, էջ 459-462):

Տղայի (1173-1193) նոտարական գրասենյակներից: Հիշատակված թվից, ինչպես Համոզվեցինք, մեզ է հասել միայն 20 ամբողջական վավերագիր (տե՛ս N^oN^o 2-8, 10-16, 19, 21-25): Մնացած հինգ վավերագրերից հատվածներ կամ գրանց մասին տեղեկություններ են միայն պահպանվել այդ և հաջորդ դարաշրջանների մատենագրական մի շարք երկերում (տե՛ս N^oN^o 1, 9, 17, 18, 20): Կրկնում ենք՝ ուսումնասիրության առարկա վավերագրերի հիմնական մասը մեզ է հասել Ներսես Լամբրոնացու կազմած ժողովածոյի կազմում, իսկ երկու վավերագիր պահպանվել է միայն Հունարենով, Թեոփանոս մագիստրոսի «Տրամախօսութիւններ»-ի բնագրում (N^oN^o 10, 11): Փաստաթղթերի մի նշանակալի մասը մեզ է հասել և՛ Հայերեն, և՛ հունարեն պատճեններով (N^oN^o 7, 8, 12, 13, 14): Վավերագրերից միայն մեկն է, որ չի մտել Հիշատակված երկու ժողովածուներից որևէ մեկի կազմի մեջ, այլ հասել է առանձին, երկու Հայերեն ձեռագրերի ավանդությանը (N^o 21)²:

Այժմ փորձենք վավերագրագիտական քննության հիմքի վրա վերականգնել փոխհարաբերությունների այն սկզբունքները, որոնք, նոտարական գրասենյակների մակարդակում, դոյություն ունեին Հայոց եկեղեցու և Բյուզանդական կայսրության միջև: Նման աշխատանքի արդյունքները թույլ կտան ավելի ամբողջական պատկերացում կազմել պաշտպանված նյութի մասին, ընդարձակել մեր գիտելիքները Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի, Կոստանդնուսուլսի կայսերական և պատրիարքական նոտարական գրասենյակների աշխատանքների մեղանձանոթ ևս մի բնագավառի վերաբերյալ:

ա) Կաթողիկոսական թուղթ առ կայսր.

Պես՝ ժողովածոյում պահպանվել է Հայոց կաթողիկոսներ Ներսես Դ Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի գրչին պատկանող ինը վավերագիր (տե՛ս N^oN^o 2, 4, 5, 6, 8, 15, 19, 21, 24)՝ ուղղված Բյուզանդական կայսրության քաղաքացիական իշխանություններին և Մանուել Ա Կոմնենոս կայսրին: Դրանցից վեցը (N^oN^o 2, 4, 5, 6, 8, 15) պատկանում է Ներսես Դ Շնորհալուն, երեքը՝ Գրիգոր Դ Տղային (տե՛ս N^oN^o 19, 21, 24): Այդ վավերագրերից հինգն է միայն, որ ունի կայսրին առաքված պաշտոնական նամակի տեսք (տե՛ս N^oN^o 8, 15, 19, 21, 24): Ներսես Դ Շնորհալու գրած առաջին թուղթը հասցեատիրոջը՝ Կիլիկիայում կայսեր ներկայացուցիչ Ալեքս Աքսուխին է հանձնված Գրի-

² Տե՛ս Միքայել Ա. Միշից, էջ 27-48:

գոր Գ Պաշտպանի կաթողիկոսի անունից (տե՛ս N^o 2), իսկ երկրորդ թղթի հետ Կոստանդնուպոլիս է ուղարկվել նաև երկու առանձին դավանական փաստաթուղթ.

1) «Սահմանք Հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ» (N^o 5),

2) «Յաղագս աւանդութեանց եկեղեցոյ» (N^o 6)³:

Վավերագրերից երկուսը մեզ են հասել նաև մասնակի կամ ամբողջական հունարեն թարգմանություններով: Թեոփրիանոսի երկրորդ «Տրամախոսության» բնագրում պահպանվել է միայն Ներսես Դ Շնորհալու երրորդ թղթի (տե՛ս N^o 8) ամբողջական հունարեն թարգմանությունը⁴: Գրիգոր Գ Պաշտպանու անունից Ալեքս Աքսուխի ձեռքով Կոստանդնուպոլիս ուղարկված թղթից (N^o 2) միայն մի քանի հատվածներ են պահպանվել Թեոփրիանոսի առաջին «Տրամախոսութեան» վիճարանական մասում:

Բացի բերված փաստաթղթերից, հիշատակելի է նաև Արշակ Տեր-Միքելյանի կողմից 1893 թ. «Արարատ» ամսագրում հրատարակված Գրիգոր Դ Տղայի ևս մեկ թուղթը, որը հրատարակիչը սխալմամբ վերագրել է Գրիգոր Գ Պաշտպանուն (N^o 21)⁵:

Ուրեմն՝ կարելի է ճշտորեն արձանագրել, որ 1165-1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցությունների առիթով կաթողիկոսական դիվանատնից դուրս եկած վավերագրերից մեզ է հասել կայսր Մանուել Ա Կոմնենոսին առաքված ինը պաշտոնական վավերագրերի բնագիր, որոնցից մեկը պահպանվել է ԺԲ դարի ամբողջական հունարեն թարգմանությամբ, մյուսը՝ հատվածաբար: Մեզ չի հասել սկզբնաղբյուրներում վկայված և Մանուել Ա կայսերն առաքված երկու վավերագիր (տե՛ս N^o 9, 17):

Պահպանված վավերագրերի խորագրերը: Մեզ հասած բոլոր վավերագրերի և՛ հայերեն բնագրերը, և՛ հունարեն թարգմանություններն ունեն իրենց խորագրերը, որոնք որպես կանոն, կառուցված են տարբեր սկզբունքներով: Կոստանդնուպոլիս առաքված նամակների բնօրինակները պաշտոնական վերնագրեր չեն ունեցել: Այդ դերն իր վրա է վերցրել թղթառաջը: Մինչև Ներսես Լամբրոնացու կազմած

3 Նշված երկու վավերագրերը և Գրիգոր Գ-ի անունից գրված փաստաթուղթը (N^o 2) չունեն կաթողիկոսական դիվանատանը գրված և վավերացված, պաշտոնական մյուս վավերագրերից հատուկ թղթառաջ-թղթավարտեր:

4 Տե՛ս PG, t. 133, p. 211-224 A14:

5 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Բոգոսյան, Գրիգոր, էջ 92-98, հմմտ. նաև Չեքիեան, Համամիութենական, էջ 8:

ՊԽՄ ժողովածու և մագիստրոս Թեորիանոսի «Տրամախոսութիւնննրի»
ընագիր մուծվելը այդ վավերագրերը, հավանաբար, վերնագրվել են
Հռոմկլայի Հայոց կաթողիկոսական դիվանատան պահոցում և Կոս-
տանդնուպոլսի կայսերական նոտարատանը: Այդ մասին են վկայում
ՊԽՄ-ի, Ա.Տեր-Միքէլեանի հայտնաբերած Գրիգոր Դ Տղա կաթողի-
կոսի (№ 21) և Թեորիանոսի «Տրամախոսութիւնննրում» առկա Ներսես
Շնորհալու թղթերի սկզբունքորեն իրարից տարբերվող խորագիր-բա-
նաձևերը:

ՊԽՄ-ում Ներսես Լամբրոնացին ոճավորել և կոնկրետացրել է
իր բերած նամակների խորագրերը, հարմարեցնելով ժողովածուի տրա-
մաբանական կառուցվածքին և լուծումներին: Փորձենք պարզել, թե
ինչպիսի վերնագրերով էին պահպանվում այդ վավերագրերը Հռոմ-
կլայի կաթողիկոսական դիվանատանը: Ինչպես ասվեց վերևում, դրա
ամենահատկանշական նմուշը Ա.Տեր-Միքէլյանի հրատարակած թղթի
խորագիրն է. «Թագաւորին Հոռոմոց Մանուէլի, պատասխանի գրեալ ի
Գրիգորէ կաթողիկոսէ Հայոց»: Հետագայի գրիչներն ավելացրել են
նաև «որ ի Կլայն Հռոմեական» դարձվածքը, որ պահպանվել է հիշյալ
թուղթը պարունակող մեզ հասած երկու ձեռագրերից միայն մեկում
(ավելի ուշ ընդօրինակվածում): Ինչպես տեսնում ենք, խորագրում ար-
տացույցած են եղել հասցեատերը և առաքողը իրենց հիմնական տիտ-
ղոսներով: ՊԽՄ-ում Կայսրության քաղաքացիական պաշտոնյային և
Բյուզանդական կայսերն ուղղված կաթողիկոսական թղթերի վերնա-
գրերը ներկայացնում են հետևյալ պատկերը.

ա) «Գիր հաւատոյ խոստովանութեան Հայաստանեայց եկե-
ղեցւոյ՝ / գրեալ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ (յեղբարէ տեառն Գրիգո-
րիսի կաթողիկոսի Հայոց), / ի խնդրոյ գերապատիւ փեսայի ինքնակալ
Թագաւորին Հոռոմոց Մանուէլի Ալէքսի մեծի պռօսօստաւոսօի, /
յորժամ ել յԱրևելս եւ էր ի Մամեստիա մայրաքաղաքին Կիլիկիցւոց, /
ի թուականութեանն Հայոց՝ վեց հարիւր չորեքտասան» (№ 2),

բ) «Պատասխանի առաջին թղթոյն Թագաւորին Հոռոմոց Մա-
նուէլի, / գրեալ Ներսիսի կաթողիկոսին Հայոց» (№ 4),

գ) «Սահմանք հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ՝ / գրեալ
Ներսիսի կաթողիկոսի Հայոց, / ի խնդրոյ աստուածասէր Թագաւորին
Հոռոմոց Մանուէլի» (№ 5),

դ) «Նորին՝ / յաղաքս աւանդութեանց եկեղեցւոյ» (№ 6),

ե) «Պատասխանի թղթոյն մեծի Թագաւորին Հոռոմոց կիւռ Մա-
նուէլի, / գրեալ սրբոյն Ներսիսի կաթողիկոսի / վասն ճշմարիտ դա-
ւանութեան հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ» (№ 8),

դ) «Պատասխանի թագաւորական գրոյս / տեառն Ներսիսի՝
երրորդ անգամ» (N^o 15),

է) «Թուղթ Գրիգորի կաթողիկոսի Հայոց՝ (որ զկնի տեառն
Ներսիսի յաջորդեաց զաթոռն), / առ բարեպաշտ թագաւորն Հոռոմոց
Մանուէլ» (N^o 19),

ը) «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց՝ / ձայնակցու-
թեամբ ընդհանուր ժողովոյ Հայոց, / պատասխանի թագաւորին Հոռո-
մոց Մանուէլի, / յորում եւ ուղղափառ դաւանութիւն ըստ խնդրոյ
արքային՝ / ձայնակցութեամբ եւ ձեռնագրով ամենայն Հայաստանե-
այց եկեղեցւոյ» (N^o 24):

Բերված խորագրերից առաջինն անմիջականորեն ուղղված էէ
Բյուզանդական կայսրին և ունի պատմողական բնույթ, ինչը մեզ
թույլ է տալիս ենթադրել, որ այս վավերագիրը կաթողիկոսական
դիվանատանը պետք է պահպանվեր. «Գիր հաւատոյ խոստովանու-
ղիվանատանը պետք է պահպանվեր. «Գիր հաւատոյ խոստովանու-
թեան Հայաստանայց եկեղեցւոյ, գրեալ ի Ներսիսէ արքեպիսկոպոսէ, ի
խնդրոյ գերապատիւ փեսայի ինքնակալ թագաւորին Հոռոմոց էմա-
նուէլի Ալեքսի մեծի պոստոստոատորին ի թուականութեան Հայոց՝ վեց
հարիւր չորեքտասան» Հավանական վերնագրով: Մնացած բանա-
ձևերն, ինչպես ենթադրեցինք, ավելացրել է ՊԽՄ-ի կազմող Ներսես
Լամբրոնացին, հարմարեցնելով իր երկիր բովանդակութեանը:

Առաջին հայացքից առանձնանում են Ներսես Ծնորհալու և
Գրիգոր կաթողիկոսի թղթերի տարբեր բանաձևային համակարգ ունե-
ցող խորագրերը: Եթե Ներսես Ծնորհալու նամակներն անվանված են
«Պատասխանի», ապա Գրիգոր Դ-ի նամակները կրում են «թուղթ»
անունը: Կաթողիկոսական նամակը Մանուէլ Կոմնենոսի անունից
ուղարկված թղթերից մեկում (N^o 10) անվանված է γροαφί (գիր,
թուղթ):

Ավելի միօրինակ և նոտարական գրասենյակի աշխատանքների
բանաձևային մոտեցումներին մոտ են բ), ե), զ), է) թղթերի վերնագրե-
րը, իսկ բ) և զ) թղթերի խորագրերում ավելացված են «առաջին
թղթոյն» և «երրորդ անգամ» նոտարական գրասենյակի համարա-
կալում հիշեցնող դարձվածքները: Հավանաբար Ներսես Լամբրոնացին
է ե) թղթի վերնագրում ավելացրել «վասն ճշմարիտ դաւանութեան
հաւատոյ Հայաստանայց եկեղեցւոյ», իսկ է)-ում. «որ զկնի տեառն
Ներսիսի յաջորդեաց զաթոռն» բառակապակցութիւնները: Թվում է
նաև, որ հետսամուտ է ե) թղթում Ներսես Դ Ծնորհալու «սուրբ»
հորջորջումը: Ը) թղթի խորագրի մեջ Ներսես Լամբրոնացին ավելացրել
է «յորում եւ ուղղափառ դաւանութիւն ըստ խնդրոյ արքային՝ ձայ-

նակցութեամբ եւ ձեռնադրով ամենայն Հայաստանեայց եկեղեցւոյ»
Հատվածը:

Վերորբերյալից կարելի է մակարերել, որ Հոռմկլայի կաթողիկոսական նոտարատանը ներսես Դ Շնորհալու գրած, բյուզանդական կայսերն առաքված թղթերը վերնագրվել են հետեյալ բանաձևով. «Պատասխանի X «գրեալ N», սկզբում դնելով կայսեր տիտղոսն ու անունը, ապա՝ կաթողիկոսինը: Բացառություն է կաղմում միայն ներսես Դ Շնորհալու վեցերորդ թուղթը, ուր X-ի (իմա՝ բյուզանդական կայսեր) տիտղոսի և անվան փոխարեն ներսես Լամբրոնացիի սրբագրել է «Թագավորական» բառով:

Ուշագրավ է մեկ այլ Հանգամանք ևս. Գրիգոր Դ Տղայի թղթերում առկա է հետեյալ բանաձևը. «Թուղթ N » X»: Այս Հանգամանքը խոսում է կաթողիկոսական նոտարական գրասենյակի աշխատանքում նոր բանաձևի օգտագործման մասին:

Պետք է կրկին նշել, որ այս թղթերից ոչ մեկի կոստանդնուպոլիս ուղարկված բնագիրը վերնագրված չի եղել: Այդ է վկայում նաև ներսես Շնորհալու Հունարենով պահպանված թղթի խորագիրը, որն ամենայն Հավանականությամբ տրված է բյուզանդական կայսերական նոտարատանը, որտեղից և վերցրել է Թեոդորանոս մագիստրոսը, թերևս կատարելով նաև սեփական լրացումները. «Πιττάκιον τοῦ Καθολικοῦ τῆς Ἀρμενίας Νοσέρσου πρὸς τὸν βασιλέα κύρον Μανουήλ, σταλὲν δι' ἀνθρώπων αὐτοῦ τοῦ βραχαμίω καὶ ἐξελληνισθὲν παρὰ τοῦ μοναχοῦ τοῦ Ἀτμάνου τοῦ ἀπὸ Φιλιππουπόλεως, παρουσίᾳ καὶ τοῦ μαΐστωρος Θεωριανοῦ, μὴνι Δεκεμβρίῳ ἰνδικτιῶνος τετάρτης» («Թուղթ կաթողիկոսին Հայոց ներսեսի առ Թագավոր տեր Մանուել, ուղարկված նրա մարդկանց (իմա՝ ծառաների - Ա.Բ.)՝ վրախամյանների միջոցով և Հունարեն թարգմանված Փրիլպուպոլիսի վանական Աթգիբտիոնի դեկտեմբր ամսին»): Այս խորագիրը թույլ է տալիս քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմել բյուզանդական արքունական նոտարատանը փաստաթղթերի պահպանման կարգի և սկզբունքների մասին: Ինչպես տեսնում ենք, նամակի վերնագիրն ունի հետեյալ բանաձևը. «Թուղթ N » X»: Վերնագրում արտացոլված են նաև բերողի, թարգմանչի և նոտարատուն մտնելու թվականի մասին տեղեկություններ: Վերջին երեք վավերագրիտական տվյալները բացակայում են

զությամբ է, որ կայսերն ուղղված նամակների թղթառաջների բանաձևերում լայնորեն օգտագործվում էին դրանք, իսկ բանաձևերի մի մասն էլ հավանաբար իրենք էին ստեղծում: Այս վավերագրերում օգտագործվում են կայսեր հետևյալ տիտղոսները.

1) Քրիստոսապսակիալ - θεόστέπτος⁸ (ա, բ, գ, դ, ե, զ),

2) ինքնակալ - αὐτοκρατορίας, αὐτοκράτωρ⁹ (ա, բ, գ, զ),

3) ծիրանածին - πορφυρογέννητος¹⁰(ա, բ2., ե),

4) աւգոստոս, օգոստափառ կամ օգոստէ - αὐγουστε¹¹(ա, բ, ե, զ),

5) սուրբ¹² (ա, գ),

6) թագավոր¹³ (ա, գ, ե, զ),

7) երկրաւորին յերկրի անուանակրի եւ արթուակալի¹⁴ (ա),

8) արքա - βασιλέων կամ βασιλεύς¹⁵ (բ, գ),

8 Բյուզանդական «Քրիստոսապսակիալ»(θεόστέπος) տիտղոս վավերագրերի բանաձևերում շրջանառության մեջ է սկսած է դարից: Այս պատվանվան զուգահեռ ձևերն են Deo coronatus & θεοστέφης (տե՛ս Röschi, ONOMA, S. 67, 140):

9 Այս տիտղոսը Հռոմեական կայսրերը որդեգրել են առաջին դարում, որպես հունացի իմպերատոր, իսկ բյուզանդական շրջանում՝ բասիլևժ պատվանունների (տե՛ս Röschi, ONOMA, S. 33-34):

10 Այս տիտղոսը Բյուզանդիայի կայսերական տիտղոսաշարի մեջ հայտնվում է 797 թվականից (տե՛ս Treitinger, Die oströmische Kaiser, S. 61):

11 Պատվանվան օգտագործման ոլորտների մասին տե՛ս Röschi, ONOMA, S. 34 - 35/

12 Բյուզանդական կայսեր ἄγιος տիտղոսը վկայված է նաև հունական սկզբնաղբյուրներում (տե՛ս Treitinger, Die oströmische Kaiser, S. 42, 51):

13 Դժվարանում են այս տիտղոսի զուգահեռը գտնել բյուզանդական վավերագրերի բանաձևերում, քանի որ կայսեր համար թագավոր (βῆξ) էին միայն հարևան պետությունների իշխողները (տե՛ս Treitinger, Die oströmische Kaiser, S. 190, 186, 196, Röschi, ONOMA, S. 37-38): Խնդրո առարկա թղթերում հանդիպող այս պատվանունը կաթոնիկոսական դիվանում հավանաբար օգտագործվել է σεσπότης (տիրակալ) նշանակությամբ: Այս տիտղոսի կիրառության մասին տե՛ս Röschi, ONOMA, S. 39-40:

14 Կաթոնիկոսական նոտարատանը ստեղծված այս պատվանունով զուգահեռ է անցկացվում Քրիստոսի Էմմանուել և կայսեր՝ Մանուել անունների միջև: Երկրի վրա երկկացվում Գաղափարախոսության շարունակությունը ապահովող կայսերական տիտղոսաշարի նախն թագավորության շարունակությունը ապահովող կայսերական տիտղոսաշարի գաղափարախոսության և կայսերական դիվանում նման բանաձևերի օգտագործման մասին տե՛ս Röschi, ONOMA, S. 39-40; Treitinger, Die oströmische Kaiser, S. 32-123:

Այս տիտղոսը իր բովանդակությամբ մոտենում է Հուստինիանոս կայսեր համար օգտագործված ծղոց τῆς οἰκουμένης μετὰ Θεὸν σεσπότης պատվանվանը (տե՛ս Röschi, ONOMA, S. 152):

15 Բյուզանդական կայսրերի տիտղոսաշարի այս պատվանունը մասնագետների կարծիքով պաշտոնական վավերագրերում սկսվում է կիրառվել 629 թվականից (տե՛ս Röschi, ONOMA, S. 23, 37-39, հմմտ. նաև Treitinger, Die oströmische Kaiser, S. 186):

9) արքայից արքայ¹⁶ (հ, դ),

10) Հռովմայեցւոց կամ Հռոմոց - 'Ρώμης կամ τῶν 'Ρωμαίων¹⁷
(բ, գ, դ),

11) յաղթող - νικητά¹⁸ (բ, գ),

12) սիրող բարեպաշտութեան եւ խաղաղութեան եկեղեցւոյ -
φίλε τῆς εὐσεβείας καὶ τῆς εἰρήνης τῶν 'Εκκλησιῶν¹⁹ (բ),

13) τροπαοῦχε²⁰ (բ, 2.),

14) բարձր²¹ (գ, հ, դ),

15) կիր²² (գ),

- 16) Սրբ կրկին հունարեանի փոխակերպեճք այս պատվանունը, ապա կստանանք հելլենիստական աշխարհում տարածված βασιλεύς τῶν βασιλέων տիտղոսը: Այստեղ, սակայն, պետք է նշել, որ այս պատվանունը երբեք բյուզանդական կայսրերի տիտղոսաշարի մաս չի կազմել: Վաղ բյուզանդական վավերագրերում կայսրերը այս պատվանունով բնորոշում էին միայն Սասանյան Պարսկաստանի թագավորներին: Այնուամենայն տիտղոսը հետզհետե մոռացության է մատնվում (տե՛ս Rösch, ONOMA, S. 156): Ուշագրավ է, որ ԺԲ դարի կաթողիկոսական նոտարատանը կրկին հարություն են շնորհել տիտղոսին և նրանով բնութագրել Բյուզանդական կայսր Մանուել Ա կոմնենոսին:
- 17) Տիտղոսն առաջին անգամ օգտագործվել է Ռ դարում: Դրանով (բասիլեւս τῶν 'Ρωμαίων) իր իշխանությունն է բնութագրել բյուզանդական կայսր Միքայել Ա-ը (811-813): Այս պատվանունը Բյուզանդական կայսրերը հակադրում էին ղրճ հորջորջմանը, որով բնութագրում էին Արևմտավրոպական և Գերմանական կայսրերի իշխանությունը (տե՛ս Treitinger, Die oströmische Kaiser, S. 187-191):
- 18) Այս պատվանունը սկսվում է օգտագործվել դեռևս Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից, սակայն որպես բյուզանդական կայսր տիտղոսաշարի անկապտելի մաս օգտագործվում է միայն Հերակլ Ա (610-641) կայսրը պատկանող վավերագրերում: Այս պատվանվան բյուզանդական համարժեքներն են νικητής կամ victor ձևերը (տե՛ս Rösch, ONOMA, S. 45-46, հմտ. Treitinger, Die oströmische Kaiser, S. 169-172):
- 19) Ամենայն հավանականությամբ այս արտահայտությունը ստեղծվել է որպես տիտղոս շրջանառության մեջ է դրվել Հռովմայի կաթողիկոսական ղիվանատան կողմից:
- 20) Հայերեն վավերագրերում չհանդիպող այս պատվանունը կարելի է թարգմանել հաղթող, պատերազմական ավարի տեր, ռազմավարտեր: Այն համապատասխանում է Հռոմի կայսերական տիտղոսաշարի triumphator պատվանվանը, որը victor տիտղոսի անկապտելի հատկանիշն է (տե՛ս Rösch, ONOMA, S. 46-47): Τροπαοῦχος պատվանվան բյուզանդական ընկալման և օգտագործման մասին տե՛ս Treitinger, Die oströmische Kaiser, S. 182:
- 21) «Բարձր» պատվանունը իր «գերազույն, վեհ, վեմ» նշանակություններով (ἄξιον, հտ. Ա, էջ 462) մոտենում է հռոմեական կայսրերին տրվող excellentissimus տիտղոսին (տե՛ս Rösch, ONOMA, S. 50, A. 89): Մեր վավերագրերը պահպանել են տերմինի միայն հայերեն տարբերակը:
- 22) Հունարեն κύριος (տեր) տերմինը բյուզանդական կայսերական տիտղոսաշարում օգտագործվել է կաթողիկոսական նոտարատանը:

16) աստուածասէր²³ (դ),

17) որ նստիս գլուխ ընդհանուր տիեզերաց ծայրագոյն պատուով եւ իշխանութեամբ²⁴ (դ),

19) Բրիստոսիւ գօրացեալ²⁵ (ե, գ):

Ինչպէս տեսանք, Հիշատակված պատվանունների մի մասն (1, 2, 3, 4, 8, 10, 11, 13, 14, 15, 16) է միայն օգտագործվում կայսեր ուղարկած վավերագրերում, մյուսներն՝ ամենայն հավանականութեամբ, կաթողիկոսական դիվանատանը աշխատող նոտարների գործունեութեան արդասիքն են²⁶:

Կաթողիկոսական թղթառաջը-դիմումի երկրորդ մասը, այսինքն՝ նամակազիր-կաթողիկոսի պատվանուններին վերաբերող հատվածն ավելի քան համեստ է: Այն բացակայում է ա, բ, ե թղթառաջներում, և պահպանվել է միայն վավերագրերից երեքում (գ, դ, զ), որոնցից միայն գ-ն և դ-ն են համեմատաբար ամբողջական: Այստեղ օգտագործված են կաթողիկոսին հատկանշական հետեյալ ձևակերպումներն ու պատվանուն-տիտղոսները.

1) նուսատ (գ, դ, զ),

2) ծառայ Աստուծոյ կամ ծառայ Բրիստոսի (գ, զ),

3) շնորհիւ [եւ ողորմութեամբ] նորին (գ, զ),

4) կաթողիկոս Հայոց (գ, դ, զ):

Ի տարբերութեան կայսերական նամակների թղթառաջների, կաթողիկոսների կայսրին ուղղված նամակների թղթառաջը սկսվում է Մանուել Ա Կոմնենոսին դիմող (թղթառաջը-դիմում) պատվանուններով (X) որին հաջորդում է կաթողիկոսի անունն ու տիտղոսաշարը (N) [թղթառաջ-բանաձև], ապա հետևում է ողջույնի բանաձևը: Թըղթառաջքի այս երրորդ բաղկացուցիչ մասը երբեմն զրկվում է թղթառաջը-դիմումից անմիջապես հետո (գ): Կայսեր անունը բացակայում է պահպանված երեք (ա, բ, ե) բանաձևերում: Ներսես Դ Շնորհալու (գ) և

23 Պատվանունն θεοφιλέστατος հունարեն գրութեամբ հանդիպում է ցաւ վաղ շրջանի կայսերական վավերագրերում (Rösch, ONOMA, S. 66):

24 Բյուզանդական կայսրը դիտվում էր ծայրագոյն հոգևոր և աշխարհիկ իշխանութեան կրող (տե՛ս Treitinger, Die oströmische Kaiser, S. 161-167):

25 Այս տերմինի բյուզանդական հոմանիշը դիվարանում ենք մատնացույց անել:

26 Բյուզանդական կայսերական տիտղոսաշարի հնարավոր փոփոխակների մասին տե՛ս F. Dölger, Die Entwicklung der byzantinischen Kaisertitulatur und Datierung von Kaiserdarstellungen in der byzantinischen Kleinkunst, տե՛ս Dölger, Diplomatie, S. 131-151, հատկապէ՛ս էջ 138, 143: Կայսերական իշխանութեան ընկալման բյուզանդական տարբերակի մասին ավելի մարամասն տե՛ս Hunger, Konstantinopel, S. 40-49:

Գրիգոր Դ Տղայի վերջին (զ) թղթում կայսեր անունը գրված է թղթա-
ռաջք-գիմումի վերջում, իսկ Գրիգոր Դ-ի առաջին թղթում (զ) այն
գտնվում է թղթառաջք-գիմումի կենտրոնում:

Թղթառաջքներում ավելի հազվադեպ են պատահում թղթա-
ռաջք-ողջույնի բանաձևերը, որպիսիք առկա են միայն Ներսեսի Դ և
Գրիգոր Դ-ի մեկական թղթերում. «*Նընդալ միշտ*» և «*աղօթիւք ող-
ջոյն առաքեմք*» բանաձևերով: Դրանցից առաջինը սերտորեն կապված
է վաղ միջնադարյան հայկական թղթի ողջույնի բանաձևերի հետ:

Ներսես Դ Շնորհալու թղթի հունարենով պահպանված թղթ-
առաջքի թարգմանությունն աննշան տարբերություններով կրկնում է
հայերեն տարբերակը: Նրանում ավելացված են միայն կայսեր երկու
պատվանունները՝ *πορφυρογέννετε* (ծիրանածին) և *τροπαιούχε* (հաղ-
թող, պատերազմական ավարի տեր), ռազմավարատե²⁷ մակդիրները,
որոնց հայտնվելը կարելի է առնչել կայսերական նոտարատան աշխա-
տանքի հետ:

Վերջաբան-հրաժեշտի բանաձև. կաթողիկոսական նամակի
թղթավարտի բանաձևը²⁸ ևս թուղթ-վավերագիր համակարգի կարևոր
բաղկացուցիչներից է և առկա է մեզ հետաքրքրող գրեթե բոլոր փաս-
տաթղթերում.

ա) «*եւ որ ոք յետ դայտոսիկ լսելոյ ի մէջն զայթակղեսցի դար-
ձեալ ի մեզ՝ ոչ հաւատալով ասացելոցս, ինքն տացէ պատասխանի
Քրիստոսի յաւուր դատաստանի նորա իրբն զպառակաող անդամոց
նորին. իսկ այն, զոր միանգամ լսէ և հաւատայ և ոչ դատի՝ որպէս
ասաց քննողն սրտից, ընդ ճշմարիտ հաւատացելոցն ընկալցի վարձս
բարեաց ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, որում փառք եւ զօրութիւն՝ յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն*»: (N^o 2):

բ) «*Ողջ լէք թագաւոր աւգոստէ, երկնաւոր թագաւորին պահ-
պանեալ զաւրութեամբ*» (N^o 4):

գ) «*...վարձս ընդ բանաւոր երկրի մշակացն ըստ չափոյ պողա-
բերութեանն ընկալչիք ի Քրիստոսէ Աստուծոյ. որում փառք եւ զաւ-
րութիւն ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւի-
տեանս. ամէն*» (N^o 6):

27 Այս եզրերի և հատկապես դրանցից երկրորդի մասին ավելի մանրամասն տե՛ս
Hunger, PROOIMION, S.73-75:

28 Կայսերական նամակի թղթավերջի կառուցվածքի մասին տե՛ս Dölger-Karayanopoulos,
S. 48:

դ) 1.«...Գրեցաւ ի թուականութեանս Հայոց վեց Հարիւր ինն եւ սասն. յամսեանն Հայոց՝ Արեգ, եւ Հոռոմոց՝ Հոկտեմբեր» (2. ...ὡσπερ ὁ ἀληθὴς Ἐμμανουὴλ τὴν ἀόρατον δύναμιν, ὄυτω καὶ σὺ τὴν ὄρα τὴν τῶν πολεμουίντων Ἐκκλησίαν καὶ ἀξιοθεύημεν ἰδεῖν σε καὶ ἀγαλλιασθῆνα εἰς δόξαν Χριστοῦ τοῦ Θεοῦ» (N^o 8):

ե) «Ողջ լիւր աւծեալիդ Աստուծոյ, յաղթող եղեալ Հակառակա- մարտիցն՝ զաւրութեամբ ճշմարիտ աւծելոյն Յիսուսի» (N^o 15):

զ) «Ողջ լիւր / յարքունական տէրութեանդ պարագայց ամաւք, կարող եւ ինքնակալ բարձր աստուածասէր թագաւոր» (N^o 19):

է) «Ողջ լիւր, աստուածասէր թագաւոր» (N^o 24):

Բերված բ, ե, զ և է թղթերն ունեն գրեթե միօրինակ բանաձև՝ «ողջ լիւր» ձևակերպմամբ, իսկ չորրորդ թուղթն ունի նաև Հայոց թվա- կանով թվագրում: Ուրեմն՝ կարելի է ենթադրել, որ կաթողիկոսական թղթի թղթավարտը երկմասն է եղել, բաղկացած Հրաժեշտի բանաձևից և թվագրումից: Բացառություն են կազմում միայն կաթողիկոսական թղթերի ա, գ, դ (և՛ Հայերեն, և՛ Հունարեն) տարբերակները, որոնք սոսկ քրիստոնեական օրհնանքի բանաձևեր են: Մնացած բոլոր թղթերում բանաձևը սկսվում է «ողջ լիւր» բառակապակցությամբ, որին Հա- ջորդում են կաթողիկոսական տարբեր մաղթանքներ:

Կաթողիկոսները նամակների թղթավարտում ևս օգտագործում են կայսերական արտոգոսաչարը բնութագրող պատվանուններն ու ձե- վակերպումները.

1) աւգոստէ (բ),

2) յաղթող եղեալ Հակառակամարտիցն(ե)²⁹,

3) յարքունական տէրութեանդ պարագայց ամաւք (զ)³⁰,

4) կարող (զ),

5) ինքնակալ (զ),

6) բարձր (զ),

7) աստուածասէր (զ, է),

8) թագաւոր (զ, է):

29 Այստեղ ևս նկատի ունի կայսերական սիգնա և տրոպաւօւջ տիտղոսները (տե՛ս Hunger, PROOIMION, S. 73-75):

30 Այս ձևակերպումը բավական հին է և արդեն առկա է Կիրեղի թղթերում (տե՛ս Նոր քաղաքը հայկազեան լեզուի, հտ. երկրորդ, Վեներտիկ 1837, էջ 626):

Ինչպես տեսնում ենք, Մանուել Ա Կոմսենոսին ուղղված կաթողիկոսական թղթավարտներում ևս շեշտվում է կայսերական իշխանության աստվածային բնույթը և այն, որ դա տրված է ի վերուստ:

Թղթավարտի բանաձևը չի պահպանվել միայն Գրիգոր Դ Տղայի «Արարատ» 1893 թ.-ում (№ 21) հրատարակված թղթում, որի վերջնամասը դեռևս անհայտ է գիտությանը³¹:

Մուսք (Prooimion). Կայսրին ուղղված կաթողիկոսական որոշ թղթերի մուտքերում բացատրվում է, թե ի՞նչ նպատակով է գրված տվյալ նամակը (№ 2, 5), կամ խոսվում է միության չկայանալու պատճառների մասին (№ 19): Երբեմն էլ կաթողիկոսն իր համեստ կարողություններից վեր է համարում Հայոց եկեղեցու հավատո հանգանակի մատուցումը, սակայն հնազանդվում է կայսեր հրամանին, նույնիսկ երկրորդ կամ երրորդ անգամ է շարադրում այն (№ 5, և այլն): Կաթողիկոսն աստվածային հրաման է համարում մեծին ու փոքրին, մանավանդ՝ «բարձրագուներն ամենայնի» (բյուզանդական կայսրին) բացատրել իր եկեղեցու հավատո հանգանակը՝ հիմնվելով առաքյալների, մարգարեների և ուղղափառ վարդապետների ասածների վրա: Մի խոսքով՝ Հայոց եկեղեցու հավատո հանգանակը կաթողիկոսն համարում է ուղղափառ և ճշմարիտ (№ 5): Հայրապետն առաջարկում է առանց միմյանց մոլորեցնելու անդրադառնալ նաև ծիսական խնդիրներին (№ 6):

Թղթերի մուտքերում հայտնվում է նաև այն մասին, որ կաթողիկոսը ստացել է կայսերական նամակը (№№ 4, 8, 15, 21) և լսել դեսպանագնացների պատմածը (8, 15): Մուտքում կաթողիկոսն հաճախ անդրադառնում է նաև նամակաբերների անձնավորությանը (№№ 5, 8): Առանձնապես հետաքրքիր է անդրադարձը կայսեր Թիտոսաշարին, անվանելով նրան երկրի վրա երկնային աստծո անվանակիր և աթոռակալ՝ էմանուել (№ 4), կամ մեկը, որը ջանում է նմանվել երկնային էմանուելին (№ 8): Կաթողիկոսը բարձր է գնահատում կաթողիկե եկեղեցին միաբան դարձնելու կայսեր ցանկությունը՝ (№ 8): Գրիգոր Տղայի երկու թղթերի մուտքերում հանդիպում ենք որակական նոր երևույթի, որը չի կրկնվում մեզ հասած մյուս թղթերում. կաթողիկոսն աղոթում է թագավորի հաղթանակի և նրա ժառանգ՝ Ալեքսի արևշատության համար (№№ 21, 24): Կաթողիկոսական իշխանության բնորոշ գծերից մեկն էլ քահանայապետական շնորհի անցումն է: Այդ իսկ պատճառով ուշագրավ է, որ իրենց առաջին նամակներում կաթողի-

31 Այդ մասին տե՛ս Յոզայան, Գրիգոր, էջ 94:

կոսները անվանում են իրենց նախորդ կաթողիկոսի որդի (N^o 4) կամ աշակերտ (N^o 19):

Բուճ խնդիր (narratio) - Ըստ բովանդակության կաթողիկոսական թուղթը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա) ուր բերվում է Հայոց եկեղեցու ընդարձակ Հավատո խոստովանությունը (N^oN^o 2, 5, 21, 24),

բ) քննարկվում են երկու եկեղեցիների փոխհարաբերություններում վիճելի ճանաչված ծիսական հարցերը (N^oN^o 2, 6),

դ) շարադրվում են երկու եկեղեցիներին հուզող ընթացիկ փոխհարաբերությունների խնդիրները, կատարվում են պատմական ակնարկներ (N^oN^o 4, 8, 15, 19):

Վերջաբան-ամփոփում (corroboratio) - կաթողիկոսական նամակի այս հատվածի ամենահատկանշական բանաձևերը նշովքը (N^oN^o 2, 6) կամ աղոթքն (N^oN^o 6, 24) են, որոնցով նամակագիրը հիշատակելով Աստծուն, իր վրա է վերցնում վավերագրում ասվածի ողջ պատասխանատվությունը: Վավերագրի այս հատվածում հիշատակվում են նաև դեսպանագնացները, որոնց կաթողիկոսը վստահել է նաև նամակի հասցեատիրոջը բանավոր լուրեր հասցնելու պատասխանատվությունը (N^oN^o 4, 19): Կաթողիկոսական թղթերի այս հատվածում երբեմն կոչ է արվում լինել ավելի հանդուրժող (N^oN^o 15, 21), իսկ Գրիգոր Դ Տղան փորձում լուծել ավելի գործնական խնդիր, ինչպիսին է Կոստանդին քահանային Հերապոլսի մետրոպոլիտ օծելու հարցը (N^o 19):

Եզրակացություն.

ա) 1165-1178 թթ. Կոստանդնուպոլիս առաքված կաթողիկոսական բոլոր թղթերն էլ գրվել են Հայերեն լեզվով: Այդ մասին է վկայում Ներսես Դ Շնորհալու (N^o 8) թղթի հունարեն բնագիրը, որը թարգմանել է Հովհաննես Աթմանը, Թեոփիանոս մազիստրոսի օգնությամբ (այս վկայությունը պետք է հասկանալ հետևյալ կերպ. Հայերենից հունարեն բառացի թարգմանել է Հովհաննես Աթմանը, իսկ հունարենի շարահյուսական կողմը՝ այսինքն խմբագրությունն ապահովել է Թեոփիանոս մազիստրոսը): Ամենայն հավանականությամբ՝ նրանց թարգմանության օրինակը Հայերեն բնագրի հետ միասին ինչ որ ժամանակ պահպանվել է Կ.Պոլսի կայսերական նոտարատանը:

բ) Թղթառաջբներում և վերջաբան-հրաժեշտի բանաձևերում նկատված տարբերությունները խոսում են այն մասին, որ Հռոմկլայի կաթողիկոսական դիվանատանը դեռևս չեն կարողացել մշակել կայսերն առաքվող թղթի միօրինակ բանաձև: Բիչ թե շատ կայուն բա-

նաձև կարելի է համարել Գրիգոր Դ Տղայի նամակների թղթառաջբներն ու վերջաբան-հրաժեշտները:

դ) Կաթողիկոսական նամակի թղթառաջբի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայոց կաթողիկոսը միջազգային եկեղեցաքաղաքական բանակցություններում իրեն վստահված ավտոռ ստորագասում է բյուզանդական կայսեր հեղինակությանը, միշտ օգտագործելով «X «N» բանաձևը:

դ) Հռոմկլայից Կոստանդնուպոլիս ուղարկվող կաթողիկոսական թուղթը որպես կանոն չի թվագրվում: Բացառություն է կազմում Ներսես Դ Շնորհալու N^o 8 թուղթը, որը հայերեն բնագրում թվագրված է «գրեցաւ ի թուկանութեանս Հայոց վեց հարիւր ինն և տասնյամսեանն Հայոց Արեգ և Հռոտումոց՝ հոկտեմբեր»: Այստեղ հավանաբար գրված է այն թվականը, որով վավերագիրը մուտք է գործել Հռոմկլայի կաթողիկոսական դիվանատուն³²: Եթե մեզ հասած Հայերեն բնագրում փաստաթուղթը թվագրված է վերջաբան-հրաժեշտից հետո, ապա նույն թղթի հունարեն թարգմանությունը թվագրումը պահպանել է վերնագրի մեջ. «չորրորդ ինդիքտիոնի դեկտեմբեր ամիս»: Թվագրումների տարբերությունը մեզ թույլ է տալիս ճշտել, թե ի՞նչ ժամանակամիջոցում է նամակը հասել Հռոմկլայից Կոստանդնուպոլիս:

բ) Կայսերական թուղթ առ կաթողիկոս

Նկատի ունենալով կաթողիկոսի՝ առ կայսր թղթերի վերևում նկատված յուրահատկությունները, ավելի հանգամանալի անդրադառնանք կայսերական նամակներին: Ներսես Լամբրոնացու կազմած ժողովածոյում պահպանվել է 4 փաստաթուղթ (տե՛ս N^oN^o 3, 7, 12, 22), որոնք դուրս են եկել Մանուել Ա Կոմնենոս կայսեր իշխանության շրջանի նոտարական գրասենյակից և ուղղված են Ներսես Դ Շնորհալի ու Գրիգոր Դ Տղա կաթողիկոսներին: Չորս վավերագիր էլ, ինչպես ասել ենք, իր «Տրամախօսութիւնների» բնագրում բերում է Թեորիանոս մագիստրոսը (N^oN^o 7, 10, 11, 12), որոնցից մեկը (N^o 10), ինչպես վկայում է խորագիրը, գրվել է Միքայել Գ Անքիալոսի կողմից, Մանուել Ա

32 Ըստ Ռ. Լևոն Չեքիանի. «1170-ից Արեգի և Բուկտեմբերի զուգադիպությունը կրճար տեղի ունեցավ միայն Բուկտեմբերի առաջին հինգ օրերում» (տե՛ս Չեքիան, Համամիութենական, էջ 56):

Կոմենենոսի անունով³³ և ներկայացված է ներսես Լամբրոնացու կազմած ժողովածոյում: Հայերեն թարգմանությամբ մեզ չի հասել նաև Մանուել Ա Կոմենենոսի այսպես կոչված Գաղտնի թուղթը (№ 11): Թղթերից երկուսի բնագրերը, որոնց մասին պահպանվել են միայն սկզբնաղբյուրների վկայութուններ, մեզ չեն հասել ո՛չ Հայերեն, ո՛չ էլ Հունարեն ընդօրինակությամբ (№№ 18, 20):

Ներսես Դ Շնորհալուսն ուղղված երկու վավերագիր, որոնց բնագրերն առկա են Թեոփրանոսի «Տրամախօսութիւններում», պահպանվել են նաև Ներսես Լամբրոնացու կազմած ՊԽՄ ժողովածոյում, սակայն դրանց թարգմանությունը բավական հեռանում է պահպանված Հունարեն բնագրերի իմաստներից: Այս վավերագրերի Հայերեն թարգմանությունների թարգմանական Հնարանքները կարող են բանասիրական առանձին ուսումնասիրության նյութ դառնալ: Թարգմանիչները փորձում էին մեղմացնել, կամ վերաշարադրել կայսերական նամակների այն Հատվածները, ուր դուրս ինչ կասկած էր արտահայտվում Հայոց եկեղեցու ուղղափառ դավանանքի վերաբերմամբ և ընդհոված կերպով այն գաղափարն են անցկացնում, որ անհրաժեշտություն է միության Հաստատումը Քրիստոսի բաժանված եկեղեցիների միջև:

Քանի որ Հայտնի է Հունարենով և Հայերենով պահպանված վավերագրերի քանակը, փորձենք փաստաթղթերի ձևաբանական (կամ այսպես կոչված բանաձևային մասերի) ուսումնասիրությամբ ստուգել այդ թղթերի Հարադատությունը ժԲ դարի Կոստանդնուպոլսի կայսերական նոտարատան ավանդների հետ:

Վավերագրերի խորագիրը և ամուսնը. Մեզ հասած կայսերական նամակներն ունեն երկու տեսակ վերնագիր. դրանցից առաջինը կարելի է կապել կայսերական նոտարական դիվանի գործունեության հետ, է կարող է կայսերական նոտարական դիվանի պահպանում պահելու և երկրորդը՝ կաթողիկոսական: Դիվանատան պահպանում պահելու և փաստաթուղթը Հեշտությամբ գտնելու նպատակով դպիրներն, իրենց նոտարատան աշխատանքային որոշ Հայտնի սկզբունքներից ելնելով, վերնագրում էին արխիվ մուծված վավերագրերը, հիշատակելով վավերագրի Հեղինակին, Հասցեատիրոջը, դրության պարագաները, երբեմն էլ նշում էին կատարում փաստաթղթի բովանդակության վերաբերյալ:

Քանի որ կայսերական նամակների բնօրինակները խորագրեր չեն ունցել, ապա այդ գրերը թղթերի մեղ չհասած բնօրինակներում իրենց վրա են վերցրել թղթառաջները (Protokoll):

33 St' u PG, t. 133, p. 224:

Թեոփրիանոս մագիստրոսի երկում պահպանված կայսերական վավերագրերից միայն երկուսը խորագիր ունեն (№№ 7, 10): Դրանցից առաջինը վերնագրված է նաև ներսես Լամբրոնացու ՊԽՄ ժողովածոյում: Թեոփրիանոսի «Δι'ἀλέξις»-ում այս խորագիրն այսպիսին է. «Ἰσὸν βασιλικοῦ καὶ θείου γράμματος πρὸς τὸν Καθολικὸν Ἀρμενίων»³⁴: Թեոփրիանոսն այս վավերագիրն անվանում է նաև «βασιλικὸν θεῖον γράμμα»³⁵ կամ «βασιλικὸν καὶ θεῖον γράμμα»³⁶, որը թերևս բխում է վերոբերյալ ընդարձակ խորագրից: Այս երկու՝ ընդարձակ և համառոտ վերնագրերն էլ ամենայն հավանականությամբ պատկանում են Թեոփրիանոսին և վավերագրի նրա բնորոշումներն են, քանի որ այս նամակի վերջում պահպանվել է նաև մի այլ, չորրորդ խորագիր. «Βασιλικὸν εἰς τὸν τιμώτατον καὶ εὐλαβέστατον καθολικὸν τῶν Ἀρμενίων»³⁷ (X » N): Այս վերջին վերնագիրը վավերագրի պատճենին կցվել է կայսերական նոտարական գրասենյակում, ուր նմանատիպ վավերագրերն անվանվել են «Βασιλικόν»: Այս ենթագրութունը հաստատող առայժմ միակ փաստաթիղթն այն է, որ Թեոփրիանոսն այս վերջին վերնագիրն անվանում է «ἡ ἐπιγραφή»: Բյուզանդական ստովածաբանը բերում է նաև նոտարական կամ գրասենյակային մի շարք նշումներ, որոնցից պարզվում է, որ վավերագրի բնօրինակը ստորագրված է եղել կայսեր ձեռքով և կարմիր թանաքով. «δι' ἔρυσθῶν γραμμάτων τῆς βασιλικῆς χεῖρος»³⁸:

Ելնելով վերոբերյալ նյութից և համեմատելով մեզ հետաքրքրող վավերագրերին վերաբերող տեղեկութունները Յր.Դյուգերի ու Հ.Կարայանսյուրլոսի կայսերական վավերագրերի դասակարգման հետ, Բյուզանդական կայսր Մանուել Ա Կոմնենոսի նամակները Հայոց կաթողիկոսներին կարելի է համարել արտաքին քաղաքական վավերագրեր (Außenpolitische Urkunden): Փաստաթղթի այս տեսակը ըստ հիշատակված հեղինակների կոչվում են նաև σάκρα, γράμματα, βασιλικόν, χρυσόβουλλος ὄρισμός, χρυσόβουλλου σιγίλλιον, προκουρατορικόν

34 PG. t.133, p.120A1.

35 Նույն տեղում, էջ 121B10:

36 Նույն տեղում, էջ 121C11:

37 Նույն տեղում, էջ 121A13:

38 Կայսերական ամսակի կարմիր թանաքի մասից տե՛ս նաև Dölger, Diplomantik, 1956, S. 14, 41: Հետաքրքիր է, որ կարմիր թանաքը հետագայում օգտագործվում է նաև կիրիկիայի հայկական թագավորների կողմից փաստաթղթերը վավերացնելու համար (տե՛ս Langlois, Le trésor, p. 115-117):

Χρυσόβουλλον³⁹: Γράμμα καὶ βασιλικόν ἐστὶν ἐπιφιλία Ζαῖου κα-
թողիկոսներին կայսեր ուղարկած երեք (N^oN^o 7, 11, 12) նամակները:
Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ վերջին վավերագրերից մեկը
դադանի (N^o 11) է, մյուսը՝ բաց կամ հայտնի (N^o 12):

Միզ հետաքրքիր փաստաթղթերի տեսակը ըստ իր բանաձևա-
յին կառուցվածքի մտնելու է Հռոմի պապերին ուղարկված կայսերա-
կան նամակին, որը Ֆր. Դյուգերն անվանում է Բյուզանդական կայսե-
րական նոտարատան արտասահմանյան նամակ (Auslandsbrief) և բնու-
թագրում, որպես βασιλικόν - Imperialem (կայսերական)⁴⁰:

Ներսես Լամբրոնացին հետևում է, որ Մանուել Ա Կոմնենոսի
նամակների վերնագրերը պահեն կաթողիկոսական նոտարական գրա-
սենյակում կայսերական վավերագրերի մուտքագրման հերթական հա-
մարը: Տարսոնի արքեպիսկոպոսն առանձին է համարակալում ներսես
Շնորհալուև և Գրիգոր Տղայի առաքված կայսերական նամակները:
Ի տարբերություն Թեորիանոս մագիստրոսի, Լամբրոնացին ավելի
համառոտ է ներկայացնում նոտարատանը դրված խորագրային բա-
նաձևը, ուր մատնանշվում է ոչ միայն վավերագրի հեղինակը, այլ նաև
հասցեատերը: Օրինակ. «Թուղթ (առաջին, երկրորդ կամ երրորդ)
թագավորին Հռոմոց Մանուելի առ սրբազան կաթողիկոսն Հաճոց»
(տե՛ս Ներսես կամ Գրիգորիս): Դրանք կարելի է բնորոշել նաև N » X
բանաձևով: Որոշ վավերագրերի խորագրերում առկա են նաև Հռոմ-
կալի նոտարական գրասենյակին բնորոշ բովանդակային նշումներ:
Օրինակ. «...յաղագս խնդրելոյ զմիաբանութիւն երկաքանչիւրոցս աղ-
անց» (N^o 7), կամ. «...յաղագս նոյն խնդրոյ միաբանութեան երկա-
քանչիւրոց ազգաց եկեղեցւոյ ի տէր մեր Քրիստոս» (N^o 12):

Նոտարական գործի տեսանկյունից մեծ հետաքրքրություն է
ներկայացնում այդ դարաշրջանի կայսերական մի ուրիշ նամակի վեր-
նագիր, որը մեզ է հասել Թեորիանոսի ժողովածոյում և ունի հետևյալ
տեսքը. «'ΑΥΤΙΓΡΑΜΜΑ πρὸς τοῦτον τὸν Καθολικὸν τοῦ ἁγιωτάτου
πατριάρχου κύρου Μιχαὴλ τοῦ γεγονότος ὑπάτου τῶν φιλοσόφων,

39 Ուտ Գրանց՝ վավերագրերի այս տեսակին են պատկանում պայմանագրերը, օտար
իշխողներին ուղղված նամակները, դիվանագիտական գերկայացուցիչներին տրված
նավատարմագրերը (Dölger-Karayanopoulos, S.24):

40 Dölger, Zum Form, p. 83-90: Այս հոդվածում հեղինակը նկարագրում է կայսերական
գրասենյակից դուրս եկած այն նամակները, որոնք հասել են բնօրինակով և կայսերի
ստորագրությամբ:

γραφὲν ὡς ἐκ προσώπου τοῦ κραταιοῦ καὶ ἁγίου ἡμῶν βασιλέως κύρου Μανουήλ»⁴¹:

Ինչպես երևում է այս խորագրից, նամակի Հեղինակը պատրիարք Միքայել Գ Անքիլիոսն է, որը գրել է այս դավանական թուղթը Մանուել Ա Կոմենենոս կայսեր անունից: Այստեղ Հասցեատեր-կաթողիկոսի անունը գրված է բանաձևի սկզբում, իսկական Հեղինակի՝ պատրիարք Միքայելի անունը՝ երկրորդ տեղում, իսկ կայսեր անունը բանաձևի կառուցվածքում երրորդն է (№ 10): Վավերագիրն անվանված է «**Αντίγραμμα**»:

Թեորիանոսի բնագրում, ինչպես ասել ենք, վերնագրված է է կայսեր այսպես կոչված Գաղտնի թուղթը⁴², որը մեղ է Հասել միայն Հունարենով: Թեորիանոսն այն անվանում է. «ἡ μὲν μυστικὴ γραφή τοῦ βασιλέως ἦν αὕτη»⁴³:

Կարելի է եզրակացնել, որ ԺԲ դարի 60-70-ական թվականներին Հայոց կաթողիկոսներին առաքված բյուզանդական կայսերական նամակները Հայալեզու սկզբնաղբյուրներում անվանվում են «**թուղթ**» կամ «**թուղթ...պատասխանի**», իսկ Թեորիանոսի երկում՝ **γράμμα** կամ **βασιλικόν**, երբեմն էլ պարզապես **γραφὴ** կամ **Αντίγραμμα**⁴⁴:

Նամակների կառուցվածքը. Հետևելով Ֆր.Դյուրգերին և Հ. Կարայանոպուլոսին, մեղ Հետաքրքրող այս փաստաթղթերի բնագրերը կարելի է բաժանել երեք մասի. թղթառաջք (Protokoll), բնագիր (Text) և թղթավարտ (Eschatokoll), որոնք բաղկացած են մի շարք կայուն ձևակերպումներից⁴⁵: Թեորիանոսը պահպանել է միայն նամակներից երկուսի (№№ 7, 11) պաշտոնական-արարողական բանաձևերը, իսկ մնացած նամակներից դուրս է նետել թղթառաջքներն ու թղթավարտները: Այդ բանաձևերը վերականգնելու Համար մեծ կարևորություն են ձեռք բերում ներսես Լամբրոնացու կազմած ՊԽՄ բնագրում պահպանված վավերագրերը:

Թղթառաջք. Այս տիպի նամակների, այսինքն՝ կայսերական վավերագրերի թղթառաջքները բաղկացած են Հետևյալ բաղկացուցիչ մասերից. առաջին՝ կայսեր անուն, Աստծուն Հավատարմության և ողորմության Հավաստում (invocatio) և տիտղոսաշար (intitulatio), երկ-

41 PG. t. 133, p. 224C2-6:

42 Նույն տեղում, էջ 233-236:

43 Նույն տեղում, էջ 233B6:

44 Ա յղ մասին տե՛ս Dölger-Karayannopoulos, S. 89:

45 Dölger-Karayannopoulos, S. 48:

բորդ՝ Հասցեատիրոջ (Հայոց կաթողիկոսի) տիտղոսաշար (Adresse, inscriptio), երրորդ՝ որջույնի բանաձև⁴⁶: Թեորիանուր բերուժ է միայն երկու նամակների (N^o 7, 11) թղթառաջները, որոնք տառ առ տառ համապատասխանում են միմյանց: Բերենք զրանցից մեկը. Μανουήλ համապատասխանում են միմյանց: Բերենք զրանցից մեկը. Μανουήλ, ἐν Χριστῷ τῷ Θεῷ πιστὸς βασιλεὺς Πορφυρογέννητος, θεοστεφής, ἐν Χριστῷ τῷ Θεῷ πιστὸς βασιλεὺς Πορφυρογέννητος, θεοστεφής, ὁ ἀναξ, κραταιὸς ὑψηλός, αἰεὶ αὐγουστος καὶ αὐτοκράτωρ Ῥωμαίων ὁ Κομνηνός, | τῷ τιμωτάτῳ καὶ εὐλαβεστάτῳ τῶν Ἀρμενίων Καθολικῷ | τὴν χάριν αὐτοῦ: Այս նույն բանաձևերը բերող են նաև Գրիգոր Դ կաթողիկոսին առաքված Իսահակ Անդեղիկոսի թղթին⁴⁷, որն ունի նաև որոշ հական տարբերութուններ⁴⁸:

Հունարեն բնագրերով մեզ չհասած վավերագրերի բացը կարող են լրացնել Հայերեն թարգմանությամբ պահպանված վավերագրերի թղթառաջները.

ա) «Մանուէլ ծիրանածնունդ արքայ, կարող եւ բարձր միշտ. աւագոստոս ինքնակալ Հռոմոց Կոմնինոս եւ Քրիստոսի Աստուծոյ Հաւատարիմ թագաւոր, / առ շնորհիւ նորին պատուական եւ սրբազան կաթողիկոսն Հայոց տէր Գրիգորիս, / ողջոյն սիրոյ առաքեմք» (N^o 3):

բ) «Մանուէլ Քրիստոսի Աստուծոյ Հաւատարիմ թագաւոր ծիրանածին, աստուածապսակեալ արքայ, զաւրաւոր եւ բարձր միշտ, ինքնակալ Հռոմոց Կոմնինոս. / յԱստուծոյ Հաստատեալ աւագոստոս եւ ինքնակալ Հռոմոց Կոմնինոս. / յԱստուծոյ Հաստատեալ պատուական եւ իմաստուն կաթողիկոսի Հայոց տեառն Ներսիսի՝ / ողջոյն սիրոյ առաքեմք» (N^o 7).

գ) «Մանուէլ ի Քրիստոս Աստուած Հաւատացեալ թագաւոր ծիրանածին աստուածապսակեալ արքայ, զաւրաւոր եւ բարձր միշտ, եւ ինքնակալ Հռոմոց Կոմնինոս. / պատուական եւ սրբազան կաթողիկոսի Հայոց տեառն Ներսիսի՝ / զշնորհս նորին» (N^o 12).

դ) «Մանուէլ, Քրիստոսի Աստուծոյ Հաւատարիմ թագաւոր, ծիրանածին աստուածապսակեալ արքայ, կարող եւ բարձր միշտ, աւագոստոս ինքնակալ Հռոմոց Կոմնինոս. / Գրիգորիոս պատուական կաթու-

46 Dölger-Karayannopoulos.S. 48:

47 Ծնրիակալությունն ենք հայտնում բյուզանդական Հր.Բարթիկյանին, որը մեզ տրամադրեց այդ վավերագրի հրատարակությունից կատարված իր արտագրությունը: Վավերագրի հայերեն թարգմանությունը տե՛ս Բարթիկյան, Նոր Այութեր, էջ 285 - 290: Հմմտ. նաև Бартикан, К истoрии:

48 Օրինակ. պատեղ չկան Πορφυρογέννητος, ἀναξ, ὑψηλός կայսերական տիտղոսները, իսկ θεοστεφής-ը ավանդված է պարզ՝ στεφής ձևով: Կաթողիկոսին բնորոշող պատիվականներից չի հիշատակված εὐλαβεστάτῳ-ն, իսկ ողջույնի բանաձևում ավելացված է τὸ ἀγαθὸν ἐλεημα δևակերպումը (տե՛ս Papadopoulos-Kerameus, Anecdota, σελ. 59, հղումը տե՛ս Բարթիկյան, Նոր Այութեր, էջ 285):

ղիկոս Հայոց, / փրկութեամբ եւ շնորհաւք նորին բարերարութեանն՝
ողջ լեր» (N^o 22):

Բերենք հունարեն եւ հայերեն բանաձևային համարժեքները.

1. Բոլոր թղթառաջներում կայսեր անունն առաջին տեղում է:

2. Աստուծոն հավատարմության հավաստումը (invocatio), բացի հայերեն թարգմանության առաջին թղթից, ուր այն դրված է կայսերական տիտղոսաշարից հետո, մնացած բոլոր թղթառաջներում անմիջապես հետևում է կայսեր անվանը. *ἐν Χριστῷ τῷ Θεῷ πιστός - «Քրիստոսի Աստուծոյ հաւատարիմ»* (ա, բ, գ) կամ «ի Քրիստոս Աստուած հաւատացել»⁴⁹ (դ) բանաձևերով:

3. βασιλεύς -ը հայերեն է թարգմանվել «արքայ» (ա), «թագաւոր» (բ, գ, դ),

4. πορφυρογέννητος տիտղոսը հայերեն է թարգմանվել «ծիրանածնունդ» (ա), «ծիրանածին» (բ, գ, դ),

5. θεοστεφής պատվանունը՝ «աստուածապսակեալ» (բ, գ, դ), առաջին թուղթը չունի:

6. ἀναξ - արքայ⁵⁰ (բ, գ, դ),

7. κρατῶς - կարող (ա, դ), հզուր (բ), զաւրաւոր⁵¹ (գ),

8. ὑψηλὸς αἰεὶ - բարձր միշտ⁵² (ա, բ, գ, դ),

9. αἰγιόστος - աւգոստոս (ա, բ, գ),

10. αὐτοκράτωρ - ինքնակալ (ա, բ, գ, դ):

Վերոբերյալ պատվանունները⁵³ հատուկ են նաև Մանուել Ա Կոմնենոսի Հռոմի պապերին կամ Եվրոպայի այլ իշխողներին ուղարկված նամակների թղթառաջներին⁵⁴:

49 Է-Ը դարերում այս տիտղոսը դառնում է բյուզանդական կայսեր տիտղոսաշարի անբնականի մասը (տե՛ս Rösche, ONOMA, S. 62-63):

50 Հետաքրքիր է, որ «ἀναξ» եզրը հայերեն է թարգմանվում ոչ թե տիրակալ կամ տէր մշահակությամբ, այլ արքա եզրով:

51 Ինչպես տեսանք, այս պատվանվան հայերեն տարբերակներից և ոչ մեկը չի օգտագործվել կայսերն ուղղված կաթողիկոսական նամակների բանաձևերում:

52 Այս տիտղոսը օգտագործված է կաթողիկոսական նամակներում, սակայն որքան էլ տարօրինակ է, առանձին քննության ցյուր չի դարձել բյուզանդագիտական գրականության մեջ:

53 Այս պատվանունների մեծագույն մասին անդրադարձել ենք կաթողիկոսական թղթերի ախթով(տե՛ս ծան. 8-25):

54 Dölger-Karayannopoulos, S. 157. Հռոմի պապերին ուղղված Հովհաննես և Մանուել Կոմնենոսների բժօրինակ-նամակների թղթառաջները տե՛ս Dölger, Zur Form, S. 85:

Թղթառաջքների երկրորդ մասը (Հասցեատիրոջ տիրոջոսաշար) ըստ հուլիան տարբերվում է հունարենով պահպանված կայսերական նամակների թղթառաջքների համապատասխան հատվածներից: Հայերեն թարգմանություններում հիշատակվում է կաթողիկոսի անունը⁵⁵, իսկ պահպանված թղթերից երեքում շեշտվում է նաև Հայոց կաթողիկոսական իշխանության աստվածային բնույթն ու հուլիանը (Հանգամանք, որը բացակայում է կայսերական նամակի հունարեն թղթառաջքներում), առ շնորհիւ նորին (ա), յԱստուծոյ Հաստատեալ (բ), փրկութեամբ եւ շնորհաւք նորին բարբարութեանն (դ): Այս ձևակերպումները ամենայն հավանականությամբ հավելված են հայկական միջավայրում:

Թղթառաջքի երրորդ մասը՝ ողջույնի բանաձևը, որը հունարենում ունի միասնական ձևակերպում (Τῆν χάριν αὐτοῦ)⁵⁶, հայերեն թարգմանության մեջ ունի տարբեր ձևակերպումներ և մեկնություններ, որոնք ավելի շուտ թարգմանական տարբերակներ են. ողջույն սիրոյ առաքեմք (ա, բ), զշնորհս նորին (գ), ողջ լեր (դ):

Կայսերական թղթի թղթավարտը. Այս վավերագրերի թղթավարտները պահպանել են բնօրինակների կառուցվածքները: Վավերագրերի այս մասը, որպես կանոն, բաղկացած է երկու ձևակերպումից. հրաժեշտ-ողջույնի կարճ բանաձևից և վավերագրի գրման թվականից: Եթե թղթավարտի առաջին մասը հայերենով պահպանված տարբերակներում կարելի է համարել թարգմանական տարբերակ, ապա քիչ այլ բնույթ ունեն նույն թղթավարտներին ուղեկցող թվականները⁵⁷:

Թեև և՛ հունարենով, և՛ հայերենով պահպանված վավերագրերը թվագրված են բյուզանդական կայսերական նոտարատանը ընդունելի

55 Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ մտանադիպ մամուլների թղթառաջքներում կայսերը չէին հիշատակում նաև Հոռոմի պապերի անունը և բավարարվում էին բավական պարզ ձևակերպումով. Εἰς (կամ Πρὸς) τῶν ἀγιάτων πάπων (այդ մասին տե՛ս Dölger, *Zur Form*, S. 85)՝

56 Հետաքրքիր է, որ Իսաիակ Ագաբուսի վերոհիշյալ թղթում ողջույնի այդ բանաձևը ավելացված է նաև ὁ ἀγαθὸν θέλημα ձևակերպումը:

57 Դրանք են .

ա) Ողջ լերոյք: / Գրեցաւ յամենանց սեպտեմբերի՝ յԸնդիքստիոցին ի փ: (Ֆ. 3):

բ) Καλῶς ἔχε. | Τῷ μὴν Νοεμβρίῳ ἰνδικτιῶνος τρίτης. Ողջ լերոյք: / Գրեցաւ յամենանց Մայիս, յԸնդիքստիոցին յերեքն (N^o 7):

գ) Ἐχε καλῶς. | Τῷ μὴν αὐτῷ ἰνδ. 6. (N^o 11):

դ) Ողջ լեր ի Բրիստոս: / Գրեցաւ յամենանց Դեկտեմբերի, յԸնդիքստիոցին ի հիգն (N^o 12):

ե) Ողջ լեր: / Գրեցաւ յամենանց ի Յունվարի եւ յԸնդիքստիոցին ի տասն (N^o 22):

դարձած ինդիկտոնի համակարգով⁵⁸, այնուամենայնիվ, գրեթե բոլոր մասնադետալները նկատել են, որ հայերեն բնագրերը (թվագրված նույն ինդիքտոնի թվական համակարգով), ունեն այլ ամսաթիվ և տարեթիվ: Նրանք ավելի ուշ թվական են կրում, քան դրանց հունարեն բնագրերը: Կարելի է մատնացույց անել երկու նման օրինակ.

ա) Կայսերական նամակներից մեկի հունարեն բնագիրը կրում է «Τῷ μηνί Νοεμβρίῳ ἰνδικτιῶνος τρίτης» (երրորդ ինդիկտոնի նոյեմբեր ամիս, այն է՝ 1170 թ. նոյեմբեր) թվականը (N^o 7), սակայն նույն նամակի հայերեն բնագիրը կրում է «Գրեցաւ յամսեանս Մայիս, յԸնդիքտոնին յերեքն» (երրորդ ինդիկտոնի մայիս, այսինքն՝ 1171 թ. մայիս) թվագրումը:

բ) Նույն օրինաչափությունը կարելի է տեսնել Մանուել Ա Կոմնենոսի չորրորդ ինդիկտոնին զբված նամակներից մեկի թղթավարտում, որոնցից մեկը հունարեն բնագրի «Τῷ μηνί αὐτῷ ἰνδ. δ' » (N^o 11) փոխարեն՝ հայերեն թարգմանված թղթերից մեկում կրում է «Գրեցաւ յամսեանն Դեկտեմբերի. յԸնդիքտոնին ի հինգն» (Հինգերորդ ինդիկտոնի դեկտեմբեր ամիս) թվական-բանաձևը (N^o 12):

Թարգմանական այս տարընթերցումները և թվագրման տարբերությունները մեզ բերել են այն համոզման, որ եթե հունարեն վավերագրերը պահպանել են բնօրինակ-ինքնագրերի զբման տարեթվերը, ապա հայերեն թարգմանութամբ պահպանված թվականները մատնանշում են այդ վավերագրերի Հռոմկլա հասնելու թվականը կամ, որն ավելի հավանական է, տվյալ վավերագրի մուտքը Հռոմկլայի Հայոց կաթողիկոսական նոտարատուն, կամ, ինչպես ենթադրում է Տ. Լ. Զեքիյանը՝ դրանք կայսերական նամակների հայերեն թարգմանության թվականն են մատնանշում⁵⁹:

Մոուք (Prooimion) - Կաթողիկոսներին առաջված կայսերական նամակների մուտքերը ներկայացնում են վավերագրերում ասելիքի սկիզբը և կապված են Հելլենիստական մշակութային պատկերացումների հետ⁶⁰: Այս պարագայում Հետաքրքրության առարկա են եղել այն խնդիրները, որոնք արժարժվել են փաստաթղթերում: Դրանք են.

- եկեղեցիների միության անհրաժեշտությունը (N^oN^o 3, 7, 22),

58 Բյուզանդական կայսերական նամակների թվագրման համակարգերի մասն ավելի մանրամասն տես՝ Dölger-Karayannopoulos, S.49-54:

59 Զեքիյան, Համամիութեանական, էջ 57:

60 Այդ սկզբունքների մասն ավելի մանրամասն տես՝ Hunger, PROOIMION, S.19-35:

- ծանուցում՝ կաթողիկոսական նամակը ստանալու մասին (N^o 10, 11, 12):

Այս վավերագրերում գրեթե չեն պատահում այն բանաձևերը, որոնք հատուկ են կայսերական վավերագրերի այլ տիպերի մուտքերին⁶¹:

Բուճ խնդիր (narratio) - Այստեղ քննարկված թեմաների մեջ կարելի է առանձնացնել երկուսը. ընթացիկ խնդիրներ և կրոնական հարցեր: Առաջիններից կարելի է կարևորել Ներսես Ծնորհալույն Կ.Պոլիս հրավիրելը (N^o 3), Թեոփիանոսի և Աթմանի լիազորությունների սահմանումը (N^oN^o 7, 11, 12): Ծոշարվում են կրոնական հարցեր (N^oN^o 11, 12), խոսվում է միության խնդրի անհրաժեշտության մասին (N^o 22), արվում է բյուզանդական եկեղեցու համար ընդունելի մարդեղության ուսմունքը (N^o 10, 22):

Վերջաբան ամփոփում (corroboratio) - Այստեղ կայսրը հիմնականում ներկայացնում է իր ուղարկած դեսպանների լիազորությունների սահմանները (N^oN^o 3, 7, 12), հրավիրում է կաթողիկոսին Կ.Պոլիս (N^oN^o 3, 22): Անդրադառնալով բանակցությունների պատճառ դարձած միության խնդրին, կայսրը հույս է հայտնում, թե այն տեղի կունենա (N^oN^o 10, 12) կամ առաջարկում է Հայոց եկեղեցու հաստատմանը ներկայացնել Կ.Պոլիս ուղարկված հավատո հանդանակը (N^o 11):

Եզրակացություն. 1165-1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցությունների ընթացքում գրված կայսերական նամակների Հայերեն և հունարեն բնագրերի պահպանված բանաձևերի համեմատությունից հույս է կարելի, որ մեզ հասած նյութի շնորհիվ հնարավոր է վերականգնել բնագրերի կայուն բանաձևումները, որոնց մի մասը տարբեր պատճառներով չի ավանդվել: Այս տեսանկյունից անդնահատելի նյութ կարող են տալ Թեոփիանոսի «Διάλεξις»-ների հունարեն հնագույն ձևագրերը:

Քննարկված նյութի հիման վրա կարելի է կատարել որոշ նախնական դիտարկումներ.

ա) Թղթառաջների կայսերական տիտղոսներին նվիրված հատվածների Հայերեն թարգմանությունների որոշ անհամապատասխանությունները հունարեն բնագրերի հետ կարելի է բացատրել նրանով, որ Հռոմկլայի նոտարատանը շարունակվում էր փնտրտուքը,

61 St'u Hunger, PROOIMION:

գտնելու համար կայսեր տիրադոսաշարը հավուր պատշաճի ներկայաց-
նելու համապատասխան ձևակերպումներ:

բ) Ավելի էական տարբերություններ ունեն այս նամակների
թղթառաջների կաթողիկոսներին վերաբերող հատվածների հունարեն
և հայերեն ձևակերպումները: Հայկական տարբերակները ընդգծում են
Հայոց հայրապետի իշխանության աստվածային բնույթը և
անպայման հիշատակում են կաթողիկոսի անունը, որին հասցեագրված
է թուղթը:

գ) Վավերագրերի թվագրության տարբերություններից երևում
է, որ նամակների հայերեն թարգմանված պատճենները երկրորդ
անգամ թվագրվել են Հռոմկլայի կաթողիկոսական նոտարական գրա-
սենյակում և կրում են կամ վավերագրի թարգմանության, կամ էլ՝
վավերագրի նոտարատուն մուտք գործելու թվականը:

գ) Կաթողիկոսական թուղթ առ պատրիարք

ՊիՄ ժողովածուն պահպանել է նաև Հայոց կաթողիկոսներ
Ներսես Դ Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի կողմից գրված մեկական
վավերագիր՝ առաքված Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Գ
Անքիալոսին (տե՛ս N²⁰ 16 և 25): Այս թղթերից երկրորդը վավերաց-
ված է Հռոմկլայի եկեղեցական ժողովին մասնակցած բարձրաստիճան
կղերականների կողմից: Վերոհշյալ երկու նամակներն էլ Կոստանդ-
նուպոլսի պատրիարքի թղթերի պատասխաններն են:

Խորագիր. Այս թղթերի վերնագրերն էլ, ինչպես մյուսներինը,
Ներսես Համբրոնացին ձևել է կաթողիկոսական ղեկմանում պահպան-
վող փաստաթղթերի խորագրերի հիման վրա: Վերջիններից տարբեր-
վում են միայն նրանով, որ ավելի հանգամանալի տեղեկություններ
են հաղորդում յուրաքանչյուր թղթի գրման պարագաների վերաբեր-
յալ: Այդ է վկայում Գրիգոր Դ Տղայի ստորագրած ժողովական թղթի
(N²⁵) վերնագիրը. «Թուղթ Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց / և
ընդհանուր Հայաստանեայց ժողովոյ, / ի կաթուղիկէ եկեղեցին Հռո-
մոց և յոր ի նմա սուրբ ժողովն, / պատասխանի թղթոյն Միքայէլի
պատրիարքին՝ / որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս»
(վերջին ստորագրաս նախագասությունն անկասկած նոտարատան

դպրի կամ ՊԽՄ-ի կազմող ներսես Լամբրոնացու ավելացրածն է): Ի տարբերություն Հնդամասն կառուցվածք ունեցող այս թղթի խորագրի, մյուսը շատ ավելի սխեմատիկ բանաձև ունի. «Թուղթ Տեառն ներսիսի կաթողիկոսի՝ / առ տէր Միքայել պատրիարքն Հոռոմոց» (№ 16) և ավելի է մոտենում նոտարատանը պահվող վավերագրի պահանջներին: Պատրիարքին ուղղված կաթողիկոսական վավերագրերի վերնագրի բանաձևն է N » Y:

Այս տիպի վավերագրերը Հռոմկլայի նոտարատան դպիրների կողմից անվանվում են «թուղթ» կամ «թուղթ...պատասխանի»:

Թղթառաջք. Կոստանդնուպոլսի պատրիարքներին ուղարկված կաթողիկոսական վավերագրերի թղթառաջքները, ինչպես և վերևում նկարագրված փաստաթղթերի տեսակները, իրենց կառուցվածքով եռամասն են. ա) դիմում (Adreße կամ inscriptio), բ) թղթառաջք-բանաձև (invocatio, intitulatio), գ) ողջույն: Թղթառաջքի սկզբում դրվում է Հասցեատիրոջ անունն ու նրա տիտղոսաշարը, ապա՝ նամակագրի անունն ու պատվանունները, իսկ վերջում՝ ողջույնի բանաձևն է: Թղթերից մեկում (№ 16) վերջին ձևակերպումը դրված է առաջինի և երկրորդի միջև և զբաղեցնում է երկրորդ տեղը: Թղթառաջքի բանաձևն է. Y « N:

Թղթառաջք-դիմում. Պատրիարքին առաջված վավերագրերի թղթառաջք-դիմումները Համեմատելիս պետք է նկատի ունենալ, որ № 16-ը ներսես Շնորհալի կաթողիկոսի անձնական նամակն է Միքայել Գ Անքիալոսին, իսկ Գրիգոր Դ Տղայի թուղթը՝ ժողովական որոշում՝ ուղղված Կոստանդնուպոլսի եկեղեցու ողջ Հոգևոր դասին: Զուգահեռաբար դեհնք ԺԲ դարից մեզ Հասած Հռոմկլայի կաթողիկոսների՝ Կոստանդնուպոլսի պատրիարքին ուղարկված այս երկու թղթերի դիմում-բանաձևերը.

Թուղթ ներսես Դ-ի

Թուղթ Գրիգոր Դ-ի

1. Սուրբ եւ ընդհանրական կաթողիկէ եկեղեցոյ

Սրբոյ եւ մեծի Աստուծոյ եկեղեցւոյ

2.-----

որ ի գլուխդ տիեզերաց

3. Թագաւորական քաղաքին Կոստանդնուպալսի պատրիարզի

ի Թագաւորական մայրաքաղաքդ Կոստանդնուպալիս

4. տէր

5. Միխայէլի

6.-----

տէրանց

7.-----

պաշտաւնակից եղբարց

- 8.----- նախաթոռ պատրիարքաց սրբոց
 9.----- և եպիսկոպոսակցաց պատուակա-
 նաց
 10.----- քահանայականաց դասուց
 11.----- և Համագումար ամենայն ժողո-
 վոց կղերիկոսաց՝ ըստ իւրաքանչ-
 իւր կարգի և աստիճանի զանա-
 զանելոց
 12----- որք յիմաստութեանդ տաճար զի-
 մանալին Աստուած Համագաղա-
 փար իմանալեացն դասուց ի նիւ-
 թական բնութիւնս պաշտէք
 13----- երեք յերիսս բաժանեալք և ի մի
 լրութիւն աստուածեղէն սպասա-
 ւորութեանն միաւորեալք
 14----- անդամք զգայականք ճշմարիտ
 գլխոյն
 15----- և անեցեալք ի պատճառս փառա-
 բանութեան անկարօտ բնութե-
 անն

Ի տարբերություն կայսերական և պատրիարքական նամակ-
 ների, կաթողիկոսական վավերագրերի թղթառաջք-դիմումները, որպես
 կանոն, նախորդում են թղթառաջք-բանաձևին: Գրիգոր Դ-ի ուղար-
 կած թղթի թղթառաջք-դիմումն ավելի երկար է, որովհետև նախա-
 վերջին մասն ուղղված է Կոստանդնուպոլսի եկեղեցու բոլոր դասերին
 (տե՛ս 6 - 11)՝ պատրիարքներին, եպիսկոպոսներին, քահանաներին, կլե-
 րիկոսներին, իսկ վերջինում (12 - 15)՝ կաթողիկոսը բնորոշում է Կոս-
 տանդնուպոլսի եկեղեցու ներդաշնակ միասնությունը: Քիչ թե շատ
 Համընկնում է միայն թղթառաջք-դիմումի առաջին մասը, ուր բնո-
 րոշվում է պատրիարքական իշխանությունը՝ «սուրբ», «ընդհանրա-
 կան», «ի գլուխ տիեզերաց» կամ «թագավորական քաղաքին Կոս-
 տանդնուպոլսի պատրիարգի» պատվանուններով:

Թղթառաջք-բանաձև. Թղթերից յուրաքանչյուրի թղթառաջք-
 դիմումում պահված է Համամասնությունը և Գրիգոր Դ-ի թղթում
 նամակագրի Հետ միասին ներկայացված են նաև Հայոց եկեղեցու այն
 բոլոր դասերը, որոնց անունից գրված է վավերագրերը:

1. Ի նուստտէ ծառայից Բրիստոսի	Գրիգորիոս
2. Եւ ողորմութեամբ եւ կամաւք նորին	նուստտ ծառայից Բրիստոսի
3. Կաթողիկոսէ Հայոց	և ողորմութեամբ նորին
4. Ներսիսէ	կաթողիկոս Հայոց
5. յաթոռակալէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ	-----
6.-----	եւ որք ընդ ինեւ եկեղեցւոյս Բրիստոսի
7.-----	որ ի մեզ ժողով
8.-----	արքեպիսկոպոսակցաց
9.-----	եպիկոսոպոսակցաց
10.-----	Հարց
11.-----	և վարդապետաց
12.-----	քահանայից
13.-----	և կրօնաւորաց
14.-----	և ամենայն լրութեանս Հայոց

Սույն թղթառաջք-բանաձևերի առանձնահատկությունն այն է, որ առաջինում կաթողիկոսի անունը զրոված է բանաձևի վերջում, իսկ երկրորդում՝ սկզբում: Կաթողիկոսին նվիրված բանաձևի մեծ մասը վերաբերում է Աստծուն Հավատարմության և ողորմության Հավաստմանը (invocatio), ուր կրկին շեշտվում է կաթողիկոսական իշխանության աստվածային բնույթը: Կաթողիկոսի պատվանուններն են. «Կաթողիկոս Հայոց», իսկ Ներսես Դ Շնորհալու թղթում նաև «յաթոռակալէ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»:

Թղթառաջք-ողջույն. Եթե Ներսես Դ-ի թղթում այս բանաձևը զրոված է թղթառաջք-ողջույնի և թղթառաջք-բանաձևի միջև, ապա Գրիգոր Դ-ի նամակում այն դառնում է ամբողջ թղթառաջքի վերջում: Ուշադրության առարկա այս բանաձևերը ևս միօրինակ չեն: Եթե նրանցից առաջինը բավական հստակ է. «ողջ լինել ի Բրիստոս», ապա երկրորդը («զչնորհս և զխաղաղութիւն ի Բրիստոսս և Աստուծոյ մուղթեմք ունել ձեզ, և աղօթիւք ձերովք մեզ») ցույց է տալիս, որ կաթողիկոսական նոտարատունն այստեղ ևս զեռ չի ստեղծել միօրինակ բանաձևային միավորներ:

Թղթավարտ-հրաժեշտ. Այս բանաձևը ևս միօրինակ է: Պահպանված երկու թղթերում առկա են իրար չկրկնող երկու տարբերակներ: Ներսես Դ-ի թղթում այն ունի հետևյալ տեսքը. «Ողջ էր գլուխ յետ գլխոյն եկեղեցոյ», իսկ Գրիգոր Դ-ի թղթում՝ «Եւ նոյն ինքն Աստուած խաղաղութեան և սիրոյ եղիցի ընդ ձեզ ամենեսեան. ամէն»:

Հայոց կաթողիկոսների Կ.Պոլսի պատրիարքներին ուղարկված նամակները թվագրված չեն, որն էլ ինձ թույլ է տալիս ենթադրել, որ թղթավարտի այդ բանաձևերը Ներսես Լամբրոնացին տեղ չզբաղեցնելու մտահոգությամբ, պարզապես չի բերել:

Մուտք (proomion) - Հայոց կաթողիկոսը սեփական եկեղեցին դիտում է տիեզերական եկեղեցու բաղկացուցիչ մաս և Հավաստում, որ ցանկություն ունի վերամիավորվել բյուզանդական և տիեզերական եկեղեցու մյուս թևերի հետ (№ 16): Հռոմիլյայի եկեղեցական ժողովի անունից գրված թղթի հեղինակները վավերադրի մուտքում Հավաստում են, որ ստացել են բյուզանդական եկեղեցական ժողովի Համաձայնությունամբ գրված երանելի պատրիարքի նամակը, ուր բերված է Կոստանդնուպոլսի եկեղեցու Հավատի ուղղափառ խոստովանությունը: Նամակագիրները բարեմաղթություն են հղում բյուզանդական պատուխանը (նաև եկեղեցուն) և իրենց վիշտն ու ցավակցությունն են Հայտնում Միքայել Գ պատրիարքի մահվան կապակցությունամբ (№ 25):

Բուճ խնդիր (narratio) - Կաթողիկոսը Հավաստիացնում է, որ Հայոց եկեղեցին ցանկություն ունի դնալ ուղղափառ եկեղեցու հետ միևնույն ճանապարհով: Գալով սուրբ Երրորդությունը, կաթողիկոսը վերագրում է նրան մեկ կամք, մեկ իշխանություն և մեկ տերություն, որից բխում են երկնային քահանայություն երեք խմբի բաժանվող ինը դասերը: Կաթողիկոսն այնուհետև հույս է Հայտնում, որ երկնային քահանայություն օրինակով Բյուզանդական կայսեր գլխավորությունամբ կմիավորվի մասերի բաժանված եկեղեցին: Ներսես Շնորհալին Հավատացած է, որ Կոստանդնուպոլսի պատրիարքը ևս իր հոգևոր գործունեությունամբ ամեն ինչ կանի՝ միությունը գլուխ բերելու և երկու եկեղեցիները միավորելու Համար: Նա Հավաստիացնում է, որ Հայոց եկեղեցական ժողովում ինքն ամեն ինչ կանի, որպեսզի միություն և խաղաղություն Հաստատվի քույր եկեղեցիների միջև (№ 16):

Սույն թղթով փարատվում են ժողովականների բոլոր կասկածները, և նրանք իրենց Համաձայնությունն են Հայտնում Կ.Պոլսից ստացված դավանաբանություն: Այնուհետև շարադրվում է Հռոմիլյայի ժողովի ընդունած Հավատո խոստովանությունը (№ 25):

Վերջաբան-ամփոփում (corroboratio) - Պատրիարքին հորդորում է հրավիրել օրթոդոքս հոգևորականների եկեղեցական ժողով, ուր կկայանա երկու եկեղեցիների միության խորհուրդը (№ 16):

Կաթողիկոսը Հռոմկլայի ժողովի մասնակիցների հետ միասին պահանջում է բյուզանդական հոգևորականներից ջանք չխնայել կայսերն համոզելու համար և հակահարված տալ յուրաքանչյուրին, ով կփորձի կրկին թշնամանք սերմանել երկու եկեղեցիների փոխհարաբերություններում (№ 25):

Եզրակացություն. Գրիգոր Դ-ի պատրիարքին ուղղված թղթի խորագրում «որ նախ քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս» բացատրությունը, ինչպես ասել ենք, հետագայի հավելում է և կարելի է վերագրել Ներսես Լամբրոնացուն: Բերված երկու թղթերի թղթավերջները և վերջաբան ողջույնները իրարից շատ են տարբերվում: Այս պարագան, հավանաբար հնարավոր է բացատրել նրանով, որ խնդրո առարկա նամակներն միմյանցից զատորոշվում են բնույթով, քանի որ մեկը պատրիարքին ուղղված կաթողիկոսի պաշտոնական-անհատական նամակն է, մյուսը՝ եկեղեցական ժողովի կողմից դրված ու հաստատված պատասխանը: Մանավանդ ակնառու են Գրիգոր Դ-ի թղթառաջը-դիմումի 12-15 բանաձևումները, որոնք կարծես դրված են փայլ տալու համար չոր ու ցամաք թղթառաջին և հիշեցնում են բյուզանդական վավերագրերի քերթողական արվեստի նորմերով դրված մուտքերը (προοίμιον)⁶²: Ի հակադրություն այս թղթառաջի և վերջաբան-ողջույնի, պատրիարքականները համեմատաբար ավելի կայուն են և մշակված:

Գրիգոր Դ-ի ժողովական թուղթն ունի նաև Ն.Գ. (= P.S.) և վերջում՝ ստորագրողների ցանկ: Պետք է ենթադրել, որ բնօրինակում հիշատակված հոգևոր գործիչները դրել են սեփական ստորագրությունները, դրել սեփական թեմի անունն ու տիրոջուրը⁶³:

դ) Պատրիարքական թուղթ առ կաթողիկոս

Բյուզանդական պատրիարքական միջեկեղեցական թղթի ժանրը, կայսերականի նմանողությամբ և նրանից անկախ, մշակվել է Կոս-

62 Այդ մասին տե՛ս H.Hunger, PROOIMION, S.19-35:

63 Պետք է հուսալ, որ հետագա պրպտումների ընթացքում կհայտնաբերվի մինչև Ժ.Գ. դարը կաթողիկոսական նոտարական գրասենյակից դուրս եկած որևէ վավերագրի ինքնագիրը:

տանդնուպոլսի պատրիարքական նոտարատանը, Հարյուրամյակներին ընթացքում: ՊԽՄ ժողովածոյում պաշտօնակի և նախ թղթերից երկուսը (№ 13 և 23), իսկ Թեորիանոսի երկրորդ «Տրամախօսութեան» բնագրում՝ մեկը (№ 13): Բացի սրանցից, հունարենով պաշտօնակի է նաև Մանուել Ա Կոմնենոսի անունից գրված Միքայել Գ-ի թուղթ, որը չունի թղթառաջը և թղթավարտ: Հավանաբար դավանաբանական թղթի համար պարտադիր էր թղթառաջը:

Խորագիր. ՊԽՄ ժողովածոյում ավանդված վերնագրերն մշակվել են կաթողիկոսական նոտարատանը: Թերևս, ինչ-ինչ շարահյուսական ձևափոխումների ենթարկել է նաև Ներսես Լամբրոնացին: ՊԽՄ-ում բերված վավերագրերից մեկը վերնագրված է. «Թուղթ տեառն Միքայէլի պատրիարքին Կոստանդինուպօլսոյ՝ սակս այսր խնդրոյ, առ սուրբ Հայրապետն Ներսէս», մյուսը՝ «Թուղթ պատրիարքին Կոստանդինուպօլսի առ կաթողիկոսն Հայոց Գրիգոր, համաձայնութեամբ ամենայն ժողովոյն»: Առաջինում թերևս Ներսես Լամբրոնացին է մուծել «սակս այսր խնդրոյ» արտահայտությունը: Նշանակվում է կաթողիկոսական այս վավերագրերը Հայոց կաթողիկոսարանի ղեկավարական գործավարություն մեջ անվանվել են, ինչպես վեթոզիկոսական ղեկավարատանը պահված պատրիարքական նամակի խորագրի բանաձևն է Y » X:

Թեորիանոսի երկրորդ «Տրամախօսութեան» բնագրում «առ Ներսէս» թուղթն անվանված է. «Τὸ πατριαρχικόν», իսկ Մանուել Ա Կոմնենոսի անունից Միքայել Գ Անքիալոսի գրած թուղթը՝ «'ΑΥΤΙ-γραμμά πρὸς τοῦτον τὸν Καθολικὸν | τοῦ ἀγιοτάτου πατριαρχου κύρου Μιχαήλ τοῦ γεγονότος ὑπάτου τῶν φιλοσόφων, γραφὲν ὡς ἐκ προσώπου τοῦ κραταοῦ καὶ ἀγίου ἡμῶν βασιλέως κύρου Μανουήλ»: Հետաքրքիր է, որ տվյալ վերնագրի բանաձևում բյուզանդական կողմը հիշատակված է խորագրի երկրորդ մասում: Վերնագրին ունի հետևյալ բանաձևը. N «(Y)X:

ՊԽՄ ժողովածոյում, վերնագրից հետո «առ Ներսէս» թուղթը պաշտօնակի է նաև Հռոմիլյայի կաթողիկոսարանում այս նամակին կցված խորագրերը. «Պատուական եւ սուրբ սիրեցելոյ սրբասնեալ կաթողիկոսին ամենայն Հայաստանեայց տեառն Ներսիսի», որը պատրիարքական նամակի թղթառաջ-գրիմուծի բանաձևի տարբերակն է:

Թիթառաջը. Հունարեն բնագրով պաշտօնակի վերորերյալ թղթերը չեն պաշտօնակի թղթառաջի բանաձևը, Թեորիանոս մագիստրոսը գրանք պարզապես կրճատել է: Վերոհիշյալ թղթերի խմբերի

նման, այս վավերագրերի թղթառաջներն էլ կարելի է բաժանել երեք բաղկացուցիչ մասերի. Y » N, որին Հաջորդում է ողջույնի բանաձևը: «Առ Ներսէս» թղթում բացակայում է թղթառաջ-ողջույնը:

Թղթառաջք-բանաձև. կայսերական վավերագրերի նման և առաքելական թղթերի հետևողովյամբ, պատրիարքական թղթերը ևս սկսվում են կոստանդնուպոլսի Հայրապետի՝ այսինքն նամակի հեղինակի անունով, Աստծոյ ողորմության Հիշատակումով (invocatio) և երկու պատվանունների արձանագրումով.

1. Միքայէլ

2. ողորմութեամբն Աստուծոյ

3. արքեպիսկոպոս կոստանդնուպոլսի նոր Հռովմայ

4. և տիեզերական պատրիարք

Թղթառաջք-բանաձևի այս տարբերակն առանց դուշգն ինչ տարբերության կրկնվում է «առ Գրիգոր» թղթում: Նույն բանաձևն է օգտագործել Միքայէլ Գ Անքիալոսը Գրիգոր Դ Տղային ուղղված թուղթը ստորագրելիս, բաց թողնելով միայն տիտղոսի չորրորդ մասը⁶⁴:

Թղթառաջք-դիմում. Այս բանաձևն «առ Ներսէս» թղթի Համար ունի երկու թարգմանական տարբերակ, որոնցից առաջինը պահպանվել է իբրև նոտարատանը պահպանվող վավերագրի խորագիր և, մեր կարծիքով, ավելի մոտ պետք է լինի Հունարեն բնագրի վերնագրին: Տախտակում այդ բանաձևը տալիս ենք կենտրոնում: Եթե «առ Ներսէս» թղթի բանաձևը կրկնվում է մյուս երկու բանաձևերում, ապա միայն նշում ենք թվահամարը.

1. պատուական

1. պատուական

4. պատուական

2. և սուրբ սիրեցեալ

2. և սուրբ սիրեցելոյ

3. սուրբ սիրեցելոյ

64 Վ. Լորանը բյուզանդական պատրիարքի տիտղոսաշարին և ստորագրությամբ Գլխիվան Բողվածում փորձում է ցույց տալ, որ «տիեզերական պատրիարք» պատվանունը տիտղոսաշարից դուրս է եկել ժԱ դարի առաջին կեսից (Laurent, Le titre, p. 21-24): Ֆրանսիացի բյուզանդագետն այս առումով իսկ փորձում է ժամանակագրորեն սրբագրել-ճշտել ժԳ դարի առաջին կեսի մատենագիր, Նոպակտի մետրոպոլիտ Հովհաննես Ապոկալկոսի վկայությունը ճշված տիտղոսի շրջանառությունից դուրս գալու մասին (տե՛ս Նույն տեղում, էջ 15): Սակայն հայերենով պահպանված Լիքայել Գ Անքիալոսի տիտղոսաշարից պարզ երևում է, որ այդ պատվանունը գործածության մեջ էր մեկ ժԱ դարի 70-ական թվականներին:

3. յաջորդ բարձր ա- -----
թոռոյն սրբոյ

4. և սքանչելի մե- -----
ծահաչակ հօրն մերոյ
սրբոյն Գրիգորի
Հայոց Մեծաց Լու-
սաւորչի

----- 3. կաթողիկոսին ա- 5. կաթողիկոսի ամե-
մենայն Հայաստա- նայն Հայոց
նեայց
----- 4. տեառն 2. Գրիգորի
----- 5. Ներսեսի 1. Տեառն

Կարելի է ենթադրել, որ երկրորդ և երրորդ սյունակներում ա-
վելի ճշգրիտ է պահպանվել հունարեն թղթառաջը-դիմումի բանաձևը,
քանի որ Կոստանդնուպոլսի պատրիարքական նոտարատանը հատուկ
չէին կարող լինել առաջին թղթի 3. և 4. ձևակերպումները: Հայոց
կաթողիկոսական դահի Լուսավորչի աթոռից սերված լինելու գաղա-
փարը, ինչպես երևում է, հատուկ է պատրիարքական նամակների
չափազանց հակիրճ ու կտրուկ կառուցվածքին⁶⁵:

Թղթառաջը-ողջույն. Այս բանաձևը պահպանվել է միայն «առ
Գրիգոր» թղթում. «ուրախ լինել (լեր) ի Տէր» ձևակերպումով, թղթա-
ռաջի վերջում:

Թղթավարտ. Հայոց կաթողիկոսներին առաքված պատրիարք-
ական թղթերի թղթավերջերը, ուր սպասելի էր երկմասն կառուցվածք
(այսինքն հրաժեշտի բանաձև և թվական), մեզ են հասել ոչ ամբող-
ջական: Թղթերից ոչ մեկի թվագրումը չի պահպանվել:

Թղթավարտ-հրաժեշտ. «Առ Ներսէս» թղթի վերջաբան-ող-
ջույնի թե՛ հունարեն, և թե՛ հայերեն բնադրերը գրեթե լիովին համա-
պատասխանում են միմյանց.

1. Ἐρῶωσο
2. τιμώτατε

1. ողջ լեր
2. պատուական

65 Այդ մասին է վկայում Փոտ պատրիարքի, Զաքարիա Հայոց կաթողիկոսին գրած
նամակի թղթառաջը (տե՛ս ՀԱ, 1968, սյուն. 65-66₁₁):

3. καὶ ἐν Κυρίῳ

3.] և սուրբ

4. ἀγαπετέ

4. սիրեցեալ

5. καὶ Καθολικε

5. կաթողիկոս

6. ἄνερ ὁσιώτατε

6. այր սրբասնեալ

Հայերեն բանաձևի միակ տարբերությունը ἐν Κυρίῳ (ի տեր) արտահայտություն թարգմանությունն է «սուրբ» դիմելաձևով:

Մուտք (prooimion) - Կ. Պուլսի պատրիարքը մեկնում է Դավթի ձժԸ Սաղմոսի 165-րդ «Խաղաղութիւն բազում, որք սիրէն զաւրէնս Աստուծոյ, եւ ոչ դոյ ի նոսա զայթակղութիւն» տունը, քրիստոնյայի ամենակարևոր Հատկությունը տեսնելով սիրո⁶⁶ և Հոգևոր կապակցության օրենքը կատարելու մեջ: Միայն սիրով կարելի է հասնել եկեղեցու միասնությանը և բուժել բաժանման վնասները, որի համար էլ պարտավոր են հետևել սուրբ Հայրերից ժառանգություն մնացած ավանդներին՝ սեր և գուժ հղելով միմյանց (№ 13, 23):

Նամակի մուտքում պատրիարքը ողջունում է կաթողիկոսին, միաժամանակ հիշեցնելով, որ իրենք առաքյալների գործի շարունակողներն են (№ 23): Պատրիարքն ուղղափառ է անվանում Հայոց եկեղեցու Հավատո հանգանակը և ուրախ է միություն առաջարկի համար (№ 23):

Բուն խնդիր (narratio) - Պատրիարքը սահմանում է բյուզանդական կայսեր դիրքը տիրակալների ընտանիքում, որպես բոլորի դեկավար, որը իր բարի գործերը կատարում է աստվածային նախակամության օգնությամբ⁶⁷: Նա բացատրում է Քրիստոսի բաժանված եկեղեցին միավորելու իրենց ձգտումը, դովում այս հարցի շուրջ կաթողիկոսի ուղարկած նամակները, բարի ավարտ է մաղթում կաթողիկոսի և կայսեր բռնած գործին (№ 13):

Պատրիարքը Հայտնում է, որ ընդունում է կաթողիկոսին ուղարկված թագավորի թղթի ուղղափառ դավանությունը: Զևակերպում է Երրորդության մասին Կոստանդնուպոլսի եկեղեցու դավանությունը, անդրադառնում աստվածության խնդրին և այն որակում որպես «մի բնություն, մի էություն, մի գորություն, մի իշխանություն, մի տերություն, մի թագավորություն»: Այնուհետև անցնում է Բյուզանդական

66 Պատրիարքական ամսականի մուտքի քրիստոնեական սիրո գաղափարից Գլխոված բանաձևերի մասին տե՛ս Mazal. Prooimien, S. 174-177:

67 Տե՛ս. Գույն տեղում, էջ 147-157, հմմտ. Գաև Dölger, Familie der Könige, S. 46-69:

եկեղեցու Հավատո խոստովանությանը, ուր երկու բնություն, կամք և ներգործություն է վերագրում Բրիստոսին, սակայն Հայոց Հոգևոր Հայրերին զրավելու միտումով՝ շեշտում է նաև «մի է երկու բնութեանցն անձնաւորութիւն» (№ 23) ձևակերպումը:

Վերջաբան-ամփոփում (corroboratio) - Կոստանդնուպոլսի պատրիարքն Հավաստիացնում է, որ Բյուզանդական եկեղեցին պատրաստ է իր գիրկն ընդունել Հայոց եկեղեցական կազմակերպությանը (№ 13):

Նա հիշեցնում է, որ իրեն Համախոհ եպիսկոպոսների հետ անձամբ է ստորագրել կաթողիկոսին ուղղված նամակը: Հույս է Հայտնում, թե Հայոց եկեղեցին ևս իր եպիսկոպոսներով ու Հոգևորականներով ընթացք կտա միավորության գործին՝ Բյուզանդական եկեղեցու օրինակով ստորագրելով պատասխան նամակը: Պատրիարքն իր վստահությունն է Հայտնում երկու եկեղեցիների միության գործը ավարտին Հասցնելու խնդրում (№ 23):

Եզրակացություն. Պատրիարքական թղթերի պաշտոնական բանաձևերը, ինչպես կայսերական թղթերինը, բավական կանոնավորված են.

ա) Կոստանդնուպոլսի պատրիարքն ըստ տիտղոսաշարի՝ իրեն Համարում է Աստծո ողորմությամբ իր պաշտոնին նշանակված: Թղթառաջի կառուցվածքը նման է կայսերական թղթի Համապատասխան Հատվածի կառուցվածքին⁶⁸:

բ) Այս վավերագրերի թարգմանական տարբերակներում առկա շեղումները թույլ են տալիս ենթադրել, որ կաթողիկոսական նոտարատանը մշակվող բանաձևերը ժամանակ առ ժամանակ վերանայվում էին:

68 Բյուզանդական պատրիարքական նամակների մուտքերի ուսումնասիրությանը նվիրված Օտտո Մացալի հետազոտությունը, այս խնդրի վերաբերյալ դասական է (Mazal, Die Prooimien, S. 174-177):

ՄԱՍՆ Բ.

ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՀՈՒՆԱՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԸ, ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՅՆԵՐՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ ՆՐԱ ԿԱԶՄՈՂԸ

Հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերություններին վերաբերող ժողովածուներ կազմվել են սկսած Ե դարի առաջին կեսից, սակայն դրանց մեջ իր ծավալով, միասնությամբ և շոշափած հարցերի շրջանակներով առանձնանում է ԺԲ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին ժողովածուն, ուր ամփոփված են 1165-1178 թթ. երկու եկեղեցիներին միջև փոխանակված վավերագրերը:

Այդ ժողովածուի կազմողը ԺԲ դարի երկրորդ կեսի Մերձավոր Արևելքի և Հայոց եկեղեցու պատմության մեջ քաջ հայտնի եկեղեցաքաղաքական դործիչ Ներսես Լամբրոնացին է: Լինելով Կիլիկիայում իր հզորութեամբ երկրորդ՝ Լամբրոնի Օշինյան ազնվականական տան ղեկավար և Հռոմկլայի կաթողիկոսների ազգականը, նա մի շարք նշադավոր իրադարձությունների գործող անձն է: Մասնակցել է Հռոմկլայի եկեղեցական ժողովին, Լևոն Բ Ռուբինյան իշխանի հանձնարարությամբ ուղարկվել է դիմավորելու Ֆրիդրիխ Շիկամորուս (Բարբարոսա) Արևմտահռոմեական կամ Գերմանական կայսեր գլխավորած երրորդ խաչակրաց բանակներին, պաշտոնական դեսպանագնացու-

Թյամբ այցելել է Կոստանդնուպոլիս¹: Ներսես Լամբրոնացին նաև բազմաբեղուն մատենագիր է. մի շարք մեկնությունների, ներբողյանների, տաղերի, ճառերի, թղթերի հեղինակ և հունարենից, լատիններենից ու ասորերենից կատարված բազմաթիվ թարգմանությունների խմբագիր և համաթարգմանիչ²: Նրա մատենագրական վաստակի մեջ ուրույն տեղ ունի «Պատճառ խնդրոյ միաբանութեան. թագաւորին Հոռոմոց էմանուէլի եւ սրբոց կաթուղիկոսացն Հայոց Ներսիսի եւ Գրիգորիսի թուղթքն, զոր գրեցին առ միմեանս» վավերագրերի ժողովածուն (կամ ինչպես արդեն կրճատ անվանել ենք՝ ՊԽՄ)³: Այդ երկի մեջ տեղ են գտել 1165-1178 թթ. եկեղեցիների միության հայ-բյուզանդական բանակցություններին վերաբերող վավերագրերի⁴ մեծագույն մասը: ԺԲ դարի վերջում ևս Բյուզանդական կայսրության հետ փոխանակվել են վավերագրեր, որոնցից մեկ են հասել միայն երկուսը⁵: Այդ բանակցությունների վերջին փուլի մասնակիցն ու նախաձեռնողներից մեկն էլ Ներսես Լամբրոնացին էր⁶:

ՊԽՄ ժողովածուի կազմողը Հայոց եկեղեցու Կիլիկիայում զբաղվող կարևորագույն եկեղեցական թեմերից մեկի՝ Տարսոն «վերադիտակ մայրաքաղաքի» արքեպիսկոպոսն է⁷: Ըստ հնագույն քրիստոնեական ավանդույթի, այն համարվում էր Պողոս առաքյալի հայրենի քաղաքը⁸: Բաղաք, որն հրկար ժամանակ Կիլիկիայի բյուզանդական

- 1 Ներսես Լամբրոնացու եկեղեցաբաղադական գործունեության մասին ամենաընդգրկուն պատմաաղբյուրագիտական աշխատանքը տե՛ս Ալիճեան, Ներսես Լամբրոնացի, էջ 29-56, հմմտ. նաև Հակոբեան, Ներսես, էջ 67-84, Սասունբեան, Ներսես: Ներսես Լամբրոնացու մասին աշխատություններ լույս են տեսնում նաև այսօր (տե՛ս Աճառեան, Ներսես):
- 2 Տե՛ս Ալիճեան, Ներսես Լամբրոնացի, էջ 131 և հուս., Zekiyán, Nersès de Lambron, p. 123-134:
- 3 Հ. Լևոն Զեքիյանը վերոհիշյալ հանրագիտարանային հոդվածի մեջ Ներսես Լամբրոնացու երկերի շարքում վրիպմամբ չի հիշատակել ՊԽՄ ժողովածուն, որը հրատարակված է ԹԸ, 1871, էջ 85 - 201:
- 4 Այս վավերագրերի ժողովածուին նվիրված ուսումնասիրություններից կարևորներն են Tekeyan, Controverses, ԶԳրիսեան, Համամիութենական, Keshishian, The Problem:
- 5 Այդ մասին տե՛ս Բարտիկյան, Նոր Գյուրթեր, էջ 285-290, հմմտ. նաև Бартикийан, К истории, с. 53-56, Бозоян, Новый, с. 224-230:
- 6 Այդ մասին մանրամասն տե՛ս Ալիճեան, Ներսես Լամբրոնացի, էջ 49-52:
- 7 Տե՛ս Ալիճեան, Ներսես, էջ 22, հմմտ. նաև ԹԸ, 1871, էջ 86: Տարսոնի՝ քրիստոնեական եկեղեցու հնագույն կենտրոնի մասին ավելի հանգամանալի տե՛ս Hild-Hellenkemper, Kilikien, S. 428-439:
- 8 Այդ հանգամանքը բազմիցս շեշտվում է նաև Ներսես Լամբրոնացու երկերում: Օրինակ ներքոբերյալ հատվածում Լամբրոնացին Լևոն թագավորին ակնարկում է, որ Անտիոքի հույներն ու լատինները իրեն դիտում են որպես Պողոս առաքյալի աթոռի

կառավարիչների նստավայրն էր⁹ և Կոմնենոս կայսրերի տիեզերակալական քաղաքականության հենակետը՝ ԺԱ-ԺԲ դարերի ընթացքում Փոքր Ասիայում¹⁰ և Մերձավոր Արևելքի տարածաշրջանում:

Տարսոնը ԺԲ դարի 70-90-ական թվականներին հիմնականում Հայաբնակ քաղաք էր, սակայն այնտեղ բնակվում էին նաև Կոստանդնուպոլսի եկեղեցուն հպատակ քաղկեդոնական Հայեր ու հույներ, կաթոլիկ լատիններ և հակոբիկ ասորիներ¹¹: Հավանաբար մերձակա բնակավայրերի բնակչության մեջ քիչ թիվ չէին կազմում նաև հրեաները, մուսուլման արաբներն ու թյուրքերը¹²: Բազմազգ բնակչությունը բնորոշ էր նաև այդ տարածաշրջանի՝ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի, Հայաբնակ մյուս շրջաններին և իր ուրույն դերն է սաղացել ինչպես Ներսես Լամբրոնացու, այնպես էլ Հռոմիլյայի կաթոլիկոսարանի և Ռուբինյան իշխանության եկեղեցաքաղաքական և դավանական գործունեության ձևավորման ասպարեզում¹³:

Հայոց եկեղեցու ներսում, Հյուսիսային Հայաստանում և Հատկապես Հաղրատ-Սանահինում ձևավորված ընդդիմությունը ևս մատուցեց գոյանում էր այս հողի վրա. միատարր Հայկական բնակչություն ունեցող Հյուսիս-արևելյան Հայաստանի տարածքում գործող եկեղեցիները, գտնվելով վրացական պետության իշխանության ներքո, փորձում էին հակադրվել այդ երկրի սահմաններում սկսված ազգային և եկեղեցական համահարթեցման քաղաքականությանը և հակադրվում էին Կիլիկիայում սկիզբ առած ամեն տեսակ եկեղեցական կամ ծիսական բարեփոխման, երկյուղելով, որ դա կարող է առիթ տալ օրթոդոքս եկեղեցուն դավանական զիջում կատարելուն: Հյուսիս-արևել-

ժառանգորդ. «...Պաղոսի անուամբն գմերն անաստոթիոնս քարեհամբարեւն, և Գորից արթոոյն արժանապատի լինել յաջորդ վկայեմ...» տե՛ս Ներսես Լամբրոնացի, էջ 230-231:

9 Բոգոլան, Բյուզանդիայի, էջ 202 և հտև.:

10 Այդ ժամանակաշրջանի հետ է համընկնում նաև Անտիոքի դքսության կողմից Տարսոնի ժամանակավոր գրավումը (տե՛ս Ալիշան, Սիսուս, էջ 267, հմմտ. նաև Hild-Hellenkemper, Kilikien, I. Teil, S. 433:

11 Ներսես Լամբրոնացին հաճախ է հիշատակում իր գլխավորած թեմում օրթոդոք-հույների (հելլենացի), կաթողիկե-եվրոպացիների (լատինացի) և հակոբիկ-ասորիների (ասորի) անկայությունը (տե՛ս Ներսես Լամբրոնացի, էջ 220, հմմտ. նաև Hild-Hellenkemper, Kilikien, I. Teil, S. 433:

12 Կիլիկիայում հիշատակված բազմազգ ազգաբնակչության անկայության մասին, տե՛ս Hild-Hellenkemper, Kilikien, I. Teil, S. 102-103:

13 Այս մասին ամենաընդհանուր գծերով տե՛ս Բոգոլան, Բյուզանդիայի էջ 12-18, 164-190:

յան Հայաստանի վարդապետների կեցվածքը բխում էր տարածաշրջանում Հայոց դավանական ու մշակութային ինքնությունը պահպանելու շահերից: Դրա լավագույն փաստարկը ԺԲ-ԺԴ դարերում Հյուսիս-արևելյան Հայաստանի հոգևոր դպրոցներից մեկ հասած մշակութային բազմաթիվ արժեքներն են¹⁴:

Հայոց եկեղեցու կյանքում չափազանց կարևոր նշանակություն ունեցող վավերագրերի ժողովածուի ստեղծումը սովորական խնդիր չէր: Նրա հեղինակը պետք է ելք ու մուտք ունենար կաթողիկոսական դիվան, ուր պահվում էին բազմաբնույթ վավերագրեր, որոնցից օգտվելը ոչ միայն լեզուների, այլ նաև մասնագիտական հատուկ պատրաստություն էր պահանջում: Ժողովածուի կազմման հիմնական նպատակը վավերագրերը հասու դարձնելն էր հայ հասարակության բոլոր շերտերին: Ու քանի որ նման ժողովածուն պետք է շրջանառություն մեջ մտներ Հայոց եկեղեցու բոլոր թեմերում, կազմողն նպատակ էր հետապնդում ստեղծել դադափարախոսական պայքարում օգտագործելի և ժամանակի պահանջները բավարարող մի դավանական ժողովածու, քանի որ դիտավորություն ունեւր միասնականացնել Հայոց եկեղեցու դիրքը Բյուզանդական (կամ օրթոդոքս) եկեղեցու և դավանանքի հարձակումներին դեմհանդիման: Պատահական չէ նաև այն փաստը, որ վավերագրերի այդ ժողովածուի կազմման հովանավորողը և հորդորողը սերում էր բյուզանդամետ նկրտումներ ունեցող իշխանական տնից:

ՊԽՄ վավերագրերի ժողովածուն կազմված է Ներսես Լամբրոնացու եղբայր, Լամբրոնի իշխան Հեթումի¹⁵ պատվերով: Այդ է վկայում հայագետների ուշադրությունը դեռևս ԺԹ դարում գրաված Ներսես Լամբրոնացու կազմած ՊԽՄ վավերագրերի հավաքածուի հի-

14 Մատենագրական այդ դպրոցի մշակութային ծառանգությանն է նվիրված Մեխրսեթ-բեկ, «Վարդապետը» վրացերեն մենագրությունը:

15 Նրա մասին հանգամանորեն տե՛ս Ակիմեան, Ներսես Լամբրոնացի, էջ 116-130: Հետոմ Օշինյանի կենագրության շրջադարձային իրադարձություններից է նաև այն փաստը, որ հետագայում՝ ԺԳ դարի սկզբին, երբ Լեոնը Ա թագավորը ստիպել էր նրան հրաժարվել Լամբրոնի իշխանի պարտականություններից, նա ընդունում է կուսակրոնություն և վանք մտնում, Հերոմ անունը փոխելով Հեղիի (այդ մասին տե՛ս Ակիմեան, Ներսես Լամբրոնացի, էջ 126): Հերոմ-Հեղիի գործունեությանը վերաբերող և վկայությունները բավական հազվադեպ են: Հավանաբար այդ է պատճառը, որ գրականագետ Գ.Անանյանը շիրթության մեջ է ընկել և ակամա սխալ ճանապարհով իր ընթերցողին տանում է Խտայիա, Հերոմ-Հեղիին վերաբերող հիշատակագրությունը վերագրելով Ներսես Լամբրոնացուն (տե՛ս Անանեան, Ներսես, էջ 8):

չատակարանը¹⁶, ուր Հեղինակը մեզ Հետաքրքրող երկի մասին գրում է. «Այս ականատես եւ ականջալուր եղեալ նուաստս Հոմանուն նորին տեառն Ներսէսի Հայրապետի, ըստ փափագման քո, իշխան բարէպաշտ. եւ Հարազատ եղբայր իմ Հեթում, շարագրեցի Համառուտաբար զՊատճառ նամակացն Հանդերձ թղթովքն»¹⁷:

Վերոբերյալ վկայությունից տեղեկանում ենք, որ վավերագրերի Հավաքածուն ստեղծող Ներսէս Լամբրոնացին Հեղինակն է 1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցությունների յուրաքանչյուր փուլին Հաջորդող լրացուցիչ «պատճառ»-տեղեկությունների, ժողովածուն ամբողջացնող առաջաբանի և վերջաբանի¹⁸:

Վավերագրերի միջնադարյան այս ժողովածոյում գետեղված են Հայոց կաթողիկոսներ Գրիգոր Գ Պաշլավունու (1110¹⁹ - 1166), Ներսէս Դ Շնորհալու (1166 - 1173), Գրիգոր Դ Տղայի (1173-1193), Բյուզանդիայի կայսր Մանուել Ա Կոմնենոսի (1143-1180) և Կոստանդնուպոլսի դիպլի կայսր Միքայել Գ Անքիալոսի (1170-1178) միջև փոխանակված նամակների բնագրերը:

ՊիՄ ժողովածուն պարունակում է 1165-1178 թթ. գրված 17 վավերագիր, որոնցից տասնմեկը վերոյիշեալ Հայոց կաթողիկոսների²⁰ դավանական թղթերն են և պաշտոնական գրագրությունները Բյուզանդական կայսեր և պատրիարքի հետ, չորսը՝ Մանուել Ա Կոմնենոսի, երկուսը՝ Միքայել Գ Անքիալոսի թղթակցություններն են ուղղված Հռոմկլայի Հայրապետներին: ՊիՄ-ում թղթերը բերված են ըստ ժառանգազրական Հերթականության. երբեմն Ներսէս Լամբրոնացին տալիս է այս կամ այն թղթի գրման հանգամանքներին կամ թվակատարի է այս կամ այն թղթի գրման հանգամանքներին «պատճառներ», որոնց մասին նին վերաբերող ծանոթագրություններ՝ «պատճառներ», որոնց մասին

16 Այս հիշատակարանը ժամանակին հրատարակել է Ղ.Ալիշանը (տե՛ս Ալիշան, Հայապատում., էջ 426-427): Այնուհետև այն տպագրվել է ևս երկու անգամ, տե՛ս Գառեգին Ա, Յիշատակարանք, էջ 622 և Ն.Ալեկնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 210:

Ա.Ա.Մաթևոսյանը (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ., Երևան 1988) վրիպել է և չի ընդգրկել այն իր աշխատասիրած հատորում:

17 Ն.Ալեկնեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 218:

18 Այդ հատվածները ԹԸ, 1871, էջ 85-201-ում հրատարակված են այլ տառատեսակով:

19 ՊիՄ ժողովածուի բնագրում (ԹԸ, 1871, էջ 86յ) Ներսէս Լամբրոնացին Գրիգոր Գ Պահլավունու գահակալման թվական է համարում «Հայոց հինգ հարիւր յիսուն եւ ինն»-ը, որը համապատասխանում է 1110թ. փետրվարի 22 - 1111 թ. փետրվարի 17 ժամանակահատվածին:

20 Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի անուցով ժողովածու մուծված միակ վավերագրի հեղինակը, ըստ այդ թղթի վերնագրի, Ներսէս Օնորհալին է: «Գրեալ ի Ներսիսէ արքեպիսկոպոստ յեղորբ տեառն Գրիգորիսի կաթողիկոսի Հայոց» (ԹԸ, 1871, էջ 87):

Հեթո՞ւմին գրած Հիշատակարան-թղթում ասում է. «չարագրեցի հա-
մառաւտաբար զՊատճառ նամակացն Հանդերձ թղթովքն»²¹:

Այդ վավերագրերն ինքնին, Հայոց եկեղեցու ուղղափառ դավա-
նանքի հավաստման վկայագրեր են, իսկ ժողովածոյում քննարկված՝
պատմությանը, ծեսին ու քրիստոնեական վարդապետությանը վերա-
բերող վկայությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս որոշել
Կիրիլիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված Հայկական իշ-
խանությունների ու Հռոմկլայի կաթողիկոսարանի փոխհարաբերու-
թյունների բնույթը, բյուզանդական կայսրության և Կոստանդնու-
պոլսի պատրիարքության վերաբերմունքը Մերձավոր Արեւելքում տեղի
ունեցող եկեղեցական և քաղաքական իրադարձությունների նկատ-
մամբ²²:

Ինչպես արդեն նկատել ենք, ժողովածու չեն մտել մի շարք վա-
վերագրեր, որոնք անկասկած լրացնում և անսպասանորեն վերաբերում
են փաստաթղթերի այս խմբին²³: Կարծում ենք, Ներսես Լամբրոնացին
ՊԽՄ-ի բնագիրը չի մուծել այդ փաստաթղթերը (№ 1, 9, 10, 11, 17, 18,
20), հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

ա) Այդ վավերագրերի մի մասում շարագրված տեսակետներն
արդեն արձանագրված են ՊԽՄ-ում տեղ գտած գրություններում²⁴:

բ) Վավերագրերի մի մասը գաղտնի է եղել և անպատեհ է եղել
դրանց հրատարակումը կամ Բյուզանդական կայսրության, կամ էլ
Հռոմկլայի կաթողիկոսության գնահատմամբ²⁵:

գ) Մի շարք վավերագրեր էլ կամ հաստատված չեն եղել կաթո-
ղիկոսների և հոգևոր ժողովների կողմից, կամ էլ ունենալով ծրագրա-
յին բնույթ, գրված են եղել Հռոմկլայի նոտարատանը պահվելու
նպատակով և չեն առաքվել Կոստանդնուպոլիս²⁶:

21 Տե՛ս Ն. Ակիճեան, Ներսես Լամբրոնացի, էջ 218:

22 Հիշատակված հարցերը հնարավորին չափով մանրամասն քննված են մեր (Բոգոյան,
Բյուզանդիայի մեծագրության) մեջ:

23 Տե՛ս Բոգոյան, Գրիգոր, էջ 98:

24 Տե՛ս Բոգոյան, Գրիգոր, էջ 97:

25 Օրինակ, Մանուել Ա Կոմնենոսի կամ Ներսես Դ Ծնորհալու գաղտնի թղթերը (№ 9,
11), որոնց մասին տե՛ս Բոգոյան, Բյուզանդիայի, էջ 245:

26 Օրինակ, բյուզանդական կողմի պահանջած ինը ծիսադավանաբանական կետերի պա-
տասխանները, Ներսես Լամբրոնացու Ատենաբանությունը և Հռոմկլայի ժողովի Գախ-
օրյակին Ներսես Լամբրոնացու գրած մյուս երկերը (տե՛ս ստորև, Հռոմկլայի ժողովի
վավերագրերին նվիրված հատվածը):

Ինչ խոսք, Ներսես Լամբրոնացին ժողովածու չի ներառել նաև Հայոց կաթողիկոսների նամակագրությունը Հյուսիս-արևելյան Հայաստանի (Արցախ, Հաղբատ, ՍանաՀին) վարդապետների և ասորիները հակոբիկ եկեղեցու պատրիարքարանի հետ²⁷ (փաստաթղթեր, որոնք անմիջականորեն առնչվում են Հայ-բյուզանդական բանակցություններին)²⁸: Հետագայում, Հավանաբար, արդեն ԺԳ դարում, Ներսես Դ Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի թղթերի մեծագույն մասը ՊԽՄ ժողովածուի հետ միասին Հավաքվել են մեկ ձեռագրի մեջ և ավանդվել սերնդե-սերունդ²⁹: Այդ ավանդույթը շարունակվում էր նաև ԺԹ դարում երկիր գրեթե բոլոր հրատարակություններում³⁰:

Հայ բանասիրության չլուծված խնդիրներից է Ներսես Լամբրոնացու ՊԽՄ ժողովածուի կազմման թվականի ճշգրտումը: ՊԽՄ վերագրերի ժողովածուի ստեղծման տարեթիվը ժամանակին փորձել է որոշել Հ.Ներսես Ակիրնյանը: Նկատի ունենալով Փաբլիզի ազգային գրադարանի № 179 (Z) և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) № 2496 (C) Հնագույն ձեռագրերում պահպանված Ներսես Լամբրոնացու վերոհիշյալ հիշատակարանը, բազմավաստակ հայագետը գրում է. «կից յիշատակարանս, որ թեև թուական չի կրէր, բայց կը վերջանայ Մանուէլ Կայսէր մահուան յիշատակութեամբ, որ տեղի ունեցաւ 1180 սեպտ. 24-ին: Ուստի գրութեան տարին ալ նկատելու է այս տարին»³¹: Հավանաբար Ներսես Ակիրնյանը նկատի է ունեցել ոչ թէ նշված հիշատակարանը, ուր նման վկայություն չկա, այլ ՊԽՄ-ի վերջաբանի՝ «Իսկ երանելիս Հանգուցեալ...յաւիտեանս.

27 Գրիգոր Դ Տղայի և Հյուսիսային վարդապետների փոխանակած թղթերը մեզ են հասել առանձին ձեռագրերում և ժողովածու չեն կազմել (տե՛ս Գրիգոր Տղայ, Բանաստեղծություններ, էջ 50-52): Հակոբիկ-ասորիների հետ փոխանակած վավերագրերից մեկը պահպանվում է Ներսես Դ Շնորհալու առանձին վավերագրերի ժողովածոյում (ԹԼ, 1871, էջ 205-206), իսկ մի քանիսի մասին էլ ակնարկում է Միքայել Ասորիս (MS, t.III, p. 335-336): Ասորի հակոբիկյանների և Հայոց եկեղեցու այս դարաշրջանի փոխհարաբերությունների մասին տե՛ս Տր-Միհնատեան, Հայոց, էջ 271-283:

28 Այս հանգամանքը ժամանակին ցկատել է Ներսես Ակիրնյանը (տե՛ս Ակիրնեան, Ներսես Լամբրոնացի, էջ 220):

29 Ներսես Շնորհալու և Գրիգոր Տղայի ամսակների անմն ժողովածուի կազմումը ու Ներսես Ակիրնյանը թվագրում է ԺԴ դարի սկզբով և վերագրում է Թոմաս Հոռուկայեցուն (տե՛ս Ակիրնեան, Ներսես Լամբրոնացի, էջ 220):

30 Տե՛ս այս ամսակների (ԹԼ) 1788, 1825, 1865 և 1871 թվականների հրատարակությունները:

31 Նույն տեղում, էջ 219:

ամէն» Հատվածը³², ուր իսկապես հիշատակվում է Մանուել Ա Կոմնենոս կայսեր մահվան լուրը:

Ժողովածուի վերջաբանում Ներսես Լամբրոնացին նաև ճշգրիտ թվագրում է Մանուել Ա Կոմնենոսի մահվան լուրը Հռոմիկա Հասնելու ամսաթիվը. «լուաք զվախճան բարեպաշտ աստուածասէր եւ իմաստուն արքային Հոռոմոց յամսեանն սեպտեմբերի քսան եւ եւթն, եւ ի թուականիս Հայոց վեց Հարիւր եւ քսան եւ ինն»³³(= 1180 թ. սեպտեմբերի 27): Ներսես Լամբրոնացին դիտե նաև Կոստանդնուպոլսում դեպքերի հետագա զարգացման ընթացքի մասին. «եւ ապա՝ զի որդի նորին (սկզբնաղբյուրը նկատի ունի Մանուել Ա Կոմնենոսի որդի Ալեքս Բ Կոմնենոսին - Ա.Բ.) մանուկ տիաւք յաջորդեալ զաթոռն, ոչ կարաց խաղաղութիւն նուաճել զընտանիսն, այլ ցարդ եւս ունի զթագաւորական քաղաքն ամբոխ խռովութեան յիշխանացն եւ յընտանեացն, որք յակառակ նմին յառնէն. յորոց միջի ոչ սակաւ Հնդմունք արեանց լինին եւ ամենայն բարեկարգութեանց լուծումն»³⁴:

Այս Հատվածից ակնհայտ է, որ ժողովածուն կյանքի կոչող Ներսես Լամբրոնացին քաջատեղյակ է Կոստանդնուպոլսում 1180 - 1183 թթ. տեղի ունեցած ողբերգական իրադարձություններին. Մանուել Ա Կոմնենոսից հետո՝ Ալեքս Բ Կոմնենոսի (1180 - 1183) դաճակալմանը, Մանուել Ա-ի դստեր և փեսայի խռովությանը, Անդրոնիկոս Ա Կոմնենոսի խարդալանքներին (մանկահասակ կայսեր խնամակալի՝ Ալեքս Բ-ի մոր սպանությանը, թագավորին փրկելու խոստումներով Անդրոնիկոս Ա-ի մոտքին Կոստանդնուպոլիս և Ալեքս Բ-ին գահակից-խնամակալ հռչակմանը)³⁵: ՊիՄ-ի վերջաբանի հեղինակը վկայում է նաև, որ Բյուզանդական կայսրության մայրաքաղաքում. «յիւրից ամաց սկսեալ՝ դեռ եւս աւր ըստ աւրէ անէ խռովութիւնն, եւ ի կարծիս ձգի ամենայն միտք առ ի Հաստատելոյ վերստին թագաւորական աթոռոյն»³⁶: Վերահիշյալ անցուդարձերին վերաբերող՝ Ներսես

32 Տե՛ս ԹԸ, էջ 201:

33 ԹԸ, 1871, էջ 200: Բյուզանդագիտության մեջ Մանուել Ա Կոմնենոսի մահվան ամսաթիվ է նշանակվում 1180 թ. սեպտեմբերի 24-ը (Տե՛ս Grunel, La Chronologie, p. 358): Միջնադարում հաղորդակցության ճանապարհների և լուրերի տարածման ուսումնասիրության տեսանկյունից չափազանց արժեքավոր են Ներսես Լամբրոնացու այս վկայությունները, ըստ որոնց սեպտեմբերի 24-ին մահացած կայսեր մահվան լուրը Հռոմիկա (գոյցե և Կիլիկյան Հայաստանը նկատի ունի մեր հեղինակը) է հասել սեպտեմբերի 27-ին, այսինքն՝ դեպքից երեք օր հետո:

34 ԹԸ, 1871, էջ 201:

35 Այս իրադարձությունների մասին մանրամասնօրէն տե՛ս Vasiliév, History, pp. 433&.

36 ԹԸ, 1871, էջ 201:

Լամբրոնացու սկնարկները և Ալեքս Բ Կոմնենոսի սպանութեան և նրա
հարազատ՝ Անդրոնիկոս Կոմնենոսի (1183 - 1185) միահեծան դա-
հակալման իրադարձութիւնների մասին պահպանած լուսթյունը և,
հիշատակութիւնն այն մասին, որ Մանուել Ա Կոմնենոսի մահվանից
հետո Բյուզանդական կայսրութիւնում սկսված խռովութիւններն
արդեն երբորդ տարին է ինչ էն դադարում. թույլ են տալիս մերժել
Ներսես Ակինյանի կողմից ՊիՄ ժողովածուի ստեղծման վերահիշյալ
թվագրումը:

Ելնելով ՊիՄ-ում պահպանված վկայութիւններից, ժողովա-
ծուն պետք է թվագրել 1182 թ. սեպտեմբերի 24 - 1183 թ. սեպտեմբեր
ժամանակահատվածով: Թվագրման սկիզբ ենք համարում 1182 թ.
սեպտեմբերի 24-ը, որովհետև այդ թվականին է սկսվում Ալեքս Բ-ի
միանձնյա թագավորութեան երբորդ տարին³⁷, իր հոր՝ Մանուել Ա
Կոմնենոսի մահվանից հետո³⁸: Ինչպես որ ցույց տվեցինք վերևում,
Ներսես Լամբրոնացին կայսրութեան մայրաքաղաքում տեղի ունեցող
ներքաղաքական պայքարի սկիզբը թվագրում է իր կողմից ՊիՄ ժո-
ղովածուն կազմելուց երեք տարի առաջ («յերից ամաց սկսեալ»): Այդ
իսկ պատճառով, ժողովածուն գրելու վերջին սահման ենք համարում
1183 թ. սեպտեմբերը, քանի որ Ներսես Լամբրոնացին դեռ չգիտէ Ա-
լեքս Բ Կոմնենոսի սպանութեան և Անդրոնիկոս Ա Կոմնենոսի միահե-
ծան դահակալման լուրը³⁹:

ՊիՄ ժողովածուի հետ կապված աղբյուրագիտական հարցերը
քննարկելիս կարևոր նշանակութիւն ունի նրա կազմողի պատմադի-
տական հայացքի և դիրքորոշման բացահայտումը: Ինչպես արդեն
նշվեց, ժողովածուի ստեղծման համար առիթ է ծառայել Հեթում
Լամբրոնացու խնդրանքը, սակայն Ներսես Լամբրոնացին բնագրի ա-
ռաջաբանում իսկ ՊիՄ-ն հասցեագրել է հետագա սերունդներին.
«Յայտ առնելով, զի թէպէտ եւ հասարակական վախճանաւն փոխի
յաստեացս, սակայն արժան մշտնջենաւոր ինքեան թողուլ յերկրի
յարժանի յիշատակի գործս, որով եւ յազգս ազգաց անյապաղ գովա-
սանական երգով պատուի»⁴⁰: Տարտնի արքեպիսկոպոսը քաջ գիտակ-
ցել է ժողովածոյի մեջ ընարված վավերագրերի արժեքը և պատմու-

37 Նկատի ունենալ ՊիՄ-ի վերջաբանի հետևյալ հատվածը. «յերից ամաց սկսեալ» (ԹԸ, 1871, էջ 201):

38 Ալեքս Բ Կոմնենոսը գահակալ է հռչակվել դեռևս իր հոր՝ Մանուել Ա Կոմնենոսի իշ-
խանութեան տարիներին: Այդ մասին տե՛ս Chalandon. Les Comnène, p. 212:

39 Տե՛ս Barzos. Genealogia, том. В'.

40 ԹԸ, 1871, էջ 85:

թյան գիրկն անցած մարդկանց արարքներն ու քաղաքական իրադարձություններն ականատեսի կողմից սերունդների դատին հանձնելու անհրաժեշտությունը. «Ձայս տեսեալ մեր՝ ի նուազեալս ժամանակի Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդս, ոչ յապաղեմք առ յապա թողուլ զյիշատակ անուանն նոցա պարագրութեամբ բանի ի հանդիպեալ ժողովուրդս՝ որք զկնի լինիցին, զի եւ զսոցայցս ախորժելի կարծեմ պատմութիւն քան զնախ եղեցոց համապատիւ նոցա սրբոց»⁴¹: Ուրեմն՝ արդեն վավերագրերի ժողովածոյի առաջարանում Ներսես Լամբրոնացին հայտնում է, որ այն, ինչ ինքը մատուցելու է ընթերցողին, մեր այսօրվա պատկերացումներով պատմություն է: Հեղինակի նպատակն է ցույց տալ հայ ժողովրդի եկեղեցաքաղաքական կյանքում Հայոց կաթողիկոսների բացառիկ դերը: Հեղինակը չի մոռանում նաև շեշտել, որ ինքն այդ եկեղեցու բարձրատիճան պաշտոնյաներից մեկն է⁴²: Այդ իսկ պատճառով, Ներսես Լամբրոնացին իր երկը սկսում է Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսին ուղղված ներբողյանով, անուշադրության չմատնելով այն պարագան, որ նրա կաթողիկոսության ժամանակաշրջանը արթնացնող շունչ հաղորդեց Հայոց եկեղեցական և քաղաքական կյանքին, երկարատև ընդարձացումից հետո աշխուժացրեց հոգևոր դասին («Որպէս եւ զկնի ամպոյ՝ արեգակն, և յետ ձմերայնոյն՝ դարնանային աւգոցն քաղցրութիւն, այսպէս եւ երանելի Հայրս ի նուազեալ ժամանակս՝ յորժամ ձմեռն մեղաց տիրէր ի վերայ աշխարհի. եւ մէզ թշուառութեան պաշարէր զմեզ սրոյ եւ դերութեան, երեւեցաւ ջահաւորեալ վարդապետութեամբ եւ լուսակրօն վարուք, և փարատեաց յաշխարհէ զմորիկ մեղացն եւ վերստին կանաչացոյց զմեզ ի ձմերային մեռելութենէն յաճումն հոգևոր չափոյ հասակի կատարմանն Քրիստոսի»)⁴³: Տարսնի արքեպիսկոպոսը չի մոռանում հիշատակել նաև, որ խնկարկելի կաթողիկոսը Գրիգոր Լուսավորչի տոհմից է («Ազգաւ Պահլաւիկ, ի ցեղէ սրբոյն Գրիգորի»)⁴⁴, և երբորդ կաթողիկոսն է Գրիգոր Բ Վկայասերից հետո⁴⁵:

41 ԹԸ, 1871, էջ 85:

42 «...ի նուազեալս ժամանակի Հայաստանեայց եկեղեցւոյ առաջնորդս» (տեսն ԹԸ, 1871, էջ 85):

43 ԹԸ, 1871, էջ 85:

44 ԹԸ, 1871, էջ 85:

Ներսես Լամբրոնացին առաքելական է համարում Հայոց կաթողիկոսական աթոռը. «յաջորդ առաքելական աթոռոյ կաթողիկոսութեանս Հայոց» (ԹԸ, 1871, էջ 85): Պատմության համար ճետաքրքիր է հարցի նման դրվածքի նախապատմությունը, քանի որ ինչպես վերևում տեսանք, բյուզանդական կողմը փորձում էր միայն Գրիգոր

Իրադարձությունները, որոնց անդրադարձել է Ներսես Լամբրոնացին, սկսվել են Գրիգոր Բ-ի ազգական և հոգևոր որդի Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսի իշխանության վերջին տարում և շարունակվել են վերջինիս հարադատ եղբոր՝ Ներսէս Դ Շնորհալու (1166-1173), և ապա՝ նրանց ազգական Գրիգոր Դ Տղայի (1173-1193) կաթողիկոսության տարիներին: Վերջին երկու կաթողիկոսներն էլ ՊՍՄ ժողովածուի գլխավոր հերոսներն են⁴⁶, հայ-բյուզանդական բանակցություններում՝ Համերաշխության ոգին:

ՊՍՄ-ի առաջաբանում պատմվող իրադարձությունների ծավալման վայրը Կիլիկյան Հայաստանն⁴⁷ էր, ուր երկպառակաշական պատերազմ էին վարում երկու հայազգի իշխաններ՝ Օշին Լեթումյանը պատերազմ էին վարում երկու հայազգի իշխաններում՝ Թորոս) Բ Ռու- և Թեոդորոս (մյուս պատմական սկզբնաղբյուրներում՝ Թորոս) Բ Ռու- բինյանը, որոնք. «էին պատուով ի Յունաց արքայէն սեւաստոսութինյանը, որոնք. «էին պատուով ի Յունաց արքայէն սեւաստոսութեամբ, եւ էին ընդ ծառայութեամբ եւ հնազանդութեամբ նորա»⁴⁸: Այս դրվագում ակնհայտ է Ներսես Լամբրոնացու աչառու վերաբերմունքը Ռուբինյան իշխանական ընտանիքի նկատմամբ⁴⁹: Ելակիտ ընդունելով Բյուզանդական կայսրությանը Օշինի և Թորոսի ստորակա Համարվելու հանգամանքը, Տարսոնի արքեպիսկոպոսը մեղադրում է երկրորդին, որ նա «թէկն ամէր ընդդէմ թագաւորին Հոռոմոց պէսպէս

Լուսավորչի անվան հետ կապել Հայոց եկեղեցու և կաթողիկոսական իշխանության հիմնադրումը:

45 Գրիգոր Գ Պահլավունու գործունեությունը բնութագրելիս Ներսես Լամբրոնացին չի մոռանում հիշատակել, որ Ներսես Շնորհալու դաստիարակն է. «սնոյց զեղբայրն իւր վարժեալ ամենայն աստուածաշունչ տառիք» (տե՛ս ԹԸ, 1871, էջ 86):

46 ՊՍՄ-ում Ներսես Լամբրոնացու համար Գրիգոր Գ Վկայասերը «երանելի» (ԹԸ, 1871, էջ 85), Գրիգոր Գ Պահլավունի՝ «երանելի» (էջ 86) և «սրբազան» (էջ 86), Ներսես Դ Շնորհալուն՝ «երանելի» (էջ 165) և «սուրբ» (էջ 165), Գրիգոր Դ Տղան՝ «սուրբ» (էջ 166) է: Հետաքրքիր է այն պարագան, որ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսը իր կենդանության օրոք սուրբ է անվանվում:

47 Ներսես Լամբրոնացին այդ տարածքը երկու մասի է բաժանում: Թորոս Ռուբինյանին համարում է իշխան «լեռնային կողմանց Փոխագացոց», իսկ Օշին Հեթումյանին՝ «լեռնային կողմանց Փոխագացոց եւ բազում գաւառաց՝ որ ի գահ Կիլիկիոյ» (Տե՛ս ԹԸ, 1871, էջ 86):

48 ԹԸ, 1871, էջ 86: Հմմտ. նաև **Բողոքան**, Բյուզանդիայի, էջ 226:

49 Այդ վերաբերմունքն ակնհայտորեն երևում է երկու քաղաքական գործիչների բնութագրման համար օգտագործված անվաններից: Թորոս Բ Ռուբինյանի անունը տրվում է երկու անգամ. «Իշխանն՝ որոյ անունն Թեոդորոս» և «ամբարտաւան իշխանն Թեոդորոս», իսկ Օշին Հեթումյանը հիշատակվում է. «բարեպաշտ իշխանն Օշինն» (երկու անգամ), «Օշին սեւաստոսին» (մեկ անգամ), «գերապատի իշխանութիւնն Օշինի» (մեկ անգամ) բառակապակցություններում (տե՛ս ԹԸ, 1871, էջ 86-87, 107):

պատճառաւ, մոռացեալ զերդմնակուռ դաշինսն՝ որ ի միջի, եւ զհնազանդութիւն նորա»⁵⁰, հակադրելով Թորոսի վարքագիծը Օշինի հավատարմութեանը դեպի բյուզանդական կայսրութիւնը («հաւատարմապէս մնացեալ ի հնազանդութիւն արքային Հոռոմոց»)՝⁵¹: Ըստ Ներսես Լամբրոնացու, երկու հայ իշխաններ ի միջև ծագած պատերազմի հիմնական պատճառն Օշինի հավատարմութիւնն էր «Հոռոմոց (իմա՛ բյուզանդական-Ա.Բ.) Թագաւորին», որի համար «ոչ սակաւ խռովութիւնք լինէր եւ հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանաց»⁵²:

Ներսես Լամբրոնացին ևս հավաստում է, որ Լամբրոնի տեր Օշին Հեթումյանը բյուզանդական քաղաքականութեան հետեւողական պաշտպանն է, Կոստանդնուպոլսի կայսեր հավատարիմ ստորական: Բյուզանդիայի գերիշխանութեան դեմ Թորոս Բ Ռուբինյանի յուրաքանչյուր ելույթ Օշինը դիտում էր իբրև սեփական իշխանութեան դեմ ուղղված, կանխամտածված գործողութիւն: Լամբրոնին տիրող Հեթումյանների քաղաքական բոլոր նկրտումներն ու ձեռնամերձ ժԲ դարի 60 - 70-ական թթ. ամբողջովին ու կուրորեն, անմնացորդ կապված են Կիլիկիայում Բյուզանդական կայսրութեան հետապնդած շահերին: Այդ քաղաքականութեան գաղափարախոսական դիրքերի վրա է կանգնած նաև ՊԽՄ ժողովածոյի կազմող Ներսես Լամբրոնացին, որը Թորոս Բ Ռուբինյանի պայքարը Կիլիկիայի հայկական իշխանութիւնները միավորելու և քաղաքական անկախութիւն ձեռք բերելու համար բնութագրում է որպես «խռովութիւն»⁵³:

Ներսէս Լամբրոնացու համար Բյուզանդական կայսրութիւնը համաշխարհային քաղաքակրթութեան պահպանման հենասյունն ու ապավենն է՝⁵⁴: Խոսելով Մանուել Ա Կոմնենոս կայսեր մահից հետո Բյուզանդիայի սահմաններում տեղի ունեցած վերոհիշյալ խռովութիւնների մասին, Տարսոնի արքեպիսկոպոսը դրանք մատուցում է որպես աշխարհի կործանման բացահայտ նշան. «Թագաւորական աթոռոյն՝ որ սիւն է աշխարհի ըստ ասելոյն Պաւղոսի»⁵⁵: Բյուզանդական կայսրութեան քաղաքական կյանքի վայրիվերումների հետ է կապում Ներսես Լամբրոնացին ողջ աշխարհի կացութիւնը. «Արդ ընդ սեանն

50 ԹԸ, 1871, էջ 86:

51 Նույն տեղում:

52 Նույն տեղում:

53 ԹԸ, 1871, էջ 86:

54 ԹԸ, 1871, էջ 201:

55 Նույն տեղում:

տատանել՝ շարժի եւ աշխարհ ընդ ամենայն կողմանս սովով եւ սրածուծութեամբ եւ սասանութեամբ, որպէս ասաց Քրիստոս յաստուածապատում աւետարանութեանն յաղաքս կատարածին»⁵⁶: Այդ միտումը ընթերցողի մէջ սերմանելու և դադափարը իր գրքի վերջնական ակորդ դարձնելու համար հեղինակի գրչի տակ քիչ դեր չի խաղում քաղաքական իրադարձություններին հետ միաժամանակ մի շարք բնական երևույթների զուգահեռ նկարագրությունը: Օրինակ. Մանուել կայսեր մահվան օրվանից սկսած. «մինչև ի նոյն արն հոլովմամբ շաբաթուն, մղտացաւ աւզս ընդ ամենայն աշխարհ, եւ լոյս արեգականն պակասեալ՝ շամանդաղ սփռէր, այլ եւ անձրեւ մոխրախառն եկն յամենայն երկիր»⁵⁷: Բնական երևույթի նման նկարագրությունից հետո ներսես երկիր»⁵⁷: Բնական երևույթի նման նկարագրությունից հետո ներսես Լամբրոնացին եզրակացնում է. «յորոց ծանեաք իսկապէս, եթէ ընդ փոխելն մահուամբ բարեպաշտ թաղաւորին՝ եղև պատուհաս այս ի վերայ աշխարհի. որ եւ է իսկ ճշմարտապէս»⁵⁸: Եվս այլ օրինակ. խոսելով Միրիոկեֆալոն

ի ճակատամարտում⁵⁹ Բյուզանդական բանակի ջախջախման մասին, ականատես-հեղինակը նկարագրում է նաև 1176 թ. ապրիլի 11-ին տեղի ունեցած արևի խավարումը⁶⁰, որն ըստ ներսես Լամբրոնացու տեղի է ունեցել ճակատամարտից չորս ամիս առաջ⁶¹: Ասպ Տարսոնի արքեպիսկոպոսը այսպես է գնահատում բնական երեվույթի

56 Նույն տեղում:

57 ԹԸ, 1871, էջ 201:

58 Նույն տեղում:

59 Ըստ ներսես Լամբրոնացու ճակատամարտի վայրը գտնվում է. «մերձ յիկոնիոն, ի տեղում» որ կոչի Մելիտենի» (ԹԸ, 1871, էջ 168): Այս ոչ ճիշտ տեղեկությունը կրկնում է նաև Սմբատ Սպարապետը (տե՛ս Սմբատ, 1956, էջ 193):

60 Արեգակի այս խավարման մասին տե՛ս Թումանյան, Հայ, էջ 145 և Մարգարյան, Հյուսիսային, էջ 179-180, մասնատրպապե՛ ծան. 181:

Ներսես Լամբրոնացու հաղորդումը արեգակի այս խավարման մասին ինքնատիպ է նրանով, որ հեղինակը ոչ միայն նկարագրում է քնական երևույթը, այլ նաև ճշգրտում է աշխարհագրական տարածքի սահմանները, որից երևացել է խավարումը. է աշխարհագրական տարածքի սահմանները, որից երևացել է խավարումը. է «...յառաստուում պահու ընդ ծագել արեուն եղև խաար ի վերայ երկրի, գոր ոչ ոք ի մարդկանէ էր տեսեալ այնպիսի, ոչ որպէս զխաարումն արեգական, այլ որպէս զհասարակ գիշերի՝ յորժամ իցէ առանց լուսնի եւ աստեղաց, ի յաշխարհէն Պաղեստինացունց մինչև ի Բիզանդիոն եւ յալ բազում գաւառք: Նաեւ քննեալ եղև յիմաստասիրաց բազմաց, եւ գտաւ դիր աստեղաց եւ ընթացք արեգական եւ լուսնի յիրեանց կայանս իրիք սայթաքման, եւ մնաց այնու աշխարհս ժամ մի եւ ապա եղև լոյս յերկրի» (ԹԸ, 1871, էջ 168-169):

61 Ներսես Լամբրոնացին արեգակի խավարումը ճշգրտորեն թվագրում է. «ի հոյն ամն (իմա՛ ճակատամարտի տարում-Ա.Բ.) ...յետ սրբոյ Պասեքին, յաւուր Նոր Կիրակէին» (ԹԸ, 1871, էջ 168):

քրիստոսարանական նշանակութունը. «եթէ զկորուստ քրիստոնէիցն դուշակեաց՝ ոչ զիտեմ, եւ եթէ զսովոյն սաստկութիւն՝ որ ի նոյն ամն եղեւ, եւ ոչ զայն եւս»⁶²:

Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական Հավատամքի Համաձայն պետք է ամեն կերպ աջակցել Բյուզանդական կայսրութեան Հզորութեան ամրապնդմանը և դատապարտել ու խանգարել Թորոս Բ Թուրքիայան իշխանի գործունեութեանը: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուր Հարմար պահի Ներսես Լամբրոնացին ոգևորված ներբող-յաններ է ձեռնում Մանուել Ա Կոմնենոսին՝ ԺԲ դարի 60-70-ական թթ. Հայ-բյուզանդական փոխհարաբերութեան ներքին բյուզանդական կողմի Հիմնական Հերոսին⁶³: Ներսես Լամբրոնացու Համար Մանուել Ա Կոմնենոսը⁶⁴ Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերութեան ներքին ամենագործուն մասնակիցն է. չնայած ՊիՄ ժողովածու մտած առաջին վավերագիրը (1165 թ. Ներսես Շնորհալի եպիսկոպոսի թուղթը առ Ալեքս Աբսուլս) Ներսես Լամբրոնացին Համարում է Կիլիկիայի բյուզանդական զորահրամանատար-կառավարչի պատվերով դրված փաստաթուղթ⁶⁵, այնուամենայնիվ բանակցութեան ներքին Հետագա ընթացքում Մանուել Ա Կոմնենոսը այդ փոխհարաբերութեան ներքին իսկական ոգին է և, ըստ Հավաքածոյի Հեղինակի, միայն նրա մահն է խանգարում վերջնական Համաձայնութեան կնքմանը:

62 ԹԸ, 1871, էջ 169:

63 Մանուել Ա Կոմնենոսը ՊիՄ բնագրում երբեմն կոչվում է արքա, երբեմն՝ թագավոր: Արքա հիշատակված է ՊիՄ հետևյալ էջերում. ԹԸ, էջ 8612, 1079, 11, 10929, 15325, 16827, 2002,7, թագավոր՝ ԹԸ, էջ 8615,24, 873, 10923,25,27, 14332, 1441, 14520, 15322,25, 1546, 15935, 1601, 1665,17, 1688,10,15,17,19,25, 1695, 18025, 20114,32:

64 Ուշագրավ է նաև այն հանգամանքը, թե ի՞նչ մակդիրների հետ են հանդիպում վերոհիշյալ թագավոր և արքա տերմինները: Բյուզանդական կայսրը կոչվում է «Յունաց արքայ» (ԹԸ, 1871, էջ 8612), սակայն «թագաւոր Հոռոմոց» (ԹԸ, 1871, էջ 8615, 24), այնուամենայնիվ հանդիպում է նաև «արքայ Հոռոմոց» (ԹԸ, 1871, էջ 2007) բանաձևը: «Բարեպաշտ» մակդիրը հանդիպում է և՛ թագավոր (ԹԸ, 1871, էջ 10921, 1546, 1665,17, 1689,19, 1695, 20118), և՛ արքա (ԹԸ, 1871, էջ 16817, 2007) տիտղոսների հետ: Արքա բառի հետ հանդիպում է նաև «բարեպաշտարտ» (ԹԸ, 1871, էջ 15325) և «բարեպաշտ, աստուածասեր եւ իմաստուն» (ԹԸ, 1871, էջ 2007), իսկ թագավորի հետ՝ «արժանագովելի» (ԹԸ, 1871, էջ 20132) անական-տիտղոսները: Բյուզանդական կայսերական վավերագրերի տիտղոսների մասին տե՛ս նաև Աերկա աշխատանքի վավերագրերի ձևական ընդհանրացման համապատասխան հատվածը:

65 Ըստ Ներսես Լամբրոնացու. «որ եւ թախանձեալ գերացելից, զի զդասնութիւն Հայտատանցայց բանի ասացեալ՝ գրով պարունակեալ տացէ մնա» (ԹԸ, 1871, էջ 87):

Ի Հարկէ, ժողովածոյում Հիշատակվում են նաև բանակցութիւններին մասնակցած բյուզանդական Միքայել Գ Անքիալոս⁶⁶ և կայսեր թագման արարողութիւնը գլխավորած Թեոդոսիոս Ա Բորողիտես (1179 - 1183)⁶⁷ պատրիարքները⁶⁸, սակայն նրանց դերը միջնակցական գործերում ստորադասված են կայսեր կամքին: Այդ են վկայում ներսես Լամբրոնացու բյուզանդական պատրիարքների մասին Հաղորդած գրեթէ բոլոր տեղեկութիւնները⁶⁹:

Այսպիսով. ներսես Լամբրոնացու կազմած ՊԽՄ ժողովածուն ներկայացնում է 1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական փոխհարաբերութիւնների ոչ միայն Հիմնական վավերագրերը, այլ նաև առաբերութիւնների ոչ միայն Հիմնական վավերագրերը, այլ նաև առաջարկում, մի շարք թղթերի գրման Հանգամանքների պարզաբանմանը նվիրված Հատվածներում և վերջաբանում գրառած տեղեկութիւնների շնորհիվ պատմական աշխատութիւն է, որը նպատակ ունի Հետագա սերունդներին Հաղորդակից դարձնել ժԲ դարի 60-70-ական թթ. իրադարձութիւններին: Ինչպես վերևում պարզեցինք, ներսես Լամբրոնացին այս երկն ավարտել է 1182-1183 թ.: Ժողովածոյի կազմողը եկեղեցիների միութիւն Հայ-բյուզանդական բանակցութիւնների Հետևողական կողմնակից է:

66 Ներսես Լամբրոնացին կաթողիկոս Ներսես Դ Օմրիալու առաջին, բյուզանդական կայսերն ուղղված նամակի կապակցությամբ, առանց անունը տալու, ակնարկում է նաև Ղուկաս Խրիստերգես (1157-1170) բյուզանդական պատրիարքին. «ստեպ զնամակս ի Ղուկաս Խրիստերգես (1157-1170) բյուզանդական պատրիարքին հայրապետին» ձեռն թագատրն ընթանայր ի մեծ եկեղեցին, ցուցանելով տիեզերական հայրապետին» (ԹԸ, 1871, էջ 143):

67 Այս պատրիարքին, ըստ Նիկեոսա Խոնիատեսի վկայության, Անդրոնիկոս Ա Կոմ-ճենոսը զահընկեց է անում, ակնարկելով նրա հայկական ծագումը (տե՛ս N.Ch., p. 253): Ներսես Լամբրոնացին սխալմամբ Թեոդորոս Ա-ին համարում է Միքայել Գ-ի հաջորդը (ԹԸ, 1871, էջ 20034), չհիշատակելով նրանց միջև զահակալած Խարիտոն Եվգենիոսեսի (1178-1179) անունը:

68 Ներսես Լամբրոնացին օրթոդոքս եկեղեցու պատրիարքներին անվանում է. «տիեզերական հայրապետ» (ԹԸ, 1871, էջ 14333), «տիեզերական պատրիարք» (ԹԸ, 1871, էջ 20019), «բահա-էջ 15418), «զարքեպիսկոպոս մեծի քաղաքին» (ԹԸ, 1871, էջ 20019), «հայր մայապետ» (ԹԸ, 1871, էջ 20019), «հայրապետ» (ԹԸ, 1871, էջ 20029, 2014, 10), «հայր սուրբ» (կամ «հայրապետ սուրբ», ԹԸ, 1871, էջ 20032): Ներսես Լամբրոնացին երկու անգամ հիշատակում է Ամտիոքի օրթոդոքս պատրիարքին. մեկ անգամ հոգնակիով՝ նրա հետ միասին նկատի ունենալով նաև Կոստանդնուպոլսի եկեղեցու առաջնորդին («պատրիարքան», ԹԸ, 1871, էջ 16812), մյուս անգամ՝ «սրբազան պատրիարքին», ԹԸ, 1871, էջ 1696):

69 Օրինակ. հայ-բյուզանդական եկեղեցական քանակությունների առաջին թղթերը Բյուզանդական կայսրության անունից գրում է Մանուել Ա Կոմնենոսը (տե՛ս ԹԸ, 1871, էջ 107, 109, 143-144), իսկ հետագայում կայսերական վավերագրերի հետ Հոմովկա են ուղարկվում Միքայել Գ Անքիալոս պատրիարքի թղթերը (ԹԸ, 1871, էջ 153, 159, 168):

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ՀՈՒՆԱՐԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Կոմսենոսների դարաշրջանի բյուզանդական ծիսադավանական և վիճաբանական գրականությունը մեծ է ծավալով, հարուստ՝ ընդգրկած հարցերի ու խնդիրների բազմազանությունը¹: Կայսերական աստվածաբանները, երկրի ներքին և արտաքին, քաղաքական ու եկեղեցական իրավիճակից ելնելով, հաճախ նաև կենտրոնական իշխանություն ուղղակի միջամտությունը, դավանական այս կամ այն կրոնական համայնքի դեմ², երբեմն էլ՝ եկեղեցիների միություն բանակցություններ էին վարում հարևան ժողովուրդների հետ: Դավանական պայքարը, որը վաղուց ի վեր ներխուժել էր կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության ոլորտը, գաղափարախոսական հզոր զենք էր դարձել միջնադարյան Արևելքի և Արևմուտքի, Բյուզանդիայի և հարևանների փոխհարաբերություններում:

1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների բնագրերը ավանդված են նաև բյուզանդական մատենագրությունը: Հունարենով պահպանված փաստաթղթերը մեզ են հասել Թեորիանոսի Διάλεξις πρὸς τὸν καθολικὸν τῶν Ἀρμενίων («Տրամախոսություն Հայոց կաթողիկոսի հետ») երկում, ուր ներկայացվում են առաջին և երկրորդ այցելությունների բանակցությունների արձանագրությունները:

ԺԲ դարի հույն փիլիսոփա, թագավորական ծառա (ըստ Մանուել Ա Կոմսենոսի թղթի բնորոշման. λίσσιον τῆς βασιλείας μου), մագիստ-

¹ Այդ դարաշրջանի դավանաբանական գրականության մասին բավական հաճախանորեմ տե՛ս Beck, Kirche, S. 609 - 629:

² Աննա Կոմսենեի պատմությունը ի է Եման իրադարձությունների Ակարագրություններով. տե՛ս AC, t. I, Lib. VI, 2 (p. 272-274), 4 (p. 278-280), t. II, Lib. X, 1 (p. 1-4.), Lib. XIV, 8-9 (p. 295-306), Lib. XV, 8-10 (p. 350-365), հմտ. Анна Комнина, с. 24-25, 177-178, 180-181, 264-265, 394-399, 419-426:

րոս Թեորիանոսը բյուզանդական Հայտնի մատենագիր է, զիվանագետ և աստվածաբան-գիտնական³: Նրա անունը Հայ մատենագրության մեջ Հիշատակվում է սկսած 1182/3 թվականից, երբ Ներսես Լամբրոնացին կազմեց ՊԽՄ ժողովածուն: Այստեղ Տարսոնի արքեպիսկոպոսը Թեորիանոսին որակում է իբրև «զայր ոմն ճարտարաբան փիլիսոփայ արտաքին գրովք կրթեալ և ևկեղեցական ուսմամբ ճոխացեալ»⁴: Թեորիանոսի անունը կապվում է Կիլիկյան Հայաստանի և Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի պատմությանը՝ նրա 1169 - 1170 և 1171 - 1172 թթ. դեպքանագնացություններով: Այս երկու բանակցություններին Հունական կողմից մասնակցում էր նաև Փիլիպուպոլսի շրջանի վանքերից մեկի վանահայր Հովհաննես Աթմանը⁵:

Ա) Թեորիանոսի առաջին դեսպանագնացության բանակցությունների բնագրում պահպանված վավերագրերը:

1169 - 1170 թ. դեսպանագնացության ընթացքում Հռոմկլայում տեղի ունեցած վիճաբանությունների ընադիրը վերջնական տեսքի է տրեղվել և Հարյուր օրինակից ավելի քանակով տարածվել Բյուզանդաբերվել և Հարյուր օրինակից ավելի քանակով տարածվել Բյուզանդական կայսրության սահմաններում (Թեորիանոսի կողմից և արքունիքի հրամանով), երբ աստվածաբան-փիլիսոփան վերադարձել է Կոստանդնուպոլիս: Երկրորդ դեսպանագնացության արձանագրության մեջ Թեորիանոսին ուղեկցող Հովհաննես Աթմանը (Հունարեն բնագրում՝ Աթման) կաթողիկոսի հետ անձնական զրույցում 1170 թ. բանակցությունների արձանագրությունների ճակատագրի մասին տեղեկացնում է՝ *Ἐγραφε γὰρ τοῦτο ὁ σύντροφός μου ἐν τῇ διαλέξει, ἢ τις ἀνεγνώσθη ἐπὶ συνόδοις καὶ ἐπὶ παλατίου, καὶ μετεγράφη ἐν ἀντιγράφοις ἐπέκεινα τῶν ἑκατῶν, καὶ γνωστὸν ἐγένετο ἐφ' ὄλη τῇ Ῥωμαφίᾳ* (Իմ այս գործակիցը (Իմա՝ Թեորիանոսը - Ա. Բ.) երկխոսության, ՆՁ (Իմ այս գործակիցը (Իմա՝ Թեորիանոսը - Ա. Բ.) արձանագրել էր, որն էլ ընթերցվել է եկե-

3 Թեորիանոսի մատենագրական ժառանգության մասին տե՛ս *Krumbacher, Geschichte, S. 88 - 89; Beck, Kirche, S. 628, Palmiere, La lettera, pp. 8-14; Dondaine, Contra, pp. 352 - 357*:

4 ՊԸ, 1871, էջ 144: Այս ժողովածուի հեղինակի և գրման թվականի մասին ավելի մանրամասն տե՛ս *Բարթյան, Ներսես, էջ 109-116*, իսկ բանակցությունների մասնակցող կողմերի մասին. *Բարթյան, Հայ-բյուզանդական, էջ 81 - 93*:

5 Այս հոգևորականի գործունեությունը հակասական գնահատականի է արժանացել վերջին տարիների հայագիտական գրականության մեջ տե՛ս *Бартикан, Роль; Zekiyán, The Armenian*.

ղեցական սինոդի և արքունիքի առջև, բազմացվել է Հարյուրից ավելի օրինակ և Հայտնի է դարձել ամբողջ Ռուսանիայում (իմա՝ Բյուզանդիա-Ա.Բ.)⁶: Ուրեմն՝ դեռևս Հռոմիլյայում առաջին դեսպանագնացության արդյունքները գրի են առնվել Թեորիանոսի կողմից, իսկ Կոստանդնուպոլսում գրանք ընթերցվել են սինոդում և արքունիքում: Մինչև երկրորդ դեսպանագնացության ժամանումը Հռոմիլյա, Բյուզանդիայում Հայտնի էին դարձել առաջին դեսպանագնացության ընթացքում տեղի ունեցած վիճաբանությունները, քանի որ այդ բնագրի Հարյուրից ավելի օրինակ էր բազմացվել ու տարածվել կայսրության սահմաններում⁷: Առաջին դեսպանագնացության բանակցությունների արձանագրված բնագրի մասին տեղեկություն է պահպանել նաև ՊնՄ ժողովածուն. «Իսկ նորա (իմա՝ Թեորիանոս - Ա.Բ.) առեալ զթուղթն Հանդերձ Հարցմամբքն եւ պատասխանեալքն, վասն զի զամենայնն ի գրի գրաւշմեաց, ընթանայր առ թաղաւորն. ապա ի ձեռին ունելով եւ զպէսպէս Հարցմաննն նշանագրութիւն եւ զՀայաստանեայց յաւթարամիտ լինելն ի միաբանութիւնն, յայտնէր զգիրն՝ որ ի սրբոյ Հայրապետէն առ թագաւորն»⁸:

Մեզ Համար ուրույն Հետաքրքրություն է ներկայացնում նաև այն պարագան, թե որտե՞ղ է վերջնական տեսքի բերվել Թեորիանոսի առաջին բանակցությունների արձանագրության բնագիրը: «Տրամախօսութիւններում» առկա մի շարք վկայություններից կարելի է ենթադրել, թե այդ կատարվել է Կոստանդնուպոլսում՝ Թեորիանոսի առաջին դեսպանագնացությունից անմիջապես Հետո⁹: Այս ենթադրության Համար անուղղակի փաստարկ կարող են ծառայել «Տրամախօսութեան» Հետևյալ տեղեկությունները.

ա) Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» բնագիրը Համառոտված է Հռոմիլյայում գրի առնված արձանագրությունների Հիման վրա: Այս փաստն է Հաստատում այն վկայությունը, ըստ որի մեզ Հասած բնագիր չեն մտել Քաղկեդոնի ժողովի դավանանքին վերաբերող

6 Տե՛ս ՍԳ, t. 133, p. 248 C, Հմմտ. Պատճեան, Պատմութիւն, էջ 244:

7 Այս տեղեկությունը չափազանց ուշագրավ է բյուզանդական արքունական դիվանատան հսկայական չափերի հասնող գրագրության ուսումնասիրության առումով:

8 ԹԸ, 1871, էջ 153 (ընդգծումը՝ Ա.Բ.-ի):

9 «Ἡμεῖς δὲ ἐπὶ πᾶσι τούτοις εὐχαριστήσαντες τῷ Θεῷ, τῆς πρὸς Κωνσταντινοπόλιν φερόσης οἰχόμεθα αἰνοῦντες καὶ εὐλογοῦντες τὸν Θεόν...» («Եւ մեր գոհացեալք զԱստուծոյ վասն ամենայն շնորհացս, եկեցցաք՝ դառնալ աղօրէս ի Կոստանդինուպոլիս՝ հանապազորդեալք ի ճանապարհին, օրհնելով եւ փառաբանելով զԱստուած...» տե՛ս ՍԳ, t. 133, p. 212 C3-5, հմմտ. Պատճեան, Պատմութիւն, էջ 236, տե՛ս նաև ՍԳ, t. 133, p. 208 D7, հմմտ. Պատճեան, Պատմութիւն, էջ 234):

մի շարք արտահայտությունների բացատրություններ, որոնց շուրջ կաթողիկոսի խնդրանքով խոսել է Թեոփրիանոսը¹⁰:

բ) Խոսելով Ներսես Դ Շնորհալու Հրամանով իրեն Համար արտագրել տված Հովհաննես կաթողիկոսի երկի մասին, Թեոփրիանոսը գրում է. «...որը և բերեցինք մայրաքաղաք»¹¹:

գ) Թեոփրիանոսի երկրորդ այցելություն ժամանակ առաջին «Տրամախոսութեան» բնագիրը եղել է բանագնացի ձեռքին¹²:

դ) «Տրամախոսութեան» բնագիրը վերանայված և Համառոտված է Կոստանդնուպոլսում¹³: Այս ենթագրության կողմնակից է Հ. Լևոն Զեքիյանը. «Կարելի է մոռանալ նաև որ Թեոփրիանոսի տեղեկագրությունն ալ սղագրական ատենագրությունն մը է: Հետեւաբար, բնական է որ Թեոփրիանոս զայն խմբագրած ըլլայ՝ այն գաղափարին Համաձայն զոր ինք կազմած էր վիճարանություններու արդիւնքի մասին»¹⁴:

Այժմ անդրադառնանք Թեոփրիանոսի առաջին դեսպանագնացության ժամանակի խնդրին: Բյուզանդական աստվածաբանը Հռոմկլա է Հասել իր Հետ բերելով Մանուել կայսեր թուղթը՝ թվագրված երրորդ ինդիքտիոնի նոյեմբեր ամսով (7⁰ μηνι Νοεμβριω Ινδικτιωνος τριτης)¹⁵: Այս ինդիքտիոնը Համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի

10 «Ἐπεὶ δὲ ἀνεγνώσθη ὁ ὄρος, καὶ τὰ βιβλία εὐρέθησαν ἐξισάζοντα, τὸ τε Ἀρ-
μηνικόν, καὶ τὸ Ῥωμαϊκόν, καὶ αἱ τῶ Καθολικῶ δοκούσαι ἀσαφεῖς αὐτοῦ λέξεις
μετρία ὅσῃ ἰκανῆς τετυχηῖσαι σαφηνείας, εἶπεν ὁ Θεωριανὸς πρὸς τὸν Κα-
θολικόν» («Յետ ընթեռնելոյ զայս վճիռ ժողովոյն եւ միաբան զսանելոյ ընթերցուածոյ
Հայոց ընդ բնագրի Հոսմայեցոց, իրև պարզեցան յստակեցան բանք ժողովոյն, որք
մթիւք Կաթողիկոսին երեւելն, Թեոփրիանոս զայս ինչ բարբառեցաւ» տե՛ս ԲԳ, t. 133, p.
197D1-5, Գալստնոս, Միաբանութիւն, էջ 307, Պատճեան, Պատմութիւն, էջ 233):

11 «καὶ δὲ μεταγραφείσα ἐδόδε ἡμῖν, ἦν καὶ ἀποκομισθεῖσα πρὸς τὴν βασιλεῦ-
σαν» («Հնծայեցաւ մեզ պատճեան գրոյն, եւ մեք առեալ զայն բերաք ընդ մեզ
յարբուսական քաղաքն» տե՛ս ԲԳ, t. 133, p. 208D7, Գալստնոս, Միաբանութիւն, էջ 313,
Պատճեան, Պատմութիւն, էջ 234):

12 Այդ է վկայում «Ἦνα τὰς παραχθείσας τότε, χρήσεις ἐν τῇ φεασάσῃ γενέσθαι
διαλέξει παραλείψω» («ի բաց թողում զվկայութիւնս, զորս յառաջնում բանակցու-
թեան ընծայեցուցաք» տե՛ս ԲԳ, t. 133, p. 241D4-5, Պատճեան, Պատմութիւն, էջ 241):

13 «Տրամախոսութեան» բնագրի համառոտման մասին խոսում է այն հատվածը, որտեղ
կողմերը բնագրկում են Գրիստոսի ճանդյան տոնի հարցը: Այդտեղ կաթողիկոսն ասում
է, որ հիշատակված հարցը առաջին բանակցությունների ընթացքում բավականին
քննվել է և հարկ չկա կրկին դրան անդրադասուալու (Τὸ κεφάλαιον τοῦτο ἐν τῇ
προτέρῳ, διαλέξει τρακταῖσθεν ἰκανῶς εἰς πέρας ἤχθη χρηστόν· οὐ δεῖ γοῦν
ἐτι ταυτολογεῖν εἰς κενόν, տե՛ս ԲԳ, t. 133, p. 268C1-3): Ակնարկվող հատվածը
չտուներով առաջին «Տրամախոսութեան» բնագրում, ենթադրում ենք, որ այն բնագրից
դուրս է հանվել վերջնական խմբագրման փուլերից որևէ մեկում:

14 Տե՛ս Չեփեան, Համամիութենական, էջ 30:

15 ԲԳ, t. 133, p. 121 A.:

1 - 1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին¹⁶: Հետևապես՝ Մանուել Ա Կոմնենոս կայսեր թուղթը զրվել է 1169 թ. նոյեմբեր ամսին: Ուրեմն՝ Թեոդորանոսը կարող էր իր դեռականախմբով Կոստանդնուպոլսից դուրս գալ 1169թ. նոյեմբերին կամ դրանից հետո: Մինչև Հռոմկլա Հասնելը, ենթադրելի է, որ դեռականախմբը եղել է Քեսուսում¹⁷:

Հավանաբար դեռականախմբը Մանուել Ա Կոմնենոսի վերահիշյալ նամակը զրվելուց բավական հետո է դուրս եկել Կոստանդնուպոլսից, քանի որ առաջին այցի բանակցության արձանագրության սկզբում Թեոդորանոսը Հռոմկլա կատարած այս այցելութունը թվագրում է աշխարհի արարչագործության բյուզանդական ՏՃՈՂ՝ (6678) թվականով, Մանուել Ա Կոմնենոսի թագավորության 28-րդ տարով, և ինդիքստիոնի երրորդ տարվա մայիսի 15-ով¹⁸:

16 Տոմարական հաշվումների համար տե՛ս Grumel, *La Chronologie de Basileus Manuel*, Օրացույցի պատմություն աշխատությունները: Հարկ ենք համարում նշել, որ Վ.Գրյուսելի աշխատակում ինդիքստիոնը և բյուզանդական արարչական թվականը որված են մեր օգտագործած թվականության ոչ թե այն թվականի կողքին, որով սկսվում էր ինդիքստիոնի կամ արարչական թվականի սկիզբը, այլ հաջորդ թվականի դիմաց: Վերևում հիշատակված վավերագրի թվականի ճշտման համար տե՛ս նաև Dölger, *Regesten*, վավեր. 1489, հմտ. Չեքեան, Համամիտրեանական, էջ 56:

17 Այդ են անուղակիորեն վկայում առաջին «Տրամախոսութեան» այն տողերը, երբ Թեոդորանոսը խոսում է Գրիգոր Աստվածաբանի (Նազիանզացի) «Յաղագս Որդոյ, բան երկրորդ» (περὶ Ἰησοῦ δευτέρου λόγου) երկի մի հատվածի մասին, որը այլ թարգմանություն ունի հայերենում և որպես ապացույց հունարեն քնարի անաղարտության Թեոդորանոսը մտնացույց է անում այդ նույն երկի ասորերեն թարգմանության քննգիրը, որը բյուզանդական աստվածաբանը գտել է Քեսուսում. «ἐν τοῖς βιβλίοις τῶν Σύρων ἐν Κενσοῦνίῳ καὶ πλεῖστον ἐχάρην τοῦτο εὐρών» (PG, t. 133, p. 152B | 1-12, հմտ. Պալեան, Պատմութիւն, էջ 215): Այս կապակցությամբ կարելի է անել մի այլ հնարավոր ենթադրություն ևս. Թեոդորանոսը Հռոմկլա գալիս հետո, հնարավոր է կարճ ժամանակով այցելել է մոտակայքում գտնվող Քեսուս քաղաք:

Այս կապակցությամբ կարելի է արդյոք պնդել, որ նա Քեսուսում հարաբերությունների մեջ է մտել հակոբիկաաորիների հոգևոր առաջնորդների հետ: Թե ինչպե՛ս է ընթացել դեպի անաղարտությունը, ո՞ր ճանապարհներով և քաղաքներով են ամցել բյուզանդական դիվանագետները, տեղեկությունների անբավարարության հետևանքով ղվարանում ենք պատահյալանք:

18 Բերում ենք քննգիրը. «Ἐν ἑταί ἀπὸ κτίσεως κόσμου, , ΣΧΟΓ', ἔτει δὲ εἰκοστῷ ὀγδῶν τῆς αὐτοκρατορίας τοῦ ἐν βασιλεῦσιν εὐσεβεστάτου καὶ φιλοχρίστου, καὶ θεοστέπτου κυροῦ Μανουήλ, τοῦ Πορφυρογεννήτου, καὶ Κομνηνοῦ, ἰνδικτιῶνος τρίτης, κατὰ τὴν δεκάτην πέμπτην τοῦ Μαΐου μηνὸς κατελάβομεν σὺν Θεῷ τῶν Ῥωμαίων κοῦλά» (PG, t. 133, p. 121B): Այստեղ կարելի է կատարել մի փոքրիկ ճշտում Կ.Գալանոս (Գալանոս, Միաբանութիւն, էջ 242) և Ա.Պալեանի (Պալեան, Պատմութիւն, էջ 204) թարգմանությունների մեջ: Հունարենի «εἰκοστῷ ὀγδῶν»-ն Գալանոսի լատիներեն քննարում դարձել է «decimo et octavo», իսկ հայերենում՝ «ութևտասաներորդի», որը նույնությամբ հայերեն թարգմանության մեջ պահպանել է Ա.Պալեանը:

Հետևապես Թեոփրանոսի Ա դեսպանախոսմամբը Հռոմիկա է Հասել 1170 թ. մայիսի 15-ին: Այս թվականի ճշտությունը հավաստվում է Մանուել Ա կայսեր վերևում հիշատակված թղթի Հայերեն տարբերակի թվադրումով, որն ըստ մեր ենթադրության, կրում է կաթողիկոսական դիվանատուն վավերագրի մուտք գործելու տարեթիվն ու ամիսը. «յամսհանս Մայիս, յԼնդիքտիոնին յերեքն»¹⁹: Ուրեմն՝ անվիճելի է, որ Թեոփրանոսն իր առաջին դեսպանախոսմամբ Հռոմիկա է Հասել 1170 թ. մայիսի 15-ին:

Արդյոք քանի՞ անդամից է բաղկացած եղել առաջին դեսպանախոսմամբի անձնակազմը: «Տրամախօսութեան» բնագրում որևէ ուղղակի վկայություն այդ մասին չենք գտնում: Վերոհիշյալ՝ Մանուել կայսեր Ներսես կաթողիկոսին ուղղված թղթի թե՛ հունարեն, թե՛ Հայերեն տարբերակներում հիշատակվում են Թեոփրանոսը և Փիլիպուպոլսի Հայ վանահայր Հովհաննես Ութմանը («զլիզիոն թագաւորութեան մերոյ վմայիսառ թէօփրանոս առ ձերդ երկրադաճութիւն առաքեաց թագաւորութիւնս մեր, ընդ նմին և զհայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպուպոլսիս աջխարհէն զՅոհաննէս՝ մականուն Ութման»²⁰): Այս խնդրին վերաբերող մի անուղղակի տեղեկություն էլ հաղորդում է երկրորդ «Տրամախօսութեան» բնագիրը²¹: Եթե վերապահությանը ենթադրենք, որ Հովհաննես Ութմանի գործակիցը (ὁ σύντροφος) Թեոփրանոսը չէ, պետք է ենթադրել, որ դեսպանախոսմամբի կազմի մեջ եղել է մի երրորդ անձնավորություն, որը գրի է առել վիճարանությունները:

Աշխարհի արարչագործության բյուզանդական 6678 (-5508(9) թվականը համապատասխանում է 1169 թ. սեպտեմբերի 1 - 1170 թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Հայտնի է, որ Մանուել Ա Կոմնենոսը պատրիարքի կողմից Կոստանդնուպոլսի Ս.Սոփիայի տաճարում կայսր է օծվել 1143 թ. նոյեմբերի 28-ին (տե՛ս Grumel, La Chronologie, p. 358, Հմտտ. նաև Barzos, Genealogia, p. 424), որեմք՝ նրա թագավորության 28-րդ տարին համապատասխանում է 1170 թ. նոյեմբերի 28 - 1171 թ. նոյեմբերի 27 ժամանակամիջոցին: Գիտենք նաև, որ Մանուել Ա-ը գահին է բազմել իր հոր մահից անմիջապես հետո, այն է՝ 1143 թ. ապրիլին: Ի լրումն վերոբերյալ փաստարկների, ինդիքտիոնի երրորդ տարվա մայիսի 15-ին համապատասխանում է 1170 թ. մայիսի 15-ը:

19 ԹԸ, 1871, էջ 145: Այս թուղթը Ռ. Միքայել Չամչյանը սխալմամբ գրված է համարում 1170թ. մայիսին (տե՛ս Չամչյանց, Պատմութիւն, էջ 105 - 106):

20 ԹԸ, 1871, էջ 197: Թղթի հունարեն բնագրում դեսպանագնացների մասին ասվում է. «ἐπὶ τοῦτο τὸν παρόντα λίξιον τῆς βασιλείας μου τὸν μαίστωρα Θεωριανὸν καὶ φιλόσοφον πρὸς τὴν ὑμετέραν εὐλάβειαν ἢ βασιλεία μου ἐξαπέστειλε σὺν, ἅμα τῷ καθηγούμενῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν Φιλλιππουπόλει τῷ Ἀτ- μάνω» (PG, t. 133, p. 120B9. 14):

21 Ἐγγραφή γὰρ τοῦτο ὁ σύντροφος μου (PG, t. 133, p. 248Cg)

Որքա՞ն ժամանակ է Հոռովկայում մնացել Թեորիանոսն իր դեսպանախմբով: Առաջին բանակցության արձանագրություններն ընագրում երբեմն նշվում է, թե ինչ որ ժամանակով բանակցությունները դադարեցվել, սակայն մի քանի օր անց կրկին շարունակվել են²²: Բնագրի նմանատիպ հատվածներից կարելի է ենթադրել, որ վիճաբանությունները տևել են ընդամենը 12 - 13 օր: Սակայն, եթե նկատի ունենանք, որ վիճաբանությունների գրառումները Կոստանդնուպոլսում «ուղղափառ» տեսքի բերելիս Թեորիանոսը որոշ հատվածներ է հանել, ապա թերևս կարելի է նաև ենթադրել, որ վիճաբանություններն ավելի երկար են ընթացել: Համենայն դեպս՝ դեսպանախումբը Հոռովկայում է եղել մինչև 1170 թ. հոկտեմբերը: Մեր այս ենթադրությունը կարծես հաստատվում է Թեորիանոսի ձեռքով Մանուել Ա Կոմնենոսին առաքված ներսես Դ Շնորհալու ՊիՄ-ում պահպանված թղթի թվականով. «Գրեցաւ ի թուականութեանս Հայոց վեց հարիւր ինն և տասն. յամսեանն Հայոց՝ Արեգ և Հոռոմոց՝ Հոկտեմբեր»²³: Հայոց ՌԺԹ (619) թվականը համապատասխանում է 1170 թ. փետրվարի 7 - 1171 թ. փետրվարի 6 ժամանակահատվածին, իսկ Հայոց Արեգ ամիսը համընկնում է այդ տարվա հոկտեմբերին՝ միայն նրա առաջին հինգ օրերին: Ուրեմն՝ նամակը գրվել է 1170 թ. հոկտեմբերի 1 - 5 ժամանակամիջոցին²⁴:

Այս բանակցությունների մասին ընդհանուր պատկերացում կազմելու համար, հետաքրքիր է իմանալ, թե ովքե՞ր են եղել Թեորիանոսի հետ վիճաբանողները, նրան հանդիպած անձինք.

1) Հայոց կաթողիկոս ներսես Դ Շնորհալին, որի հետ վիճաբանությունները կազմում են Թեորիանոսի առաջին «Տրամախօսության» ողջ բովանդակությունը:

2) Ասորերեն իմացող մեկը, որը կաթողիկոսի խնդրանքով Հայերեն է թարգմանում Գրիգոր Աստվածաբանի «Յաղագս Որդւոյ, բան երկրորդ» երկից մի հատված²⁵:

22 Նման վկայություններ տե՛ս PG, t. 133, pp. 121C10, 148 D6, 149 C2, 164 C6, 164 C8, 165 A12, 197 D7:

23 ԹՂ, 1871, էջ 153:

24 Ըմտ. Գաև Զեքիեան, Համամիութենական, էջ 56:

25 «Ο δὲ Καθολικὸς προσκαλεσάμενος ἕνα τῶν ἀναγιγνωσκόντων Συριστῆς» (Տե՛ս PG, t. 133, p. 152B6-7, Պատմեան, Պատմութիւն, էջ 215): Այս փաստը ցույց է տալիս, որ Հոռովկայի կաթողիկոսարանի հայ հոգևորականների մեջ կային Գաև ասորերենի գիտակներ:

Գրիգոր Աստվածաբանի այս երկի հայերեն թարգմանությունը ծանոթ է հայագիտությանը (տե՛ս Զարրհանալեան, Մատենադարան, էջ 347, Մուրադյան, Գրիգոր, էջ 79):

3) Գրիգոր եպիսկոպոսը²⁶, որն այս բանակցությունների ժամանակ, ըստ Թեոփրիանոսի, իբր Հայտարարում է, թե ինքը դավանանքով Հուճաղափան է²⁷:

4) Սափիրի եպիսկոպոս Պետրոսը²⁸:

5) Քեսուճի եպիսկոպոս Հովհաննես Ասորի²⁹, իր քահանաների Հետ³⁰:

6) Վարդան վարդապետը³¹:

7) Ստեփանոս վարդապետը³²:

8) Իսահակ եպիսկոպոսը³³:

Սրանք են այն բոլոր անձինք, ում Հետ իր առաջին դեսպանագնացության ընթացքում վիճարանել է Թեոփրիանոսը³⁴:

26 «...ἐπίσκοπος Γρηγόριος, ὁ τοῦ ἴγλωτάτου καθολικοῦ ἀνεψιός» (PG, t. 133, p. 148D): Հետաքրքիր է, թե այս դեսպան ո՞ր Գրիգորին նկատի ունի Թեոփրիանոսը. Տղային, թե՞ Ապիրատին, քանի որ երկուսն էլ Ներսես Շնորհալու ազգականներն էին: Ղ.Ալիշանը (Ալիշան, Շնորհալի, էջ 421) և Մ.Օրմանյանը (Օրմանյան, Ազգապատում, էջ 1423) կարծում են, որ խոսքը վերաբերում է հետագայում կաթողիկոս օծված Գրիգոր Գ Տղային: Բ «Տրամախօսութեան» բնագրում Թեոփրիանոսը ուղղակի գրում է. «ἀπέστειλε πρὸς ἡμᾶς τὸν ἐπίσκοπον Γρηγόριον τὸν ἀνεψιὸν αὐτοῦ τὸν Μικρόν...» («սեղ մոտ ուղարկեց իր արյունակցին՝ Գրիգոր Փոքր եպիսկոպոսին» PG, t. 133, p. 248D5, հմմտ. Պատմեան, Պատմություն, էջ 244):

27 «Ἐγὼ Ῥωμάδος εἶμι» (PG, t. 133, p. 148D3):

28 «ὁ εὐλαβέστατος ἐπίσκοπος Σαπυρίου» (PG, t. 133, p. 1148D6-149B12): Դժվարանում եմ աշխարհագրորեն պատկերացնել այս եպիսկոպոսական թեմի տեղը: Հիմնվելով Ա.Գալանոսի հիշյալ տեղի թարգմանության վրա, Մ.Օրմանյանը ենթադրում է. «Պետրոս եպիսկոպոս Սափիրիայ, հալանաբար Սաիրիայ, այսինքն է Իսաիրիոյ» (Օրմանյան, Ազգապատում, էջ 1423):

29 «ὁ ἐπίσκοπος Κεσσουნიού Ἰωάννης ὁ Σύρος» (PG, t. 133, p. 164C8, 172C1): Ասորական եկեղեցու այս դեսպանագնացի մասին հիշատակում է նաև Միջայել Ասորին (MS, t. III, p. 335):

30 «μετὰ τῶν ἱερῶν αὐτοῦ» (PG, t. 133, p. 172D3):

31 «ὁ δισάσκαλος Βαρταν» (PG, t. 133, p. 165A11, B1): Կղեմես Գալանոսի թարգմանության մեջ. վարդապետն Վրթանես (Վալանես, Միաբանություն, էջ 278, հմմտ. նաև Օրմանյան, Ազգապատում, էջ 1423):

32 «Στέφανος ὁ δισάσκαλος» (PG, t. 133, p. 172D8, 172D10-180A7): Ղ.Ալիշանը այս գործի մասին գրում է. «Ստեփանոս մը՝ որ թո՛ի թարգման է նուիրակ» (Ալիշան, Շնորհալի, էջ 421):

33 «Ὁ εὐλαβέστατος ἐπίσκοπος Ἰσαάκ» (PG, t. 133, p. 180A12): Ղ.Ալիշանը նրա մասին գրում է. «Սահակ եպիսկոպոս, որ թո՛ի կաթողիկոսի Դրան եպիսկոպոսն» (Ալիշան, Շնորհալի, էջ 421):

34 Ղ.Ալիշանը վերոհիշյալ ամձնավորությունների թվին թյուրիմացաբար ավելացնում է նաև Թեոդորոսին. «ուր Միխայել պատրիարքի գիտնական աշակերտն Թեոդորոս ակ եկեր էր» (Տե՛ս Ալիշան, Շնորհալի, էջ 421):

Հետաքրքիր է նաև այն պարագան, որ Թեոդորոս Բար Վահրունը մասնակցել է միայն բանակցությունների հաջորդ փուլին: Իմ իմացած սկզբնաղբյուրներից նրա ա-

Բյուզանդական դեսպանազնացը Հետաքրքիր տեղեկություն է Հաղորդում նաև եկեղեցաքաղաքական այս փոխհարաբերություններում աթոռ-բարձրի բաժանման սկզբունքների մասին: Ըստ Հույն բանագնացի, կաթողիկոսի աջ կողմում նստում էին ասորի եպիսկոպոսը և Հայ եպիսկոպոսները, իսկ իրենք նստում էին բոլորից Հետո, կաթողիկոսի աջ կողմում, քանի որ ամենաառաջին տեղն էր ընծայում նրանց³⁵:

Կարելի է նաև որոշել, թե մոտավորապես ե՞րբ է այս դեսպանախումբը Հասել Կոստանդնուպոլիս: Ներսես Դ Շնորհալու քիչ առաջ Հիշատակված Հավատարմական թուղթը պահպանվել է նաև Հունարեն թարգմանությամբ³⁶: Հետաքրքիր է նաև, որ Հունարեն թարգմանությունը կրում է Հայերենից տարբերվող՝ «μηὶ Δεκεμβρίῳ Ἰνδικτιῶνος τετάρτης»³⁷ թվականը: Այս թվագրումը Համընկնում է 1170 թ. դեկտեմբեր ամսին, որը և կարելի է Համարել Թեորիանոսի գլխավորած դեսպանազնացության Կոստանդնուպոլիս Հասնելու ամիսն ու տարին, քանի որ թղթի Հունարեն տարբերակը, ըստ մեր Համոզման, կրում է մի թվական, որը Համընկնում է Բյուզանդական կայսերական դիվանատանը վավերագրի արձանագրման ժամանակի Հետ:

Առաջին դեսպանազնացության բանակցությունների զրառված բնազրում մի շարք Հատվածներ են բերվում Ներսես Դ Շնորհալու՝ Մանուել Ա Կոմնենոսին ուղղված ինչ-որ թղթից: Մեղ սկզբում թվում էր, թե այդ Հատվածները պետք է փնտրել Սմբատի 1166 թ. դեսպանագնացության Հետ Կոստանդնուպոլիս ուղարկված թղթում³⁸, սակայն պարզվեց, որ այդ Հատվածները 1165 թ. Ալեքս Աբսուլիս դքսին

նույն տալիս է միայն Բար Հերթոսի ժամանակագրության համապատասխան հատվածը (տե՛ս MS, t.III, p. 335): Միջակի Ասորու ժամանակագրության հայերեն բնագիրը գիտե միայն Թեորիանոսի միայն մեկ դեսպանագնացության մասին (տե՛ս ԱԼ, 1870, էջ 460-461, ԱԼ, 1871, էջ 459-460):

35 «Καὶ μεθ' ἡμέρας τινὰς, μετακληθέντες, ἀνέβημεν εἰς τὸ ὑπερφῶν, οὗ καὶ πρῶτην διελεγόμεθα. Εὐρόμεν δὲ τὸν Σύρον ἐπίσκοπον ἐν τῷ δεξιῷ μέρει καθήμενον τοῦ Καθολικοῦ, καὶ τοὺς Ἀρμένιους ἐπίσκοπους ἕκαστον ἐν τῷ τόπῳ αὐτοῦ. Καθεσθέντων οὖν ἡμῶν ἐν τοῖς ἀριστεροῖς μέρεσι τοῦ Καθολικοῦ, κατὰ τὸ σύνθηρες, εἶτα τῶν ἐπισκόπων καθεσθέντων (προετίμων γὰρ ἡμᾶς εἰς τὸ κάθισμα)...» (PG, t.133, p. 165C, Հմմտ. Գաղաթու, Միաբանութիւն, էջ 279, Պատճեն, Պատմութիւն, էջ 223):

36 PG, t. 133, pp. 211 - 224:

37 Նույն տեղում, էջ 213 A:

38 Այս դեսպանագնացության մասին ավելի մանրամասն տե՛ս Բողոք, Բյուզանդիայի, էջ 236 - 242:

Հանձնված ծիսադավանական նամակից են: Բերենք այդ Հատվածները և զուգահեռաբար տեղադրենք Հայերեն բնագիրը.

ԹԸ, 1871, էջ 96

PG, t. 133, p. 124C

Ասեմք մի բնութիւն ի Քրիստոս, ոչ շփոթմամբ ըստ եւտրեբայ, (եւ ոչ նուազութեամբ ըստ Ապաւղի-նարի³⁹ այլ ըստ Կիւրղի Աղէք-սանդրացոյ՝ զոր ի գիրս Պա-րազմանցն ասէ ընդդէմ նետո-րի, եթէ «Մի է բնութիւն Բանին մարմնացելոյ...»

Λέγομεν μίαν φύσιν εἰς τόν Χριστόν, ὁ κατὰ τὸν Εὐτυχέα συγχεόντες, οὔτε κατὰ τὸν Ἀπολινάριον ἐλαττοῦντες, ἀλλὰ κατὰ Κύριλλον τὸν Ἀλεξανδρείας ἐν ὀρθοδοξίᾳ, ἅτινα ἔγραψεν ἐν τῇ βίβλῳ κατὰ Νεστορίου, ὅτι μία ἐστὶν ἡ φύσιν τοῦ Λόγου σεσαρκωμένη.

ԹԸ, 1871, էջ 90

PG, t. 133, p. 181B11

...յարգանդի Կուսին, բնակելով ի նմա իննամսեան ժամանակաւ՝ Հինգ յաւելիալ աւուրրք...

Ἐσκήνωσεν ἐν τῇ γαστρὶ τῆς Παρθένου ἑννέα μηνῶν χρόνον, καὶ πέντε ἡμερῶν

39 Փակագծի մեջ դրված հատվածը չի պահպանվել ՊԽՄ-ի ընդօրինակություններում, ավելյան այն թեորհանոսի ավելացրածը չէ, որովհետև Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութեան», բնագրում և այս թուղթը պարունակող երկու այլ ընդօրինակություններում պահպանվել է այս հատվածի հայերեն տարբերակը «եւ ոչ նուազութեամբ՝ ըստ Ապաւղիճարի», ձևակերպումով (տե՛ս Կիրակոս, էջ 133): ՊԽՄ-ի մեր կազմած գիտական բնագրում նմանատիպ բազմաթիվ հատվածներ են վերականգնված:

...քանզի Մննդեանն եւ Մկրտութեան ի միասին տաւնելոյ՝ քաղուս ունիմք վկայութիւն: Նախ՝ զի յառաջագոյն ամենայն եկեղեցիք սկսեալք յԱռաքելոցն այնպէս տաւնէին... Դարձեալ՝ զի եւ աւետարանիչն Ղուկաս վկայէ այսոցիկ ճշմարիտ լինել: Քանզի պատմէ ի տաւնի քառութեանն՝ որ էր ի Թշրին տասն, եւ Սեպտեմբերի քսան եւ եւթն, մտանել քահանայապետին Չաքարիայ ի տաճարն եւ արհանել խուռիկ, եւ տեսանել զտեսիլ Հրեշտակին...

Πλήν διὰ τὸ τὴν Γέννησιν καὶ τὸ Βάπτισμα ἐφάπαξ ἑορτάσαι, πολλὰς ἔχομεν μαρτυρέας. Πρῶτον μὲν πᾶσαι αἱ Ἐκκλησίαι ὅπως ἐώρταζον, ἀρξάμεναι ἀπὸ τῶν ἀποστόλων. Δεύτερον δὲ λόγον, ὅτι ὁ εὐαγγελιστὴς Λουκᾶς τοῦτο μαρτυρεῖ. Διηγῆται γὰρ ἐν τῇ ἑορτῇ τοῦ ἰλασμοῦ, ἣτις ἐστὶ τῷ μηνὶ Τισρὸν τῇ δεκάτῃ, ἣτις ἐστὶ Σεπτεμβρίου κζ', ἐν ᾗ εἰσῆλθεν ὁ ἀρχιερεὺς Σαχαρίας ἐν τῷ ναῷ, καὶ ἐθυμίασε, καὶ εἶδε τὴν ὄρασιν τοῦ ἀγγέλου

Դարձեալ՝ գրեալ էր ի գիրս, ի բուսաբեր ձիթոյ՝ զոր շուշմայ անուանեն, լինել միւռոսի մերոյ եւ ոչ ի ծառոց ձիթենեաց: Եւ այս յիրաւի, եւ պատճառն ոչ այլ ինչ, այլ զի ի Հայաստանեայց աշխարհն ոչ են ձիթենիք վասն ցրտութեան օդոցն, Հարկ եղև զայն ինչ ձէթ՝ որ գիւտ է յաշխարհն, ի նիւթ անուռ միւռոսի, եւ ոչ ինչ վընաս հոգեւոր տեսանի յայսուսիկ:

Քάλιν διηγόρευεν ἡ Γραφή ἀπὸ τῶν ἐλαιῶν τῶν λαχάνων, ὅπερ σήσαμον ὀνομάζουσι, γίνεσθαι τὸ μύρον ἡμῶν καὶ οὐχὶ ἀπὸ δένδρων ἐλαιῶν. Καὶ τοῦτο ἐν ἀληθεία ἐστίν. Ἔστι δὲ ἡ αἰτία τοιαύτη, ὅτι εἰς τὴν χώραν τῶν Ἀρμενίων οὐκ εἰσὶν ἐλαιῶνες, διὰ τὸ ψυχρὸν τῆς χώρας τοῦ ἀέρος· καὶ ἀνάγκη κρόκειται, τὸ ἔλαιον ἐκεῖνο, ὅπερ εὐρίσκεται εἰς τὴν χώραν, εἰς χρῆσιν τοῦ μύρου λαμβάνειν, καὶ οὐ συνεῖδον σφάλμα πνευματικὸν ἐν τούτῳ.

Որպէս և արեանն Քրիստոսի
սի նիւթ գինին, յորոց եւ իցէ
գունոց՝ ընդունելի է, եթէ սեաւ՝
եթէ կարմիր և եթէ սպիտակ:

Ὡσπερ γὰρ τοῦ αἵματος τοῦ
Χριστοῦ ὁ οἶνος ἐστὶν ὕλη, καὶ
οἶας ἐστὶ χροιάς, ἀποδεκτέος
ἐστὶ, καὶ μέλας, καὶ ἐρυθρός
ἐστὶ, καὶ λευκός· ἐπειδὴ ἡ
λειτουργία ἀγιάζει αὐτὸν, καὶ
γίνεται αἷμα Χριστοῦ

Հետևապես, Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» բնա-
գիրը Հիմնականում նվիրված է Քրիստոսի բնության և Ներսես Դ
Շնորհալու «Գիր Հաւատոյ խոստովանութեան» թղթում տեղ գտած
ծիսադավանական խնդիրների քննարկմանը:

Ինչպես վերևում նշեցինք, իր առաջին «Տրամախօսութեան»
սկզբում Թեորիանոսը բերել է Մանուել Ա Կոմնենոսի 1169 թ. նոյեմ-
բերին գրված թղթի բնագիրը⁴⁰: Թեորիանոսի առաջին դեսպանագնա-
ցության Հեա Կոստանդնուպոլիս ուղարկված Ներսես Դ Շնորհալու
Մանուել Ա-ին ուղղված պաշտոնական թղթի բնագրի Հունարեն
թարգմանությունը Հրատարակված է երկրորդ «Տրամախօսութեան»
սկզբում⁴¹: Մեղ չի Հասել Հայոց կաթողիկոսի գաղտնի թուղթը, որի
մասին խոսվում է Թեորիանոսի երկրորդ «Տրամախօսութեան» բնագ-
րում⁴²:

Բ) Թեորիանոսի երկրորդ դեսպանագնացության «Տրամախօսութիւնների» բնագիրը

Թեորիանոսի չլիսավորած երկրորդ դեսպանախուժքը Հոսմկլա է
Հասել աշխարհի արարչագործության բյուզանդական ՏՄՄ (= 6680)
թվականին, Մանուել Ա Կոմնենոսի թագավորության 30-րդ, նրա որ-
դի՝ Ալեքս Բ Կոմնենոսի ծննդյան երկրորդ տարվա երրորդ ամսին,

40 Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս PG, t. 133, p. 120 - 121: ՊԽՄ-ի բնագրում
մեզ հասած այս վավերագիրը ազատ թարգմանություն է, ուր տեղ-տեղ շեղումներ կան
հունարեն բնագրի իմաստից (հմմտ. ԹԸ, 1871, էջ 144 - 145):

41 Տե՛ս ԹԸ, 1871, էջ 145 - 153, հմմտ. PG, t. 133, p. 212 - 224: Այս վավերագրի երկու
(հայերեն և հունարեն) բնագրերի հիմնական տարբերության մասին տե՛ս Ճև
գուսան, Բյուզանդիայի, էջ 244 - 245:

42 Տե՛ս PG, t. 133, p. 248 C1-4:

Հինգերորդ ինդիքսիոնի երկրորդ ամսվա 20-ին⁴³: Ամենայն Հավանա-
կանությամբ երկրորդ դեպանազնացությունը իր նպատակակետ՝
Հռոմկա բերդաքաղաքին է հասել 1171 թ. Հոկտեմբերի 20-ին: Այս
այցելության ժամանակ բյուզանդական աստվածաբանը Հռոմկա է
բերել չորս փաստաթուղթ: Դրանցից առաջինը Ներսես Շնորհալու մեղ
չհասած գաղտնի թղթի պատասխան՝ Մանուել Ա Կոմնենոսի գաղտնի
թուղթն է⁴⁴, որը թվագրված է չորրորդ ինդիքսիոնի միևնույն ամսով
(Τῷ μῆνι αὐτῷ Ἰνδ. 5'): Այժմ անհնար է ճշտել այս նամակի գրման
ստույգ ամսաթիվը⁴⁵: Ըստ Հ. Լևոն Զեքիյանի փաստաթուղթը գրված
պետք է լինի 1171 թ. օգոստոսի 31-ից առաջ: Թերոհանոսի երկրորդ
«Տրամախօսութեան» մեջ պահպանվել է նաև Մանուել Ա Կոմնենոսի
պաշտոնական նամակի ընդօրինակությունը⁴⁶: Ափսոս, սակայն, որ
Հունարեն բնագրի թղթառաջքը և թղթավարտը բացակայում են:
Դրանք կարող են լրացվել միայն ՊևՄ-ում պահպանված Հայերեն
թարգմանությամբ, որը կրում է թուղթը Հռոմկայի կաթողիկոսական
նոտարատանը արձանագրվելու թվականը. «Գրեցաւ յամսեանն Դեկ-

43 PG, t. 133, pp. 232 - 233: Աշխարհի արարչագործության բյուզանդական 6680 թ. համապատասխանում է Քրիստոսից հետո 1171 թ. սեպտեմբերի 1 - 1172թ. օգոստոսի 31 ժամանակահատվածին: Մանուել Ա Կոմենոսի իշխանության 30 -րդ տարին հա-
մապատասխանում է 1172/3 թվականին, Ալեքս Բ Կոմենոսը ըստ բյուզանդագետ Պ.
Վիրտի ծնվել է 1169 թ. սեպտեմբերի 14-ին (տե՛ս Wirth, Wann, S. 65 - 67) թեպետ
Կուստանդին Բարձուր Ալեքս Բ-ի ծննդյան թվականը դեռևս ճշտված չի համարում և
գրականության ու սկզբնաղբյուրների վրա հենվելով նրա ծնունդը թվագրում է 1169
կամ 1168 թ. սեպտեմբերի 14-ով (տե՛ս Barzos, Genealogia, Τομος Β', σ. 454): Մեր
ձեռքի տակ եղած տոմարական վկայությունը թույլ է տալիս ընտրել Պ. Վիրտի տար-
բերակը: Ելնելով այս հաշվարկից, Ալեքս Բ-ի ծննդյան երկրորդ տարվա երրորդ ա-
միսը համապատասխանում է 1171թ. հոկտեմբերին: Մեր բնագրում խոսքը ամենայն
հավանականությամբ վերաբերում է Ալեքս Բ Կոմենոսի ծննդյանը և ոչ թե թագա-
դրությանը, որը տեղի է ունեցել 1171թ. (տե՛ս Barzos, Genealogia, հտ. Բ, էջ 456):
Հիմներորդ ինդիքսիոնի երկրորդ ամսվա 20-ը համընկնում է 1171 թ. հոկտեմբերի 20-
ին (տոմարական այս հաշվումների համար հմտ. նաև Չեքեան, Համամիութենական,
էջ 15, 56 - 57):

Վերոբերյալ բոլոր տոմարական հաշվարկները համապատասխանում են միմյանց,
բացի Մանուել Ա Կոմենոսի իշխանության 30-րդ տարվանից, որը հավանաբար
գրիչների կամ Թերոհանոսի սխալ հաշվարկի հետևանքն է:

44 Նշված երկու գաղտնի անվանված վավերագրերի հայերեն բնագրերը չեն հասել մեզ:
Հունարենով չի պահպանվել նաև Ներսես Ընդրհայու գաղտնի թղթի բնագիրը. տե՛ս
PG, t. 133, pp. 233 - 236, հմտ. Պալանեան, Պատմութիւն, էջ 237 - 238:

45 Վ.Գրյունեյլը և Գրան հետևելով Լևոն Զեքիյանը ենթադրում են, որ «մեւույն ամիսը»,
բացատրությունը վերաբերում է պաշտոնական նամակի թվագրությանը, որը մեզ
հասած վավերագրերում չի պահպանվել (տե՛ս Grumel, La Chronologie, էջ 153, հմտ.
Չեքեան, Համամիութենական, էջ 56):

46 Տե՛ս PG, t. 133, p. 236, հմտ. ԹԼ, 1871, էջ 154 - 156:

տեմբերի, յԸնդիքտիոնին ի Հինգն»⁴⁷: Նշանակում է, այս վավերագիրը Հռոմկլայտում թարգմանվել և ապա կաթողիկոսական նոտարատուն է մտել 1171 թ. դեկտեմբեր ամսին⁴⁸: Թղթի Հայերեն թարգմանությամբ պահպանված թղթառաջը գրեթե բառացիորեն կրկնում է կայսեր գաղտնի նամակի թղթառաջը՝ միայն մեկ էական շեղումով. Հայերեն թարգմանութեան մէջ բացակայում է աւգոստոս - ΑΥΓΟΥΣΤΟΣ պատվանունը, որը թարգմանչի կամ նոտարատան գրչի անփութության հետևանքով ընկել է բնագրից:

Հաջորդ վավերագիրը, որը պահպանվել է Թեորիանոսի երկրորդ «Տրամախոսութեան» մեջ, Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակն է, ուղղված Հայոց կաթողիկոսին⁴⁹: «Տրամախոսութեան» մեջ այն մտել է առանց թղթառաջ բանաձևի, որը պահպանվել է միայն Հայերեն տարբերակով:

Թեորիանոսի երկրորդ «Տրամախոսության» բնագրում պահպանվել է ևս մեկ վավերագիր՝ Բյուզանդական եկեղեցու անունից Մանուել Ա Կոմնենոսի ինը պահանջները⁵⁰:

Այսպիսով, հունարեն լեզվով պահպանվել են 1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների հետևյալ վավերագրերի բնագրերը.

ա) Հատվածներ 1165 թ. Ալեքս Աքսուլիին Հասցեագրված թղթից (N^o 2),

բ) 1169 թ. նոյեմբերին գրված Մանուել Ա Կոմնենոսի թուղթը՝ ուղղված Հայոց կաթողիկոս Ներսես Դ Շնորհալու, որը մեզ է հասել նաև Հայերեն թարգմանությամբ (N^o 7),

գ) 1170 թ. հոկտեմբերին Ներսես Դ Շնորհալու գրած թղթի Հունարեն թարգմանությունը (N^o 8),

դ) 1171 թ. ամռանը կայսեր անունից պատրիարքի գրած նամակը (N^o 10),

ե) Մանուել Ա Կոմնենոսի գաղտնի թուղթը՝ գրված Հավանաբար 1171 թ. ամռանը (N^o 11),

զ) Նույն թվականին գրված կայսեր պաշտոնական նամակը, որն ունի նաև Հայերեն թարգմանություն (N^o 12),

47 ԹԸ, 1871, էջ 156:

48 Տե՛ս Ձեփեան, Համամիութեանական, էջ 57:

49 Տե՛ս PG, t. 133, p. 236 - 240: Այս Գամակի հայերեն թարգմանությունը տեղ է գտել Գաև ՊիսՄ ժողովածոյի մեջ (տե՛ս ԹԸ, 1871, էջ 157 - 159):

50 Տե՛ս PG, t. 133, p. 269, հմմտ. ԹԸ, 1871, էջ 156 - 157: Հունարեն բնագիրը կետերի բաժանված չէ: Հայերեն բնագրում է և 9 կետերի տեղերը փոխված են:

է) Նույն ժամանակ գրված Միքայել Գ Անքիալոսի նամակն ուղղված Ներսես Դ Շնորհալուսն: Այս նամակը ևս Հայերեն թարգմանությամբ պահպանվել է ՊԽՄ ժողովածոյում (№ 13),

ը) Բյուզանդական եկեղեցու ծիսադավանաբանական ինը պահանջները, որոնք պահպանվել են նաև ճշգրիտ Հայերեն թարգմանությամբ (№ 14):

★

★ ★

Թեորիանոսի «Տրամախոսութիւն»-ներում հիշատակված կամ քաղվածքներ են բերված Աստվածաշնչից և եկեղեցու ս. Հայրերի բազմաթիվ գրվածքներից: Անհրաժեշտ նկատեցինք բերել վիճաբանությունների ընթացքում հղված հեղինակների ցանկը ըստ PG, t. 133-ի էջակալման, ինչպես նաև Նիկիայի և Քաղկեդոնի ժողովին վերաբերող Հատվածների էջերը.

Աթանաս - 125A, 136A4, 136A13, 136C11, 161A12, 161C9, 161D9, 164A4, 168B2, 169A5, 169B2, 185D6, 188A4, 188D9

Ամբրոսիոս - 144C5, 144C12, 144D2, 153D9, 160B4, 164C2

Բարսեղ - 129D7, 132A10, 132D2, 144A1, 144A9, 144B13,

Գրիգոր Նազիանզացի - 133B3, 140D7, 142A5, 141C14, 148B4, 148B11, 152A9, 153D4, 165D13, 175B3,

Գրիգոր Նյուսացի - 141C15, 153D14,

Դիոնիսիոս Արեոպագացի - 192C6

Եպիփան Կիպրացի - 185A5, 188B3, 189A2, 189C2,

Կյուրեղ Աղեքսանդրացի - 124C-D, 125A, 137B9, C3, 10, D2, 5, 140A4, B10, C10, 141A14, 145D3, 149A1, 6, C8, D9, 152C13, D9, 153A4, 160A9, D13, 164A, 165D12, 168A8, 181A10, 200A14, B3, 9, D1, 201A1, 10, 14, B4, 15, C6, D4, 7, 204A3, 11, B4.

Հովհաննես Հայոց կաթողիկոս - 208B2, 209B4

Հովսեփ Փլաբիոս - 185A

Հովհաննես Ոսկեբերան - 145B3, 156A3, 181D9, 184D15, 188C4, 189A3,

Հուստինոս - 145B12

Նիկիայի ժողով - 193B12

Քաղկեդոնի ժողով - 164C6, 196A6-205D15.

★

★ ★

Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» մեջ առնչվում ենք մի այլ աղբյուրագիտական խնդրի ևս: Այդ բանակցությունների ավարտին Ենորհալին դիմում է բյուզանդական դեսպանագնացին, իբրև թե նրան հայտնելով մի գաղտնիք (Νυνὶ δὲ σοι καὶ τι τῶν μέχρι τοῦ νῦν ἀπορρήτων ἀποκαλύψω)⁵¹:

Ըստ Թեորիանոսի «Տրամախօսութեան», հիշյալ երկի հեղինակ կաթողիկոսն ապրել է երկու հարյուր տարի առաջ (այսինքն՝ Ժ դարում), որը հավանաբար Թեորիանոսի կամ զրչազրի սխալ կարելի է համարել: Հետաքրքիր է, որ Հովհաննես կաթողիկոսի երկի մասին Հիշատակվում է նաև Գրիգոր Տղայի մի շարք թղթերում⁵²:

Արդեն անցյալ դարի սկզբներին Վենետիկի մխիթարյան բանասեր Մկրտիչ Ավգերյանը կարողացել է գտնել այն երկը, որը նկատի է ունեցել Թեորիանոսը: Դա Հովհաննես Իմաստասեր Օձնեցու «Ընդդէմ երեւութականաց» ճառն է: Հայր Մկրտիչ Ավգերյանի բնագրական նույնացումը ճշգրիտ է, քանի որ մխիթարյան բաղամահմուտ գիտնականը հայտնաբերել է մեզ հետաքրքրող ճառի այդ ձեռագրի 1298 թ. ընդօրինակությունը, որի մասին ակնարկում է Թեորիանոս մազիստրոսը իր «Տրամախօսութեան» բնագրում: Ըստ նրա մեջբերած Ներսես Ենորհալու ուղղակի խոսքի, այս երկի ձեռագիրը պատկանել է երանելի Գրիգոր կաթողիկոսին, որն այդ ճառի վերջում գրել է. «Οὕτω πιστεύω κα' γῶ, ὡς ὁ ἀγιώτατος Καθολικὸς Ἰωάννης»⁵³: Փարիզյան այն ձեռագրում, որից ճառը հրատարակել է Հ.Մ.Ավգերյանը ընթերցում ենք. «Այս է գիրք կտակի ուղղափառութեան հօր մերոյ սրբոյն Յովհաննու կաթողիկոսի Հայոց և իմաստասիրի Օձնեցոյ: Եւ ես Գրիգորիս նուստս՝ նորին հաւատոյ...»⁵⁴:

Թեորիանոսի առաջին «Διάλξεις»-ի վերջում պատմվում է, որ Ներսես Դ Ենորհալին Հայոց դավանանքի ուղղափառությունը հաստատելու նպատակով բյուզանդական բանագնացին է հանձնում Հայոց կաթողիկոս Հովհաննեսի մի երկը և ասում. «Յառաջ քան զամս երկերիւր եկաց կաթողիկոս ոմն Հայոց, անուն նորա Յովհաննէս, վարուքն եւ վարդապետութեամբն զոյդ հաւասար մեծաց եւ սրբոց Հարց,

51 PG, t. 133, p. 203, Պաղճեան, Պատմութիւն, էջ 232՝

52 Տե՛ս ԹԸ, 1871, էջ 191, Տեր-Միքիլեան, Միշիկ, էջ 44-45. :

53 Տե՛ս PG, t. 133, p. 208, Պաղճեան, Պատմութիւն, էջ 234:

54 Թովմագմ, էջ 70:

բանիրուն յամենայն արտաքին զիտութիւնս, եւ յուսմունս փրկիսօրիս-
 յականս ոչ դուրնաքեայ որ, երկնաւոր քաղաքաւարութեամբ գեր ի վե-
 ռոյ երեւեալ բազմաց՝ ոչ գիտեմ թէ ամենեցուն իսկ, ամբարձաւ յայս
 աստիճան եւ յաթու Հայրապետութեանս վասն իւրոյ զիտութեան եւ
 վարուցն արժանեաց: Սա՛ լցեալ աստուածեղէն նախանձու՝ ընդդէմ
 միաբնեայց մաքառէր, բախէր անդադար եւ Հարկաներ զնոսա ան-
 Հնարին Հարուածովք զամենայն աւուրս կախիկոպոսութեան իւրոյ, ե-
 թէ բանիւք եւ եթէ գրով: յիշատակ նորա սուրբ՝ պատուի ի մէնջ յար-
 գութեամբ: Սորա ճառ մի գտանի առ իս գրեալ ընդդէմ միաբնեայց, լի
 բազում վկայութեամբք գրոց, Հնարիւք, եւ զօրաւոր ձեռնարկութեամբք
 եւ բազում խելամտութեամբ: Զսմանէ եւ Գրիգոր կաթողիկոս, որոյ
 երանելի է յիշատակ անուանն եւ պայծառանայր յառաջ քան զմեզ
 յաթուս յայս, զսոյն Հաստատէր, մինչեւ ի վերջ մատենին գրել զբանս
 զայսոսիկ. «Այսպէս եւ ես Հաւատամ, որպէս սուրբ Կաթողիկոսն
 Յովհաննէս գրէ, եւ որք ոչ այսպէս Հաւատասցեն, նդովեմ»⁵⁵: Ըստ
 «Տրամախօսութեան» Հիշատակված կաթողիկոսը ապրել է երկու գար
 առաջ (Πρὸ διακοσίων ἐτών), այսինքն՝ Ժ դարի ընթացքում⁵⁶:

Գրիգոր Դ Տղայի երկու թղթերում (N⁹N⁰ 21, 24) եւ վկայություն
 է պահպանվել այն մասին, որ Հայոց կաթողիկոսը Բյուզանդական
 կայսրին է ուղարկում Հովհաննէս կաթողիկոսի երկը.

55 Պաիճեան, Պատմութիւն, էջ 233, հաս. PG, t. 133, p. 208 B2-C11. («Πρὸ διακοσίων
 ἐτῶν ἐγένετό τις Καθολικός τῶν Ἀρμενίων ᾧ ὄνομα Ἰωάννης, βίβη καὶ λόγῳ
 τοῖς μεγάλαις Πατράσιν ἡµλλημένος, παιδείας τε τῆς ἕξω πάσης, καὶ δὲ καὶ
 αὐτῆς φιλοσοφίας· οὐκ ἀκροθινῶς ἤφατο· βίβη δὲ ἐνθέῳ οὐκ οἶδα εἰ πάντας
 τοὺς πλείστους τῶς ὑπερηκόντισεν· ὅς διὰ τε τὸν λόγον, τοῦ θεοῦ τούτου
 βαθμοῦ καὶ τοῦ θρόνου, τῶν καθολικῶν λέγων, ἤξιώτο. Οὗτος ζήλου θεοῦ
 πλησθεὶς, κατὰ τῶν Μονοφυσιτῶν ἄρμητο· καὶ δὴ γραφαῖς, καὶ γλώττῃ τούτου
 κατατραυματίζειν, τὸν ὄλον τῆς ἐπισκοπῆς αὐτοῦ χρόνον σχεδὸν οὐκ
 ἐπαύσατο. Οὐ τὴν θεῖαν μνήμην ἐντίμως καὶ θεοσεβῶς ἑορτάζομεν. Τούτου τοῦ
 θεοῦ καὶ μακαρίου ἀνδρός ἐστὶ παρ' ἐμοὶ συγγραφή, ἣν κατὰ τῶν
 Μονοφυσιτῶν συνεγράψατο, πολλὰς γραφικὰς μαρτυρίας, καὶ ἐνθυμήμας, καὶ
 συλλογισμοὺς ἰσχυροῖς, καὶ κοιναῖς ἐννοίαις καὶ ἀποδείξεσιν ἐμπεπυκνωμένην.
 Ταύτην ὁ ἐν μακαρίᾳ τῇ μνήμῃ ὀλίγον πρὸ ἐμοῦ τῷ θρόνῳ διατρέψας
 Γρηγόριος ὁ Καθολικὸς ἐπεκύρωσε, γράψας πρὸς τῷ τέλει αὐτῆς, ὅτι Οὕτω
 πιστεύω κάγω, ὡς ὁ ἀγιώτατος Καθολικὸς Ἰωάννης ἐνταυθοῖ γέγραφε, καὶ
 τοὺς μὴ οὕτω πιστεύοντας ἀναθεματίζει. Καὶ εἰ κελύεις, ἀγαγνώσομεν ἐκ
 ταύτης ὀλίγον, ἵνα γινῶς τὸν ἄνδρα, ὡς ἐξ ὀνύξων τὸν λέοντα»).

56 Մեկնակետ պետք է ընդունել Թեոդիանոսի առջին դեսպանագնացությունը, որը տեղի է ունեցել 1169–1170թթ.

...ձայնակից և երգակից եմք ձեզ և ամենայն ուղղափառ ազգաց քրիստոնէից: Զի ի Քրիստոս Յիսուս չիք խտիր, ասաց Պաւղոս⁵⁷. ոչ հրեա և ոչ յոյն և ոչ արմին, այլ ամենեքեան մի եմք ի Քրիստոս Յիսուս, զորոյ կատարելութիւն իրացդ ունի տեղեկանալ ս. թագաւորութիւնդ ձեր, և ի Հնադիր Հաւատարան գրոյգ. զոր գըրեաց ոմն ի մերոց Հարցն Յովհաննէս արժանաւորութեամբ ըստ բերան աւուրցն և պատերազմէր ընդ ոմն մեր, ասէր տգէտ և աղանդաւոր, և յաղթեալ աստուածայնովք բանիւք, որպէս և այլ սուրբք ընդ իւրեանց պատահեալսն, յորոց չեմք տեղեակք. զոր աղաչեմք ճշգրտիւ ի Հաւատարիմ թարգմանչէ Հասու լինել ամենայնին առանց թերութեան և այդ ի տեղեկանալ զմերս ճըշմարիտ Համարձակութիւն ուղղափառ Հաւատոյ:

Հայազիտության մեջ տարբեր կարծիքերեն Հայտնվել, թե ո՞ր մատենագրական երկը նկատի ունեն թեորիանոսի «Տրամախօսութիւնը» և Գրիգոր Դ Տղայի երկու թղթերը:

Սկսած Վենետիկյան Մխիթարյանների առաջնորդ Հ.Մկրտիչ Ավգերյանի ժամանակներից

Իսկ զեւս Հաւատարմութիւն դաւանութեան մերոյ ընդարձակ բանիւ ունի տեղեկանալ թագաւորութիւն ձեր ի Հոգեշունչ բանէ Հաւրդ մերոյ Յովհաննու կաթողիկոսի, զոր կարևոր Համարեցաք առաքել առաջի ձեր առ ի դիտել Հաստատութեամբ, թէ ոչ նորոգ եմուտ ի մեզ ուղղափառութիւնս, այլ ի Հարցն առաջնոց իջանէ, որում ոչ եղեալ ուշ թշնամիքն՝ զրպարտեն զմեզ յաՀուր և անպատկառ բարբառաւք:

Եւ արդ՝ աղաչեմք ճշգրիտ և Հաւատարիմ թարգմանութեամբ լըսել. և այդու տեղեկանալ զմեր և ձեր Համաձայնութիւնս միմեանց յուղղափառ Հաւատոս:

Թեորիանոսի առաջին «ΔΙΔΑΧΕΙΣ»-ի բնագիրը վաղուց ի վեր գրավել է կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչներին ուշադրությունը⁵⁸: Նախ, ինչպես ասացինք, Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» բնագիրը Հայերեն է թարգմանել քարոզիչ Կղեմես Գալանոսը⁵⁹: Այս թարգմանությունը կա նաև Հատվածական ձեռագրական ընդօրինակությամբ⁶⁰: ՄՄ-912 մատյանն ընդօրինակվել է Կոստանդնուպոլսում Ստեփանոս Ղուկասյան գրչի կողմից⁶¹, Իսահակ Գեղամացի վարդապետի պատվերով: Ձեռագրին կցված է առաջաբան, ուր Հուլյն փրկիստոփան մեղադրվում է կեղծարարության մեջ⁶²: Առաջաբանի Հեղինակը, ամենայն Հավանականությամբ, Իսահակ Գեղամացի վարդապետն է: Այդ է վկայում առաջաբանի Հետևյալ Հատվածը. «Եւ վասն

58 Հունարեն բնագրի և լատիներեն թարգմանության հրատարակությունների մատենագիտությունը տե՛ս Ձեռքեան, Համամիութենական. էջ 11-12, ծան. 5:

59 Գալանոս, Միաբանութիւն, էջ 242-322:

60 Գալանոսի երկի համապատասխան հատվածը ընդօրինակված է ԵՅՄ-858 (1677-1679թթ.), ՄՄ-1784 (ԺԼ: դար), ՄՄ-664 (1723թ.), ԵՅՄ-641 (1779 թ.), Չմմառ-156, ՄՄ-8044 (1780թ.), ՄՄ-912 (1784/5թ.): Լ.Ձեռիյանին ծանոթ են այս ձեռագրերից միայն երկուսը (Տե՛ս Ձեռքեան, Համամիութենական, էջ 12, ծան. 5): Ինչպես տեսնում ենք, Թեորիանոսի «Տրամախօսությունների» բնագիրն առաջին անգամ հայերեն ձեռագրերում ընդօրինակվել է Կղեմես Գալանոսի հրատարակությունից քսանյոթ տարի հետո: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ձեռագրերից և ոչ մեկում չի հիշատակվում թարգմանության հեղինակը. «Թարգմանեցեալ եղև ի Հելլենական լեզուէ ի Հայկական բարբառ, յումեմնէ բանասիրէ, Յամի տեսուն 1648. մայիսի ԺԷ»:

61 Այս նույն գրչի գործունեության արգասիքն է նաև ԵՅՄ-641 մատյանը: Այս երկու ձեռագրերում Թեորիանոսի առաջին «Տրամախօսությունների» հետ միասին ընդօրինակված են նաև Ներսես Շնորհալու Թուղթ ընդհանրականը, ՊլոՍ Ժողովածուն և ԺԲ դարի մի շարք թղթեր:

62 Թեորիանոսի Տրամախօսությունների դեմ գրված սույն առաջաբանը հեղեղված է «լի է ստութեամբ», «սուտ է ուրեմն», «ստաբան Թեորիանէ» և նմանաբնույթ այլ արտահայտություններով: Իսահակ Գեղամացին մեղադրում է Թեորիանոսին հիմնականում երկու անճշտության մեջ.

ա) «...զի զորս (Տրամախօսության մեջ-Ա.Բ.) մերձ ի վախճանն բանիցն և յայլ հարցմունսն ասէ զարքոյն Ներսիսէ՛ թէ հաւանեցաւ բանիցս և վկայութեանցս, և յանձըն էառ երկու բնութիւն ասել ի Բրիստոս՝ յետ անճառ միաորոշեանն, յայտնապէս սուտ ասէ զմնանէ և զրաբանէ: Քանզի բանք և դասությունք և թուղթք նորին որք յայսմ գրքոջ և յայլ գիրս իւր գնոյն ցուցանեն զոր նա ստութեամբ գրէ, զի ոչ ուրեք ի բանն սրբոյն գտանի ինչ այնպիսի ասացեալ, այլ մանաւանդ ներհակն նմին» (ՄՄ-912, էջ 185ա):

բ) «Տե՛ս ահա, զի Միխայլ պատրիարքն գրէ թէ խօսեցաւ ընդ մնա աշակերտն իմ, և պապանձեցոյց, նա (Թեորիանոսը-Ա.Բ.) գրէթէ Ասորոց եպիսկոպոսն ոչ ինչ խօսեցաւ: Ահա յայտնի ստութիւն երկի անուանեալ իմաստնոյն» (ՄՄ-912, էջ 185բ):

Նկատելի է, որ ԺԸ դարի հեղինակն Թեորիանոսի տեղեկությունները համեմատում է իրեն հայտնի մյուս մատենագրական երկերի հետ:

այսպիսւոյ ստուծեան բանից նորին, այն էր թէպէտ վայելուէ զի
այրէի զանկեալն ի ձեռս՝ քան թէ ստանայի, այլ զի բազումք ունին
դսս ի մերազնեաց Հերձուածողաց, զոր իբրև զբան ճշմարիտ զսուտն
զայն կարծելով՝ պայքարին ընդ մեզ նովաւ, որով և զպարզամիտսն
մեր խարին: Վասնորոյ Հարկաւոր գիտացի զսս ունիցին, ընթերցեալ
գիտասցուք զի՞նչ ժայթքեալն ի նմանէ, և ըստ այնմ զքարինս Աս-
տուածայնոց բանից պատրաստեալ՝ ըստ Դաւթի ճակատս նմանեացն
Գողիաթու, նախատողացն զժողովս մեր ուղղափառ և միաբնադա-
ւան»⁶³: Իսահակ Գեղամացին կազմել է տվել այս ձեռագիր ժողովա-
ծուն՝ ցույց տալու համար Ներսես Ենորհալու մասին Թեորիանոսի
վկայութիւնները եղծվածութիւնը. «Քանզի բանք և զաւանութիւնք
և թուղթք նորին որք յայսմ գրքոջ և յայլ զիրս իւր, որ զնոյն ցուցա-
նեն, զոր նա ստուծեամբ գրէ, այլ մանաւանդ ներհակն նմին»⁶⁴:

Իսահակ Գեղամացու և ընդհանրապես ԺԸ դարի Հայոց եկեղեցու
և Հասարակական տարբեր հոսանքների շահագրգռութիւնների
տեսանկյունից չափազանց կարևոր է նաև պատվիրատուի հիշա-
տակարանը, որտեղ հեղինակն ավելի է կոնկրետացնում, թե ինչու՞ է
իրեն պետք հենց այս գրութիւնը. «զի բազումք ի մերազնեայ Հեր-
ձուածողաց, որք կոչին Ախթարմայք, ստացեալ են զսս, և չարամտու-
թեամբ ծեքեն և թիւրեն ըստ ախորժակաց իւրեանց զբանս և զդաւա-
նութիւնս երանելոյն Ներսիսի Կլայեցոյ»⁶⁵:

Փաստորեն այս մատյանը Թեորիանոսի և ՊԽՄ-ի վավերագրերի
բնագրերի ուսումնասիրութիւնն առաջին փորձն է հայ բանասիրու-
թիւնն մեջ:

63 ՄՄ-912, էջ 185բ:

64 ՄՄ-912, էջ 185ա:

65 ՄՄ-912, էջ 210ա:

ԳԼՈՒՆ ԵՐՐՈՐԴ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՆ ՈՒ
ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Միութենական բանակցություններին մասնակցող կողմերը. ԺԲ դարի երկրորդ կեսի տարբեր քրիստոնեական եկեղեցիների միջև տեղի ունեցող բանակցությունների մեջ առանձնանում են 1165-1178 թթ. Հայ-բյուզանդական երկկողմ փոխհարաբերությունները: Նույն ժամանակաշրջանում Բյուզանդական արքունիքը և եկեղեցին երբեմն առանձին-առանձին բանակցում էին Հռոմի պապական¹ և Հակոբեկ-ասորական² եկեղեցիների հոգևոր առաջնորդների հետ, սակայն Կոստանդնուպոլսի կայսրն ու պատրիարքը ջանում էին չմիահյուսել բոլոր այս երկխոսությունները: Նման դիրքը բխում էր Բյուզանդական կայսրության ներքին և արտաքին քաղաքականությունից և հույներից ու շահերից. Կոստանդնուպոլսի հոգևոր և քաղաքական գործիչները ոչ թե փորձում էին միասնություն ստեղծել քրիստոնեական եկեղեցիների և պետությունների գործողություններում և հոգևոր կյանքում, այլ Հնարավորության սահմաններում նրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին կլանել կամ օգտագործել կայսրության արտաքին և ներքին քաղաքական ծրագրերում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր եկեղեցաքաղաքական կազմակերպության հետ Կոստանդնուպոլսում մշակվում էր երկխոսության և հարցերի բարձրացման յուրօրինակ մեխանիզմ:

1 Տե՛ս *Chalandon*, *Les Comnène*, p. 652-653, *Dölger*, *Regesten*, 1925, S.81, Nr. 1480, S.86, Nr.1520, S.87, Nr.1533, *Grumel-Darrouzès*, p. 548-549, Nr.1121, 1122, p. 552-553, Nr.1125a, *Spiteris*, *La Critica*:

2 Հակոբիկ-ասորական եկեղեցու հետ Բյուզանդական կայսրության ԺԲ դարի 60-70-ական թթ. փոխհարաբերությունների մասին տե՛ս *MS*, t. III, p. 334-336, *PG*, t. 133, p. 280-298, հմմտ. *Chalandon*, *Les Comnène*, p.657: *Dölger*, *Regesten*, S.82, Nr.1487, 1490, S.84-85, Nr.1507, 1508:

Ինչ վերաբերում է Հռոմի կաթոլիկ եկեղեցու Հետ փոխհարաբերությանն երին, ապա բյուզանդական կայսրության Հիմնական նպատակն էր թույլ չտալ պապական եկեղեցու Հետագա Հզորացումը, փոխադարձ դաշնակցային փոխհարաբերություններ ստեղծել այդ Հոգեվոր կազմակերպության Հետ, Հարուցած դավանական վեճերն օգտագործել՝ կասեցնելու Համար կաթոլիկ եկեղեցու օրավուր աճող միջազգային Հեղինակությունը, պահպանել Բյուզանդական կայսերական եկեղեցու դիրքերը ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում:

Եկեղացաքաղաքական Հակամետ ծրագրերի և նպատակների ոգեկոչող էր Հռոմի պապական եկեղեցին, որը ուղղություն էր տալիս արևմտաեվրոպական երկրների քաղաքական և դադափարախոսական նկրտումներին, մշակում և օրհնում էր խաչակրաց ռազմաբարձարների մեկը մյուսից նվաճողական և արկածախնդիր ծրագրերը: Կաթոլիկ եկեղեցին Համակողմանի Հարձակում էր սկսել ոչ միայն քաղաքականության, այլ նաև դավանության ոլորտում³, Հիմնական թիրախ ունենալով իր ճանապարհին կանգնած Բյուզանդական պետությունը և օրթոդոքս եկեղեցու վարդապետությունը: Քրիստոնեական եկեղեցու մյուս ինքնազուլիս թթուների Հետ փոխհարաբերություններում Հռոմի պապական եկեղեցին փորձում էր Հասնել, իր առջև դրված Հետևյալ խնդիրների իրագործմանը.

ա) Խթանել կաթոլիկ եկեղեցու Հեղինակության Հետագա աճը,

բ) Դավանական վեճերն օգտագործել՝ դցելու Համար Կոստանդնուպոլսի եկեղեցու միջազգային Հեղինակությունը,

գ) Վերանայել միջազգային եկեղեցաքաղաքական փոխհարաբերություններում դարերի ընթացքում ստեղծված կարգավիճակը, ուժերի Հաշվեկշիռը փոխել կաթոլիկ եկեղեցու օգտին⁴. Բյուզանդական եկեղեցու Հետ դաշնակցել, իրեն վերապահելով մեծ եղբոր իրավունքը:

Ամբողջովին այլ բնույթ ունէին բյուզանդական եկեղեցու փոխհարաբերությունները Հակոբիկ-ասորական եկեղեցու Հոգևոր առաջնորդների Հետ: Ինչպես Հայտնի է, ի սկզբանե Հստեղծվեց միասնական

³ Այդ մասին եմ վկայում. «Հայր իմ մեծ է քան զիս»(ὁ πατήρ μου μέζων μου ἔστιν) ավետարանական հատվածի (Յովհ. ԺԴ, 28) շուրջ ծավալված վեճերը, որոնց զագագրման հետևանք էր 1166-1167 թթ. Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովը և 1170 թ. բանակցությունները Հռոմում (տե՛ս Chalandon, Les Comnène, p. 567, Beck, Kirche, S.342-343, 622-629; Classen, Das Konzil, S.338-368):

⁴ Բյուզանդական կայսրության և Հռոմի պապության քաղաքական հակամարտության մասին ավելի համգամանորեն տե՛ս Norden, Das Papsttum, S.89-102:

ասորական ազգային եկեղեցի, քանի որ այն ժամանակի ընթացքում տրոհվեց մի քանի ինքնիշխան կազմակերպութիւններ: ԺԲ դարում ասորական չորս եկեղեցիներից երկուսը՝ մարիոնիտ և մելքիտ, իրենց եկեղեցական կարգերով կամաց-կամաց ձուլվել էին և շարունակում էին սերտաճել Հռոմի պապական և Կոստանդնուպոլսի օրթոդոքս եկեղեցիների կառուցվածքի մեջ⁵: Նեստորական եկեղեցին մյուս բոլոր քրիստոնեական համայնքների կողմից շարունակվում էր աղանդ դիտվել և մերժվել միջազգային եկեղեցաքաղաքական փոխհարաբերութիւններում հավասարազոր դաշնակից լինելու իրավունքից, ուստի սեփական հոգևոր և քաղաքական գործունեութիւնը ստիպված էր ծավալել հիմնականում Միջագետքում, Միջին, Կենտրոնական և Հեռավոր Ասիայի երկրներում: Մերձավոր Արևելքում, Ասորիքում և Կիլիկիայում իր դիրքերը դեռևս քիչ թե շատ կայուն էր պահում միայն Հակոբիկ-ասորական եկեղեցին, որը փոխհարաբերութիւնների մեջ էր մտնում այդ տարածաշրջանում գործող մյուս ժողովուրդների եկեղեցաքաղաքական կազմակերպութիւնների հետ ու փորձում պահպանել իր եկեղեցական կազմակերպութիւնն ունեցվածքը և ապահովել սեփական վարդապետութիւն քարոզը երկրամասում: Բյուզանդական կայսրութիւնն ու եկեղեցին Հակոբիկ եկեղեցու հետ փոխհարաբերութիւններում ձգտում էին դաշնակցային փոխհարաբերութիւններ հաստատել, ապահովել Հակոբիկ եկեղեցու չեզոքութիւնը Մերձավոր Արևելքում՝ բյուզանդական և տարածաշրջանում գործող մյուս եկեղեցիների միջև ծավալված փոխհարաբերութիւններում, աջակցութիւն գտնել թշնախ ուժերի դեմ քաղաքական բախումների ընթացքում, Կայսրութիւն շահերի համար օգտագործել Հակոբիկ եկեղեցու առաջնորդների փոխհարաբերութիւնները և կապերը մուսուլմանական Մերձավոր Արևելքի քաղաքական առաջնորդների հետ⁶:

Հայոց եկեղեցու փոխհարաբերութիւնները Բյուզանդական կայսրութիւն հետ շոշափում էին երկու ինքնակա կազմակերպութիւնների եկեղեցաքաղաքական թե՛ արտաքին և թե՛ ներքին շահերը: Բյուզանդական կայսրութիւնը դեռևս իր տարածքի անքակտելի մասն էր համարում Փոքր Ասիան, Հյուսիսային Ասորիքը, Կիլիկիան և Կիպրոսը, նշված տարածաշրջան էր ուղարկում հոգևոր առաջնորդներ, պաշտոնական դիտորդներ, զինվորական հրամանատարներ և կառա-

5 Այդ մասին տե՛ս Baumstark, Geschichte, S.335-336: Ասորական քրիստոնեական մշակույթի և գրականության մասին տե՛ս նաև Christianismes Orientaux, p. 297-372:

6 Kawerau, Die Jakobitische, S. 90-98:

վարիչներ⁷: Կայսրությունը սելջուկյան և Մերձավոր Արևելքի մյուս մուսուլմանական և քրիստոնեական պետությունների և իշխանությունների հետ փոխհարաբերություններում մեծ նշանակություն էր տալիս այդ տարածքներում ապրող Հայկական բնակչությանը, իսկ Բալկաններում ազգամիջյան և միջկեղեցական փոխհարաբերություններ կառուցելիս ստիպված էր Հաշվի նստել Փիլիպուպոլսի և նրա մերձակայքի Հայ ազգաբնակչության հետ⁸: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրության արտաքին-քաղաքական ծրագրերում ժԲ դարի 60-ական թվականներին Հայտնվեց Կոստանդնուպոլսի օրթոդոքս և Հայոց Առաքելական եկեղեցիների միջև միություն հաստատելու ծրագիրը:

Իհարկե, Հայոց կաթողիկոսները գիտակցում էին նաև այդ ճանապարհը խոչընդոտող դժվարությունները և այն զիջումները, որ ստիպված կլինեին կատարել դավանաբանության և եկեղեցական կազմակերպության կառավարման բնագավառում:

Հայոց եկեղեցու հետ վարվող երկկողմանի բանակցությունների արդյունքներից անկասկած փորձում էր օգտվել նաև Բյուզանդական կողմը, որն իր շահերն ու հետևյալ քաղաքական նկրտումներն ուներ.

ա) Միության խնդրի քողի ներքո հետզհետե իրեն ենթարկել Բյուզանդական կայսրության տարածքի վրա գործող բոլոր Հայկական եկեղեցական թեմերը,

բ) Վերացնելով երկու քրիստոնեական եկեղեցիներն անջրպետող դավանական տարբերությունները, Հայերի զինական ուժերը և տնտեսական հնարավորություններն անմնացորդ օգտագործել սեփական ներքին և արտաքին քաղաքական ծրագրերում,

գ) Ապագայում՝ Կոստանդնուպոլսի օրթոդոքս եկեղեցու կառուցվածքի մեջ ամբողջովին ձուլել Հայկական եկեղեցական ողջ կազմակերպությունը,

դ) Խաչակրաց իշխանությունների և մուսուլմանական տերությունների դեմ մղվող պատերազմներում ավելի լիարժեք օգտագործել Հայկական զինական ուժերը,

7 Բյուզանդական կայսրության քաղաքական ձգտումների մասին տե՛ս Բողոքաց, Բյուզանդիայի, էջ 190-217:

8 Փիլիպուպոլսի և Երա շրջակայքի հայ ազգաբնակչության մասին տե՛ս Zekiyan, The Armenian, p. 363-373:

և) Հայոց եկեղեցու Հետ դաշինքը հակադրել Մերձավոր Արևելքում գլուխ բարձրացրած Հռոմի պապական եկեղեցու նվաճողական քաղաքականությանը:

Բանակցությունների սկզբում Բյուզանդական կայսրության կողմից պարտադրվող պայմաններից շատերը երկխոսության ընթացքում և քաղաքական իրադրության փոփոխության հետևանքով դուրս եկան շրջանառությունից ու եկեղեցական բանակցությունների նյութ լինելուց. օրթոդոքս-բյուզանդական եկեղեցու բռնած դիրքի մեջ հակա-յական նշանակություն ունեցավ Միրիոկեֆալոնի ճակատամարտում Մանուել Ա Կոմնենոսի պարտությունը (1176 թ. սեպտեմբեր): Բյուզանդական կողմը, ելնելով ուժերի իրական տեղաբաշխումից, հետզհետե հրաժարվեց Հայոց եկեղեցուն մինչ այդ ներկայացրած գրեթե իր բոլոր հիմնական պահանջներից, չափազանց թույլ կերպով պարտադրելով ընդունել «երկու բնութիւն» դավանական բանաձևի ուղղափառությունը: Միաժամանակ, կայսրը և պատրիարքը գնացին մի շատ կարևոր և էական գիջման. 1176 թ. Կոստանդնուպոլսի եկեղեցական ժողովում (որին մասնակցում էին օրթոդոքս եկեղեցու 20 բարձրաստիճան հոգևորական) ընդունված և Հռոմկլա ուղարկված իրենց պաշտոնական թղթում հաստատեցին, որ Հայոց եկեղեցու դավանանքը եղել ու մնում է ուղղափառ, գրելով. «ծանեաք զՁեր ուղղափառութիւնդ»⁹:

Հայոց եկեղեցու հոգևոր առաջնորդները, սակայն եկեղեցիներին միության բանակցությունները պատկերացնում էին այլ կերպ, քան դրանք կազմակերպում և ծրագրում էր Բյուզանդական կայսրությունը: Ներսես Շնորհալին իր թղթերից մեկում նույնիսկ ակնարկում է, որ ինքը սեփական նախաձեռնությամբ բանակցություններ է սկսել հակոբիկ-ասորական եկեղեցու նորընտիր պատրիարք Միքայել Ասորու հետ և ինչ-ինչ լրատուներից գիտե, որ Բյուզանդական եկեղեցին բանակցություններ է վարում Հռոմի պապական եկեղեցու հետ (N^o 4)¹⁰: Այնուամենայնիվ, Հայոց եկեղեցուն չհաջողվեց երկու (բյուզանդական և հայոց) եկեղեցիների միութենական շարժումը վերածել միջազգային համամիութենական շարժման¹¹:

9 ԹԸ, 1871, էջ 177:

10 ԹԸ, 1871, էջ 117:

11 Ծարժման համամիութենական որակումը պատկանում է Բ.Լևոն Զեքիյանի (տե՛ս Զեքիեան, Համամիութենական, էջ 5, հմտ. Գալ Zekiyan, St.Nerses, p. 861):

Միայն Ներսես Դ Օճորհայի և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսների Գնաց ակնկալիքներով կարելի է բացատրել Գալ այն պարագան, որ երբ Հռոմկլայում հայտնվում էին բյուզանդական դեսպանագնացները, շուտով այնտեղ էին ժամանում Գալ հակոբիկ

Սկզբնաղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ բյուզանդական կողմը նախընտրում էր Հայերի, ասորիների և լատինների հետ բանակցել առանձին-առանձին: Այդ մասին են վկայում Թեորիանոսի երկրորդ դեսպանագնացությունից վերջին մասը և Միքայել Ասորի պատրիարքի և Բար-Հերբոս մափրիանի ժամանակագրությունների մեջ պահպանված վկայությունները¹², բյուզանդական և լատին մատենագրությունների մեջ այս խնդիրը լուսաբանող երկերն ու վավերագրերը¹³:

Նկատի ունենալով վերոբերյալ փաստարկները, 1165-1178 թթ. Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունները պետք է դիտել որպես երկկողմ փոխհարաբերություններ, որոնք տեղի են ունեցել բյուզանդական օրթոդոքս եկեղեցու և կայսեր, մյուս կողմից՝ Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի, մասնավորապես Հայրապետների, միջև:

Բանակցությունների մասնակիցները. ԺՌ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական միությունից բանակցությունների ընթացքին տարբեր մակարդակներում մասնակցում էին և իրենց անմիջական միջամտությունն էին ցույց տալիս Բյուզանդիայի քաղաքական գործիչները, օրթոդոքս եկեղեցու պաշտոնյաները, Հռոմկլայի կաթողիկոսարանի և Հայոց եկեղեցու այլ թեմերի Հոգևորականները, աշխարհիկ պաշտոնյաները, Հակոբիկ-ասորական եկեղեցու ներկայացուցիչները:

ՊեսՄ ժողովածոյից Հայտնի է, որ բանակցությունների նախաձեռնությունը պատկանում է Կիլիկիայի բյուզանդական դուքս Ալեքս Աքսուլտին և այն ժամանակ դեռևս եպիսկոպոս, Հայոց կաթողիկոսի եղբայր Ներսես Շնորհալույն (№ 2)¹⁴: Մինչև 1170թ. եկեղեցական միությունից խնդրի վերաբերյալ մի քանի վավերագրեր են փոխանակում կայսր Մանուել Ա Կոմնենոսը և կաթողիկոս ձեռնադրված Ներսես Դ Շնորհալին: Հայտնի է նաև, որ կայսեր ուղարկած առաջին թուղթը Հռոմկլա է հասցրել կայսրությունից քաղաքացիական պաշտոնյա Սմբատը (№ 3)¹⁵, որը նաև բանակցություններ վարելու կայսերական արտոնություն է ունեցել: Թեորիանոսի «Տրամախոսությունների» մեջ

ասորական եկեղեցու ներկայացուցիչները, որոնք փաստորեն Հայոց կաթողիկոսարանի հյուրերն էին, հակոբիկ պատրիարքության դիտորդները:

¹² MS, t. III, p. 334-336:

¹³ Տե՛ս ծան. 1:

¹⁴ ԹԸ, 1871, էջ 87:

¹⁵ ԹԸ, 1871, էջ 109, տե՛ս Բոգոլյան, Բյուզանդիայի, էջ 237-239:

Հասած բնագրի ընձեռած¹⁶ Հնարավորությունների շնորհիվ քիչ ավելի ընդարձակ և մանրակրկիտ վիպություններ ունենք Հետագա երկու բանակցությունների մասնակիցների մասին: Ըստ այդ երկի տեղեկությունների, 1170 թ. Հռոմկայում տեղի ունեցած բանակցություններին բյուզանդական կողմից մասնակցում էին մազիստրոս Թեորիանոսը, Հովհաննես Աթմանը, իսկ Հայկական կողմից՝ Ներսես Դ Ծնորհալին, նրա ազգական Գրիգոր եպիսկոպոսը¹⁷, Ստեփանոս վարդապետը, Սահակ եպիսկոպոսը, Վարդան վարդապետը և Սոփիբայի Պետրոս վարդապետը, Հակոբիկ-ասորական եկեղեցու կողմից՝ Բեսունի Հովհաննես եպիսկոպոսը¹⁸: Թեորիանոսի առաջին «Տրամախօսութեան» մեջ Հիմնական երկխոսությունն ընթանում է կաթողիկոսի և Թեորիանոսի միջև, ժամանակ առ ժամանակ բանակցությունների ընթացքին միջամտում էին նաև Հիշատակված մյուս մասնակիցները: Եկեղեցական բանակցությունների հաջորդ փուլին՝ 1171/2 թթ. դեսպանագնացությունը բյուզանդական կողմից մասնակցում էին վերոհիշյալ Թեորիանոս մազիստրոսը, Հովհաննես Աթմանը և Միքայել երեց թարգմանիչը, իսկ Հայկական կողմից՝ Ներսես Դ Ծնորհալին, Գրիգոր եպիսկոպոս կրտսերը (Տղա), Սահակ եպիսկոպոսը, Ստեփանոս վարդապետը, ասորական կողմից՝ Թեոդորոս Բար-Վահբունը¹⁹:

ՊևՄ ժողովածուից Հայտնի է, որ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի Հովվապետություն տարիներին Կոստանդնուպոլիս է այցելել Հայոց Հայրապետի պատվիրակ Կոստանդին քահանան և այնտեղ օծվել Հյուսիսային Ասորիքում դանվող Բյուզանդական եկեղեցուն հնթակա Հերապոլիսի (Մճրեջ) աթոռի մետրոպոլիտ: Այս դեսպանագնացություն մասին մանրամասներ է հաղորդում միայն Ներսես Լամբրոնացին: Տարսնի արքեպիսկոպոսը Գրիգոր Դ Տղայի ՊևՄ ժողովածու մտած առաջին թղթի (№ 19) վերջում դրված «պատճառ»-ծանոթագրություն սկզբում գրում է. «Առեալ զայս գիր քահանայն Կոստանդին եւ ընդ

16 PG, t. 133, p. 120-298:

17 Թեորիանոսի բնագրից կարելի է ենթադրել, որ այս Գրիգոր եպիսկոպոսը հետագայում կաթողիկոս ձեռնադրված Գրիգոր Դ Տղա կաթողիկոսն է, որովհետև բյուզանդական աստվածաբանը նրա վերաբերմամբ օգտագործում է «τὸ μικρόν» («փոքր», «կրտսեր») մականուն-ածականը (տե՛ս PG, t. 133, p. 248D):

18 Քետուցի Հովհաննես եպիսկոպոսի մասնակցության մասին տե՛ս Գև Եր-Պետրոս-եան, Ասորիների, էջ 8, 63:

19 Թեոդորոս Բար-Վահբուն քահանայի մասնակցության մասին վկայում են ինչպես ասորական, այնպես էլ հայկական սկզբնաղբյուրները (հմտ. Եր-Պետրոսեան, Ասորիների էջ 8, 63):

նենք, թե նա մասնակցել է վերոհիշյալ վավերագրերի թարգմանությանը: Այս վարկածը հիմնավորելու միտումով փորձենք անդրադառնալ նրա վաղ շրջանի թարգմանական գործունեության որոշ խնդիրներին քննարկմանը:

Եթե Ներսես Լամբրոնացու մատենագրական վաստակը, կապելով նրա բովանդակալից եկեղեցադաքական գործունեությանը, կարելի է բաժանել մի քանի բեկումնային փուլերի, ապա թարգմանական գործունեությունն ունի երեք ընդգծված շրջան.

ա) 1176 - 1179 թթ.: Հունարեն և լատիներեն լեզուներից հայերենի փոխադրված երկերի հիշատակարաններում թեև Ներսես Լամբրոնացին իրեն հաճախակի անվանում է թարգմանիչ, սակայն այդ բառը պետք է հասկանալ «սրբագրող»՝ խմբագիր, երկը հայացնող իմաստներով²⁶: Թարգմանական գործունեության այս շրջանում Ներսես Լամբրոնացին համագործակցում է հայ և այլազգի թարգմանիչներ Գրիգոր դպիր Լամբրոնացու (1176/7 թ.²⁷, Կոստանդին հուլյն Հերապոլսի մետրոպոլիտի (1179/80թ.²⁸, Կիլամ լատին վանականի (1179/80 թ.²⁹: Այս աշխատանքների հիմնական մեկենասը Հռոմկլայի կաթողիկոսարանն է³⁰:

26 Այս տերմինը մեր հասկացած իմաստով օգտագործում է նաև Ներսես Լամբրոնացին (տե՛ս Ալիքնեան, Ներսես, էջ 287):

27 Ըստ «Հաւաքումն մեկնութեան երթանսումց թղթոցն կաթողիկէից» երկի Ներսես Լամբրոնացու հիշատակարանի, թարգմանությունը կատարվել է 1163/4 թ. Գրիգոր դպիր Լամբրոնացու կողմից: Սակայն այս փոխադրությունը չի հղկվել և երկար ժամանակ անմշակ է մնացել, քանի որ մահացել է Դրազարկի առաջնորդ Բարսեղ վարժապետը՝ այդ երկի թարգմանության մեկեմասը: Ներսես Լամբրոնացին ձեռնամուխ է եղել և աշխատանքն ավարտել է 1176/7 թ. (հիշատակարանը տե՛ս Ալիքնեան, Ներսես, էջ 278):

28 «Արեթա Կեսարիոյ եպիսկոպոսի Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննոս» երկը Ներսես Լամբրոնացին թարգմանել է Կոստանդին Հերապոլսեցու հետ համատեղ: Թարգմանական հիշատակարանում Ներսեսն այսպես է տարանջատում իրենց անելիքները. «...նա ի թարգմանել եւ ես ի գրել...»: Ապա անդրադառնալով թարգմանության վերջնական աշխատանքներին, գրում է «...սրբաբանեցալ ի նշանագրութենն քերթողական արհեստի...ձեռամբ նուաստ եպիսկոպոսի նորին մայրաքաղաքի Տարսուցի՝ տառապելոյն Ներսիսի» (տե՛ս Ալիքնեան, Ներսես, էջ 267-273, և հատկապես. էջ 270): Այս նույն թվականին Կոստանդին Հերապոլսեցի մետրոպոլիտի հետ Ներսես Լամբրոնացին թարգմանել է նաև Նեղոս Դոքսապատոսի և Եպիփան Կիարացու «Կարգադրութիւնք մայրաքաղաքաց» երկերը (տե՛ս Ալիքնեան, Ներսես, էջ 289-294, հատկապես. էջ 292):

29 Նշված թվականին (ՈՒԸ=1179/80) Ներսես Լամբրոնացին Կիլամ լատին կրոնավորի հետ միասին թարգմանում է Գրիգոր Մեծ պապի (590-604) «Վասն քաղաքավարութեան զանազան հարցն» և «Բեմեղիքտիոսի սահմանք» երկերը: Հատկապես առաջին թարգմանության մասին Ներսես Լամբրոնացին իր հիշատակարանում գրում է. «...թարգմանեցի...ի լատին լեզուէն ի փոանգ վանս սուրբ Պաղոսի որ ի Անտիոք,

դ) Թարգմանական գործունեության երրորդ շրջանում ևս (1193-1198թ.) Ներսես Լամբրոնացին և՛ Թարգմանիչ էր, և՛ «սրբազրոզ»-խմբագիր, և մեկինաս: Հիշյալ տարիներին նա վերաշարադրել, վերախմբագրել ու առանձին ժողովածուներ է կազմել տարիների ընթացքում իր աշխատասիրած մատենագրական երկերը: Լամբրոնացին մեր մատենագրության այն երջանիկ ու բացառիկ դեմքերից է, որը Հասուն տարիքում կրկին անդրադարձել է երիտասարդ Հասակում գրած երկերին ու վերաիմաստավորել դրանք³³: Թեպետ չեն պահպանվել ուղղակի վկայություններ, այնուամենայնիվ կարելի է ենթադրել, որ զրական գործունեության այս փուլում Թարգմանված երկերը ծառայում են ավելի շատ քաղաքացիական իշխանությունների կարիքներին: Դրանք Հիմնականում³⁴ Բյուզանդական կայսրության տարածքում և Մերձավոր Արևելքում մինչև ԺԲ դարը գործած իրավաբանական ժողովածուներ են, որոնք Թարգմանվել են ասորերենից³⁵ և Հունարենից³⁶:

- 33 Այդ իմաստով բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում «Պատարագի մեկնութեան», «Օրենագրքերի» և «Յովհաննու Յայտնութիւն» երկերի հիշատակարանները: Այս փաստը ժամանակին նկատել է նաև Բ.Ն. Ակիմյանը. «...1198: Այս այն տարին է, երբ Ներսես աչքէ անցուց իր բոլոր գրատր աշխատութիւնները, դասատրեց զանոցն եւ յաւանդ յանձնեց ապապոյին: Չգացած էր որ այս տարին վերջին տարին էր» (Ակիմեան, Ներսես, էջ 274):
- 34 Ըստ Ն.Ակիմյանի Ներսես Լամբրոնացին 1197 թ. Կոստանդնուպոլսում թարգմանել է Բառնարա Առաքյալի պարականոն թողթը (Տե՛ս նշվ. աշխ., էջ 316-317): Եթե թվագրումը ճիշտ է, ապա այս երկը կազմում է միակ բացառությունը: Ն. Ակիմյանի սույն կոախումը խարսխված է Վատիկանի մատենադարանի թ. 859 մատյանի հիշատակարանի տեղեկության վրա. «Եւ Ներսես թարգմանցի զԹողթս զայս ի հայ բարբառ ի թագաւորական քաղաքս ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է արհմեալ յափտեանս. ամէն» (Ակիմեան, Ներսես, էջ 316): Ընդգծված արտահայտության մեջ Ներսես Լամբրոնացու նկատի ունեցած քաղաքը եթե նույնացնենք Կոստանդնուպոլիսի հետ, ապա կարելի է համաձայնել արդյունաշատ բանասերի հետ. «Այս թարգմանութիւնը, որ մեզի հասած չէ, պետք է կատարուած ըլլայ 1197ին Կ.Պոլիս, ուր առիթ ունեցած էր աչքէ անցնել Պատրիարքարանի յոյճ ձեռագիրները» (Ակիմեան, Ներսես, էջ 317):
- 35 Ասորերենից կատարված թարգմանություն ասելով նկատի ունենք «Ասորա-հոմեական օրենագիրքը» և «Համառոտ ժողովումն օրինաց վերստին» երկերը, որոնց թարգմանությունը Բ.Ն. Ակիմյանը թվագրում է 1173 թ.: Նա առաջարկում է այս երկերի թարգմանական հիշատակարանը սրբագրել այսպես. «ՈՒՅԲ-ն կարողալ «ՈՒԲ», «Ի ԺԸ. ամի»-ն՝ «ՅԱ. ամի» կամ «ՅԺԸ. ատր», այսինքն 27 սեպտեմբերի 1173 թ. (տե՛ս նշվ. աշխ., էջ 250): Հ.Ն. Ակիմյանի վարկածի համաձայն, Ներսես Լամբրոնացուն այս երկերի ասորերեն խմբագրությունների հետ ծանոթացրել է հակոբիկ-ասորական եկեղեցու նշանավոր գործիչ Թեոդորոս Բար-Վահրունը, որը 1193 թ. չէր կարող հիշատակվել որպես «կիրթ իմաստութեան քահանայ», քանի որ նա այդ թվականին Կիլիկիայի սահմաններում գործող հակոբիկ եկեղեցու հակաթոռ պատրիարքն էր (այս հարցերի մասին տե՛ս Ակիմեան, Ներսես, էջ 250-251, Տեր-Պետրոսեան, Ասորիների, էջ 8-9): Միքայել Ասորին աստվածային արդարության վերականգնում է համարում նրա մահը (տե՛ս MS, t. III, p. 388):

Ներկա ուսումնասիրության մեջ մեզ հետաքրքրում է Ներսես Լամբրոնացու թարգմանական գործունեության առաջին փուլի կարճ, սակայն չափազանց բեղմնավոր ժամանակահատվածներից մեկը, երբ Հռոմիլլայի կաթողիկոսարանի Հովանու ներքո և Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի հրամանով, Կոստանդին Հերապոլսեցու օգնությամբ և աշխատակցությամբ, Հունարենից Հայերեն էին թարգմանվում մի շարք հրկեր: Սկզբնաղբյուրների միաբերան վկայությամբ նրանք միմյանց հետ թարգմանության բնագավառում համագործակցել են Հայոց Տոմարի ՈՒԸ (= 5 փետրվարի 1179 - 4 փետրվարի 1180) թվականին³⁷:

Կոստանդին Հերապոլսեցու անունը Հայոց մատենագրության մեջ առաջին անգամ հիշատակվում է 1175թ. գրված և ՊԽՄ ժողովածու մտած Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի «առ Մանուէլ» (№. 19) առաջին թղթում³⁸, որպես Հայոց կաթողիկոսարանի կողմից Կոստանդնուպոլիս ուղարկված դեսպանախմբի ղեկավար³⁹: Նրան Հանձնարարված է եղել կայսերական արքունիքի և օրթոդոքս եկեղեցու պատրիարքարանի աստվածաբանների հետ վիճաբանություններում պաշտպանել մինչ այդ Կոստանդնուպոլիս ուղարկված կաթողիկոսական նամակների և Հայոց եկեղեցու դավանանքի ուղղափառությունը և Հաշտուների և Հայոց եկեղեցու դավանանքի ուղղափառությունը և Հաշտուների և Հայոց եկեղեցու դավանանքի ուղղափառությունը⁴⁰: Պատահական է, որ կաթողիկոսն այդ առաքելության համար ընտրել Պատահական է, որ կաթողիկոսն այդ առաքելության համար է նկատել Հանց Կոստանդին Հույն կրոնավորին: Կաթողիկոսն հարմար է նկատում նամակում ներկայացնել իր ուղարկված դեսպանագնացի արժա-

«Ասորա-հոմեական օրենսգրքի» հայերեն բնագիրն առանց լուրջ բանասիրական կովանների Դ դարի 20-30-ական թվականներով է թվագրում հանգուցյալ իրավաբան Ս.Հովհաննիսյանը (տե՛ս Հովհաննիսյան, «Ասորական», էջ 177): Այս հարցի մասին լիակատար մատենագիտությունը տե՛ս Bozoian, Bibliografie, S.160-161:

36 Բյուզանդական իրավական ժողովածուներ «Էվլոգան», «Ջինտրաց օրենսգիրքը» և մյուսները Ներսես Լամբրոնացին թարգմանել է իր եղբայր Ծահնշահի վերանորոգած Լույուա ամրոցում գտնված մի շատ հին հունարեն մատյանից (տե՛ս Ալիմեյան, Ներսես, էջ 257-267, հատկապես, էջ 265, հմմտ. Bozoian, Documents, p. 56-57):

37 Թարգմանված երկերի հիշատակարանները հավաքված տե՛ս Ալիմեյան, Ներսես, էջ 268-271, 286-288, 291, 292:

38 ԹԸ, 1871, էջ 166-168, մանվրպս՝ էջ 167:

39 Նման եմթադրության հնարավորություն է տալիս ՊԽՄ ժողովածույում Ներսես Լամբրոնացու հետևյալ արտահայտությունը. «Առեալ զայս գիր քահանայական, Կուտանդին և Սուրբ Գևորգ իշխանք ի տիրական արքոնոյն, և եհաս առ թագաւորն...» (ԹԸ, 1871, էջ 168):

40 Այս դեսպանագնացության մասին ավելի մանրամասն տե՛ս Բոզոյան, Բյուզանդիայի, էջ 247-251:

նիքները. «որ ամենայնին հասու է, որ առ ի սուրբ աթոռս խորհրդոց, առ որս սրբոց հարցն սնեալ եւ զիս ինքն դասախարակեալ»⁴¹: Նույն նամակում Գրիգոր Դ Տղան Մանուել Ա Կոմնենոսին խնդրում է միջնորդել, որպեսզի Անտիոքի օրթոդոքս-բյուզանդական եկեղեցու պատրիարքը, որն այդ ժամանակ գտնվում էր Կոստանդնուպոլսում, Կոստանդին կրօնավորին ձեռնադրի Հերապոլսի և Եփրատամերձ տարածքների մետրոպոլիտ:

Քանի դեռ շարունակվում էր պատերազմը Իկոնիայի սուլթանության դեմ, Կոստանդին քահանան շուրջ մեկ տարի մնում է Բյուզանդիայի մայրաքաղաքում: Այդ ընթացքում նա լայն գործունեություն է ծավալում. «ծանոյց պատրիարքացն, զոր [է] ի Հայս ճշմարտութիւն հաւատոյ եւ վարուց»⁴². - գրում է Ներսես Լամբրոնացին: ՊնՄ ժողովածուի հիշատակված վավերագրերի գրման և առաքման պարագաների մեկնաբանության մեջ Ներսես Լամբրոնացին ընդգծում է, որ Կոստանդինն «էր ազգաւ Հռոմս եւ քահանայ ի նոցանէ»⁴³, որն անշուշտ պետք է հասկանալ այսպէս. «ազգությամբ հույն և նրանց կողմից հոգևորական ձեռնադրված»: Ինչպես հաղորդում է Տարսոնի արքեպիսկոպոսը, Միրիոկեֆալոնի ճակատամարտում պարտություն կրած Մանուել Ա Կոմնենոսը վերադառնալով մայրաքաղաք, կատարում է կաթողիկոսի խնդրանքը. «եռ ձեռնադրել սրբազան պատրիարքին զքահանայն Կոստանդին արքեպիսկոպոս [ի] խնդրոյ կաթողիկոսին...»⁴⁴: Այս արարողությունից հետո, Հերապոլիս-Մմբեջի արքեպիսկոպոս ձեռնադրված Կոստանդինն իր հետ վերցնելով կայսեր թուղթը և բյուզանդական եկեղեցական ժողովում հաստատված Կոստանդնուպոլսի Միքայել Գ Անքիալոս պատրիարքի նամակը, վերադառնում է Հռոմկլա:

Սրանք են Հիմնականում այն վկայությունները, որոնք պահպանվել են Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական փոխհարաբերություններում Կոստանդին Հերապոլսեցու մասնակցություն մասին:

Ներսես Լամբրոնացու և Կոստանդին Հերապոլսեցու թարգմանական համագործակցությունն ուներ ծրագրային բնույթ և ծառայում էր այդ ժամանակ Հայոց եկեղեցու առջև ծառայած եկեղեցաքաղաքական հիմնական խնդրին՝ Բյուզանդական և Հայկական եկեղե-

41 ԹԸ, 1871, էջ 167:

42 ԹԸ, 1871, էջ 168:

43 Նույն տեղում:

44 ԹԸ, 1871, էջ 169:

ցիւների փոխհարաբերությունների նորմալացմանը: Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի հրամանով և խնդրանքով, Կոստանդնուպոլսում գտնվող Անտիոքի հունական պատրիարքի կողմից Հերապոլսի մետրոպոլիտ ձեռնադրված Կոստանդինը կայսրության մայրաքաղաքում և Հռոմ-կլայում, անկասկած, իր լուծման է ներդրել երկու եկեղեցիների միջև սկսված բանակցությունների ընթացքում գրված վավերագրերի վերջնական ձևակերպման և թարգմանության գործում: Մեր կարծիքով նա է եղել նշված վավերագրերի նախնական հայերեն թարգմանությունների հեղինակը, որը հավանաբար թարգմանչի դեր է ստանձնել Գրիգոր Դ Տղայի վարած բանակցություններում և Հռոմկլայի կաթողիկոսական նոտարատանը: Այդ մասին են անուղղակիորեն վկայում Ներսես Լամբրոնացուց մեզ հասած թարգմանական հիշատակարանները:

Իհարկե, Հռոմկլայի եկեղեցական ժողովից (1178 թ.) հետո ևս երկու կողմերը համաձայնության չեկան, քանի որ այդ ժողովում հաստատված վավերագրերը նույնիսկ Կոստանդնուպոլիս չհասան: Նշանակում է, Հայոց և Բյուզանդական եկեղեցիների միության խնդրում որևէ առաջընթաց չարձանագրվեց: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ Հռոմկլայի ժողովում Ներսես Լամբրոնացին փորձ է կատարել քննարկման դնել մի շարք ծիսադավանական և եկեղեցաքաղաքական որոշումներ: Տարսոնի արքեպիսկոպոսն առաջին անգամ այս ժողովին է ներկայացրել իր հեղինակած մի շարք ծրագրային երկեր⁴⁵: Հռոմկլայի ժողովում Ներսես Լամբրոնացու նախաձեռնությամբ պատասխաններ գրվեցին բյուզանդական եկեղեցու ինը պահանջներին⁴⁶, որոնք Հայոց եկեղեցուն էին ներկայացվել դեռևս 1171 թ. (№ 14)⁴⁷: Հռոմկլայում նստող Հայոց կաթողիկոսի հաստատումը բյուզանդական կայսրին վերապահելու օրթոդոքս-հունական եկեղեցու պահանջին ի պատասխան, Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի եկեղեցական ժողովի

45 Հռոմկլայի ժողովին ներկայացված երկերի թվում էին Ներսես Լամբրոնացու «Առեմարանութիւնը» և «Պատարագի մեկնութիւնը»: Այս երկերին վերաբերող հիշատակարաններից հստակ երևում է, որ դրանք գրված են եղել հասարակության իշխող խավերի քննարկմանը ներկայացնելու համար. «Միանգամ եւ երկիցս հանի գաա յատեան եւ ի ժողովս եպիսկոպոսաց, եւ ոչ եղեւ պարապումն գոճէ ընթերցման կամ ունկնդրութեան» (տե՛ս Գառեգին Ա., Յիշատակարանք, սյուն 467): Այս տողերից կարելի է ենթադրել, որ Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի ժողովի նախօրյակին գրած երկերում առկա դրույթները փորձել է քննարկման առարկա դարձնել այդ ժողովում և դրանից հետո էլ, սակայն նրա քանգերը ապարդյուն են անցել, քանի որ համախոհներ գրեթե չի ունեցել:

46 ԹԸ, 1871, էջ 156-157, հմտտ. Բոգոյան, Հարաբերություններ, էջ 159:

47 Բոգոյան, նույն տեղում, էջ 159:

քննարկմանը ներկայացված այս վավերագրում առաջարկում է Հայոց կաթողիկոսարանը վերանվանել Անտիոքի պատրիարքական աթոռ⁴⁸, նրան վերապահելով վերջինիս բոլոր իրավասությունները:

Հռոմիկայի ժողովում քննարկվելիք այս դրույթին ապացույցներ գտնելու միտումով է, թերևս, որ Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերապոլսեցին թարգմանում են հետևյալ երկերը.

ա) «Գիր որ եղեւ ի Նեղոսէ կրաննաւորէ մակակոչեցեալ Դոքսապատիւ ի խնդրոյ եւ Հրամանաւ բարեպաշտ մեծի թագաւորին Տոանկաց ի Սիկիլեայ կղզին Ռաւճէրի վասն Հինգ պատրիարգացն աթոռոց եւ որ նոցունց են արքեպիսկոպոսք ի մայրաքաղաքսն, եւ մայրաքաղաքացն եպիսկոպոսք, եւ որք ինքնազուխք են արքեպիսկոպոսք, եւ իւրաքանչիւրոցն վիճակք ըստ պատրիարգացն աթոռոց սահմանեալ: Նայ թէ եւ ե՞րբ կամ որպէ՞ս Հաստեցաւ իւրաքանչիւր պատրիարգացն աթոռ, եւ վասն կարգացն նոցա եւ յատկական իւրաքանչիւրոցն անուանց. եւ գծադրեցաւ ի թուին ՅՈՄԱ»⁴⁹:

բ) «Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոց՝ Վասն նախապատիւ եկեղեցեաց իւրաքանչիւր աթոռոց մայրաքաղաքաց»⁵⁰:

գ) «Կարգադրութիւն Աստուծով սրբոց մայրաքաղաքաց եւ մետրապոլտաց եւ արհեպիսկոպոսաց: Եւ եղաւ այս կարգ աստիճանաց քահանայապետից ըստ տիեզերական ժողովոց աւրինաց»⁵¹:

Նշված երկերից միայն երրորդն է բառացի թարգմանություն, ուր մի քանի էջի մեջ անցողակի կերպով շարադրված են Հինգ պատրիարքական աթոռներից յուրաքանչյուրի իրավասությունները և տարածքային սահմանները:

Նեղոս Դոքսապատիւ և Եպիփան Կիպրացուն վերագրված երկերի թարգմանության ժամանակ կիրառված է բոլորովին այլ սկզբունք: Այստեղ, իհարկե, պետք է շեշտել, որ այս երկերի հունարեն բնագրերը

48 Վավերագրի լավագույն հրատարակությունը տե՛ս Պալմեսն, Պատմություն, էջ 260-266:

49 Հայերեն թարգմանությունը և զուգադիր հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս Նեղոս: Այս բնագրի և նրա ձեռագրերի մասին մամրանասան տե՛ս Ակիմեսն, Ներսես, էջ 290-292: Հունարեն բնագրի նորագույն հրատարակությունն ու ուսումնասիրությունը տե՛ս. Darrouzès, Notitiac, p. 154-158, 373-377:

50 Միջնադարյան հայերեն թարգմանությունը և զուգադիր հունարեն բնագիրը տե՛ս Եպիփան: Այս բնագրի և նրա հայերեն ձեռագրերի մասին տե՛ս Ակիմեսն, Ներսես, էջ 289-290: Հունարեն բնագրի նորագույն մասնակի հրատարակությունն ու ուսումնասիրությունը տե՛ս Darrouzès, Notitiac, p. 3-9, 203-213:

51 Միջնադարյան հայերեն թարգմանությունը և զուգադիր հունարեն բնագիրը տե՛ս Fink, Kleine, S. 198-200: Այս բնագրի վերաբերյալ մատենագիտական տեղեկանքը տե՛ս Ակիմեսն, Ներսես, էջ 289:

դիտութեանը Հայտնի չեն այն տեսքով, որով դրանք մեզ են Հասել Հայերեն թարգմանութեամբ: Գերմանացի Հայագետ Ֆրանց Նիկոլաուս Ֆինկի կատարած Համեմատությունը արդեն իսկ ցույց է տալիս, որ մեզ Հասած հունարեն բնագրերը պակասներ ունեն: Միաժամանակ կարելի է Հաստատաբար պնդել, որ Նեղոս Դոքսապատոսի և Եպիփան Կիպրացու աշխատություններում թարգմանիչներն ավելացրել են Հատվածներ, որոնք, մեր կարծիքով, պետք է բխին Հռոմկլայի եկեղեցական ժողովի նախօրյակին Ներսես Լամբրոնացու և Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի հոգևորականների որոշ շրջանների որդեգրած սկզբունքներից: Նման Հատվածների թվին ենք դասում Եպիփան Կիպրացու երկում տեղ գտած «Իշխանութիւն Հայոց Մեծաց» կտորը⁵² և Նեղոս Դոքսապատոսի երկում Անտիոքի պատրիարքական աթոռի և Հայոց կաթողիկոսարանի կարգավիճակը բանաձևող մի շարք Հատվածները⁵³:

Եպիփան Կիպրացու երկ մուծված «Իշխանութիւն Հայոց Մեծաց» գլուխը Համառոտ շարադրանքն է Նեղոս Դոքսապատոսի Հայերեն թարգմանված երկի նույն բովանդակությունն ունեցող Հատվածի⁵⁴, ուր թարգմանիչները շեշտում են Հայոց եկեղեցական թեմի ինքնուրույնությունը: Ե՛վ Եպիփան Կիպրացու, և՛ Նեղոս Դոքսապատոսի երկերի թարգմանութեան մեջ Հայոց կաթողիկոսարանի անկախ դիրքը Համեմատված է Կիպրոսի ինքնագլուխ աթոռի նույնանման կարգավիճակի հետ, միայն այն տարբերութեամբ, որ Նեղոս Դոքսապատոսի երկում վերոհիշյալ երկու անկախ եկեղեցիների շարքում հիշատակվում է նաև Բուլղարիայի վիճակը (թեմը): Նեղոս Դոքսապատոսի երկի հունարեն բնագրի Համապատասխան կտորում թեև խոսվում է Կիպրոսի և Բուլղարիայի եկեղեցական թեմերի մասին⁵⁵, սակայն որևէ անկախ չկա տիեզերական եկեղեցու աստիճանակարգում Հայոց կաթողիկոսի և նրա գլխավորած թեմի վերաբերեալ:

Այս Հանգամանքը, այնուամենայնիվ, չի խանգարել Ներսես Լամբրոնացուն Կիրիկիայի և Հյուսիսային Ասորիքի հունադավան գործիչներին մեկի՝ Յուսկան արգելական ճգնավորի Հայոց եկեղեցու դեմ ծավալած դադափարախոսական պայքարի դրույթներին հակադրել սեփական Հավելումը, նշելով, թէ. «եւ տաքտիկոնն, յորում կարգ

52 Եպիփան, էջ 52-54:

53 Նեղոս, էջ 1016-1124, 1316-1622 և այլուր:

54 Եպիփան, էջ 52-54, հմմտ. Նեղոս, էջ 10:

55 Նեղոս, էջ 1035-1119:

եպիսկոպոսացն սահմանի գրեալ է՝ որ Հայոց կաթողիկոսն պատուեցաւ վասն սրբոյն Գրիգորի, որպէս եւ կղզին Կիպրոսի վասն առաքելոյն Բառնաբայ եւ յիւրեանցն եպիսկոպոսաց առնուն արքեպիսկոպոսքն զձեռնադրութիւն: Եւ զայս ի Ձեր զրոց ունիմք՝ Հաստատեալ եւ ոչ ի Հայոց»⁵⁶:

Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունները Մանուել Ա Կոմնենոսի մահից հետո լծացման փուլ են մտնում և ընդհատվում են բավական երկար ժամանակով: Բյուզանդական կայսրությունն այլևս հույս չուներ նոր ռազմարշավներ կազմակերպելով վերականգնել սեփական պետութեան հեղինակությունը Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում: Սակայն այս ասպարեզում կայսրերը և նրանց կամակատարները փորձում էին չըջանցել Հայոց եկեղեցու հետ վարվող բանակցությունները, բռնի կերպով կամ համոզման ճանապարհով հունադավանություն տարածելով Հայոց կաթողիկոսարանին ենթակա Փիլիպոսպոլսի (այժմ Պլովդիվ) և Փոքր Ասիայի որոշ թեմերում⁵⁷: Ի տարբերություն այս ոտնձգությունների, Հայոց եկեղեցու համար Հայ-բյուզանդական բանակցությունների հետագա շարունակումը դեռևս պահպանում էր կենսունակությունը: 1197 թ. Ներսես Լամբրոնացու այցը Կոստանդնուպոլիս և բանակցություններում քրննարկված հարցերը այդ մասին են վկայում⁵⁸: Այդ բանակցություններն ընթանում էին Կ.Պոլսի Ս.Գէորգ եկեղեցում⁵⁹, իսկ ծիսադավանական վեճերին մասնակցում էին Ալեքս Գ Անգելուս կայսրը (1195-1202)⁶⁰, Գեորգ Բ Քսեֆիլինոս պատրիարքը, արքեւնիքի և եկեղեցու գործիչներ⁶¹: Դրանով կաթողիկոսարանը ձգտում էր Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի բազմատարր բնակչության առկայութեան պայմաններում դաշինք հաստատել Բյուզանդական կայսրութեան և օրթոդոքս եկեղեցու ու բնակչության հետ, նպաստել նշված տարածքներում Հայոց եկեղեցու զիրքերի ամրապնդմանը:

56 Տե՛ս Յուլիան, էջ 24 (ընդգծումը իմն է-Ա.Բ.):

57 Այդ մասին է վկայում Իսահակ Անգղերոսի մամակի քննությունը. տե՛ս Բարթեղիան, Նոր Եյուրեք, էջ 287, Бартикан, К истории, с. 53-56:

58 Ներսես Լամբրոնացու կոստանդնուպոլսյան բանակցությունների քննազիյը (տե՛ս խօսակցությունը Ս.Ներսեսի Լամբրոնացույ ընդ պատրիարքին Յունաց. Կ.Պոլիս 1861, էջ 3-24):

59 Սուլու մանաստի՞ր - խմբ.:

60 Գիտությանը հայտնի է մահ մինչև 1197 թ. այս կայսերը ուղարկված Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203) կաթողիկոսի մի նամակը (տե՛ս Бозоян, Новый, с.227-230):

61 Անիմեան, Ներսես, էջ 201:

ԺԲ: դարի ընթացքում, մասնավորապես 80-ական թվականներին օրթոդոքս-հունադավան հոգևորականությունը (որոնց մեջ կային նաև հայազգի գործիչներ) բացահայտ պայքար է ծավալում հայկական եկեղեցու դեմ: Նրանց կողմից ոչ միայն հերձվածողական է համարվում «մի բնութիւն» Հայոց դավանաբանական բանաձևը, այլև հիմք ընդունելով Ս.Սահակի «Տեսիլքը», պնդում էին. «Ոչ է առ Հայոց ազգիս եկեղեցի քահանայութեան շնորհ»⁶²: Ներսես Ակիրնյանը այսպես է բացատրում Յուսկան ճգնաժամի և նրա հետևորդների տեսակետը. «Ս. Սահակի Տեսիլքին համաձայն դադրած էր Հայոց քահանայապետութիւնը, ուստի նաև ձեռնադրութիւն տալու իրաւունքը»⁶³: Ուստի, եթե հոգևորականն է ընդունում բյուզանդական օրթոդոքսություն՝ պետք է կրկին ձեռնադրվի, եթե շարքային քրիստոնյան՝ հրահանգվում էր «մեռոնիւ կնքել»⁶⁴: Ինչպես երևում է վերոբերյալից, Բյուզանդական եկեղեցին և նրա հետևորդներն այդ պայքարում չափազանց կարևոր դեր են հատկացրել Ս.Սահակի «Տեսիլքին»⁶⁵: Բյուզանդական հոգևորականության դադարաբախտության պայքարի այս լծակի խոտանման ակնկալություններ է, որ Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերապոլսեցին դեռևս ԺԲ դարի 70-ական թթ. ձեռնամուխ են լինում Անդրեաս և Արեթաս Կեսարացիների «Յովհաննու Յայտնութեան մեկնութիւն» աշխատության թարգմանությունը⁶⁶:

Հռոմկլայի կաթողիկոսարանի նոտարատանը աշխատող թարգմանիչներ Կոստանդին Հերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու այս աշխատանքը ևս բառացի թարգմանությունն է: Այստեղ դժվար է հետևել թարգմանիչների հավելումներին, քանի որ հայերեն բնագրի գլխակարգությունը ամբողջովին համապատասխանում է հունարենի հետ: Այնուամենայնիվ, մասնագետների ուշադրությունը կարելի է հրավիրել միայն մեկ կարևոր հանգամանքի վրա. հունարենով պահպանված առաջաբանը չի կրկնվում հայերեն թարգմանության մեջ, որը շատ անհերքում համառոտաբար վերապատմում է հունարեն բնագրի բովանդակությունը: Թարգմանությունը գրեթե բառացի է դառ-

62 Յուսկան, էջ 21:

63 Ակիմեան, Ներսես, էջ 217:

64 Յուսկան, էջ 21:

65 Երկի հունարեն բնագիրը տե՛ս *PG*, t. 132, p. 1155-1238: Այս երկի մասին տե՛ս *Меликсет-Бек*, К вопросу, с 208-222:

66 Հունարեն բնագրի հրատարակությունը տե՛ս *PG*, t. 106, p. 494-786: Հայերեն թարգմանության հրատարակումը՝ *Մեկնութիւն Յայտնութեան*: Տե՛ս նաև *Ակիմեան*, Ներսես, էջ 267-273:

նում այն Հատվածներում, ուր մեկնվում է «Յովհաննու Յայտնութեան» մեջ կանխատեսվող բարքերի ապականության և քաղաքի զարհուրելի աղտեղություն մասին գլուխը⁶⁷: Այս Հատվածը Արեթասն ու Անդրեսսը մեկնում են որպես Կոստանդնուպոլսի կործանման մասին գուշակություն⁶⁸:

Թարգմանելով այդ մեկնությունը, Ներսես Լամբրոնացին և Կոստանդին Հերապոլսեցին փորձել են ս. Սահակի «Տեսիլքին» Հակադրել «Յովհաննու Յայտնութեան» կանխագուշակությունը: «Առ Յուսկան» թղթում Ներսես Լամբրոնացին այդ առիթով գրում է. «Եւ զայս Յօհաննէս կանխաւ ի վերայ Կոստանդնուպալսի ետես, եւ մեկնիչքն Անդրէաս եւ Թէտալիոս (այսպե՛ս) մանրամասնաբար Հելլենացի բարբառով եւ գրով ի վերայ նորին լուծին, որ կայ առ իս նոյն գրովն եւ Հայ թարգմանութեամբ: Զոր ինձ թուի թէ իմաստունքն, որ ըստ Սահակայ տեսլեանն զգուշացեալ խորշեցան ի Հայոց Կոստանդին ՈւռՀայեցին, եւ Գերամարտիկ Կլայեցին, եւ յենաւք երէց Վահկացին, ոչ էին ընթերցեալ. զի այս կարի սոսկալի եւ քստմնելի նախատինք է քան զՍահակայ ջնջեալ գիրն վարուց եւ Հաւատոց. եւ արեան Հեղման եւ կախարղութեան, բաւական էին Համարեալ զփոքր չարեացն Հաղորդութիւն յորում էին՝ քան զմեծամեծացն առ որ ընթացան»⁶⁹:

Ելնելով վերոհիշյալ փաստերից, Կոստանդին Հերապոլսեցու և Ներսես Լամբրոնացու Համատեղ թարգմանական աշխատանքների թվում կարելի է դասել նաև ՊԽՄ ժողովածու մտած կայսր Մանուել Ա. Կոմնենոսի և Միքայել Գ. Անքիլոս պատրիարքի նամակների Հայերեն թարգմանությունների վերջնական բնագրերը, որոնց նախօրինակները պետք է պահպանվեն Հռոմիլյայի նոտարատան պահոցում:

Համագործակցելով ազգություն մերային, Հերապոլսի մետրապոլիտ Կոստանդինի Հետ, Ներսես Լամբրոնացին 1179–80թթ. Հունարենից Հայերեն են թարգմանել վերոհիշեալ աշխատությունները Հայոց կաթողիկոսի աջակցուն մեկենասություն⁷⁰: Այդ Համատեղ թարգմանությունների իրագործման աշխատանքանակի մասին Ներսես Լամբրո-

67 Թովհաննու Յայտնութեան, ԺԸ:

68 Տես ԲԳ, t. 106, p. 720-725, հմտտ. Մեկնութիւն Յայտնութեան, էջ 234-244:

69 Թոսկան, էջ 26:

70 Այդ նամակների վերաբերմամբ էլ կարելի է ասել. «Կաթողիկոս... Գրիգորիոս ... հրամայեաց թարգմանել ի ձեռն մետրապալսից Յերապալսի Կոստանդեայ» (տե՛ս Ակիմեան, Ներսես, էջ 269), «Կամաքն...կաթողիկոսից Գրիգորոյ թարգմանեցի զաս ... ի ձեռն մետրապալսից Յերապալսի Կոստանդեայ» (Ակիմեան, Ներսես, էջ 288):

ՄԱՍՆ Գ.

ՀՌՈՄԿԼԱՅԻ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԲԱՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԽՆԴԻՐԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

ՀՌՈՄԿԼԱՅԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՎ ՊԽՄ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՉՄՏԱԾ ՆՐԱ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Ժողովի հրավիրման պարագաները. ՊԽՄ-ի ծանոթագրու-
թյուններից մեկում, որը վերաբերում է Մանուել Ա Կոմնենոս կայսեր
առ Հայոց կաթողիկոս թղթին (№ 22) և Կոստանդնուպոլսի եկեղեցա-
կան ժողովի մասնակիցների ստորագրած պատրիարքական նամակին
(№ 23), Ներսես Լամբրոնացին անդրադառնում է նշված վավերագրերի
պատասխանների գրման պարագաներին: Ըստ ՊԽՄ-ի կազմողի՝ ընդ-
առաջ գնալով Հայոց կաթողիկոսարանին, բյուզանդական կողմն.
«փոխան ինն գլխոցն՝ զոր ի ժամանակս Երանելոյն տեառն Ներսիսի
խնդրէին, որ ծանր թուէր յաչս մեր, միայն զսա խնդրեցին զհաւատոյս
բան՝ նիւթ միաբանութեան, եւ քննեալ զսոյն գտին ուղղափառ եւ
համաձայն սրբոյ Հարցն»¹: Իրոք, Մանուել Ա Կոմնենոսի և Միքայիլ
Գ Անքիլոսի 1176 թ. գրված նամակներում Բյուզանդական եկեղեցին
այլևս չէր պաշանջում անվերապահորեն հրաժարվել բանավեճի ա-
ռարկա դարձած ծիսական անհամաձայնությունները վերացնելու
պաշանջից և, ճանաչելով Հայոց դավանանքի ուղղափառությունը,
խնդրում էր, որ հավաքվելիք եկեղեցական ժողովը Հռոմկլայի սրբա-
զան քահանայապետի հետ համատեղ կրկին գրի հավատո խոստո-

¹ ԹԸ, 1871, էջ 180:

Թյունը պահպանել է ՊԽՄ ժողովածուն. «Եւ ժողովեցան յամենայն
 քաւառաց եպիսկոպոսք ի սուրբ Պատքայն, ի Հայրապետական աթոռն
 Հռոմկլայ՝ որ է առ ամին Եփրատայ...»⁷: Ակնհայտ է, որ ժողովը գու-
 մարվել է կաթողիկոսանիստ Հռոմկլա բերդաքաղաքում, սուրբ Զատիկի
 տոնակատարութեան օրերին: Հռոմկլայի ժողովի թվականը պարզելու
 ամենակարևոր տեղեկությունը այդ Հավաքի կողմից Բյուզանդական
 պատրիարքին ուղղված ժողովական նամակի խորագրի հետևյալ Հատ-
 վածն է. «...պատասխանի թղթոյն Միքայէլի պատրիարքին՝ որ նախ
 քան զայս փոխեցաւ յաշխարհէ ի Քրիստոս»⁸: Հայտնի է, որ Միքայել
 Գ Անքիալոս պատրիարքը մահացել է 1178 թ. մարտ ամսին⁹: Ուրեմն՝
 սկզբնաղբյուրում հիշատակված Պատեքի տոնակատարությունը Հա-
 մապատասխանում է 1178 թ. ապրիլի իննին¹⁰: Ելնելով այս իրողու-
 թյունից, Հռոմկլայի եկեղեցական ժողովը կարելի է թվագրել 1178 թ.
 ապրիլի 9-ից հետո ընկած մոտակա շաբաթվա ժամանակահատվա-
 ծով¹¹, քանի որ ըստ նույն սկզբնաղբյուրի. «կատարեալ զփրկազործ
 աւուրս չարչարանաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի միասին, եւ
 յետ այտորիկ պարապեցին ի քննութիւն դրեցելոց թղթոցս ի թագաւո-
 րէն Հռոմոց եւ յեկեղեցւոյն»¹²:

Ժողովը հրավիրվել է Հռոմկլայում, ուր և ընթերցվել է Ներսես Լամբրոնացու Ասե-
 նաբանությունը (տե՛ս Ակիմեան, Ներսես, էջ 29-35, 193-194):

7 ԹԸ, 1871, էջ 180:

Արել արք.Մխիթարյանը մատնացույց է անում Հռոմկլայում գումարված երեք
 ժողով.

ա) Առաջին ժողով, որը տեղի է ունեցել 1165 թ.: Այստեղ Ամենայն Հայոց կաթո-
 ղիկոս է ընտրվել Ներսես Դ Օնորապին,

բ) Երկրորդ ժողով, որը թվագրվում է 1172թ. հետո ընկած ժամանակաշրջանով,
 հրավիրվել է, սակայն տեղի չի ունեցել: Այստեղ, ըստ նրա, պետք է քննարկվեին նաև
 բյուզանդական եկեղեցու ինը պահանջները,

գ) Երրորդ ժողովը նա թվագրում է 1179 թ., ուր, ըստ նրա, հավաքվել էին երեք-
 հարյուր երեսուցեց եպիսկոպոս: Այս ժողովին չեն մասնակցել Արևելյան եպիսկոպոս-
 ները (տե՛ս Մխիթարեանց, Պատմութիւն, էջ 111-117):

8 ԹԸ, 1871, էջ 192:

9 Տե՛ս Grumel, La Chronologie, p. 436:

10 Grumel, La Chronologie, p. 257, Բառապան, Օրացույցի, էջ 439:

11 Ժողովի գումարման թվականը ճշտելիս ընտրել ենք Ռ. Ներսես Ակիմյանի որոնքած
 ճանապարհը, սակայն բազմավաստակ հայագետը կարծում է, թե Միքայել Գ Անքի-
 ալոս պատրիարքը մահացել է 1177թ. մարտ-ապրիլին: Նա հղում է բյուզանդագետ
 Լըբոյի վարդուց հնացած աշխատանքը: Հետևաբար, ըստ Ն.Ակիմյանի, ժողովն էլ գու-
 մարվել է 1177 թ. ապրիլի 24-ց հետո (տե՛ս Ակիմեան, Ներսես, էջ 33):

12 ԹԸ, 1871, էջ 180:

րիարքին¹⁶: Վավերագրերից երկրորդի տակ ստորագրել են 33 ժողովականներ (Վավերագրագիտական ցանկ, № 24, 25):

Այժմ հարկ ենք համարում ուշադրութուն հրավիրել Ներսես Լամբրոնացու մատենադրական մի քանի երկերի վրա, որոնք առնչություն ունեն քննարկվող ժողովի հետ: Նկատի ունենք նրա գործունեության վաղ շրջանին պատկանող երկերի ժողովածուն, որը վերաբերում է Հայ-բյուզանդական բանակցություններում արժարժված ինդիքներին: Այդ ժողովածոյի մեզ հասած օրինակներն ընդօրինակվել են 1205-6 թ. Ներսես Լամբրոնացու քրոջ որդու՝ Ներսես քահանայի մեկենասությամբ արտագրված ձեռագրից¹⁷: Վերջինս այս հավաքածոյի վերջում ընդօրինակել է տվել նաև Գրիգոր Սկևռացու¹⁸ գրած՝ Ներսես Լամբրոնացուն ձոնված. «Ներբողեան պատմագրաբար ասացեալ ի վարս մեծի քահանայապետին սրբոյն Ներսէսի արհիեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկիցոց» վարքագրական երկը¹⁹, որը ստեղծվել է մատյանի ընդօրինակումը ասպհովող մեկենասի՝ Ներսես քահանայի ինդրանքով²⁰: Ձեռագրերի այս խմբին են պատկանում Վատիկանի դրադարանի Բորգյան հավաքածոյի № 84 (1325 թ.)²¹, Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց Մատենադարանի № 146 (1551 թ.)²² և Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 10509 (1618 թ.)²³ մատյանները:

գ) Տրվում է Հայոց եկեղեցու դավանանքի բանաձևը, ուր ոչ մի տեղ չի հանդիպում երկու բնություն արտաբայությունը:

- 16 Տե՛ս Վավերագիտական ցանկը, № 25: Բյուզնդական պատրիարքին ուղղված թղթում տրված է Հայոց եկեղեցու դավանության բանաձևը, ուր (այս բանակցությունների պաշտոնական գրագրությունների մեջ առաջին անգամ), միայն մեկ դարձվածքով հանդիպում ենք «Խոստովանիմք համաձայն ձեզ ի Ռրիստոսի անճառ միութիւնն երկու բնութեան տեսութիւն» (ԹԸ, 1871, էջ 196):
- 17 Ալիճեան, Ներսես Լամբրոնացի, էջ 165-167, Մաքևոսյան, Հայերեն, էջ 48-53:
- 18 ԺԲ դարի երկրորդ կեսի և ԺԳ դարի սկզբի վաճակաճ այս գործչի գործունեության մասին տե՛ս Ալիշան, Միստան, էջ 100-101: Գրիգոր Սկևռացու մատենագրական վատակի մասին տե՛ս Հակոբյան, Սկևռայի, էջ 34-35:
- 19 Գրիգոր Սկևռացի, Ներբողեան, էջ 5-90:
- 20 Ալիճեան, Ներսես Լամբրոնացի, էջ 9:
- 21 Այս ձեռագրի նկարագրությունը տե՛ս Tisserant, Codices, p. 177-185 (այսուհետև՝ ՎԲՄ, 84):
- 22 Նկարագրությունը տե՛ս Պողոտեան, ՄՅՁՍՅ, հտ. Ա, էջ 417-419 (այսուհետև՝ ԵՅՄ-146):
- 23 Տե՛ս Սիլովեան, Երոսպայի, էջ 45-51 (այսուհետև՝ ՄՄ 10509): Ըստ Ա. արք. Սյուրմեյանի, դեռևս 1949 թ. օգոստոսի երեքին ձեռագիրը պատկանել է փարիզաբնակ Jean Pozzi-ն: 1971 թ. ապրիլի 30-ին մատյանը Փարիզում աճուրդի է հանվել: Այն գնել են Երվանդ Լյուսյանը (Միլան), Մուշեղ Միլերճյանը (Մոնակո), Մուշեղ և Պետրոս Մելքոնյան Երազյանը (Դեյաստո), Արծրուն Ջրբաշյանը (Մարսել) և հանձնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանը ստացել է ձեռա-

Բոլորն էլ ունեն նախօրինակի՝ 1205/6 թ. արտագրված ձեռագրի Հիշատակարանները: Միայն ՄՄ 10509 մատյանում Գրիգոր Սկևռացու «Ներբողեանը» և դրա Հիշատակարանն ու 1205/6 թ. Ներսես քահանայի Հիշատակարանը տեղադրված են Ներսես Լամբրոնացու Պատարագի մեկնության միջնամասում՝ «Օրէնք արկանելոյ սպաս եկեղեցւոյ» գլխից առաջ: Մեր կարծիքով, ՎԲՄ 84 և ԵՅՄ 146 ձեռագրերը Հարազատորեն են պահպանել նախօրինակի նյութերի դասավորությունը.

ա) Ատենաբանություն²⁴,

բ) Գլխակարգություն Հոռոմոց ... և լուծմունքն առընթէր եղեակ²⁵,

գ) Խնդիրք Հայոց²⁶,

դ) Խորհրդածություն ... (և Պատարագի մեկնութիւն²⁷:

Ձեռագրերի այս խմբում պահպանված Հիշատակարաններից երևում է, որ Ներսես Լամբրոնացին վերոհիշյալ երկերը գրել է 1177/8 կամ 1178/9 թվականին²⁸: 1189/90 թ., Հիշյալ երկերը պարունակող անձնական մատյանը գրել է ընկնում և միայն 1192/3 թ. է Հաջողվում այն ազատագրել գերությունից²⁹: 1193/4 թ. Ներսես Լամբրոնացին կրկին վերանայում և արտագրում է մատենագրական երկերի այդ խումբը առանձին մատյանի մեջ, որից էլ մեծ բարեխղճությամբ ընդօրինակում են Սկևռայի վանական Ավետիքը և Ս.Զորավար եկեղեցու կլերիկոսներից³⁰ (քահանաներից) մեկը. «Ընդաւրինակեցաւ զիրքս այս ըստ առաջին գրեալսն ձեռամբ սրբոյ առնն Աստուծոյ և

գիրն Ամենայն Հայոց կաթողիկոս, երջանկահիշատակ Վազգէն Ա-ից: Այս տեղեկությունները քաղել ենք մատյանի կազմի վրա ստանձված հիշատակագրությունից:

24 Տե՛ս Ներսես Լամբրոնացի, 1838, էջ 91-202:

25 Տե՛ս Պալենան, Պատմութիւն, էջ 260-266:

Ուշ շրջանի որոշ ձեռագրերում այս բնագրին հաջորդում է հետևյալ հիշատակագրությունը. «Կատարեցաւ պատասխանիսն թ՝ գլխոց խնդրոցն Հոռոմոց. և ընդ մինն է խնդիրս ևս ի կողմանէն Հայոց ժողովոյն, գոր հանդերձ թղթիւք և խոստովանութեամբ առաքեցին ան արքայն և պատրիարգն՝ կաթողիկոսն Հայոց Գրիգոր ձայնակցութեամբ ընդհանոր ժողովոյն» (ՄՄ-3062, թղ. 122ա):

26 Տե՛ս նոյն տեղում, էջ 266:

27 Այս երկի կառուցվածքի մասին ավելի մանրամասն տե՛ս Ալիքեան, Ներսես, էջ 159-162: Նյութերի մեզ հետաքրքրող հերթականությամբ հրատարակությունը տե՛ս Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնը, էջ 1-555:

28 Տե՛ս ՎԲՄ 84, թղ. 49բ, 373ա:

29 Գարեգին Ա, Յիշատակարանք, սյուն 467:

30 Հմտ. Ալիքեան, Ներսես Լամբրոնացի, էջ 166:

Հաւատարիմ պաշտաւնէի Քրիստոսի Ներսիսի: Վասն որոյ զգուշացի իւրաքանչիւր ոք, թէ ո գիտէ, եւ առցի ի զաղափար բանի եւ գրոյ՝ Հրամանի եւ ստորատի եւ տան»³¹:

Հիշատակարանից Հատակ երևում է, որ երկերը զրված են եղել Հասարակութեան կողմից քննարկվելու համար. «միանգամ եւ երկիցս Հանի զսա յատեան եւ ի ժողովս եպիսկոպոսաց եւ ի իշխանաց, եւ ոչ եղև պարապումն գոնէ ընթերցման կամ ունկնդրութեան»³², բողոքում է Տարսոնի արքեպիսկոպոսը: Այս տողերից կարելի է կռահել, որ Ներսես Լամբրոնացին Հռոմկլայի ժողովի նախօրյակին դրած այս երկերում առկա գրութիւնները փորձել է քննարկման առարկա դարձնել ժողովում, սակայն ապարդյուն են անցել նրա բոլոր ջանքերը, և նա 1193/4 թ. վերստին արտագրում է դրանք սերունդներին պահ տալու մտահոգութեամբ³³: Այս ենթադրութիւնը հաստատում է նաև Ներսէս Լամբրոնացու հետևյալ տողերով. «Զկանխաւ լուութեան պտուղն ի թուին ՈՒԷ (= 1178/9). աստ վերստին շարադրեալ թողի զկնի եկեղեցւոց նուաստ Ներսէս ի թուականիս ՈՒԷ և Բ (= 1193/4)»³⁴:

Չեռագրերի այս խումբն է ավանդում նաև Ներսես Լամբրոնացու «Ատենարանութեան» խորագրի³⁵ հնագույն տարբերակը. «Սուրբ եւ տիեզերական ժողովոյն, որ եղև ի շրջան ընթացից ժամանակի . ՈՒԶ. թուականէ»³⁶. Հրամանաւ Գրիգորիսի՝ յաջորդի առաքելական Աթոռոյ³⁷ Գրիգորի: Համաձայնութիւն Ներսէսի նուաստ նոցին պաշտաւնակցի»³⁸: Ինչպես վերևում տեսանք, Հռոմկլայի եկեղեցական ժողովի

31 Արտատպում, Հայերեն, էջ 53:

32 Գաղտնիք 11, Յիշատակարանք, սյուն 467:

33 Նույն տեղում, էջ 467:

34 ՎՐԱՄ - 84, թղ. 49ա:

35 Մ.Օրմանյանն անդրադառնալով Հռոմկլայի ժողովից մեզ հասած վավերագրերին, ընդգծում է. «Ժողովական գործեր չգտնուելուն վրայ, ոմանք այդ ժողովին պատշաճեցուցին Լամբրոնացիի Եշանաոր Ատենաբանութիւնը...» (Օրմանյան, Ազգապատում, էջ 1469): Մ.Օրմանյանին պարզապես հայտնի չի եղել Ատենաբանության վերոթվարկյալ ձեռագրերում առկա խորագիրը: Վաստակաշատ հայագետի կարծիքը ճշմարիտ է այնքանով, որքանով որ Ատենաբանությունը գրվել է Հռոմկլայի ժողովում ընթերցվելու նպատակով, սակայն ամենայն հավանականությամբ, ինչպես վկայում է հեղինակը՝ չի ընթերցվել:

36 Թուականի) ԵՅՄ 146, ՄՄ 10509:

37 սրբոյ] ՄՄ 10509:

38 ՎՐԱՄ - 84, թղ. 3ա: ԺԴ դարի սկզբի մի այլ ձեռագրում նույն երկն արդեն վերնագրված է. «Յաստուածախոմք եւ ի տիեզերական ժողովն Տարսոնի, որ եղև ի համահրեշտակ կաթողիկոսէն Հայոց Գրիգորէ՝ եղբարորդոյ սրբոյն Ներսէսի Կլայեց(ւ)ոյն եւ ի քրիստոսապսակ արքայէն Հայոց Լեւոնէ, սակա միութեան եկեղեցոյ: Ատենական խաւար մեծին եւ սրբոյն Ներսէսի՝ այնմ աստուածապառ քաղաքի արթ-

ա) Հալեպի աթաբեկություն - Հայոց կաթողիկոս (Հոսովլա) Եղեսիայի արքեպիսկոպոս և Ապամեայի եպիսկոպոս⁴²,

բ) Ասորպատական (Ելիտուղյաններ) - Աղվանից կաթողիկոս [Չարեք բերդ⁴³], Սյունյաց արքեպիսկոպոս [Տաթև], Դվինի արքեպիսկոպոս, Նախճավան, Հեր և Զարեվանդ, Սալմաստ և դրանն Պարսից եպիսկոպոսներ,

գ) Վրաստան - Տփլիսի արքեպիսկոպոս [Հաղբատի վանահայր]⁴⁴,

դ) Անտիոքի դքսություն Անտիոքի արքեպիսկոպոս, և Լատիկիայի (կամ Լատակիայի) եպիսկոպոս⁴⁵,

ե) Երուսաղեմի թագավորություն - Երուսաղեմի արքեպիսկոպոս,

զ) Իկոնիայի սուլթանություն - Կապադոկիան Կեսարիայի, Մելիտենի, Սեբաստիայի և Նեոկեսարիայի եպիսկոպոսներ,

է) Կիլիկիայի հայկական իշխանություններ - Տարսոնի արքեպիսկոպոս, Անարզաբայի, Սելևկիայի, Մամեստիայի, Կոկիսոնի եպիսկոպոսներ,

ը) Շեղդադյան ամիրայություն - Անիի արքեպիսկոպոս և Կարսի եպիսկոպոս⁴⁶,

թ) Սալզուխյան ամիրայություն - Թեոդոսուպոլիս-Կարինի արքեպիսկոպոս⁴⁷,

42 Մոնեսիան, Հոսովլան և Ապամեան Հալեպի արքեպիսկոպոսներն նվաճել է 1144-1151 թվականներին (Cahen, Syrie, p. 368-373, Elisséeff, Nur ad-Din, t.I, p.165): ԺԲ դարի 70-ական թվականներին Հոսովլայի ենթակայությունը Հալեպի արքեպիսկոպոսին կապված չի հարուցում: Այդ են վկայում Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի ընտրությանը նախորդած իրադարձությունները (տե՛ս MS, t. III, p. 353-354):

43 Աղվանից կաթողիկոսների նստավայրը այս շրջանում Կիրակոս Գանձակեցին համարում է Չարեք բերդի մոտակայքում գտնվող քարայրը (տե՛ս Կիրակոս, էջ 178, հմմտ. Բարխուտարեանց, Պատմութիւն, էջ 189):

44 Այս եպիսկոպոսական աթոռի նստավայրը Հաղբատն էր, տե՛ս Մարգարյան, Հյուսիսային, էջ 213-214, ծան. 274:

45 Cahen, Syrie, p. 325.

46 Ըստ Վ.Բարսուղի և Կ.Հեյվուդի 1161-1206թթ. քաղաքը պատկանել է Օեդդալյանների (տե՛ս Barthold, Kars, p. 697):

47 Ըստ Հ.Ինալչիկի 1178 թ. քաղաքը գտնվել է Սաղդուխյանների ձեռքին (Inalcik, Erzurum, p. 730, հմմտ. նաև Լ՛իտիկեան, Պատկերագրորդ, Բ, էջ 311): Այս մասին տե՛ս նաև Սաղդուխյան ամիրաների ժամանակագրությանը նվիրված նորագույն հրատարակման մեջ. Խաչատրյան, Կարճո, էջ 116, 124:

ժ) Խլաթի ամիրայութիւն (Շահի-Արմեններ) - Բզնունիքի, Մանազկերտի, Տարոնի եպիսկոպոսներ⁴⁸,

ժա) Արտուքյան ամիրայութիւն - Ծոփքի, Սամոսատի, Աշմուշատի (Արշամաշատ), Նիրիկերտի եպիսկոպոսներ,

ժբ) Բյուզանդական կայսրութիւն - Կիպրոսի եպիսկոպոս:

Այսպիսով, Հռոմկլայի ժողովին մասնակցող 33 բարձրաստիճան հողեորականները ներկայացնում էին Մերձավոր Արևելքի տասներկու քաղաքական միավոր:

Բացի Հայոց եկեղեցու սպասավորներից, Հռոմկլայի ժողովին մասնակցել են նաև Հակոբիկ-ասորական եկեղեցու ներկայացուցիչներ, որոնց մասին ՊԽՄ-ում ընթերցում ենք. «ընդ նոսին (իմա՛ Հայ հողեորականներ-Ա.Բ.) և յեպիսկոպոսապետէն Ասորւոց վարդապետք և իմաստուն արք»⁴⁹:

48 Աղբյուրների սակավության պատճառով դեռս լիովին ճշգրտված չեն այս և Քաջորդ ամիրայության անվանները:
49 ԹԸ, 1871, էջ 180:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՆՏԻՈՔԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԱԹՈՒԻ ՀԱՐՅՈՒ
ԺԲ ԴԱՐԻ ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Տրեղերական եկեղեցու կառուցվածքի, պատրիարքական աթոռների և Համաշխարհային եկեղեցական կաղմակերպությունների Հետ Հայոց եկեղեցու փոխհարաբերությունների ուսումնասիրության Համար Հնագույն սկզբնաղբյուրներ է տրամադրում Հայոց մատենագրությունը: Սակայն այդ բնագրերը շրջանառության մեջ են դրվել միմյանցից անկախ ու մասնագիտական գրականության մեջ չեն քննարկվել միասնական ժամանակագրական շղթայի մեջ, քանի որ միայն դրանցից մի քանիսն են առանձին հարցերի կապակցությամբ գրվել մասնագետների ուշադրությունը: Այս տեսանկյունից, մեզ հետաքրքրող սկզբնաղբյուրներին ավելի մասնագիտորեն և հաճախ են անդրադարձել այն հեղինակները, ովքեր զբաղվել են Մխիթար Գոշի Դատաստանագրքի բնագրով և նրա սկզբնաղբյուրներով¹: Համաբնույթ սկզբնաղբյուրների մի այլ խումբ՝ Գրիգոր Լուսավորչի տոհմի կաթողիկոսների գործունեությանը նվիրված Անանունի վարքագրական երկու հուշարձանները թվագրել և Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության Համապատասխան Հատվածի հետ համեմատելով

¹ Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 246-259, ծան. 247-259, ավելի մանրամասն տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի, էջ 135-137, 398-400, 585-599, ծան. 145-149: Մխիթար Գոշի Դատաստանագրքի այս հոդվածի սկզբնաղբյուրը բյուզանդագետ Հրաչ Բարթիկյանը ենթադրաբար համարում է ինչ որ բյուզանդական զաֆանակ (κλητορολόγιον), որը թարգմանված պետք է լիներ Ներսես Լամբրոնացու կողմից (տե՛ս Бартикан, О византийском, с. 197-204, հմտ. Գաև Bartikian, Buzantino, p. 239-259):

բանասիրական մանրակրկիտ քննության է ենթարկել Աշոտ Սարգսյանը²:

Հայկական սկզբնաղբյուրների՝ պատրիարքական աթոռների թվին և Հերթականությանը վերաբերող Հատվածները Հավաքել և արևելյան մյուս սկզբնաղբյուրների հետ Համեմատության մեջ է դրել պրոֆ. Միշել վան Էսբրուկը³: Տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցին վերաբերող Հարցերը քննարկվել են նաև եվրոպական միջնադարագետների կողմից, որոնք ուսումնասիրության ելակետ են ընդունել կա՛մ Հռոմի⁴, կա՛մ էլ՝ Կոստանդնուպոլսի⁵ եկեղեցու դիրքորոշումը այս խնդրի կապակցությամբ:

Եթե հետևենք մատենագրական երկերի ստեղծման ժամանակագրությանը, Հայտնի կդառնա, որ ժամանակի ընթացքում փոփոխվել են պատկերացումները տիեզերական եկեղեցու կառուցվածքի, պատրիարքական աթոռների ու նրանց թվի և Համաշխարհային եկեղեցական նվիրապետության սահմաններում Հայոց եկեղեցու տեղի ու դերի մասին: Նկատի ունենալով այս խնդիրների նկատմամբ Հայոց դերի մասին: Նկատի ունենալով այս խնդիրների նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքի ու վերաբերմունքի փոփոխությունները, ինչպես նաև նմանաբնույթ Հարցերի ուսումնասիրությունն ավելի նպատակաուղղված դարձնելու միտումով, Հարմար նկատեցինք Հայոց մատենագրությանը Հայտնի սկզբնաղբյուրները բաժանել երեք ժամանակագրական խմբի.

ա) Ե-է դարերի մատենագրական Հուշարձաններ: Հայերեն սկզբնաղբյուրներին դեռևս Հայտնի չէ տիեզերական եկեղեցու այն կուլտուրային աստիճանական կառուցվածքը, որը վերջնականապես ձևավորվում է Քաղկեդոնի ժողովում և տեսական Հիմնավորում ստանում արդեն Հետագա դարերում:

բ) Ը-ԺԱ դարերի մատենագրական Հուշարձաններում արդեն փորձ է կատարվում ներկայացնել տիեզերական եկեղեցու նվիրապետության կառույցը, ելնելով Դիոնիսիոս Արիոսապացու «Ցաղագս երկ-

2 Աղագսագ, Հովհաննես, էջ 117-136:

3 Տե՛ս Esbrock, Primaute, pp. 493-521: Նմանարձույթ հարցերի մի այլ խմբի թելգիացի ուսումնասիրող անդրադարձել է Գաև մեկ այլ հրատարակման մեջ (Esbrock, Rome, p. 351-355):

4 Այդ խնդրին նվիրված գրականության մեջ պետք է առանձնացնել հետևյալ քննադատական աշխատությունները. Vries, Orient, Ratzinger, Primat, Kane, The Jurisdiction.

5 Կոստանդնուպոլսի եկեղեցու տեսանկյունից այս հարցերի քննարկումը և հիմնական գրականության հիշատակումը տե՛ս Beck, Kirche, p. 27-37, հմմտ. Գաև Dvornik, Idea, p. 241-244.

նային քահանայութեան» երկում դասակարգված ինն հրեշտակապետական աթոռներին վերաբերող տեսություննից:

զ) ԺԲ դարի 60 - 70 - ական թթ. Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների առնչութեամբ, Ներսես Լամբրոնացին մի նոր երանգ է ավելացնում Տիեզերական եկեղեցու նվիրապետութեան շրջանակում Հայոց եկեղեցու տեղին ու նրա գլխի նոր բնակամանք՝ ելնելով տարածաշրջանում ուժերի եկեղեցական և քաղաքական նոր բաժանումից:

Ա. Ե-Է դարերի մատենագրական հուշարձանների ավանդույթը. Նշված ժամանակաշրջանի Հայոց գրական երկերին, իհարկե, ծանոթ են տիեզերական եկեղեցու նվիրապետութեան պաշտոննութեան տարբեր աստիճաններում գործիչներ և բաղմամբիվ հպիսկոպոսական ու թեմական աթոռներ, որոնք վճռորոշ դեր ունենին Տիեզերական եկեղեցու գործերում, սակայն դրանց փոխհարաբերություններում դեռևս ամբողջովին չեն հստակված նվիրապետական աստիճանները, դեռևս բացակայում են հոգևոր կյանքի այդ ոլորտը տեսականացնող երկերը:

6 Այդ կառույցը տեսականացնելու առաջին փորձերից մեկը Տիեզերական եկեղեցու մեջ կատարված է «Ասմանք և կանոնք զոր եղին աշակերտքն Բրիստոսի եկեղեցոյ սրբոյ յետ վերանալոյ տեսուն» երկում (հայերեն բնագիրը տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Ա, էջ 18-66): Հետաքրքիր է, որ այստեղ Պետրոսն է դիտվում «վե՛մն հաւատոյ, հիմն եկեղեցոյ, անդրանկն առաքելոց» (էջ 22): Այս կանոնախմբի Զ հոդվածում առաքյալները հաստատում են երեցների, սարկավագների և կեսսարկավագների կարգերը. «եւ սարկավագունք սպասատրք երիցանցն կարգեսցին, եւ ընտրեսցն՝ երիցունք» (էջ 31): Այս նույն հոդվածում սահմանվում է նաև «Կաթողիկոսն դէտ եւ գլոյս եւ արե՛նցոյի լիցի ժողովրդեանն» (նույն տեղում): Այս կանոնախմբի ԼԴ հոդվածում խոսվում է նաև այն մասին, թե աշխարհի ո՞ր անկյունում են քարոզել առաքյալներից յուրաքանչյուրը: Այստեղ ըստ հերթականության նախապատիվ են հետևյալ աթոռները. ա) Երուսաղեմ (Հակոբի), բ) Աղեքսանդրիա (Մարկոս Ավետարանիչի), գ) Հնդկաստան և հարակալ շրջաններ (Թովմայի), դ) Անտիոք, Սուրիա, Կիլիկիա, Գալատիա (Սիմոն վե՛մի), ե) Հրոն (Սիմոն վե՛մի), զ) Եփեսոս և Թեսաղոնիկե, աշխարհն Կորնթացոց և Աքայեա (Հովհաննես Ավետարանիչի), է) Նիկիա և Նիկոմիդիա, Բյուրանացիների աշխարհը եւ Գուտիացիք (Անդրասի), ը) Բյուզանդիա, Թրակիա (Ղուկաս Առաքյալի), թ) Ուոհա, Միջագետք, Հայք (Թադդեոսի), ժ) Պարսք, Պարթևք, Ասորեստան, Խոմաստան և այլն (Թադդեոսի աշակերտ Ադդայի) [էջ 58-64]:

Կղեմեսի «Կանոնք երկրորդ առաքելականք»-ում (Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 67-100) խոսվում է միայն նվիրապատական վեց աստիճանների մասին. ա) եպիսկոպոս, բ) երեց, գ) սարկավագ, դ) կեսսարկավագ, ե) գրակարդաց, զ) սաղմոսեդգու (վերջին երեքը մասին խոսվում է միայն ՀԷ հոդվածում):

«Կանոնք հարանց հետևողաց» (Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 101-113) կանոնախմբումը գիտե եպիսկոպոս, քորեպիսկոպոս, սերետուս (հոդվ. ԻԵ), վարդապետ(հոդվ. Զ, է և այլն), քահանա, երեց կամ մոնազոն(հոդվ. ԺԳ):

Հայտնի է, որ Գ- Դ դարերի տիեզերական եկեղեցու նվիրապետական կառույցը սերտ կապի մեջ է Հռոմեական կայսրության վարչատարածքային բաժանման սկզբունքների հետ⁷: Հիմնական եպիսկոպոսական աթոռները տեղաբաշխված էին դիոցեզների և պրովինցիաների մայրաքաղաքներում⁸: Արդեն քրիստոնեական կազմակերպության ձևավորման փուլում առանձին եպիսկոպոսական աթոռներ են հիշատակվում նաև Սասանյան Պարսկաստանի տարածքում: Վաղ քրիստոնեական շրջանի եպիսկոպոսական աթոռների թվի և աշխարհազրական տեղաբաշխվածության ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրներն են տիեզերական և տեղական եկեղեցական ժողովների արձանագրությունները Հաստատող եպիսկոպոսական ստորագրությունները և եկեղեցական կազմակերպության կառուցվածքի ուղղակի և անուղղակի Հնագույն նկարագրությունները⁹: Արդեն իսկ տիեզերական ժողովների առաջին կանոններում փորձ է կատարվում կանոնակարգել նաև եկեղեցական կառույցը: Այդ վավերագրերը ժամանակին թարգմանվել են նաև Հայերեն: Նիկիայի ժողովի 2 կանոնում Աղեքսանդրիայի, Հռոմի և Անտիոքի եպիսկոպոսական աթոռները նախադաս են Համարվում, իսկ է-ում՝ Երուսաղեմի (Αἰλία) աթոռն իր պատվով Հավասարեցվում է մայրաքաղաքային աթոռներին¹⁰:

7 Grotz, Die Hauptkirche, S. 4-5:

8 Dvornik, Idea, p. 4-6:

9 St' u Georgii Cyprii Descriptio, pp. LXXII, 246: Patrum Nicaenorum Nomina, XXV, 265, կոստանդնուպոլիս պատրիարքական աթոռին վերաբերող մինչև ԺԵ դարը բոլոր ցանկերի հրատարակումը տե՛ս Darrouzès, Notitiae:

10 «2. Նախնեաց սովորութիւն կացցէ յեգիպտոսս՝ զի Աղեքսանդրի եպիսկոպոսն ամենեցուն իշխեսցէ, վասն զի եւ Հռոմայեցոց եպիսկոպոսին այս սովորութիւն է, մոյնպէս նեցուն իշխեսցէ, վասն զի եւ Հռոմայեցոց եպիսկոպոսին այս սովորութեան պահեսցի յեկեղեցոց:... եւ Անտիոքացոց եւ այլ իշխանութիւնս եւ պատի մեծութեան պահեսցի յեկեղեցոց:... եւ վասն զի սովորութիւն կալա եւ կարգի գպատիւն, զի մայրաքաղաքացն ըստ արժանից պատուեսցի, ընկալցի ըստ կարգին գպատիւն, զի մայրաքաղաքացն ըստ արժանից պահեսցի պատիւն իր»: Հայերեն քննարկ վերջին հրատարակությունը տե՛ս Կանոնապահեսցի պատիւն իր»: Հայերեն քննարկ վերջին հրատարակությունը տե՛ս Կանոնապահեսցի պատիւն իր, հտ. Ա, էջ 120-121: Մինչև Նիկիայի ժողովը, Տիեզերական եկեղեցում հավասարապես աթոռների առանձնացման սկզբունքների մասին տե՛ս Grotz, Die Hauptkirche, S. 11-18:

Նիկիայի ժողովի կանոններում հիշատակվում են եկեղեցու պաշտոնեության հետևյալ աստիճանները. հայրապետ, կաթողիկոս (հողվ.Դ), եպիսկոպոս, քահանա կամ երեց, վարդապետ, առաջնորդ, օրենստույց (մուտք), սարկավագ (հողվ.Գ) և կին սարկավագ (հողվ. ԺԹ): Այս ժողովի կանոնները արգելում են մոյն քաղաքում երկու եպիսկոպոս ունենալը (հողվ. Ը):

Եկեղեցու նվիրապետության մասին հետաքրքիր սկզբնաղբյուր է մաս Նիկիայի ժողովին մասնակցած եպիսկոպոսների ցանկը, ուր ըստ կարգի հիշատակվում են Հռոմի, Աղեքսանդրիայի (մրան ենթակա թեմայիղոսի և Լիբիայի), Երուսաղեմի, Անտիոքի և այլուհետև Փոքր Ասիայի ու Բալկանների թեմերի առաջնորդների անունները:

Ագաթանգեղոսի, Փալստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և մյուս հեղինակների երկերում մինչև Սեբեոս և վերջինիս ժամանակի պատմական սկզբնաղբյուրներում հաճախ են հանդիպում եպիսկոպոս, մետրոպոլիտ, կաթողիկոս, պատրիարք, հայրապետ և քորեպիսկոպոս տերմինները, սակայն դրանք չեն դրվում եկեղեցական նվիրապետության կողմ, աստիճանական համակարգում¹¹: Խնդիրն այս տեսանկյունից դիտելիս, արձանագրման է արժանի այն փաստը, որ սկզբնաղբյուրներում մերթընդմերթ առանձնանում են երկու մայրաքաղաքային աթոռների՝ սկզբում Հռոմի, ապա և Բյուզանդիոն-Կոստանդնուպոլսի թեմակալների նշանակությունը: Այս հարցում Հայոց պատմագրական ավանդույթը որոշակիորեն մոտենում է բյուզանդականին (կամ արևելահռոմեականին), որը, սակայն, եկեղեցական նվիրապետության ամբողջական կառույցը տեսնում է միայն Հռոմեական (նույն՝ Բյուզանդական) կայսրության տարածքներում¹²: Հայոց մատենագրական ավանդույթը, աղբվելով բյուզանդականից, ժամանակ առ ժամանակ ամրագրում է այս երևույթը, սակայն բավական ընդգծված է նաև բյուզանդականից հեռացող այն դրույթը, ըստ որի Հայոց եկեղեցին ամբողջական եկեղեցական կազմակերպություն է տեսնում նաև Սասանյան Պարսկաստանում¹³:

Համեմատաբար կուռ են պատկերացումները Հայոց եկեղեցեցու նվիրապետության կառուցվածքի մասին: Բոլոր հայկական սկզբնաղբյուրները զբեթե միաբերան պնդում են, որ Հայոց կաթողիկոսները մինչև Ներսես Մեծը ձեռնադրվել են Կեսարիայի առաջնորդի կողմից, որը մեր սկզբնաղբյուրներում հաճախ անվանվում է նաև կաթողիկոս: Միաժամանակ, սկսած ս. Գրիգոր Լուսավորչից, Հայոց կաթողիկոսները ձեռնադրում են երկու հարևան ժողովուրդների՝ վրացիների և աղվանների հոգևոր առաջնորդներին, որոնք կրում են երբեմն կաթողիկոս, երբեմն՝ եպիսկոպոս կամ արքեպիսկոպոս անվանումը:

Ինչպես տեսնում ենք, ի տարբերություն Հռոմեական, ապա և բյուզանդական պատկերացումների (ըստ որոնց եկեղեցու նվիրապետության սահմանները զբեթե ամբողջություն մը համընկնում են Հռո-

11 Մեր կարծիքով, սա առանձին խնդիր է և պահանջում է մանրակրկիտ քննություն:

12 Ասիայում Մսիեսոսի և Կոստանդնուպոլսի եպիսկոպոսական աթոռների առաքելական ծագման մասին տե՛ս Grotz, Die Hauptkirche, S. 31-35, Dvornik, The Idea:

13 Այդ տեսանկյունից մեր պատկերացումները բավական ընդարձակում են Ե դարի պատմական իրադարձությունները մկարագրող մեր երկու պատմիչները՝ Եղիշեն և Ղազար Փարպեցի, որոնք ուշագրավ վկայություններ են հաղորդում Պարսկաստանում գործող եկեղեցական կազմակերպության մասին:

աստիճանական անկում սկսեց ապրել Սասանյան Պարսկաստանի քրիստոնյաների նվիրապատական կառույցը¹⁶:

Սակայն Քաղկեդոնի ժողովի նշանակությունը բյուզանդական եկեղեցու համար էական էր ոչ միայն դավանական հարցերի տեսանկյունից: Այդ ժողովից հետո է հստակվում և ամբողջական դառնում Բյուզանդական եկեղեցու նվիրապետական կառույցը: Եթե մինչ այդ տիեզերական եկեղեցու ժողովներում հավասարների մեջ առաջին էին դիտում Հռոմի, Աղեքսանդրիայի, Անտիոքի թեմերը և ըստ պատվի նրանց էին հավասարեցնում Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի աթոռները, ապա Քաղկեդոնի ժողովում (կանոն ԻԸ) կայսեր անմիջական միջամտությամբ, ի հակակշիռ Հռոմի, բարձրացվում էր Կոստանդնուպոլսի եպիսկոպոսական աթոռի դերն ու հեղինակությունը, քանի որ այդ քաղաքում էին կենտրոնացվում կայսրության կառավարման լծակները, ի հեճուկա կայսրության ներքին կյանքում իր նշանակությունը հետզհետե կորցնող Հռոմի: Չնայած կայսրության հին մայրաքաղաքի եկեղեցին Քաղկեդոնի ժողովում կարողացել էր անցկացնել Հռոմի պապ Լևոն Ա-ի դավանական դրույթները, որոնք ստացել են «Լևոնի տոմար» անունը, այնուամենայնիվ եկեղեցական նվիրապետության շրջանակներում վերջին հաշվով Հռոմը քաղաքական պարտություն էր կրել Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռից, որին առանց ձևականությունների հովանավորում էր Բյուզանդական կայսրությունը: Պետք է նաև նշել, որ եթե մինչ այդ եկեղեցական կազմակերպության շրջանակներում առաջնության համար պայքարին մասնակցում էին նաև Աղեքսանդրիայի և Անտիոքի եպիսկոպոսական աթոռները, ապա Քաղկեդոնի ժողովից հետո նրանց դերը սաստիկ նվազեց Բյուզանդական կայսրության համակեղեցական կյանքում: Այդ պատրիարքությունների մեկբիտյան թեքերը դարձան Կոստանդնուպոլսի եկեղեցու կցորդը, իսկ Հռոմի եկեղեցին իրեն ենթացականության սպարիարքություններ ստեղծեց միայն ԺԲ դարում:

Կոստանդնուպոլսի եկեղեցական աթոռի դերակա դիրքը իր նովելներում վերջնականապես հաստատազրեց Հուստինիանոս Մեծը¹⁷: Սակայն Կոստանդնուպոլսի եկեղեցում շարունակվում էր կիրառության մեջ մնալ չորս պատրիարքական աթոռների՝ Հռոմի, Աղեքսանդրիայի, Անտիոքի, Կոստանդնուպոլսի համազորության և Երուսաղեմի

16 Սասանյան Պարսկաստանում քրիստոնեության խնդիրների մասին ավելի մանրամասնորեն տե՛ս Christensen, L'Iran, p. 258-315:

17 Corpus Iuris Civilis, vol. III, nov. CXXIII, cap. III, p. 597:

աթոռի համապատվութեան մասին ավանդույթը, որը լայն տարածում էր ստացել նաև Արևելյան մյուս եկեղեցիներում:

Ը դարից սկսվող ավանդույթը. Սուշն ավանդույթի մեկ այլ տարբերակ շրջանառութեան մեջ էր հայ մատենագրութեան մեջ Ը դարից հետո: Այն քննարկելու առումով շահեկան է Մ. վան Էսբրուկի վերջերս հրատարակած հոդվածը¹⁸: Ինչնօվ էր պայմանավորված Ը դարում հայ մատենագրութեան մեջ եկեղեցական նվիրապատութեան համակարգի տեսականցման ձգտումը: Կարծում ենք կարելի է նշել երկու պատճառ. նախ՝ Բյուզանդական կողմը Հայոց եկեղեցուն մեղադրում էր կատարյալ նվիրապետութուն չունենալու մեջ, երկրորդ՝ Հայոց եկեղեցին փորձում էր ավելի կատայալ դարձնել սեփական եկեղեցական կառույցը:

Եկեղեցական նվիրապետութեան համակարգման ուսուցման սիրութեան ճանապարհին սկզբունքային նշանակութուն է ստանում Դիոնիսիոս Արիոպագացուն (Արիոպագացի՝ հայ մատենագրութեան մեջ) վերագրված «Յաղագս երկնային քահանայութեան» աշխատութունը¹⁹: Բյուզանդական մատենագրութեան մեջ այս աշխատութեան դրման հնարավոր ժամանակ է համարվում Զ դարը²⁰, այսինքն՝ այն դարաշրջանը, երբ ավարտվում էր Բյուզանդական կայսրութեան մեջ քրիստոնեական եկեղեցու նվիրապետական կառույցի վերջնական ձևավորման դասական շրջանը, որն արդեն արձանագրված է Հուստինիանոս Մեծի մի շարք նովելներում և վավերագրերում²¹:

Անշուշտ, հարց կառաջանա, թե ի՞նչ կապ կա երկնային քահանայապետութեան դասերի և եկեղեցու նվիրապետութեան աստիճանների համակարգի ձևավորման սկզբունքների մեջ: Դիոնիսիոս Արիոպագացուն վերագրված վերոհիշյալ աշխատութեան մեջ²², մի

18 Esbroek, Primaute, p. 503-510.

19 Այդ աշխատությունը հրատարակել և անգլերեն է թարգմանել անգլիացի հայագետ Ռ. Թոմսոնը (տե՛ս Dionisios, t. 17, p. 1-53, t. 18, p. 1-38):

20 Ավելի մանրամասն տե՛ս Altaner, Précis, p. 694-700:

21 Հմտ. Dvornik, The Idea, p. 129-131, 137:

22 Դիոնիսիոս Արիոպագացու այս երկը հայերեն թարգմանվել է Ը դարում, մեր մատենագրության ամենաբերդուն թարգմանիչներից մեկի՝ Ստեփանոս Սյունեցու ձեռքով: Նրա գրական գործունեության և հիշյալ երկի թարգմանության մասին ավելի մանրամասն տե՛ս Գրիգորեան, Ստեփանոս Սյունեցի, էջ 30:

Այս մատենագրական երկը չափազանց մեծ ազդեցություն է ունեցել հայ մատենագրության և հատկապես ծիսադավանաբանական երկերի ստեղծման վրա և կարևոր հիմք է հանդիսացել երկնային, երկրային և եկեղեցական նվիրապետության աստիճանները սահմանազատելու, բացատրելու և տեսական կառուցվածք ստեղծելու գործում:

չարք Աստվածաշնչային Հղումների Համադրմամբ, մեկ անգամ և ընդամիշտ երկնային քառանյության շրջանակներում առանձնացվում է ինն երկնային դաս, որոնք բաշխվում են Հավասարապես երեք որակական խմբերի մեջ. ա) աթոռք, քերովրեք, սերովրեք²³, բ) տերությունք, գորությունք, իշխանությունք²⁴, գ) պետությունք, Հրեշտակապետք, Հրեշտակք²⁵:

Ակսած Թ դարից, արդեն Հայտնի են Հայերեն սկզբնաղբյուրներ, որոնք եկեղեցական նվիրապատուծյունը ևս բաժանում են ինն աստիճաններ: Մեզ հասած բնագրերի մեջ առաջինը Մաշտոց Եղիվարդեցու թուղթն է՝ ուղղված Գեորգ Հայոց կաթողիկոսին, ուր եկեղեցական նվիրապետության դասերը Համապատասխանեցված են երկնային քառանյությունի դասերին և առանձնացված ինն աստիճաններում. պատրիարք (Հայրապետ), արքեպիսկոպոս (եպիսկոպոսապետ), մետրոպոլիտ, եպիսկոպոս, քառանյ, սարկավազ, կես սարկավազ, ընթերցող և փսալտ (երգեցող)²⁶:

Եկեղեցական նվիրապետության այս կառույցի տեսականացումը Հայաստանում կապված էր այն հանգամանքի հետ, որ Բյուզանդական եկեղեցին հրաժարվում էր ընդունել Հայոց եկեղեցական կաղամկերպության նվիրապետության ամբողջականությունը, համարելով, որ այն չունի պատրիարքական, արքեպիսկոպոսական և մետրոպոլիտական աստիճաններ, ուստի ըստ օրթոդոքս-բյուզանդական Հոգևորականության, Հայոց եկեղեցին պարտավոր է ենթարկվել պատրիարքական աթոռներից որևէ մեկին: Թ դարի բյուզանդական եկեղեցական և մատենագրական Հայտնի գործիչ, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտի Ջաքարիա Հայոց կաթողիկոսին ուղարկված թղթից կարելի է ենթադրել, որ Հայոց եկեղեցու համար նման աթոռ էր դիտվում Կոստանդնուպոլսի պատրիարքությունը²⁷, որին այդ ժամանակ ուղղակիորեն ենթարկվում էր նաև Կեսարիայի արքեպիսկոպոսական աթոռը:

Թ-ժ դարի կաթողիկոսներ Մաշտոց Եղիվարդեցին և նրա աշակերտ Հովհաննես Դրասխանակերտցին փորձում էին ապացուցել, որ արդեն ներսես Մեծի կաթողիկոսության տարիներից (Դ դարի Բ կես)

23 Տե՛ս Dionisios, t. 17, p. 19-25:

24 Dionisios, t. 17, p. 25-29:

25 Dionisios, t. 17, p. 29-32:

26 Այդ թղթի փրատարակությունը տե՛ս Գիսիանոսանեան, Մայր Աթոռի, էջ 748-753, հատկապես էջ 750, հմմտ. Esbrock, Primaute, p. 506:

27 Ալիճեան, Թուղթ Փոտայ, էջ 75, հմմտ. Esbrock, Primaute, p. 509:

Հայոց կաթողիկոսական աթոռը Հավասարեցվել է պատրիարքական աթոռի աստիճանի²⁸, Հետևաբար, Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցը ամբողջական է և լիակատար: Մաշտոց եղիվարդեցու և Հովհաննես Դրասխանակերտցու կողմից եկեղեցական նվիրապետության Համակարգումը գրեթե անփոփոխ օգտագործում են Անանիա Մոկացին, Մովսես Դասխուրանցին, Պողոս Տարոնացին և ուրիշներ²⁹:

Տիեզերական եկեղեցու կառուցվածքի Համակարգված կառույցը վերստին շարադրված է նաև Ներսես Լամբրոնացու «Նորհրդածուլ-թիւնք ի կարգս եկեղեցւոյ» աշխատության մեջ, որը գրվել է 1176/7 թ.³⁰: Այնուհետև այդ բնագիրը որոշ էական տարբերություններով թ.ժ.Վ. է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» «Յաղագս դատաստանաց կարգաց եկեղեցւոյ եւ տան թագաւորի» Հոգվածի մէջ որն Ա և Գ խմբագրութիւններում ունի ՄԻԵ, իսկ Բ խմբագրութիւնում՝ ՃԺԳ հոգվածահամարը³¹: Թեպետ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մեզ Հետաքրքրող սկզբնաղբյուրը դեռևս անհայտ է գիտութիւնը³², այնուհետև ամենայնիվ կարելի է ենթադրել, որ Մխիթար Գոշը ծանոթ է եղել Ներսես Լամբրոնացու «Նորհրդածուլ-թիւնք ի կարգս եկեղեցւոյ» աշխատության Հիշյալ Հատվածին: Որոշ էական փոփոխութիւններով, խատուության հիշյալ Հատվածին: Որոշ էական փոփոխութիւններով, որոնք բխում են Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության պարբերակից, Հիշյալ բնագիրը Հետագայում ևս օգտագործվել է Հայ մաթերակից, Հիշյալ բնագիրը Հետագայում ևս օգտագործվել է Հայ մատենագրության մեջ Մխիթար Սկևռացու (կամ Տաշրացու), Ստեփանոս Օրբելյանի³³ և ուրիշների կողմից:

Ներսես Լամբրոնացու աշխատության մեջ մեզ Հետաքրքրող Հատվածն ունի «Որոշումն ինն դասուց աստիճանաց եկեղեցւոյ եւ յատկութիւն գործառնութեանց նոցա. եւ զգեստուցն. ընդ որս եւ ընդ-

28 Այդ մասին տե՛ս Ասորգլյան, Հովհաննես, էջ 117-136:

29 Տե՛ս Esbrock, Primaute, p. 504:

30 Տե՛ս Ներսես Լամբրոնացի, Խորհրդածութիւնք, էջ 81-85:

31 Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, էջ 246-259, ծան. 247-259, ավելի մանրամասն տե՛ս նաև Մխիթար Գոշ, Գիրք, էջ 135-137, 398-400, 585-599, ծան. 145-149:

32 Անկասկած, այս բնագրի առկայությունը ենթադրում է կոմկրետ հունարեն բնագրի գոյություն, սակայն այդպիսի դեռևս հայտնաբերված չէ (տե՛ս Bartikian, Buzantino, p. 243, Бартикан, О византийском, с. 203):

Գրքին խմբագիր պրոֆ. Պ. Մ. Մուրադյանը բանավոր զրույցում ինձ հայտնեց, որ ինքը գտել է այս սկզբնաղբյուրի հունարեն բնագիրը և պատրաստվում է անդրադառնալ այս խնդրին:

33 Թեև աղբյուրագիտական հետազոտությամբ դեռևս չի պարզվել հիշյալ հեղինակներից յուրաքանչյուրի կախումը մյուսից, սակայն նախնական համեմատությամբ կարելի է արդեն ենթադրել, որ Ստեփանոս Օրբելյանի սկզբնաղբյուրը Ներսես Լամբրոնացու հիշատակված երկն է:

դիմադրութիւնն այսոցիկ խորհրդոց ունայնացուցանողաց» խորագիրը³⁴: Այս բնադրի սկզբում Հեղինակը, ելնելով երկնային քահանայութեան հրեշտակներէ եռյակ դասերի ինն աստիճաններից, Հետեյալ զուգահեռ աստիճաններն է տեսնում երկրային քահանայութեան կարգերի Հետ. ա) աթոռք, քերովրե և սերովրե դասին Համատիպ է Համարում արքեպիսկոպոս, եպիսկոպոս, քահանա աստիճանները, բ) տերութիւնք, զորութիւնք և իշխանութիւնք դասին՝ սարկավազ, կես սարկավազ և սաղմոսերգու աստիճանները իսկ գ) պետութիւնք, հրեշտակապետք, հրեշտակք դասի պատճենում է տեսնում կրօնավոր, ժողովուրդ և երեխայք աստիճանների մեջ: Այնուհետև Հեղինակն անդրադառնում է մասնավորապէս եկեղեցու ինն նվիրապետական աստիճաններին, իսկ դրանից Հետո Հագուստների այն տեսակներին, որոնք կրում են եկեղեցու պաշտոնյաներից յուրաքանչյուրը: Այս վերջին Հատվածում Ներսես Լամբրոնացու աշխատութիւնը չափազանց արժեքավոր է Հատկապէս նրանով, որ նկարագրում է նաև Հարևան (օրթոդոքս-բյուզանդական, կաթողիկէ-հռոմեական և Հակոբիկ-ասորական) եկեղեցիներում յուրաքանչյուր պաշտոնյայի օգտագործման Համար թույլատրվող զգեստները: Հետևաբար, Ներսես Լամբրոնացու «Խորհրդածութիւնք» աշխատութեան այս գլուխը կարելի է բաժանել երեք Հատվածների, որոնց մեջ մեզ Հետաքրքրում է եկեղեցու նվիրապետութեան ինն աստիճաններին վերաբերողը: Այստեղ Ներսես Լամբրոնացին, Հետեյով մինչ այդ արդեն ձևավորված ավանդույթին (որը տիրապետող էր և՛ հունական, և՛ հայկական եկեղեցիներում) կրկին արձանագրում է Տիգերական եկեղեցու նվիրապետութեան ինն աստիճանները: Ըստ նրա, տիգերական եկեղեցու նվիրապետութեան սանդղակը լիովին Համապատասխանում է Հայոց եկեղեցու պաշտոնութեան աստիճանակարգին, որը, ինչպէս տեսանք, սկսած արեն թ-ժ դարերից Համակարգված ձևով վկայված է Հայ մատենագրութեան մեջ:

★

★

★

Այժմ անդրադառնանք նույն խնդրին ժՔ դարի Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցութիւնների տեսանկյունից: 1165-1178 թթ. փոխհարաբերութիւնները շոշափում էին երկու եկեղեցական

34 Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածութիւնք, էջ 80:

կազմակերպությունների թե՛ ծիսական, թե՛ դավանական և թե՛ նվիրակետության ավանդները: Բյուզանդական կայսրությունը սելջուկյան և Մերձավոր Արևելքի մուսուլմանական ու քրիստոնեական համայնքների և տերությունների հետ փոխհարաբերություններում մեծ նշանակութուն էր տալիս այդ տարածքներում բնակվող հայ ազգաբնակչությանը, իսկ Բալկաններում ազգամիջյան և միջկեղեցական փոխհարաբերությունները կառուցելիս հաճախ էր ստիպված լինում հաշվի նստել Բալկանների և Փոքր Ասիայի Հայոց եկեղեցու պաշտոնետության և հայ ազգաբնակչության հետ: Այդ իսկ պատճառով, Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական ծրագրերում Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական հրապարակի վրա ԺԲ դարի 60-ական թվականներին քաղաքական հրապարակի վրա կրկին հայտնվեց օրթոդոքս-բյուզանդական և Հայոց Առաքելական եկեղեցիների միջև միություն հաստատելու հինավուրց ծրագրեր:

Իսկ այդ փոխհարաբերություններից ի՞նչ ակնկալիքներ ուներ Հայոց եկեղեցին, ու ինչպե՞ս է այն արտացոլվել ժամանակաշրջանի սկզբնաղբյուրներում:

Ամենայն Հայոց հոգևոր հովիվը թեև կաթողիկոսական աթոռը հաստատել էր Հռոմից լայնում՝ բուն հայկական տարածքներից դուրս, սակայն ավանդույթի բերումով շարունակվում էր կոչվել և մնալ «Հայոց Մեծաց կաթողիկոս» և հայրապետ, որին ենթարկվում էին Արևելքում և Արևմուտքում խորիսխ ձգած Հայոց ազգային եկեղեցու գրեթե բոլոր թեմերը և վանական կենտրոնները³⁵: Հայոց հոգևոր գրեթե բոլոր թեմերը և վանական կենտրոնները հաճախ իշխանության եկեղեցաքաղաքական շահերը ևս բազմաթիվ իշխանության եկեղեցաքաղաքական շահերը հետ Կիլիկիայում, հարցերում խաչաձևվում էին Բյուզանդականի հետ Կիլիկիայում, Հայոց Հյուսիսային Ասորիքում և Փոքր Ասիայում ու Բալկաններում: Հայոց Հյուսիսային Ասորիքում և Փոքր Ասիայում ու Բալկաններում համար առաջնակարգ եկեղեցին ևս փորձում էր հասնել իր համար առաջնակարգ նշանակութուն ունեցող եկեղեցաքաղաքական հետևյալ խնդիրների լուծմանը.

ա) Բյուզանդական կայսրության տարածքում և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներում Հայոց եկեղեցու և նրա թեմերի համար ստեղծել գործունեության տանելի պայմաններ,

35 Թերևս միակ բացառությունը վասպուրականի թեմն էր, որը սկսած 1113 թ. ենթարկվում էր Աղթամարի կաթողիկոսների, որոնք ինքնագլուխ էին հայտարարել իրենց (այդ եկեղեցական թեմի մասին տե՛ս Ալիգևան, Գալազանագիրք, էջ 9-13, 33-39): Նրանք եկեղեցական թեմի մասին տե՛ս Ալիգևան, Գալազանագիրք, իրենց հետո էին պահում Հայոց եկեղեցու ներքին ԺԳ դարի վերջը, հավանաբար, իրենց հետո էին պահում Հայոց եկեղեցու ներքին գործերից:

բ) Հայոց եկեղեցական կազմակերպութիւնը քույր եկեղեցու կարգավիճակով ընդունելի դարձնել Բյուզանդական եկեղեցուն և կայսրութեանը, որպէս ուղղափառ քրիստոնեական համայնք,

գ) Օգտագործել Բյուզանդական կայսրութեան հեղինակութիւնը և արտաքին քաղաքական հնարավորութիւնները Հայոց կաթողիկոսարանի դիրքերը միջազգային հարաբերութիւններում ամրապնդելու գործում, որն անուղղակիորեն նպաստելու էր ազգային պետականութիւն ստեղծելու գործընթացին:

1165-1178 թթ. հայ-բյուզանդական բանակցութիւններն անարդու ենք ավարտվեցին: Այնուամենայնիվ, հենց այդ բանակցութիւնների վերջնական փուլն հանդիսացող Հռոմկլայի ժողովում (1178 թ.) Ներսէս Լամբրոնացին պատրաստվել է ներկայացնել մի վավերագիր, ուր առաջարկվում էր դիմել Բյուզանդական կայսրութեանը՝ փոխելու համար Հայոց եկեղեցու տեղը տիեզերական եկեղեցու նվիրատեան համակարգում: Դա մի ծրագրային փաստաթուղթ է, ուր Տարսնի արքեպիսկոպոսը պատասխանում է բյուզանդական եկեղեցու ինը պահանջներին: Այստեղ՝ «Գլխակարգութիւնք Հռոմոց» աշխատութեան մեջ, Ներսէս Լամբրոնացին բյուզանդական կայսր Մանուէլ Ա Կոմնենոսի և պատրիարք Միքայել Գ Անքիալոսի ուղարկած ինը պահանջներից վերջինին, ուր ասվում է ընդունել «զառաջարկութիւն կաթողիկոսին միայն ի թագավորէն Հռոմոց», գրում է, որ այս գլուխը թեպետ և վերջում է դրվել, սակայն ընդգրկում է վերոբերյալ բոլոր խնդիրները: Նկատի ունենալով, որ Հայոց և Բյուզանդական եկեղեցիները սկսած է դարից բավական հեռացել են միմյանցից (չնայած երկուստեք բազմաթիվ փորձեր են կատարվել հաշտեցնելու Տիեզերական եկեղեցու այս երկու թևերը), Ներսէս Լամբրոնացին Հռոմկլայի ժողովի մասնակիցներին խորհուրդ է տալիս հետևյալ առաջարկով դիմել Բյուզանդական կայսրը. «է. եւ կալցէ զաթոռն Անտիոքայ կաթողիկոսն Հայոց. եւ զոր ինչ եկեղեցիք եւ սահմանք են ընդ իշխանութեամբ նորայ Արևելս եւ յԱրեւմուտս. եւ նոյն յաջորդեսցէ Հրամանաւ թագաւորիդ զՀայոց սեռն, այլ՝ մինչեւ ի սպառ»³⁶:

Ըստ քննարկվող վավերագրի, Բյուզանդական եկեղեցու և կայսրութեան հետ բարեկամական փոխհարաբերութիւններ հաստատելու միայն մեկ ճանապարհ կա. «... անքակ պնդութեամբ զսէրն նուաճել, այսինքն՝ հարսնացուցանել զաթոռն Անտիոքայ հայրապետութեանն Հայոց, զի ի ձեռն ողջախոհ կուսին այնորիկ, եւ անբիծ

36 Պալմեան, Պատմութիւն, էջ 265:

փեսայիս այսորիկ միաւորութեան հաւատամք լինելի ի մէջ երկուց ազ-
գացս անքակ սիրոյ խնամութիւն... դամենայն եկեղեցիս Հայաստա-
նեայց ընդ իշխանութեամբ թագաւորիդ Հոռոմոց ածեալ կացուցէ, եւ
ի մեծ եկեղեցիդ խառնեցէ»³⁷: Ելնելով այս դրույթներէց, Ներսես
Լամբրոնացին նաև արձանագրում է. «Այսպէս յորժամ լիցի կա-
թողիկոսն Հայոց մի ի չորից ակթոզից ընդ աջմէ թագաւորիդ Հոռո-
մոց, պատրիարք ակթոռոյն Անտիոքացուցոց, ամենայն Հայաստանեայցս
յոյս եւ հաւատ եւ միաբանութիւն նովաւ առ ձեզ խարսխի. եւ ամե-
նայն լուծ զոր դնէք ի վերայ պարանոցի մեր՝ ասու յուսով թեթեւ, ու-
նելով միշտ զմիջնորդն զառաջինն փոխել եւ թագաւորական ընտրու-
թեամբդ կոչեցեալ: Ապա թէ ոչ, ծառայ գոլով այլ ազգաց ըստ մեղաց
մեր եւ ընդ իշխանութեամբ նոցին բնակեալ, զիւրօրդ հնար է ձգտել առ
թագաւոր Հոռոմոց եւ առաջարկութիւն կաթողիկոսի պահանջել»³⁸:

Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքու-
թյուն վերանվանելու այս ծրագրային դրույթը ԺԳ դարում ևս մի
քանի անգամ վերարծարծվեց Հայոց կաթողիկոսների կողմից, սակայն
Կիլիկիայի հայկական պետութեան կործանումից հետո ամբողջովին
դուրս մղվեց շրջանառութիւնից:

Ամփոփենք. մինչև Ը դարը Հայ մատենագրութեանը Հայտնի է
որևէ աշխատութիւն, որը Համապարփակ պատկերացում տար
տիեզերական եկեղեցու նվիրապետական կառուցի մասին: Թ դարից
մեզ են հասել այդ նյութին վերաբերող առաջին աշխատութիւնները,
Հայոց եկեղեցու նվիրապետական կառուցի ամբողջականութիւնը:
Հայոց եկեղեցու նվիրապետական կառուցի ամբողջականութիւնը:
Հայոց եկեղեցու նվիրապետական կառուցի ամբողջականութիւնը:

Այս Համակարգը գրեթե անխաթար ավանդված է մինչև այսօր:
ԺԲ դարում, կապված Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցու-
թյունների նոր փուլի հետ, Ներսես Լամբրոնացին և նրան Համախոհ
կիլիկիայն հոգևորականութիւնը փորձ է կատարում փոխել Հայոց եկե-
ղեցու տեղը Տիեզերական եկեղեցու կառուցվածքում: Նրանք առաջար-
կում էին Հայոց կաթողիկոսին տալ Անտիոքի պատրիարքի իրավասու-
թիւններ, իհարկե, նրա առաջադրման իրավունքը վերապահելով
բյուզանդական կայսրին:

37 Պալեստին, Պատմութիւն, էջ 265:

38 Պալեստին, Պատմութիւն, էջ 265-266:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՓԻԼԻՊՈՒՊՈԼՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ
ՓՈՒՆՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԲ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ
ԿԵՍԻՆ

Արդեն Քրիստոսի ծննդին հաջորդած առաջին դարերում նկատելի է հայ ազգաբնակչության որոշակի, արձանագրված գաղթ դեպի Հռոմեական կայսրության տարածք, սակայն սկսած Զ դարից Բյուզանդիան ծրագրում և իրագործում էր հայկական լեռնաշխարհի բնակչության բռնի և կամավոր տեղահանում թրակիա և կայսրության մյուս արևմտյան նահանգներ: Բյուզանդական վարչակարգի նման ձեռնարկումների մասին տեղեկացնում է է դարի պատմիչ Սեբեոսը, երբ հատված է բերում Մորիկ կայսեր նամակից՝ ուղղված իրանի շահնշահ Խոսրովին. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց ե՛կ, ես զիմս ժողովեմ և ի թրակէ գումարեմ, և դու զքոյդ ժողովէ և հրամայէ յԱրևելս տանել»¹:

Հետագայում հայերի տեղահանությունը Բյուզանդական կայսրության արևմտյան նահանգներ շարունակվեց ավելի մեծ չափերով: Այդ իրողությունը շարժառիթները և պատճառները բազմաթիվ են և մենք չենք անդրադառնալու դրանց: Արդեն շատ վաղուց հայագետները և բյուզանդագետները զբաղվում են այդ խնդիրների ուսումնասիրությամբ: Գերմանացի բյուզանդագետ Հանս Դիտտենը հիմնվելով գիտական զբաղանդության և քրիստոնյա ու մուսուլմանական Արևելքի միջնադարյան սկզբնաղբյուրների վրա, կարողացել է ստեղծել Զ-Թ

¹ Սեբեոս, Պատմություն, էջ 85:

Վերջին տարիներին Վ. Հելտտի, Հր. Բարթիկյանի, Վ. Արությունովա-Ֆիդանյանի և մասնավորապես Տ. Լ. Ջեքիյանի ջանքերով բավական աշխատանք է կատարվել վեր հանելու և դասակարգելու ԺԲ դարում Բալկանյան թերակղզում հաստատված հայկական բնակավայրերի մասին վկայութունները: Հիշյալ հեղինակների աշխատանքներում ընդհանուր առմամբ պատկերված է մեզ հետաքրքրող դադութի վիճակը և նրա կշիռը Բյուզանդիայի քաղաքական և մշակութային կյանքում: Այնուամենայնիվ, փորձենք ևս մեկ անգամ մասնագետների ուշադրությունը սևեռել այդ խնդիրների վրա:

★

★

★

Բալկանյան թերակղզում, մասնավորապես նրա մարդաշատ քաղաքներից մեկը հանդիսացող Փիլիպուպոլսում հայկական բնակավայրերի դերի ու նշանակության բացահայտման գործում անփոխարինելի են ԺԲ դարի (Կոմնենոսների կառավարման դարաշրջանի) բյուզանդական սկզբնաղբյուրները, որոնք ավելի համապարփակ են ներկայացնում հայկական դադութի գործունեությունը: Այդ երկերն ավելի հաճախ անդրադառնում են հայ միաբնակներին և հերձվածողներին, զբերթե իրարից չտարբերակելով այդ երկու հակամետ դավանական խմբերը:

Բալկաններում բնակվող հայ միաբնակների, պավլիկյանների ու բողոմիլիների մասին իր պատմական երկում ճշմարտապատում (բյուզանդական տիրապետող մտայնության տեսանկյունից) և մանրամասն տեղեկություններ է հաղորդում կայսր Ալեքս Ա Կոմնենոսի (1080-1118) դուստր Աննա Կոմնենեն: Նա իր «Ալեքսիադա» անվանված պատմական երկում հաճախ է անդրադառնում Բյուզանդական կայսրության դավանական քաղաքականությանը, գովերգում իր հոր աստվածասիրությունն ու աստվածավախությունը, որի համար նրան անվանում է նույնիսկ «տասներեքերորդ առաքյալ»⁶:

«Ալեքսիադայի» մի շարք հատվածներում բյուզանդական պատմագրուհին պատմում է հերձվածողական շարժումների (պավլիկյաններ, բողոմիլիներ և միաբնակներ) դեմ կայսեր պայքարի մասին: Ըստ բյուզանդական արքայադստեր այդ շարժումների կենտրոնն էր

⁶ Καὶ ἔγυγε τοῦτον τρισκαδέκατον ἂν ἀπόστολον ὀνομάσαμι A.C., vol. II, p. 300-18-19:

մանիքեականներ էին, որոնք բռնանում էին տեղի քրիստոնյաների վրա, նրանց ունեցվածքը թալանելով՝ և քիչ հոգ տանելով կամ բանի տեղ չդնելով կայսեր կողմից ուղարկվածներին: Միաժամանակ նրանք բազմանում էին: Փիլիպուպոլսի շրջանում բոլորը Հերձվածոզ էին դարձել: Այնուհետև նրանց խառնվեց Հայերի մյուս դառը հոսանքը, որը սկիզբ էր առնում Հակոբի պղտոր ակունքերից: Եվ ինչպես ասում են, այն (քաղաքը – Ա.Բ.) ամենայն կեղտի կիրճ էր: Եվ եթե դավանանքով տարբերվում էին, ապա ապստամբութունների (ուրացության) ժամանակ համաձայնում էին մանիքեականների հետ»¹¹:

Այստեղ հետաքրքիր է այն պարագան, որ պատմիչը, չնայած տարբերակում է մանիքեացիներին և Հակոբի (իմա՝ միաբնակության) ճանապարհով դնացող, այսինքն՝ Քաղկեդոնի ժողովը չընդունող Հայերին, այնուամենայնիվ մեծ տարբերութուններ չի տեսնում այս դավանական խմբերի մեջ և շեշտում է, որ ճգնաժամային պահերին այս երկու հոսանքները միավորվում էին բյուզանդական պետության դեմ:

Վերոբերյալ տեղեկութուններից Հայտնի է դառնում, որ հեղինակը գրեթե տարբերութուն չի տեսնում բողոսիմիների, պավլիկյանների և Հայոց առաքելական եկեղեցու ներկայացուցիչների միջև¹², քանի որ նրանց հավասարապես թշնամի է համարում Բյուզանդական եկեղեցուն և պետությանը, չնայած ընդգծում է նրանց մեջ եղած դավանական տարբերությունը: Այսպես կոչված հերետիկոսներն ու Հերձվածոզները ճշմարիտ ուղուց շեղում էին ուղղափառ-բյուզանդական դավանանքի քրիստոնյաներին, այդ պատճառով էլ Ալեքս Ա Կոմնենոսը մեծազույն հետևողականությամբ էր պայքարում նրանց դեմ, օգտագործելով իր հսկայական զինվորական փորձը¹³: Այլախոհների նկատմամբ հալածանքները և նրանց ստիպողաբար կրկնակի «սուրբ մկրտության» պարտադրումը տարածվում էր ոչ միայն մանիքեական ուսմունքի հետևորդներ պավլիկյանների և բողոսիմիների վրա, այլ նաև միաբնակ Հայերի նկատմամբ: Նմանատիպ քաղաքականութուն կայսրութունը վարում էր և՛ Բալկաններում, և՛ Փոքրասիական նահանգներում: Հետաքրքիր է նաև, որ բյուզանդական դավանաբանական գրականության մեջ ևս անջրպետ չի դրվում Հայ առաքելական եկեղեցու հետևորդների և մյուս Հերձվածոզների միջև:

11 Նույն տեղում, էջ 299¹⁵-300⁴:

12 ԺԲ դարում Փիլիպուպոլսի հայկական գաղութի խայտաբղետ պատկերը ներկայացված է նաև Բարոբիկոս, Գրիգոր Բակուրյանի, էջ 72-78 հոդվածում:

13 A.C., vol. II, p. 300:

Եվթիմիոս Ջիգաբենոսը իր դավանաբանական «Πανοπλία δογματικῆ» երկում (գրված Հավանաբար ԺԱ դարի վերջում կամ ԺԲ դարի սկզբին), գիտակցելով դավանական տարբերությունները, այնուհանդերձ, Հայոց առաքելական եկեղեցու ներկայացուցիչներին ևս Համաբուժում է նույնպիսի Հերձվածողներ, ինչպիսիք են մանիքեական-պալլիկյաններն ու բողոմիլիները¹⁴: Բյուզանդական այս աստվածաբանի գրությունների հետ ամբողջովին Համամիտ է Աննա Կոմենենն¹⁵:

Նման վերաբերմունքը շարունակվեց մինչև ԺԲ դարի 60-ական թվականները, երբ կայսրությունը երկար ընդմիջումից հետո կրկին բանակցություններ սկսեց Հռոմկլայի կաթողիկոսարանի հետ՝ Հայոց և Բյուզանդական եկեղեցիների միութայն շուրջ: Հռոմկլայի կաթողիկոսարանի հետ առաջ քաշելով եկեղեցիների միութայն ծրագիրը, կայսրությունը փորձում էր իր կողմը զբաղել Բալկանյան թերակղզու, Փորությունը փորձում էր իր կողմը զբաղել Բալկանյան թերակղզու, Փորությունը փորձում էր իր կողմը զբաղել Բալկանյան թերակղզու, Փորությունը փորձում էր իր կողմը զբաղել Բալկանյան թերակղզու: Քըր Ասիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի Հայ բնակչությանը: Հայ միաբնակներին Հալածանքների հետևանքով հիշյալ տարածքներում, անշուշտ, բավական թուլացել էին Բյուզանդական կայսրության դիրքերը և գրեթե անհնար էր դարձել Հայկական զինական ուժի օգտագործումը կայսրության սահմաններում¹⁶:

Բյուզանդական կողմի Հռոմկլա ուղարկած մեզ Հայտնի երեք պատգամավորություններից երկուսի (1170, 1171-1172) կազմում և մեզ հասած վավերագրերում (և՛ Հայերեն, և՛ հունարեն բնագրեր) հիշատակվում են նաև. «զհայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպուպոլսեաց աշխարհէն զՅովհաննէս, մականուն Ութման»: Ինչպես արդեն ասել ենք, Հայ-բյուզանդական բանակցությունների նշված երկու փուլերում բյուզանդական պատգամավորությունը ղեկավարում էր կայսերական գրասենեակի պաշտոնյա և աստվածաբան մագիստրոս Թեոդորանոսը, որստի կայսերական նամակներից, Թեոդորանոսի «Տրամատոսութիւններից» և Հայ-բյուզանդական բանակցությունների Հայկական վավերագրերից դուրս բերենք Հովհաննես Աթմանին (Ութման)

14 Տե՛ս PG, t. 130, p. 1174-1190: Բնագրագետ մասնագետների ուշադրությունը կարելի է հրավիրել այն հանգամանքի վրա, որ այս երկի հնագույն ձեռագրերից մեկը պահպանվում է Մոսկվայի պատմության թանգարանի ձեռագրական հավաքածոյում:

15 Եվթիմիոս Ջիգաբենոսի մատենագրական ժառանգության մասին ավելի մանրամասն տե՛ս Beck, Kirche, S. 614-615:

16 Աճճա Կոմենենի և Եվթիմիոս Ջիգաբենոսի, Փիլիպուպոլսում հաստատված Հայոց եկեղեցու և աղանդավորների գոյության մասին կարևոր են Պ.Մ.Մորադյանի (Մորադյան), Եվթիմիոս Ջիգաբենոս, էջ 266-304, հատկապես՝ էջ 268-277) և Վ.Ա. Հարությունովայի (Հարությունովայ, Գրիգոր Պակուրիանը, էջ 167-192) աշխատանքները:

16 Հմմտ. Բոգոյան, Բյուզանդիայի, էջ 56, ծան. 23:

վերաբերող բոլոր վկայությունները, ավելի ակնառու դարձնենք նրա մասին վկայությունները.

ա) Մանուել Ա Կոմնենոսի 1169 թ. նոյեմբերին գրած թղթում (վավերագրտական ցանկ, № 7). τῷ καθηγουμένῳ τῆς Ἀρμενικῆς μονῆς τῆς ἐν Φιλιππουπόλει τῷ Ἀτμάνῳ (PG, 133, p. 120B) - «զայր վանաց Հայոց՝ որ ի Փիլիպուպոլսեաց աշխարհէն զՅովհաննէս» (ԹԸ, 1871, էջ 144):

բ) Ներսես Շնորհալու պատասխանը՝ գրված 1170 թ. Հոկտեմբերին (վավերագրտական ցանկ, № 8). «Համազգի մեր եւ Համալրօն Յովհաննէս Հայր վանաց» (ԹԸ, 1871, էջ 146) - καὶ ὁ ὁμόφυλος καὶ ὁμοσχίμων ἡμῶν Ἰωάννης ὁ ἡγούμενος, ὃς καὶ Ἀτμάνος ἐπονομάζεται (PG, 133, p. 213B):

գ) 1171 թ. գրված Մանուելի գաղտնի թղթում (վավերագրտական ցանկ, № 11). τὸν μοναχὸν Ἀτμάνον (PG, 133, p. 234D):

դ) 1171 թ. գրված Մանուելի բաց նամակում (վավերագրտական ցանկ, № 12). ὁ καθηγούμενος τῆς ἐν Φιλίππου πόλει Ἀρμενικῆς μονῆς ὁ Ἀτμάνος (PG, 133, p. 236) - «Հայրդ որ ըստ Փիլիպուպոլսեաց՝ Հայր¹⁷ վանից Յովհաննէս անուն» (ԹԸ, 1871, էջ 155):

ե) Թեորիանոսի Բ Տրամախոսության մեջ, երբ Միքայել Թարգմանիչը Ներսես Դ Շնորհալուն ներկայացնում է Մանուել Ա Կոմնենոսի գաղտնի թուղթը, որի մեջ Հիշատակված է Հովհաննես Աթմանի անունը: Ներսես Շնորհալին, ըստ Թեորիանոսի, երկմտում է, երբ նամակում Հանդիպում է Աթմանի անունը. Ταύτης τῆς γραφῆς ἀναγνωσθείσης τῷ Καθολικῷ παρὰ τοῦ ἐρμηνέως Μιχαήλ, ἐπεὶ εἶχε τὸ ὄνομα τοῦ Ἀτμάνου ἐν αὐτῇ, ἀκούσας ὁ Καθολικὸς εἶπε· Τὸ μυστήριον ὁ Ἀτμάνος ἠγνῶει, πῶς οὖν κείται τὸ ὄνομα αὐτοῦ ἐν τῇ γραφῇ («Յընթեռնուլ Միքայէլի Թարգմանչի զթուղթս զայս առաջի կաթողիկոսի, իրրեւ լուաւ նա զանուն Ատմանայ գրեալ, աւէ՛ խորհուրդն ծածկեալ էր յԱտմանայ. առ ի՞մէ անուն նորա ի թղթին գտանիցի») (18) (PG, 133, p. 236A):

զ) Բ Տրամախոսության մեջ Աթմանոսը և Ներսեսը բանակցությունների ժամանակ բախվում են. առաջինը Հայտնի է ներդրություն է խնդրում կաթողիկոսի գաղտնիքը Հայտնի դարձնելու Համար և ինքն

17 Հր.Բարթեղիանը սրբագրում է «Բայ» (տե՛ս **Бартикан, Роль**, с. 82 прим. 27):

18 Հայերեն թարգմ. ըստ **Պատեկան**, Պատմութիւն, էջ 238:

Թեորիանոսի, որն աշխարհիկ անձնավորութուն էր»²⁴: Այնուհետև բյուզանդադեպոզիտիստները համոզվեցին, որ Ներսեսի նամակի հոսանքն ընդհանուր չէր ընդհանրացվում Աթմանի և կատարել վերահսկող իմաստային փոփոխությունը²⁵: Սակայն Թեորիանոսի Տրամախոսություններում որևէ հիշատակություն չկա այն մասին, թե ո՞վ է այս թղթի բնագիրը թարգմանել հոսանքին: Ավելին, բյուզանդական հեղինակի նույն երկում խոսվում է Ներսես Դ Ծնորհալու հետ Հովհաննես Աթմանի խոսակցություն մասին, որի ընթացքում բյուզանդական պատվիրակը ասում է. *ἐγὼ μάλλον ὀφείλο δικάως λυπεῖσθαι κατὰ σοῦ, ὅτι ἀπέκρυψας τοῦτο ἀπ' ἐμοῦ τοῦ ὁμοφύλου καὶ ὁμοπίστου σου, καὶ ἀπεκάλυψας αὐτὸ ἄλλογενεῖ ἀνδρὶ*²⁶ (Ապա ընդ վայր գողմնիս ընդ իս, ինձ առաւել անկ էր խոսոռել եւ քստմնել, զի ծածկեցէր զիրսն յինէն յաղակցէ եւ ի հաւատալիցէ քումէ, եւ յայտնեցէր առն օտարի)²⁷: Հր. Բարթիկյանը, սակայն, մտածում է, որ Հովհաննես Աթմանը Մանուել Ա-ի հանձնարարությունը թաքցնում է հայ հոգևորականներից և անձամբ Ներսես Ծնորհալուց իր պատկանելությունը քաղկեդոնական դավանանքին: Նա ենթադրում է, որ «Հովհաննես Աթմանը եղել է ոչ այլ ոք, քան մի հասարակ, Ներսես կաթողիկոսի վստահությունը շահած, բյուզանդական կառավարության գործակալ (агент), նրա խնդիրը կայանում էր նրանում, որպեսզի պարզի կաթողիկոսի մտադրությունները և տեղեկացնի դրանց մասին Թեորիանոսին, որպեսզի վերջինս դրանով իսկ ավելի հիմնավոր կարողանա պատրաստել իր հակախաղը կաթողիկոսի հետ վիճարանություններում»²⁸: Սակայն Հր. Բարթիկյանի բերած փաստարկներն անբավարար են, որպեսզի ապացուցվի, որ Հովհաննես Աթմանը Փիլիպուպոլիսի շրջանի հայկական քաղկեդոնական վանքի վանահայր է²⁹, որովհետև «Համակրոն» և ὁμοσχήμεων տերմինների տարբերության կողքին նույն Թեորիանոսի բնագրում

24 Бартикан, Роль, с. 86:

25 Նույն տեղում, էջ 81:

26 PG, 133, p.248:

27 Տե՛ս Պաճեան, Պատմութիւն, էջ 244:

28 Бартикан, Роль, էջ 6, ծան. 84: Իհարկե, կարելի է ընդունել կամ մերժել Հր. Բարթիկյանի այն ենթադրությունը, թե Հովհաննես Աթմանը, որն ընդգրկված է բյուզանդական պատգամավորության կազմում, կայսեր գործակալն էր: Միանգամայն հնարավոր է նաև, որ նա լիցեզի հայկական (այն է միարձակ) վանքի վանահայր, կողմնակից լիցեռ բյուզանդական եկեղեցու հետ Հայոց եկեղեցու միության կամ թե նախընտրելով ընդունել բյուզանդական (երկարակ) եկեղեցու բոլոր պահանջները:

29 Հողվածի վերջում Հր. Բարթիկյանը Հովհաննես Աթմանին հայտարարում է հաշվույնի Պետրիժոն վանքի վանահայր (տե՛ս Бартикан, Роль, էջ 6, ծան. 88):

Աթմանի բերանով ասված խոսքը հակասում է այս ենթադրությանը. քանի որ Աթմանը իրենհայտարարում է ոչ միայն Ներսես Շնորհալու ազգակիցը, այլ նաև հավատակիցը:

Մեզ հասած սկզբնաղբյուրները դեռևս չեն հաստատում նաև այն վարկածը, ըստ որի Հովհաննես Աթմանը հետագայում դարձել է Փիլիպուպոլիս քաղաքի և դավառի հայկական միաբնակ եկեղեցու եպիսկոպոս: Այդ վարկածը 1967 թ. առաջ է քաշել գերմանացի բյուզանդանագետ Վինֆրիդ Հեխտը³⁰, որին էլ հետեւելով, այդ տեսակետը մասնավորեցրել է Հ. Լ. Ջեքիյանը³¹:

Պահպանված սկզբնաղբյուրները մեզ թույլ չեն տալիս ճշգրիտ տեղադրել այն վանքը, ուր վանահայր է եղել Հովհաննես Աթմանը, սակայն նրա մասնակցությունը հայ-բյուզանդական բանակցություններին, կարծում ենք, ապացույցն է այն միտումի, որով ԺԲ դարի Բ կեսին Բյուզանդական կայսրությունը սկսում է հաշվի նստել Փիլիպուպոլիս և նրա դավառի միաբնակ հայ բնակչության հետ:

Թեորիանոս մագիստրոսի դեպի Հռոմ կատարած երկրորդ դեսպանագնացությունից գրեթե մեկ և կես տասնամյակ անց հայկական, հունական և լատինական սկզբնաղբյուրները կրկին սկսում են հիշատակել Փիլիպուպոլիս գաղութը: Հայկական կաթողիկոսարանի փոխհարաբերություններն էին Հռոմի պապության հետ և դրանց հաջորդած երրորդ խաչակրաց ռազմարշավը, որի ընթացքում ուրույն տեղ էր վերապահված Փիլիպուպոլիս և նրա շրջակայքի հայ բնակչությանը: 1184/5 թ. Հռոմ կայսրի հայոց կաթողիկոսի հանձնարարականով Հռոմ է այցելում Փիլիպուպոլիս քաղաքի հայկական եկեղեցու եպիսկոպոս Գրիգորը և բանակցություններ է վարում Հռոմի պապի հետ³²: Պահպանվել է Լուսինոս Գ-ի (1181 սեպտ.-1185 սեպտ.) նամակը ուղղված Հայոց կաթոսինոս Գ-ի (1173-1193)³³: Ինչո՞վ կարելի է բացատրել զիկոս Գրիգոր Դ Տղայի (1173-1193)³³: Ինչո՞վ կարելի է բացատրել Հայաստանից այդքան հեռու՝ Բալկաններում գտնվող եպիսկոպոսական աթոռի ղեկավարի այցելությունը կաթողիկ եկեղեցու ղլխավոր

30 St'u Hecht, Byzanz, S.70.

31 Այդ մասին տե՛ս Zekiyan, The Armenian, p.363-373:

32 Այցելությունն այսպես է թվագրում գերմանացի գիտնական Վ.Հեխտը (տե՛ս նրա Hecht, Die byzantinische, S. 58, Anm. 169):

33 Hecht, Byzanz, S.68: Այդ վավերագրի ամենավաղ ընդօրինակությունը տե՛ս ՄՄ-1026: Հիշատակված սկզբնաղբյուրներն են միայն, որ հիշատակում են Փիլիպուպոլիս Հայոց առաքելական եկեղեցու եպիսկոպոս Գրիգորին:

նստավայր, որպես Հռոմիկայի Հայոց կաթողիկոսի կողմից առաքված դեսպանագնաց:

Մանուել Ա Կոմնենոսի և նրա միակ ժառանգ Ալեքս Բ-ի մահից Հետո (1183 թ.) Բյուզանդական կայսրութւյան ներսում տարեցտարի խորանում է քաղաքական ճգնաժամը: Այդ պայմաններում կրկին վերսկսվում են «Հերձվածող» Հայերի նկատմամբ Հալածանքները կայսրութւյան ներսում: Վինֆրիդ Հելտը այդ Հալածանքների սկսման թվական է Համարում Անդրոնիկոս Կոմնենոսի իշխանութւյան տարիները³⁴: Բյուզանդագետն իր տեսակետներն ամրապնդում է Նիկեոսա Խոնիատեսի Պատմութւյան մեջ Հիշատակվող Անդրոնիկոս Կոմնենոսի և պատրիարք Թեոդոսիոս Ա Բորողիոտեսի Հակամարտութւյան շարադրանքով, ուր կայսրը դիմելով պատրիարքին, նրան անվանում է «βασις Ἀρμένιος» (Թաքնված Հայ): Ըստ Նիկեոսա Խոնիատեսի վկայութւյան, կայսրն ակնարկել է այն Հանգամանքը, որ պատրիարքը Հայրական կողմից Հայկական ծագում է ունեցել³⁵: Երրորդ խաչակրաց ռազմարշավի նախօրեին Հռոմի կաթողիկ եկեղեցու Հետ Հայոց կաթողիկոսարանի բանակցութւյունները Ժ. Գ դարի պատմիչ Վարդան Արվվելցիին կապում է Բյուզանդական կայսրութւյան ողջ տարածքում Հայ միաբնակների դեմ սկսված Հալածանքների Հետ. «Իսկ ի վերայ Յունաց թագաւորաց Փիսիկն որ եւ Սահակ, եւ յարոյց Հալածանս եւ չարչարանս Հայադաւան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա, վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարզն Գրիգոր (նկատի ունի Գրիգոր Դ Տղայ կաթողիկոսին-Ա.Բ.) խաղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. եւ ոչ լուաւ նմա, այլ զյոյովս դարձոյց ի կրօնս իւր. եւ զայլս Հալածականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի աթոռք եւ Հազար եւ վեց-Հարիւր քահանայք. զորս ի մի Հաւաքեալ բռնադատէր, յորոց սակաւք զերծան ամբողջ Հաւատով: Եւ զայսպիսի աղէտս գրեաց յարեւելս տէր Գրիգոր. եւ խարչեալ սրտիւ³⁶ ոչ ինչ կարացին առնել: Առաքէր եւ նոյն

34 Hecht, Byzanz, S. 67-68:

35 N.Ch., p.253: Նույն ձևակերպումը հանդիպում է նաև Ժ.Գ դարի մատենագիր Եվստաթեոս արքեպիսկոպոս Թեսալոնիկցու «Պատմություն վասն առմանն Թեսալոնիկայ» երկում (Eustathii, Narratio, p. 400-5): Եվստաթեոս Թեսալոնիկցու մոտ ևս զգացվում է քացահայտ թշնամական վերաբերմունքը դեպի միաբնակ հայերը: Այս հեղինակը գրեթե հավասարության մշան է դնում հայերի և ֆրեանցերի մեջ, դիտելով նրանց միևնույն հերձվածի կրողներ (տե՛ս նույն տեղում, էջ 400-4, նաև 481 և այլն):

36 Ընդհակառակ ենք Հ.Գ.Մարգարյանին, որը վարդան Արևելցու բերված հատվածի առիթով մեր ուշադրությունը հրավիրեց «Պատմություն քաղաքին Անույ» երկի վրա: Այս բնագրով հնարավոր է դառնում վարդանի «խոշորեալ սրտի» անհասկանալի ընթերցումը սրբագրել «խարչեալ սրտի» արտահայտությամբ (Արևիշար, էջ 110, 124):

Հետաքրքիր է նաև այն փաստը, որ այս վավերագրում և դարա-
շրջանի մյուս հուշարեան սկզբնաղբյուրներում արդեն չեն հիշատակ-
վում Փիլիպուպոլսի և նրա շրջակայքի պալլիկյան և մանիքեական
Հայերը, որոնց մասին իր աշխատության մեջ մանրամասն խոսում էր
Աննա Կոմնենեն:

Բացի Նիկեոսա Խոնիատեսի «Պատմության» մեջ եղած վերո-
բերյալ ակնարկից, ԺԲ դարի 80-ական թթ. բյուզանդական սկզբնաղբ-
յուրներին մեջ ուրույն նշանակություն են ձեռք բերում նաև նրա ճա-
ռերն ու նամակները: Այս մատենագիրը երրորդ խաչակրության նախ-
օրերին նշանակվել է Փիլիպուպոլսի և նրա շրջակայքի կառավարիչ⁴²:
Խոնիատեսն իր Պատմության մեջ և առանձին եկեղեցական ու քաղա-
քական գործիչներին գրած նամակներում անդրադառնում է քաղաքի
և նրա շրջակայքի դավանական իրավիճակին ու Ֆրիդրիխ Բարբարո-
սայի գլխավորած բանակի նկատմամբ բնակչության վերաբերմունքին:
Ըստ նրա տեղեկության. «[Ֆրիդրիխ Բարբարոսան] մտնելով
Փիլիպուպոլսիս, գտավ այն գրեթե ամբողջովին դատարկ, քանի որ քիչ
թե շատ օրինավոր բնակիչները փախել էին այնտեղից, իսկ եթէ որևէ
մեկն էլ մնացել էր, ապա կամ ինչ որ աղքատ էր, որի ունեցվածքը
միայն իր Հագուստն էր, կամ էլ Հայ էր: Իրականում միայն Հայերն
էին Համարում գերմանացիների գալուստը ոչ թե ազգերի ներխուժում,
այլ բարեկամների այց, քանի որ նրանք գերմանացիների Հետ վարում
են առևտրական գործեր և փոխադարձաբար Համաձայն են նրանց Հետ
բազմաթիվ Հերետիկոսական ուսմունքներում: Այսպես, Հայերի և
գերմանացիների կողմից Հավասարապես մերժվում է սուրբ պատկեր-
ների պաշտամունքը. թե մեկը և թե մյուսները սրբազան պատարագի
ժամանակ օգտագործում են բաղարջ և, շեղվելով ուղիղ ճանապարհից,
որպես կանոն, ունեն նաև ուրիշ այլ [ստվորություններ], որոնք մերժում
են օրթոդոքս քրիստոնյաները»⁴³:

բյուզանդական-օրթոդոքս եկեղեցու առաջնորդին (άρχιερεύς), որն այդ ժամանակ
Կոստանդինյան Պանտեխսեն տախտապոսն էր (տե՛ս Hecht, Byzanz, p. 73):

41 Տե՛ս Բարթոլիլամ, Նոր Այդոթեր, էջ 289: Ռուսերեն թարգմանությունը տե՛ս Бартияня,
К истории, с. 55: Այս մասին տե՛ս նաև Hecht, Byzanz, S. 73:

42 Նիկեոսա Խոնիատեսը Փիլիպուպոլսի կառավարիչ է նշանակվել 1189 թ. (տե՛ս
Hunger, Die hochsprachliche, I Bd., S. 430):

43 Τὴν δὲ φιλιππούπολιν εἰσὼν κεκενωμένην εὖρε τῶν πλείονων καὶ ἐπιφανε-
τέρων αὐτῆς οἰκητόρων· εἰ γάρ τις καὶ ὑπολέλειπτο, πτωχεύων ἦν οὗτος καὶ
τὴν οὐσίαν πᾶσαν ἐν ὄψ ἐνεδέδυτο ἀριθμῶν ἢ τοῖς ἀρμενίοις καταλεγόμενος·
οὗτοι γὰρ μόνοι τῶν ἀπάντων οὐκ ἐπιδρομῆν ἔθων, ἀλλὰ φύλων παρούσιαν τὴν
τῶν Ἀλαμανῶν διέλευσιν ἤγηγον, ἐπειδὴ καὶ συγχρῶντα Ἀρμενίους Ἀλαμανοὶ
καὶ κατὰ τῶν ἀρέσεων τὰς πλείστας ἀλλήλοισι συμφέρονται. Ἀρμενίους γὰρ

Փրիլպուպուլսի Հայկական դադուլթի և քաղաք ներխուժած եր-
րորդ խաչակրաց ռազմարշավի բանակների հետ Հայերի բարեկամա-
կան փոխհարաբերությունների մասին վկայում է նաև դեպքերին ժա-
մանակակից, գերմանացի պատմիչ Անսբերտը իր «Ֆրեդերիկ կայսեր
ռազմարշավի պատմություն» (Historia de expeditione Frederici imperatoris)
երկում: Այստեղ Հայերն անվանվում են Հաղթական կայսեր Հա-
վատարիմ բարեկամներ (per Armenios fideliores victoriosimo imperatori)⁴⁴:
Սակայն այս Հարթության վրա ևս անկարելի է բացատրել Նիկեոսա
Խոնրատեսի այն խոսքերը, ըստ որոնց Հայերը և գերմանացիները Հա-
մաձայն են բազմաթիվ Հերետիկոսական ուսմունքներում, և սովորու-
թյուններ ունեն, որոնք մերժում է Կոստանդնուպուլի եկեղեցին: ԺԲ
դարի բյուզանդական դավանաբանական աշխատություններում Հա-
ճախ են Հանդիպում երկեր, որոնք նվիրված են Հայոց առաքելական և
Հռոմի կաթոլիկ եկեղեցիներում պատարագի ժամանակ օգտագործվող
բաղարջի խնդրին⁴⁵: Սակայն միայն այս ծիսական նույնությունը, մեր
խորին համոզմամբ, էջր կարող լիակատար հիմք տալ Նիկեոսա Խո-
նրատեսին նման Հայտարարություն կատարելու համար⁴⁶: Բյուզան-
դական պատմիչը, Հավանաբար, ավելի ծանրակշիռ փաստարկներ

καὶ Ἀλαμανοῖς ἐπ' ἰσῆς ἢ τῶν ἀγίων εἰκόνων προσκύνησις ἀπηγόρευται, καὶ
τοῖς ἀζύμοις κατὰ τὰς ἱεροτελεστίας ἀμφοτέροι κέχρηται καὶ ἄλλα ἄττα
ὀρθοδοξοῖς Χριστιανύμοις ἀπόβλητα οὗτοι σφαλλόμενοι τοῦ ὀρθοῦ τηροῦσιν ὡς
ἔννομα" (N.Ch., p. 403. 71-81, H.X., T. 2, c. 6): Փրիլպուպուլսի շրջանի և Գրա-
շրջակայքի հայ հերձվածողներից Նիկեոսա Խոնրատեսը հիշատակում է նաև Փի-
լիպուպուլսի օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոս Կոստանդին Պանտեխսեսից ուղղված իր
լիպուպուլսի օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոս Կոստանդին Պանտեխսեսից ուղղված իր
ճառում: Մատենագրական այս երկը բյուզանդագետ Վ. Հեխտը թվագրում է 1189
թվականով (տե՛ս Hecht, Byzanz, p. 73-74):

44 Quellen, S. 48:

45 Կոմենեոսների և Ագաթյոսների դարաշրջանում հիշյալ խնդրի շուրջ պահպանված հու-
ճարեն սկզբնաղբյուրների հեղինակային պատկանելության հարցերի շուրջ տե՛ս Beck,
Kirche, S. 609-629:

46 Նիկեոսա Խոնրատեսը նաև դավանաբանական (Thesaurus orthodoxae fidei) երկի
հեղինակն է: Այս երկի ԺԷ գլխում, պատկերամարտներից (ԺԶ) անմիջապես հետո և
պավլիկյաններից (ԺԸ) ու բոգոմիլներից (ԺԹ) անմիջապես առաջ անդրադառնում է
նաև Հայոց դավանանքին: Հետաքրքիր է, որ այս աշխատանքում հեղինակը դավա-
նան Հայոց դավանանքին: Հետաքրքիր է, որ այս աշխատանքում հեղինակը միջև (տե՛ս PG, t.
140, p. 101): Քրիստոնեական այս երկու շուրջ եկեղեցիների դավանական մտանու-
թյունները բյուզանդական դավանաբանության տեսանկյունից ժամանակին ընդգծել են
նաև Նվթիմիոս Չիգարենոսը (PG, t. 130, p. 1173) և Ագնա Կոմենեն (տե՛ս վերևում,
ծան. 11):

Բաղարջի օգտագործման սովորությունը Նվթիմիոս Չիգարենոս, կապում է հրե-
ական և ոչ թե կաթոլիկ եկեղեցու համապատասխան ավանդույթի հետ (տե՛ս PG, t. 130,
p. 1180-1184): Այս հանգամանքը հավանաբար նկատի ունի Նվթիմիոս Թեսալո-
նիկացին, երբ իրար կողք է դնում հրեաներին և հայերին (տե՛ս վերևում, ծան. 33):

պիտի ունենար: Նրան թերևս ծանոթ էր Հոռմի պապ Լուսինոս Գ-ի (1181-1185) նամակի գոյության փաստը, որը Հոռմիկա էր տարել Փիլիպոսպոլսի Հայոց առաքելական եկեղեցու արքեպիսկոպոս Գրիգորը: Հոռմի պապն իր այս նամակում ընդգծում է, որ Հայոց կաթողիկոսը և նրա պատվիրակութունը գլխավորած եպիսկոպոսը խոստովանում են «ղամենայն ուղիղ դաւանութիւն հաւատոյ»⁴⁷, սակայն առաջարկում է փոփոխել որոշ ծիսական սովորութիւններ⁴⁸: Նա իր վրա է վերցնում նաև Հայոց եկեղեցու նկատմամբ հովանավորութիւնը. «այսուհետեւ սիրով եւ ճշմարիտ ոգով եւ սրտիւ եկեղեցիս Հոռմայ տեսուչ է Ձեր եւ ժողովոյ Ձերոյ»⁴⁹: Բացի այս թղթից, մեզ են հասել նաև Հոռմի պապ Կղեմես Գ-ի (1187-1191) նամակները՝ ուղղված Հայոց կաթողիկոս Գրիգոր Դ-ին և Կիլիկիայի Հայկական պետության միապետ Լևոն Ռուբինյանին⁵⁰: Վերջին երկու նամակները Կիլիկիա է բերել երրորդ խաչակրության ղեկավարներից մեկը, Մյունստեր քաղաքի եպիսկոպոսը⁵¹: Դրանք թվագրված են. «գրեցաւ ի Հոռմ ի լատրանն՝ նախ քան զչորս կաղանդաց յունիս ամսոյ՝ եւ յերկու ամն եպիսկոպոսութեան մերոյ»⁵², այսինքն՝ 1189 թ. հունիսի 4-ին: Այս նամակներում Կղեմես Գ-ը կոչ է անում աջակցել երրորդ խաչակրաց ռազմարշավին: Նա որևէ դավանական կամ ծիսական զիջում չի պահանջում և ընդգծում է, որ Գրիգոր Դ-ին «որպէս ճշմարիտ քրիստոնեայ պատուեմք»⁵³: Հոռմի Հիշյալ պապերի, խաչակրաց բանակները և Կիլիկիայի կաթողիկոսների ու Փիլիպոսպոլսի Հայկական դպրութի նմանատիպ փոխադարձ բարեկամական տրամադրութիւններն էին, մեր կարծիքով, Նիկեոսա խոնիատեսի վերոբերյալ տեղեկության զրդիչ հիմքը:

Ինչպես տեսանք, բյուզանդական, հայկական և լատինական պատմական սկզբնաղբյուրները միաբերան վկայում են, որ Փիլիպոս-

47 Տե՛ս ՄՄ-1026, թղ. 173: Նույն նամակում մի այլ առիթով Հոռմի պապը անբիժ է համարում այդ հավատը (նույն տեղում, թղ. 175):

48 Լուսինոս Գ-ն իր նամակում պնդում է ընդունել հետևյալ սովորությունները.

ա) պատարագի գինու հետ ջուր խառնել (ՄՄ- 1026, թղ. 174ա),

բ) Հոռմի եկեղեցու հետ նույն օրը տոնել Սուրբ Ծնունդը (ՄՄ-1026, թղ.175ա),

գ) հարմարեցնել Հայոց եկեղեցական տարիճ Հռոմեականի հետ (ՄՄ-1026, թղ. 175ա):

49 ՄՄ-1026, թղ. 176ա:

50 Տե՛ս , էջ 140-143:

51 Հմմտ. Ալիսեան, Ներսէս Լամբրոնացի, էջ 301:

52 Տե՛ր-Միքելեան, Միջիգ, էջ 143:

53 Նույն տեղում:

պոլսում և նրա շրջակայքում ժԲ դարի 60-80-ական թթ. գոյութուն
ուներ մի հզոր հայկական գաղութ, որը ենթարկվում էր Հռոմկլայի
Հայոց կաթողիկոսարանին և ուներ եպիսկոպոսական աթոռ, որը բա-
վական լուրջ դեր էր կատարում Բաղկանյան թերակղզու քաղաքական
կյանքում: Այդ էր պատճառը, որ Բյուզանդական կայսրը ներքաշում
էր նրա հոգևոր առաջնորդներին երկու եկեղեցիների միջև սկսված
եկեղեցական բանակցութիւնների մեջ:

ՎԵՐՁԱԲԱՆ

ԺԲ դարի 60 - 70 - ական թվականների Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերի պարունակած նյութը և քաղաքական փոխհարաբերությունների ընթացքը թույլ են տվել ներկա աշխատանքում քննարկել և հետազոտողների ուշադրության առարկան դարձնել հետևյալ Հարցերը.

ա) մենագրության առաջին մասում տրված վավերագրերի ցանկում փորձել ենք մշակել Հայկական միջնադարյան փաստաթղթերը նկարագրելու և պատմական այդ սկզբնաղբյուրները ուսումնասիրելու Հիմնական մոտեցումները: Տարբեր ժողովածուներում և ձեռագրերում պահպանված վավերագրերի կողքին, սկզբնաղբյուրների ընձեռած նյութի սահմաններում, վերականգնել ենք հիշյալ ժամանակաշրջանի Հայ բյուզանդական եկեղեցական բանակցությունների՝ մեզ չհասած վավերագրերի մոտավոր բովանդակությունը: Վավերագրիտական նյութի համակողմանի ուսումնասիրության ընթացքում պատմական կապեր ենք բացահայտել այս և հետագա դարաշրջաններում Հայոց եկեղեցու կողմից շրջանառության մեջ դրված մի շարք վավերագրերի հետ: Երկկողմ փոխհարաբերությունների այս կարճատև ժամանակամիջոցի հետազոտությամբ, քննարկման նյութ ենք դարձրել Հայ-բյուզանդական բանակցություններում բանավեճի առարկա՝ Հիմնական եկեղեցաքաղաքական Հարցերը:

բ) Հայերենով և հունարենով պահպանված փաստաթղթերը, չլինելով ինքնագրեր, այնուամենայնիվ, թույլ են տվել պատկերացում կազմել այդ ժամանակաշրջանի Կոստանդնուպոլսի և Հռոմկլայի նոտարական գրասենյակներում վավերագրերի կազմման, փաստաթղթերի ձևավորման Հիմնական սկզբունքների վերաբերյալ: Ուսումնասիրության ընթացքում վեր ենք հանել Կոստանդնուպոլսի կայսերական ու պատրիարքական, Հռոմկլայի կաթողիկոսական դիվանատներում աշխատանքի կազմակերպման կարևոր մոտեցումներ: Բյուզանդական

վավերագրիտուության լայն ֆոնի վրա վերլուծել ենք պահպանված փաստաթղթերի կառուցվածքը, վերնագրերը, թղթառաջքները և թղթավարտները, որոնք թույլ են տալիս ճշգրիտ պատկերացում կազմել միջազգային փոխհարաբերություններում Հայոց կաթողիկոսների զբաղեցրած դիրքի վերաբերյալ:

բ) Նկարագրված և հետազոտության ենթարկված վավերագրերի հիման վրա եկել ենք այն եզրակացության, որ Ներսես Լամբրոնացու և Թեոփիանոս մագիստրոսի կազմած փաստաթղթերի ժողովածուները 1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցությունների անփոխաբիրները սկզբնաղբյուրներ են և հետագայում էլ մեծ կարևորություն են ունեցել ճշտելու համար երկու եկեղեցիների դիրքը այս կամ այն հոգևոր կամ քաղաքական խնդրի վերաբերյալ: Աշխատության մեջ ճշտել ենք նաև առանձին պատմական անհատների դիրքը քննվող եկեղեցաքաղաքական իրադարձությունների նկատմամբ:

գ) Առաջին անգամ ԺԲ դարի Հայ-բյուզանդական բանակցությունների ընթացքում է, որ Հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները, Ներսես Լամբրոնացու ղեխավորությամբ, ի հակակշիռ բյուզանդական ինը կետերի, առաջ են քաշում և Հայոց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության շրջաններում քննարկման նյութ բարձրանում Հռոմիլայի կաթողիկոսարանը Անտիոքի պատրիարքան կան աթոռի իրավասություններով օժտելու հարցը, որն էլ համարում ենք այս բանակցություններում Հայկական կողմի գերխնդիրը: Խանք այս բանակցություններում Հայկական կողմի պատրիարք ձեռնադրելու հնարավորությունից, քանի որ Հռոմի եկեղեցին սկսել էր այդ գահին նշարավորությունից, քանի որ Հռոմի եկեղեցին սկսել էր այդ գահին նշարական կաթողիկ հոգևորականներ: 1165 թ. Մանուել Ա Կոմնենոսին հաջողվեց Անտիոքում կրկին հույն պատրիարք նստեցնել, սակայն վերջինիս գործունեությունը քաղաքում կարճ տևեց, իսկ հոգևոր այդ գործիչը՝ Կյուրեղ պատրիարքը, ստիպված Հանգրվանեց Կոստանդնուպոլսում: Դեպքերի զարգացման նման պայմաններում աչք է զարնում այն հանգամանքը, որ Հայոց կաթողիկոսը 1175 թ. իր երաշխավորյալ կոստանդին Հերապոլսեցուն արքեպիսկոպոս ձեռնադրելու համար Կոստանդին Հերապոլսեցուն արքեպիսկոպոս ձեռնադրելու համար խնդրում էր ոչ թե Անտիոքի լատին պատրիարքին, այլ իր նստավայրից հեռացած և Կոստանդնուպոլսում հանգրվանած՝ Անտիոքի հույն առաջնորդին:

դ) Քննարկման նյութ դարձած խնդիրների մեջ առանձնանում է ԺԲ դարում Փիլիպուպոլսի Հայկական գաղութի զբաղեցրած առանձնահատուկ դիրքը Բալկաններում: 1185 թ. այնտեղ հիշատակվող ե-

պիսկոպոսական աթոռը կապող օղակ էր դարձել Հռոմկլայի Հայոց կաթողիկոսարանի, Բյուզանդական կայսրութեան և Հռոմի պապական եկեղեցու միջև ծագւալոված փոխհարաբերութեանն: Փիլիպուպուսին նվիրված հատվածում փորձել ենք վեր հանել քաղաքի հույն և հայ բնակչութեան մոտեցումները ժամանակի որոշ պատմական իրադարձութեանն երկնից, պարզաբանել բյուզանդական մատենագրութեան մեջ արմատավորված հակահայկական քարոզչութեան միտումները և լուսաբանել կայսրութեան պաշտոնական քաղաքականութեան մոտեցումը, որին փորձում էին հակադրվել Հայոց եկեղեցին և գաղութի բնակչութեանը:

SUMMARY

COLLECTION OF DOCUMENTS CONCERNING ARMENO-BYZANTINE ECCLESIASTICAL AND POLITICAL RELATIONS - The historical sources and especially documents of the twelfth century contain many interesting testimonies about the diplomatic relations between the Armenian catholicate of Hromkla and the Byzantine Court and Patriarchate of Constantinople. The majority of these documents has already been published, but some of them are particularly known only to narrow circle of byzantinologists and armenologists, because they have been preserved only in manuscripts.

During the second half of the eleventh century Armeno-Byzantine ecclesiastical and political relations assumed a hostile character on both sides. The level of relations in this period is described in the original text of Mat'eos Urhayec'i's (or Edesac'i's) "Chronography". Here we can find several testimonies on Armeno-Byzantine ecclesiastical and political disputes, the principal initiator of which was Emperor Alexius I Comnenus (1081 - 1118). The Byzantine historians Anna Comnena, John Cinnamus and Nicetas Choniates devoted numerous pages to the persecution of the Armenian church and population in the Byzantine empire in the twelfth century¹. John II Comnenus (1118 - 1143) tried to relax this atmosphere between two churches², but relations became more regularized only during the reign of Manuel I Comnenus (1143 - 1180)³. Many specialized articles and monographs have recently been written about Armeno-Byzantine ecclesiastical negotiations during the period⁴.

1 See Zekyan, *The Armenian*, p. 363-373.

2 Darrouzès, *Trois*, p. 94 - 96.

3 See Բրոդսկի, *Բյուզանդիայի*, էջ 126-163, 218-253:

4 See Zekyan, *ST. Nerses*, p. 861-883; Keshishian, *The problem*, էջ 91-106:

They had no precedent in the history of relations between both churches. The texts of some of these documents have been preserved in Armenian and Greek, which sometimes differ considerably from each other.

Our main purpose in this study is to compare the Greek documents with the Armenian ones. Therefore let us return to that collection in detail.

The imperial official Theorianus (or *λίξιον τῆς βασιλείας μου* by Manuel I Comnenus), a distinguished Greek theologian and philosopher, twice visited Hromkla (1170/2) in order to negotiate with Catholicos Nerses IV Shnorhali. The *Dialexis* of these two talks written by Theorianus and other documents connected with these discussions have reached us in several Greek manuscripts. However I have information about four of them only. Three of these manuscripts are in the Vatican. According to Prof. Franz Tinnenfeld, two of them (Vat.gr.1105, fifteenth century and Vat. gr. 1124, fourteenth century) were used in publication of the theologian A. Mai, and were republished by J.-P. Migne. The third Vatican manuscript described by S. Lilla⁵, is dated to 1304/5 and is listed as Vat.gr. 2220. It is the oldest manuscript I know of. The description of the fourth manuscript of the sixteenth century (Number 261 of theological texts) can be found in the catalogue of theological works of the National Library of Vienna, which was collected by professors H. Hunger and Chr. Hannik⁶. I am sure there are some other old Greek manuscripts which are still unknown to me.

Nerses Lambronac'i's collection of documents of 1165-1178 is of a different character. It contains only the letters of Manuel I Comnenus, Michael III Anchialus and Armenian catholicos Grigor III, Nerses IV and Grigor IV, about the problem of church unity. Nerses Lambronac'i composed this collection in 1180 and added historical comments to the letters⁷. I know nearly one hundred manuscripts of this work, the oldest of them from the thirteenth century. Seventy of them were used by me in order to publish the comparative text of it.

My book has as its principal aim to explain the difficulty and importance of researching the documents preserved in Armenian and Greek.

As has been said Theorianus transcribed two talks with Nerses IV Shnorhali. The first circulated in the Byzantine Empire from 1170/1, after magistros Theorianus' return from Hromkla to Constantinople. John

5 Lilla, *Codices*, p. 245-246.

6 Hunger, *Katalog*, S. 203-204.

7 See *Բնագրամբ*, Ներքստ, էջ 109-116:

Athmanus, a member of Theorianus' delegation testified about it. Nerses Lambronaci also saw the *Dialexis* of the talks at Hromkla in 1170/1, but we may presume that it attained its present form in Constantinople, after Theorianus' return⁸.

Now let us turn to the subject of dating the period of the first delegation and the documents connected with it. When Theorianus arrived in Hromkla he brought the letter of Emperor Manuel I, dated November of the third indiction (τῷ μηνὶ Νοεμβρίῳ ἰνδικτιῶνος τρίτης)⁹. This document, according to Theorianus, was written with red ink and by the emperor himself (δι' ἐρυθῶν γραμμάτων τῆς βασιλικῆς χειρός)¹⁰. The imperial official witnessed that it has the following title (ἡ ἐπιγραφή): "βασιλικόν εἰς τὸν τιμώτατον καὶ εὐλαβέστατον καθολικὸν τῶν Ἀρμενίων"¹¹. The last detail indicates that Theorianus saw not only the original text (which he himself gave to the Armenian catholicos), but he had used the copy of this letter too which was preserved in the imperial archive in Constantinople.

As it is dated November of the third indiction, we can conclude that the letter of Manuel I Comnenus was written in November 1169. Perhaps the delegation started from Constantinople very late, as Theorianus dated his visit to Hromkla "6678" ("σχολή") from the creation of the world, in the twenty-eighth year of Manuel's rule and 15 May of the third indiction. Consequently Theorianus' delegation came to Hromkla on 15 May, 1170¹². The accuracy of this date is proved by the Armenian version of Manuel's letter, which I suppose, has the date the document entered the catholicate's archive at Hromkla. All Armenian versions of Manuel's letters were dated with the same indiction system, but by another day of the month. Hence I surmise that these documents bear the date of their entrance into the catholicate's archive at Hromkla.

During his first negotiation Theorianus stayed at Hromkla until October 1170. Our supposition is confirmed by the date of the letter which Nerses IV Shnorhali sent with Theorianus to Manuel I Comnenus. According to that letter, it was written from the first to the fifth of October 1170¹³. Nerses Shnorhali's letter theological and liturgical import is preserved also by

8 See PG t, 133, p.248 C.

9 PG, t. 133, p. 121 A.

10 PG, t. 133, p. 121 A.

11 PG, t. 133, p. 121 A.

12 See Բրգուսն, Բյուզանդիայի, էջ 243:

13 See ԶԷրհեան, Համամիությունական, էջ 56:

Theorianus in the Greek translation¹⁴. It is characteristic of the Greek version that it differs from the Armenian text by its date. "μητι Δεκεμβρίω Ἰνδικτιῶνος τετάρτης"¹⁵ (December 1170). Probably, chronologically it corresponds to the year and month of the return of Theorianus's delegation to Constantinople. It is testified by the Greek version, which, I think, is dated to the document is entered to the Byzantine imperial archive.

In the text of the first *Dialexis* our attention was attracted to seven fragments from a letter of Nerses IV Shnorhali to Manuel I Comnenus. At first it seemed to me that the above-mentioned fragments were from the letter which was sent to Constantinople in 1166 by means of a certain Smbat. But detailed research reveals that they were from the theological and ritual letter which in 1165 Nerses Shnorhali (as yet archbishop) delivered to Alexius Axuch (Comnenus's son-in-law), the Cilician duke. This circumstance makes it possible to insist that the whole text of the first *Dialexis* is dedicated to the subject of Christ's nature and the discussion of the questions analyzed in the letter of 1165.

Therefore Theorianus added to the text of the first *Dialexis* the complete letters of Nerses IV Shnorhali and Manuel I Comnenus. In the text he also used the fragments of the letter written in 1165, which had been sent to Constantinople with Alexius Axuch. We should note that all the documents of the first *Dialexis* were also preserved in Armenian.

The text of second *Dialexis* concerns the next phase (1171/2) of the Armeno-Greek negotiations. Theorianus' delegation reached Hromkla in ՏՄԻՎ (6680) from the Creation of the world, in the thirteenth year of Manuel I Comnenus, in the third month of the second year of his son Alexius II Comnenus, on 20 of the third month of the fifth indiction. Therefore we can date Theorianus's second arrival in Hromkla to 20 October, 1171 with some reservation, to be sure¹⁶.

The Byzantine theologian brought four documents with him to Hromkla. Three of them are inserted before the *Dialexis*, until the fourth was placed in the text. The fourth document, consisting of nine points, was, in fact, the Byzantine ultimatum to the Armenian church.

The first of these documents was a secret letter of Manuel I Comnenus. The Armenian translation is not preserved. This document was dated at the

14 PG, t. 133, p. 211-224.

15 See PG, t. 133, p. 213 A.

16 PG, t. 133, p. 236 A.

"same month of the fourth indiction" (Τῷ μηνὶ αὐτῷ ἰνδ. δ´)¹⁷. In the official letter the words "of the fourth indiction" are absent. Historical sources does not allow us to verify the exact date this letter was written. Byzantinologist V. Grumel¹⁸ and later on L. Zekiyān¹⁹ supposed that a textual explanation of the words "the same month" concerns the date of the official letter, which did not preserve in the documents, too. According to of L. Zekiyān this letter must have been written before August 31, 1171.

At the beginning of the second *Dialexis* is also preserved a copy of the official, or as it is called, the "open" letter of Manuel I Comnenus²⁰. Unfortunately, the beginning and conclusion of this letter are lacking in the Greek text. They may be restored with the help of the Armenian translation which is preserved in the text of Nerses Lambronac'i. The Armenian translation also has a chronological testimony which, in all probability, reflects the date of the document's registration in the catholicate's archive at Hromkla (գրեցաւ յաւստեանն ղեկտեսբերի, իրնդիքսրիոննիս ի հինգն)²¹. Thus, we can deduce that the document was translated and then entered the secretariat of Catholicate in December 1171²². The protocol beginning of the letter preserved in the Armenian translation repeats the emperor's secret letter nearly word for word. There is only one substantial difference: at the beginning of the official letter's translation the title αὐγυστος of Manuel I Comnenus, dropped out of the text owing to the negligence of the translator or the scribe of secretariat.

The next document preserved in the second *Dialexis* is the letter of Patriarch Michael III Anchialus to Nerses IV Shnorhali, the Armenian catholicos²³. The Armenian translation of this letter found a place in Nerses Lambronac'i's collection of document too²⁴. The particularity of this letter's Greek text was that it, entered the second *Dialexis* without the protocol-beginning. The letters preserved only in the Armenian version.

A document containing the nine demands of the Byzantine church has been also preserved on the composition of this *Dialexis*. It has also reached us in Lambronac'i's collection of documents. It was also preserved in the decrees of

17 *PG.*, t. 133, p. 236A

18 *Grumel-Darrouzès.*, p. 153

19 *Zekiyān.* The Armenian. p. 56.

20 See *PG.*, t. 133, p. 236.

21 See *ԹԸ*, 1871, էջ 156.

22 See *Zekiyān.* The Armenian, p. 57.

23 See *PG.*, t. 133, p. 236-240.

24 See *ԹԸ*, 1871, էջ 157-159:

the Council of Hromkla (1178), where this document was quoted completely. Its Armenian translation replicated the Greek text word for word.

Nerses Lambronac'i omitted from his collection only two of the letters enumerated above. These are Manuel I Comnenus letter written by Michael III Anchialus the name of and the former's secret epistle. In my opinion, Lambronac'i did not include it in the text of his collection, bearing in mind that the points of view represented in the first letter had already been expressed in the text. The second, as is clear from the title, was "secret" and had not to be published. Perhaps its publication had been forbidden by the Armenian catholicate.

Thus, out of seven documents used completely or partially in the *Dialexis*, only five entered into Lambronac'i's collection. The translation of only one of them differs somewhat from the original, when one compares the Greek original of Manuel I Comnenus's letter, written in November 1169, with its Armenian translation.

For example, at the beginning of the document, which was nearly the same as the Greek original, the expression "περὶ τῆν τῶν Χριστιανῶν ὁρθόδοξον πίστιν"²⁵ was translated as "սալս միաւորութեան եկեղեցւոյ ուղղափառ փառատոյ"²⁶—"on the union of church(es) in the orthodox faith". The expression "church union" of the Armenian translation is absent from the Greek text.

In the composition of the letter the translation completely differs from its original. In the Greek text conditions were imposed demanding the Armenian church to clarify and correct its doctrinal approaches, in accordance with the principles of the orthodox church, while the Armenian text treats only the importance of establishing church union. Therefore, the Armenian version can be considered as a free translation. Hence it received a form which Lambronac'i and some Armenian high-ranked clergymen wanted it to have.

On the contrary, the translation of Manuel I's "famous" letter, written in the summer of 1171, in spite of having some editorial differences from its Greek text, was a word for word translation. The same principles were for the translation of Patriarch Michael III Anchialus's letter of the summer of 1171. They were also translated word for word. The same may be said about the nine demands of Byzantine church.

25 PG., t. 133, p. 120.

26 ՔԸ, 1871, էջ 144:

With regard to Nerses IV Shnorhali's two letters, which were preserved in the text of *Dialexis*, they are very correct and almost word for word translations, though one of them was preserved in part whereas the another is complete. There were some interesting testimonies in the Greek text of the last letter, which are absent from its Armenian version.

Even the brief comparison of the Armenian and Greek documents accessible to us, demonstrates the importance of the codicological, textological and diplomatical analysis.

These two collections which interest us now were published independently of each other. Now it is necessary to publish the comparative texts of the Armenian and Greek documents in one book, adding detailed comments.

THE POSITION OF THE ARMENIAN CHURCH IN ARMENO-BYZANTINE ECCLESIASTICAL NEGOTIATIONS DURING THE TWELFTH CENTURY - Now let us consider the question from the perspective of Armeno-Byzantine ecclesiastical discussions in the twelfth century. In the period from 1165 to 1178 relations focused on the church's liturgical and doctrinal stances as well as structural matters. Byzantine imperial policy assigned great significance to the ethnic Armenian population in its contacts with the Seljuqs and other Islamic states of the Near East and was frequently compelled take the Armenian church's activities into account in formulating its interstate and interchurch policy in the Balkans. This is why the plan to establish union between the Orthodox and Armenian Apostolic churches was twice mooted in Byzantine foreign policy during the 60's of the twelfth century.

Yet what expectations did the Armenian church have from these negotiations and how was this expressed in contemporary sources?

Although he had fixed his catholicos see in Hromklay, i.e. outside the limits of historical Armenia, the spiritual shepherd of "all the Armenians" continued to be addressed as "catholicos and patriarch of all Armenians" to whom almost all the dioceses and monasteries of the Armenian church extending both to east and west were subject. The ecclesiastical interests of the Armenian spiritual authorities coincided with those of Byzantium over numerous issues in Cilicia, northern Mesopotamia, Asia Minor and the Balkans. In their discussions with the Byzantine church the Armenians were trying to find solutions to a series of urgent ecclesiastical problems:

1) to create tolerable conditions for the functioning of dioceses of the Armenian church in territories under Byzantine control.

2) to have the Byzantine church and imperium (empire) accept the Armenian ecclesiastical structure as an orthodox Christian community with the status of "sister church".

3) to exploit the authority of the Byzantine Empire and its external political clout to reinforce the positions of the Armenian catholicate in international relations which would indirectly assist the process of reconstructing a national state.

The Armeno-Byzantine ecclesiastical discussions of the years 1165 - 1178 ended inconclusively. Nevertheless, at the Synod of Hromklay in 1178 during the final phase of these negotiations, Nerses Lambronac'i presented a document in which he proposed to approach the Byzantine emperor on altering the Armenian church's position in the hierarchical order of the universal church.

In that work "Compendia of the Byzantine Orthodox" the archbishop of Tarson was responding to the nine demands posed by Emperor Manuel I Comnenus (1143 - 1180) and Patriarch Michael III Anchialos (1170 - 1178). To the last of these by which the Armenians were required to assent to "the proposal of catholicos by the Byzantine emperor alone" the archbishop of Tarson replies that though tacked on at the end, this final clause recapitulates all the other issues. Bearing in mind the fact that already in the seventh century the Armenian and Byzantine churches had begun to drift quite far apart, notwithstanding the numerous attempts at reconciling these two branches of the universal Church, Nerses Lambronac'i advised the synodal participants to approach the emperor with the following suggestion: "That the Armenian catholicos shall hold the see of Antioch and all the churches and territories under its jurisdiction to east and west and that by the king's [i.e. emperor's] decree its succession should be passed on within the Armenian line in perpetuity"²⁷.

According to this document, that was: "the only way to secure a firm, unbreakable union of love, i.e. to espouse the see of Antioch to the Armenian patriarchate, in that through the coming together of that prudent virgin and this stainless bridegroom we believe an indissoluble love match will arise between our two peoples...it will set all the Armenian churches under the authority of the Byzantine orthodox emperor and unite them within your great church"²⁸. Developing these theses Nerses Lambronac'i continues: "Thus when the

27 Պեղեկանք, Պատմություն, էջ 265:

28 Պատմանք, Պատմություն, էջ 265:

Armenian catholicos is one of the four sees at the right hand of the Byzantine orthodox emperor, as patriarch of Antioch, the hope, faith and unity of all Armenians will be anchored in you through him. Then whatever yoke you lay upon our neck will be alleviated by this hope, always assuring the succession of the first intermediary, who would be called by imperial election. Otherwise, being a slave to other nations according to our sins and living under their authority, how is it possible to reach out to the Byzantine orthodox emperor and request him to propose a catholicos"²⁹.

It was perhaps in an effort to find proofs in support of this stance to be debated at the Synod of Hromklay that, together with Kostandin Herapolsec'i, Nerses Lambronac'i translated the treatises of Nilus Doxapatri, Epiphanius of Cyprus and a series of anonymous tracts on the structure of the universal church hierarchy. Finck's comparison reveals that the extant Greek texts contain lacunas. At the same time it is possible to assert with assurance that the translators inserted various passages into the works of Nilus and Epiphanius which, in my opinion, must derive from the strategy Nerses Lambronac'i crafted on the eve of the Synod of Hromklay. I would include among those passages the portion on "the jurisdiction of Greater Armenia" found in Epiphanius' text and the sections in Nilus formulating the status of the patriarchate of Antioch and Armenian catholicate.

The chapter "The jurisdiction of Greater Armenia" introduced into Epiphanius' writing is a summary version of the corresponding passage in the Armenian translation of Nilus, in which the translators stress the distinct character of the Armenian see. In the translation of both Epiphanius' and Nilus' works the Armenian catholicate's independent position is compared to Cyprus' similar autocephalous status. The only exception is that in Nilus' writing these two independent churches are joined by the Bulgarian see.

These texts advanced by Nerses Lambronac'i regarding the renaming of the Armenian catholicate as patriarchate of Antioch were intermittently revived by the Armenian catholicate during the thirteenth century, but were completely abandoned after the fall of the Armenian state of Cilicia.

29 Պատմիկ, Պետմութիւն, էջ 265-266:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Արրահամյան, Կալվածագրեր- Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր (976, 981, 1432, 1564, 1614 և 1655-1839 թթ.), պրակ I / Առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով կապնեց՝ Հար. Արրահամյան, Երևան 1941:
- Ագաթանգեղոս - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց / Աշխատութեամբ Գ.Տէր-Մկրտչեան եւ Ստ.Կանայեանց, Տփղիս 1909 [Պատմագիրք Հայոց, հատոր առաջին. գիրք երկրորդ]:
- Ալեքսանյան, Պաշտոնական - Ա.Վ.Ալեքսանյան, Պաշտոնական նամակները V դարի հայ պատմագրության համակարգում և նրանց վավերականության խնդիրը, ՊԲՀ, 1987, № 2 (117), էջ 126-138:
- Ալեքսիձե, Արսեն Վաչե-ձեի - Արսեն Վաչե-ձեի «Դոգմատիկոնի» մուծած հակամիաբնակ քերթվածը և նրա արձագանքը Հայոց մատենագրության մեջ, «Մրավայթավի» (Ճառընտիր), հ. 1, Թբիլիսի 1971, էջ 133-158 (վրացերեն):
- Ալիշան, Հայապատում - Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց / յօրինեալ եւ հաւաքեալ ի հ.Ղեւոնդեայ վ.Մ.Ալիշան յաթոռակալ վարդապետէ Մխիթարեան ուխտին, Վենետիկ 1901:
- Ալիշան, Շնորհալի - Շնորհալի եւ պարագայ իւր / գրեաց հ. Ղեւոնդ Մ.Ալիշան վ.Մխիթարեան, Վենետիկ 1873:
- Ալիշան, Սիսուան - Սիսուան, համագրութիւն Հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ / հաւաքեալ ի Հ. Ղեւոնդեայ վ.Մ.Ալիշան յուխտէն Մխիթարայ, Վենետիկ 1885:
- Ալիսեան, Գաւապանագիրք - Գաւապանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն / գրեց հ. Ներսէս վ.Ալիսեան, Վիեննա 1920 [Ազգային մատենադարան, 22]:
- Ալիսեան, Կիրիոն - Կիրիոն կաթողիկոս վրաց. Պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ (Բառասնամեայ շրջան Հայոց եկեղեցական պատմութենէն. 574-610) (Պատմական ուսումնասիրութիւն) / գրեց հ.

Ներսէս Ալիւնեան, Վիեննա 1910 [Ալգալին մատենադարան, 4.]:

Ալիւնեան, Ներսէս Լամբրոնացի - Ներսէս Լամբրոնացի. արքեպիսկոպոս Տարսուհի (կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ալգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց) / գրեց հ.Ներսէս վ. Ալիւնեան, Վիեննա 1956 [Ալգալին մատենադարան, ՃԿԹ.]:

Ալիւնեան, Սիմէոն Պղնձահանեցի - Սիմէոն Պղնձահանեցի եւ իր թարգմանութիւնները վրացերէնէ / գրեց հ.Ներսէս վ. Ալիւնեան, Վիեննա 1951 [Ալգալին մատենադարան, ՃԿԴ.]:

Աղանեանց, Դիւան - Գիւտ քահանայ Աղանեանց, Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ա-ԺԳ, Թիֆլիս 1893-1915:

Աճառյան, Հայերեն - Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հտ. Ա-Դ, Երևան 1971-1979:

Անանեան, Ներսէս - Գ.Անանեան, Ներսէս Լամբրոնացին հրատարակախօս, Անթիլիաս 1995:

Անանեան Պ., Ծնորհալի - Ս.Ներսէս Ծնորհալի կաթողիկոս Հայոց, «Բազմավէպ», 1973, էջ 326-361, 1974, էջ 229-258, 1975, 348-364:

Անասեան, Մանր երկեր - Հ. Անասեան, Մանր երկեր / ներածութեամբ Ա.Գ.Սանճեանի, Լոս Անջելէս 1987:

Ատենաբանութիւն - Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացոյ / թարգմանեալ ըստ ընտիր օրինակաց յիտալական բարբառ ի հ.Յարութիւն վարդապետէ Աւգերտայական քարքառ ի հ.Յարութեան միաբանութենէ. և եան Անկիւրացոյ ի Միխիթարեան միաբանութենէ. և սոպագրեալ ի կրկին բարբառ՝ հանդերձ իտալական ծանօթութեամբք, Վենետիկ ՌՄԿԱ (1812):

Բաղայան, Օրացոյցի - Հ.Ս.Բաղայան, Օրացոյցի պատմութիւն, Երևան 1970:

Բարթիկյան, Գրիգոր Բակուրյանի- Հրաչ Բարթիկյան, Գրիգոր Բակուրյանի «Կանոնադրոյան» մեջ հիշատակվող (ἀντίδρωτον ἔθνος-ի «անկայուն ժողովրդի») մասին, «Լրագր» հասարակական գիտութիւնների, 1980, № 7, էջ 72-78:

Բարթիկյան, Մամիկոնյան - Հ.Ս.Բարթիկյան, Մամիկոնյան (°) սուրբ Մարիամ Նորավկայի (+902-903 թթ.) բյուզանդական վարքք, «Էջմիածին», 1975, ԺԲ, 39-44:

Բարթիկյան, Նոր նյութեր - Հր.Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի հայկական պետութիւնն և Բյուզանդիայի փոխհակառակութիւնների մասին, ԲԱ, № 4, Երևան 1958, էջ 285-290:

Բարխուտարեանց, Պատմութիւն - Պատմութիւն Աղուանից, Ա հատոր / ի Մակար եպիսկոպոսէ Բարխուտարեանց, Վաղարշապատ 1902:

ԲԱ - Բանբեր Մատենադարանի:

- Բուդոյան, Բյուզանդիայի - Ա.Ա.Բուդոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկիան Հայաստանը ԺԲ դարի 30-70-ական թվականներին, Երևան 1988:
- Բուդոյան, Գրիգոր - Ա.Բուդոյան, Գրիգոր Գ Փոքր Վկայասերին վերագրված մի թղթի մասին, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1978, №. 3, էջ 92 - 98:
- Բուդոյան, Հարաբերություններ - Ա.Ա.Բուդոյան, Հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերությունները XII դարի 60-70-ական թվականներին.- ՊԲՀ, 1981, № 2, էջ 150-163:
- Բուդոյան, Հայ-բյուզանդական - Ա.Բուդոյան, Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները (XII դարի 60-70-ական թվականներ), ՊԲՀ, 1990, № 4, էջ 82 - 93:
- Բուդոյան, Ներսես - Ա.Բուդոյան, Ներսես Լամբրոնացին և XII դարի հայ-բյուզանդական հարաբերությունների վավերագրերի ժողովածուն, ՊԲՀ, 1989, № 4, էջ 109 - 116:
- Բուդոյան, Քրիստոնյա - Ալատ Բոյոյան, Քրիստոնյա Արևելք՝ լեզուների եվ մատենագիտությունների ուսումնասիրության ներածություն, «Էջմիածին», 1994, Ձ - Է, էջ 84 - 90:
- Գալանոս, Միաբանութիւն - Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոռովմայ / Շարաղրրեայ ի յերկուս հատորս. ի պատմական և վիճաբանական կարգէ Թէատիկոսաց Կղեմէս վարդապետ, առաջին հատոր, Հոռմ 1690 (առաջին հրատարակությունը՝ 1650 թ.):
- Գալէնտէրեան, Միութենական - Արտավազդ վարդ. Գալէնտէրեան, Միութենական հարց եւ Շնորհալի (պատմաքննական տեսութիւն), Մարտիան 1910:
- Գարեգին Ա, Յիշատակարանք - Գարեգին Ա Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. Ա (Ե դարից մինչեւ 1250 թ.), Անթիլիաս 1951:
- ԳԹ - Գիրք թղթոց, Թիֆլիս 1901, (Սահակ Մեսրոպեան մատենադարան, Ե.) և Գիրք թղթոց, Երուսաղէմ 1994:
- Գրիգոր Սկեւոացի, Ներբողեան - Գրիգորի Սկեւոացոյ Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի, Վենետիկ 1854 (Սոփերք Հայկականք, ԺԵ):
- Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ - Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ / աշխատասիրությամբ Ա.Շ. Մնացականյանի, Երևան 1972:
- Գրիգորյան, Դիվան - Դիվան Հայոց պատմության, նոր շարք, Գիրք Առաջին, Ղուկաս Կարնեցի, Հատոր Ա, 1780-1785 / աշխատասիրությամբ Վարդան Գրիգորյանի, Երևան 1984:

- Դիտտեն**, Հայերի - Հանս Դիտտեն, Հայերի տեղաշարժերը Բյուզանդական կայսրության մեջ Հուստինիանոս I-ից մինչև XI դար, ՊԲՀ, 1988, № 1, էջ 23-36:
- Դոլոմիանյան**, «Գրառաջքները» - Ա.Գ.Դոլոմիանյան, «Գրառաջքները» հայ միջնադարյան մատենագրության մեջ, «Լրաբեր» հասարակական գիտությունների, 12 (396), 1975, էջ 66-74:
- Գրիգորեան**, Ստեփանոս Սինեցի - Ստեփանոս Սինեցի իր երկու նորահայտ մեկնություններու հրատարակութեան առիթով / Ուսումնասիրեց Մեսրոպ վրդ. Գ.Գրիգորեան, Պէյրութ 1958:
- Եպիփան** - Եպիփան Կիպրացու «Ἐκθεσις πρωτοκλησιῶν πατρι-
αρχῶν τὲ καὶ μητροπολιτῶν» / հայերէն և հունարէն, հրատարակեց Զ.Ն.Ֆինկ, Թիֆլիս 1902:
- ԵՅԱ**- Երուսաղեմի ս.Յակոբեանց Մատենադարան:
- Չարրհանայեան**, Մատենադարան - Մատենադարան հայկա-
կան թարգմանութեանց նախնեաց (Դար Դ-ԺԳ), Վենետիկ 1889:
- Չէրիեան**, Համամիութենական - Հ. Լեւոն Չէրիեան, Համամիութենական տրամախօսութիւն մը ԺԲ դարուն. բանակցութիւններ Ս. Ներսէս Ընորհալիի եւ կայսերական նուիրակ Թէորիանոսի միջեւ հայ եւ բիւզանդական եկեղեցիներուն միութեան շուրջ. - Վենետիկ 1978 [Հայագիտական մատենաշար «Բազմավեպ», թիւ 13]:
- Էփրիկեան**, Պատկերապարդ - Հ.Ս.Էփրիկեան, Պատկերապարդ բնաշխարհիկ բառարան, հատոր Ա-Բ, Վենետիկ 1902-1907:
- ԹԸ**, 1871 - Ընդհանրական թուղթք սրբոյն Ներսիսի Ընորհալոյ, Երուսաղէմ 1871:
- Թումանյան**, Հայ - Բ.Ե.Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն / XIX դ. սկզբից մինչեւ 1920/, Երևան 1968:
- Խաչատրյան**, Կարնո - Ա.Խաչատրյան, Կարնո Սաղորդիանների ժամանակագրությունը և տոհմաբանությունը ըստ արաբական վիմագիր աղբյուրների, «Արևելյան աղբյուրագիտություն», 1, Երևան 1988, էջ 99-133:
- Կանոնագիրք Հայոց** - Կանոնագիրք Հայոց / Աշխատասիրութ-
յամբ՝ Վապգեն Հակոբյանի, Երևան 1964 (հտ. Ա), 1971 (հտ. Բ):
- Կիրակոս** - Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց / աշ-
խատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961:
- Կիւլեբեան**, Հին - Բարգէն վ.Կիւլեբեան, Հին էջեր. Յովհաննէս Դամասկացի եւ Հայ Եկեղեցին.-«Լոյս» Շարաթաթերթ, Կ.Պոլիս 1905, էջ 1008-1012, 1065-1066 (Նախաբան

իրատարակչին), 1066-1068, 1112-1115, 1906, էջ 45-48, 116-119, 213-216, 355-359, 474-479, 589-592, 810-815, 957-960, 981-984, 1075-1079, 1124-1126, 1196-1199:

Կոզեան, Հայոց - Լ.Ս.Կոզեան, «Հայոց եկեղեցին» մինչև Փլորենտեան ժողովը, Բեյրութ 1961:

ՀԱ - «Հանդես ամսօրեայ», հայագիտական ուսումնասիրք, Վիեննա:

Հակոբյան, Ներսես - Գր. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան 1971:

Հակոբյան, Սկևռայի - Գր. Հակոբյան, Սկևռայի գրական-մշակութային դպրոցը, Երևան 1988:

Հարությունովա, Գրիգոր Պակուրիանը - Վ.Ա.Հարությունովա, Գրիգոր Պակուրիանը (Բակուրյանը) և Պետրիժոնոնովանք հիմնելու նրա նպատակները, տե՛ս «Մատր և հայագիտության հարցերը», Երևան 1968, էջ 167-192:

ՀԺՊ - Հայ ժողովրդի պատմություն, հտ. I - VIII, Երևան 1971-1984:

Հովհաննիսյան, «Ասորական» - Ս.Հ.Հովհաննիսյան, «Ասորական» կամ «Ասորա-հոռմեական» կրչված դատաստանագրքի աղերսը հայ իրավունքի հետ, ՊԲՀ, 1970, № 2, էջ 158 - 178:

ԱԱ, 1870 - Տեառն Միխայելի պատրիարքի Ասորոց ժամանակագրութիւն, Երուսաղէմ 1870:

ԱԱ, 1871 - Ժամանակագրութիւն Տեառն Միխայելի Ասորոց պատրիարքի, հանեալ ի հնագոյն գրչագրէ, Երուսաղէմ 1871:

Մանր ժամանակագրություններ - Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. / Կապմեց՝ Վ.Ա.Հակոբյան, հտ. I, Երևան 1951, հտ. II, Երևան 1956:

Մաթևոսյան, Հիշատակարաններ Ե - ԺԲ - Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ./ Աշխատասիրությանը Ա.Ս.Մաթևոսյանի, Երևան 1988:

Մաթևոսյան, Հիշատակարաններ ԺԳ - Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԳ դար / Կապմեց Ա.Ս.Մաթևոսյան, Երևան 1984:

Մատթէոս - Մատթէոս Ուոհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ 1898:

Մարգարյան, Հյուսիսային - Հ.Գ.Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի և վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երևան 1980:

Մարգարյան, Քաղաքական - Հ.Գ.Մարգարյան, Քաղաքական կացությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանի սպասարման հեռանկարներ (XII-XIII դդ.), ՊԲՀ, էջ 35-49:

Մեկնությունն Յայտնութեան - Մեկնությունն Յայտնութեան և.

Աւետարանչին Յովհաննու արարեալ Տ.Անդրէի եւ Արե-
տասայ եպիսկոպոսացն Կեսարու, Երուսաղէմ 1855:

Մելիքսէթ-Բեկ, Վարդապետք - Լ.Մելիքսէթ-Բեկ, «Վարդա-
պետք Հայոց հրուսիային կողմանց» և նրանց ինքնու-
թյունը, Թբիլիսի 1928 (վրացերէն):

Մխիթար Անեցի - Մխիթար Անեցի, Մատենան աշխարհավէպ
հանդիսարանաց / Աշխատասիրութեամբ Հ.Գ.Մարգար-
յանի, Երևան 1983:

Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի - Մխիթար Գոշ, Գիրք Դա-
տաստանի / աշխատասիրութեամբ՝ Խոսրով Թորոսյանի,
Երևան 1979:

Մխիթար Գօշ, Դատաստանագիրք - Մխիթարայ Գօշի Դա-
տաստանագիրք Հայոց / իրաւարանական հետազօտու-
թիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծվարդապետի
Բաստամեանց միաբանի սրբոյ Էջմիածնի եւ վանաօր և.
Գայիանիայ վանուց, Վաղարշապատ 1880:

Մխիթարեանց, Պատմութիւն - Պատմութիւն ժողովոց Հայաս-
տանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբք ի պէ-
տու ժառանգաւորաց / Աշխատասիրեաց Աբէլ արքեպիս-
կոպոս Մխիթարեանց, Վաղարշապատ 1874:

ՄՄ - Մաշտոցի անվան Մատենադարան:

Մուրադյան, Գրիգոր Նապիանյացին - Կ.Մ.Մուրադյան, Գրի-
գոր Նապիանյացին հայ մատենագրութեան մեջ, Երևան
1983:

Մուրադյան, Եվթիմիոս Չիղարքենոս - Պ.Մ.Մուրադյան, Եվթի-
միոս Չիղարքենոսի «πανοπλία δογματικη» երկի հին վրա-
ցերէն թարգմանութիւնը, տե՛ս «Մառք և հայագիտութեան
հարցերը», Երևան 1968, էջ 266-295:

Մուրադեան, Դաւանական - Պ.Մ.Մուրադեան, Դաւանական
հանդուրժողականութեան եւ պզգամիջեան համերաշխու-
թեան գաղափարը ԺԲ-ԺԳ դարերի Հայաստանում, «Գան-
ձասար», Դ, էջ 95-108:

Յայամաւորք - Գիրք որ կրչի Այամաւորք, Կ.Պոլիս ՌՃՀԹ (1730):

Յովհաննու, Խոստովանութիւն - Յովհաննու Իմաստասիրի
Հայոց կաթողիկոսի Խոստովանութիւն անշարժ յուսոյ
մարմնանայոյ բանին Քրիստոսի եւ բնորդէմ դաւանողաց
վմի Քրիստոս յերկուս բնութիւնս / Հրատարակեց
կարապետ Վարդապետ, Վաղարշապատ 1896:

Յովհաննու - Յովհաննու Իմաստասիրի եւ կաթողիկոսի Հայոց
Օսնեցւոյ Ճար Ընդդէմ երկութեանց / Հանդերձ
առաջարան և հետևորդ ծանօթութեամբք Հ.Մկրտիչ
Վարդապետի Աւգերեան, Վենետիկ 1807:

Յուսկան - Խորհրդածությունը սրբազան պատարագի, բացատրություն Տեառն Ներսէսի Լամբրոնացոյ արքեպիսկոպոսի Տարսնի Կիլիկեցոց, Երուսաղէմ 1842, հաւելումս, էջ 21-27:

Նալբանդեան, Հիշատակարան - Մ.Նալբանդյան, Հիշատակարան, ԺԴ, տե՛ս Միքայէլ Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր առաջին / տեքստը, կոմենտարները և ծանոթագրությունները Նշան Մուրադյանի, Երեւան 1945:

Նեղոս - Նեղոս Դոքսապատոի կարգադրություն պատրիարքական աթոռոցն / հայերեն և յունարէն հրատարակեց Յրանց Նիկոյաու Յինկ, Վաղարշապատ 1902:

Ներսէս Լամբրոնացի - Տն.Ներսէսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի Ատենաբանութիւն և թուղթք և ճառք, տե՛ս Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ Նամականի, Վենետիկ 1865 (նաև՝ 1838):

Ներսէս Լամբրոնացի, Խորհրդածությունը - Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ Տարսնի եպիսկոպոսի Խորհրդածությունը ի կարգս եկեղեցոյ և մեկնութիւն խորհրդոյ Պատարագին, Վենետիկ 1847:

ՆԲՀ - Նոր բառգիրք հայկապեան լեզուի, հտ. Ա-Բ, Վենետիկ 1836-1837թ:

Ոսկանյան-Կորկոտյան-Սամվայան - Ն.Ս.Ոսկանյան, Բ.Ս.Կորկոտյան, Ա.Մ.Սամվայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Երևան 1988:

Չամչեանց, Պատմութիւն - Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784 / Յօրինեալ ի Հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց Կոստանդնուպօլսեցոյ, Հատոր Գ, Յորում աւանդին պատմութիւնը հինգերորդ և վեցերորդ գրոց՝ սկսեալ յամէ տեառն 1080 մինչև ի 1174, Վենետիկ 1786:

Պալճեան, Պատմութիւն - Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայս և միութեան նոցա ընդ հոռմէական եկեղեցոյ ի Փլորենտեան սինհոդոսի / գրեց Աղեքսանդր վ.Պալճեան, Վիեննա 1878:

ՊԲՀ - Պատմա-բանասիրական հանդէս:

ՊԽՄ - Պատճառ ինչորոյ միաբանութեան թագաւորին Հոռոմոց Էմանուէլի և սրբոց կաթողիկոսացն Հայոց թուղթքն, զոր գրեցին առ միմեանս:

Պողարեան, ՄՅՁՅՅ - Մայր Յուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց / կապմեց Նորայր եպս. Պողարեան, հտ. Ա-ԺԱ, Երուսաղէմ 1966-1991:

- Սաստեթեան, Ներսէս - Սմբատ եպիսկ. Սաստեթեան, Ներսէս
 Լամբրոնացի / աշխատասիրութիւն պատմական, մատենա-
 նագրական եւ վարդապետական, Անթիլիաս 1981:
- Սամուէլ - Սամուէլի քահանայի Անէցոյ Հաւաքմունք ի գրոց
 պատմագրաց / Յոռաջաբանով, համեմատութեամբ, յա-
 լելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքէլ-
 եանի, Վաղարշապատ 1893:
- Սարգսյան, Հովհաննէս - Ա.Բ.Սարգսյան, Հովհաննէս Դրաս-
 խանակերտցոյ «Հայոց պատմութիւնը» և Մովսէս Խորե-
 նացին, Երևան 1991:
- Սերէոս, Պատմութիւն - Պատմութիւն Սերէոսի / աշխատասի-
 րությամբ Գ.Վ.Արզարյանի, Երևան 1979:
- Սմբատ, 1859 - Տարեգիրք արարեալ Սմբատայ Սպարապետի
 Հայոց, որդւոյ Կոստանդէայ կոմսին Կոռիկոսոյ, Փարիզ
 1859:
- Սմբատ, 1956 - Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ,
 ս.Ղապար, 1956:
- Սիրմէեան, Երոպայի - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւ-
 րոպայի մասնաւոր հաւաքումներու, առաջին հատոր /
 կազմեց Արտաւապդ արքեպիսկոպոս Սիրմէեան, Փարիզ
 1950:
- Վարդան, Հաւաքումն - Հաւաքումն պատմութեան Վարդանայ
 վարդապետի, Վենետիկ 1862:
- ՎԲՄ - Վատիկանի Բորգյան մատենադարան:
- Տէր-Մինասեանց, Հայոց - Ե.Տէր-Մինասեանց, Հայոց եկեղեցու
 յարաբերութիւնները ասորոց եկեղեցիների հետ, Էջմիա-
 ծին 1908:
- Տէր-Միքէլեան, Հայաստանեայց - Հայաստանեայց եկեղեցին
 եւ Բիւզանդեան ժողովոց պարագայք, պատմական յա-
 ռաջադրութիւն / գրեց դր. Արշակ Տէր-Միքէլեան, Մոս-
 կուա 1892:
- Տէր-Միքէլեան, Միջին - Ա.Տէր-Միքէլեան, Միջին դարերի
 կաթողիկոսների ձգտումներն եկեղեցական իսաղաղու-
 թեան համար, «Արարատ», 1893, էջ 25-48, 129-145, 236-253,
 319-350, 404-411:
- Տէր-Պետրոսեան, Ասորիների - Լեւոն Յ. Տէր-Պետրոսեան, Ա-
 սորիների դերը հայկական Կիլիկիոյ մշակութային կեան-
 քում ԺԲ-ԺԳ դարերում, Վենետիկ 1989 [Հայագիտական
 մատենաշար «Բազմավէպ», թիւ 28]:
- Ըափալիս, Կեղծ Իսահակ - Մի հունարեն հակաճառական եր-
 կի վրացերեն թարգմանությունները (Կեղծ Իսահակի եր-
 կր), «Մրավարթավի», Մ, Թբիլիսի 1980, էջ 64-76 (վրացե-
 րեն):
- ՓԱԳ - Փարիզի ազգային գրադարան:

Φωφιαγյան, Կարվածագրեր - Մատենադարանի պատկերեն վավերագրերը, II, Կարվածագրեր, պրակ առաջին (ԺԴ - ԺԶ դդ.) / Կալմեց՝ Հ.Գ.Փափաղյան, Երևան, 1968:

Քասունի, Կիլիկիայի - Ծերուն-Երուանդ Հ.Քասունի, Կիլիկիոյ հայկական իշխանապետութիւնները Մերձաւոր Արեւելքի քաղաքական հորիզոնին մէջ (1080-1137), Պէրրոթ 1974:

Օրմանեան, Ազգապատում - Ազգապատում, Հայ, էջ 70քէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմութիւն / գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, նախկին պատրիարք, Կոստանդնուպոլիս 1912, հտ. Ա (նույնը՝ Պէրրոթ 1959):

AC -Anna Comnenæ Alexiadis, Libri XV / addidit Ludovicus Schopenus, vol I - II, Bonnæ 1839 - 1878.

Altaner, Précis - Berthold Altaner, Précis de Patrologie / adapté par H.Chirat, Casterman-Paris-Tournai 1961.

Adontz, Etudes - N.Adontz, Etudes armeno-byzantines, Lisboa 1965 [Bibliothèque arménienne de la fondation Caloust Gulbenkian].

Barzos, Genealogia - Κωνσταντίνος Βάρζος, Ἡ γενεαλογία τῶν Κομνηνῶν, τομ. Α' καὶ Β', Θεσσαλονικῆ 1984 [Ἐπισημασμένα Κείμενα καὶ μελέται 20Α, Β]

Bartikian, Buzantino - Hratch Bartikian, Բւջանտնո Կղերօրոճոյցի յոն ԿճԻԿԱ յո՞ Ղրմենոյ յոմԿո՞՞Մ Mkhitar Gos(†1213).- in: Եւջանտնո ԿԱԵ՞ յոն 12ո սճնոն. ԿանոնոԿո՞ Ե՞Կոնո, Կրճոտո Կճ Կոյնոնոն, ἂԿթնո, 1991, p. 239-259 [Ἐտարե՞նն Բւջանտնոն Կճ ԵտարԵւջանտնոն մե՞Ետոն, 3].

Bartikian, Relations - H.M.Bartikian, Les relations des églises de l'Arménie Cilicienne et de l'Empire Byzantin et leurs implications politiques, in: Actes du Colloque "Les Lusignans et l'Outre mer", Poitier-Lusignan 20-24 octobre 1993, Poitiers [1994], p. 47-53.

Bartikian, Religious - Hrac' M.Bart'ikian, The Religious Diplomacy of Byzantium in Armenia during the tenth and eleventh Centuries, in: Études Arméniennes in memoriam Haïg Berbérian / Digran Kouymjian editor, Lisboa, 1986, p. 55-62.

Barthold, Kars - W.Barthold- [C.J.Heywood], Kars, in: Encyclopédie de l'Islam, nouvelle édition, tome IV, Leyden-Paris, 1978, p. 696-699.

Baumstark, Geschichte - Geschichte der syrischen Literatur mit Ausschluß der christlich-palästinischen Texte / von Dr.Anton Baumstark, Bonn, 1922.

Beck, Kirche - Kirche und theologische Literatur im byzantinischen Reich / von Hans-George Beck, München, C.H.Bech'sche Verlagsbuchhandlung,

1959 [Byzantinisches Handbuch im Rahmen des Handbuchs der Altertumswissenschaft, zweiter Teil, Erster Band].

Bozoian, Bibliografie - Bibliographie zur Rezeption des byzantinischen Rechts im alten Rußland sowie zur Geschichte des armenischen und georgischen Rechts / Unter Mitwirkung von Azat Bozoian, Igor' Cicurov, Sulchan Goginava, Kirill Maksimovic und Jaroslav Scapov zusammengestellt von Ludwig Burgmann und Hubert Kaufhold, Frankfurt am Main, 1992, S. 91 - 187.

Bozoian, Documents - Azat Bozoian, Les documents juridiques du royaume Arménien de Cilicie, in: Actes du Colloque "Les Lusignans et l'Outremer", Poitiers-Lusignan 20-24 octobre 1993, Poitiers [1994], p. 54-58.

Cahen, Syrie - Claude Cahen, La Syrie du Nord à l'époque des croisades et la principauté Franque d'Antioche, Paris 1940 [Institut Français de Damas, Bibliothèque Orientale, tome I^{er}].

Chalandon, Les Comnènes - Jean II Comnène (1118-1143) et Manuel I Comnène (1143-1180) / par Ferdinand Chalandon, New York, Burt Franklin research & Source works series # 2, [Les Comnène. Études sur l'empire Byzantin au XI^e et au XII^e siècles, t. II (1 et 2)] (Originally published in Paris - Picard, 1912).

Charanis, The Armenians - P.Charanis, The Armenians in the Byzantine Empire, Lisboa 1963 (Caloust Gulbenkian Foundation Armenian Library).

Cheyne, Études - Jean-Claude Cheynet, Trois familles du duché d'Antioch, in: Études prosopographiques / par Jean-Claude Cheynet, Jean-François Vannier, Paris 1986 [Byzantina Sorbonensia, 5].

Christensen, L'Iran - L'Iran sous les Sassanides / par Arthur Christensen, Copenhague 1944.

Christianismes Orientaux - Micheline Albert, Robert Beylot, René-G.Coquin, Bernard Outtier, Charles Renoux, Christianismes Orientaux: Introduction à l'étude des langues et des littératures / Introduction par Antoine Guillaumont, Paris 1993.

Classen, Das Konzil - P.Classen, Das Konzil von Konstantinopel 1166 und die Lateiner.- Byzantinische Zeitschrift, Bd.48(1955), H.2, S.338-368.

Corpus Iuris Civilis - Novellae / Recognovit Rudolfus Schoell, opus Schollii morte interceptum absolvit Guilelmus Kroll, Berolini 1959 [Corpus Iuris Civilis, volumen tertium].

Darrouzès, Notitiae - Notitiae episcopatum ecclesiae Constantinopolitanae / texte critique, introduction et notes par Jean Darrouzès, Paris 1981.

Darrouzès, Trois - Jean Darrouzès, Trois documents de la controverse Gréco-Arménienne.-Revue des Études byzantines 48, 1990, p. 89-103.

- Dédeyan, Les Pouvoires - Dédeyan Gerard, Les Pouvoires Arméniens dans le Proche-Orient Méditerranéen (1068 - 1144), Paris, Université de Paris I Panteon-Sorbonne, 1990 (Thèse pour le Doctorat d'Etat).
- Dionisios - R.W.Tomson, The Armenian Version of the Works Attributed to Dionysius the Areopagite. Lovanii 1987 [Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 488 & 488].
- Dölger-Karayannopoulos, Byzantinische - Byzantinische Urkundenlehre, erster Abschnitt: die Kaiserurkunde / Franz Dölger und Johannes Karayannopoulos, München 1968 [Byzantinisches Handbuch im Rahmen des Handbuchs der Altertumswissenschaft. Dritter Teil. Erster Band. Erster Abschnitt].
- Dölger, Diplomatie - Byzantinische Diplomatie. 20 Aufsätze zum urkundenwesen der Byzantiner, Buch-Kunstverlag Ettel 1956.
- Dölger, Familie der Könige - Franz Dölger, Die "Familie der Könige" im Mittelalter, in: Franz Dölger, Byzanz und die europäische Staatenwelt (usgewählte Vorträge und Aufsätze), Buch-Kunstverlag Ettal 1953, S. 34-69.
- Dölger, Regesten - Regesten der Kaiserurkunden des oströmischen Reiches von 565 bis 1453 2 Teil, München-Berlin 1925 [Corpus der griechischen Urkunden des Mittelalters und der neueren Zeit, Reihe A, Abt. I].
- Dölger, Zur form - F.Dölger, Zur form des Auslandsschreibens der byzantinischen Kaiserkanzlei,- Зборник радова Бузантолошког института, кн.VIII₁ (Mélanges G.Ostrogorsky), Београд 1963, с.83-95.
- Dondaine, Contra - Antoine Dondaine, Contra Graecos.- In: Archivum fratrum praedicatorum. V. XXI (1951), pp. 352 - 357.
- Dulaurier, Histoire - Histoire dogmes, traditions et liturgie de l'Église Arménienne orientale.../ par M.Édouard Dulaurier, Paris, 1857², p. 39-53.
- Dvornik, Idea - The Idea of Apostolicity in Byzantium and the Legend of the Apostle Andrew / by Francis Dvornik, Cambridge 1958 (Dumbarton Oaks Studies, IV).
- EI - Encyclopédie de l'Islam, nouvelle édition, tome I et suiv., Leyde, Paris 1960 et suiv.
- Esbroek, Primauté - Michel van Esbroek, Primauté, patriarcats, catholicossats, autocéphalies en Orient, in: Il primato del vescovo di Roma nel primo Millennio: Ricerche e testimonienze, Città del Vaticano 1991 [Pontificio comitato di scienze storiche. Atti e documenti, 4].
- Esbroek, Rome - Michel van Esbroeck, Rome l'ancienne et Constantinople vues de l'Arménie.-La nozione di «Romano» tra civittadinanza e univer-

- salità [Atti del II seminario internazionale di studi storici "Da Roma alla terza Roma" 21-23 aprile 1982, Documenti e Studi, studi II].
- Eustathii**, Naratio - Eustathii Archiepiscopi de capta Thessalonica Narratio, in: Leonis Grammatici, Chronographia, ex recognitione Immanuelis Bekkeri, accedit Eustathii de capta Thessalonica Liber, Bonnae 1842, p. 366-512 [Corpus Scriptorum Historiae Byzantinae].
- Fink**, Kleine - F.N.Fink, Kleine mittelarmenische Texte.- In: Zeitschrift für armenische Philologie, Bd.I, H.3, 1902, S. 198-200.
- Garitte**, La source - Gérard Garitte, La source grecque des "Trente articles" géorgiens contre les arméniens, *Sl*, 1976, t.2 111-116:
- Georgii Cyprii Descriptio** - Georgii Cyprii Descriptio Orbis Romani Accedit Leonis imperatoris diatyposis genuina adhuc inedita / edidit Praefatus est Comentario instruxit Henricus Gelzer. Adiectae sunt Quatuor Tabulae Geographicae, Lipsiae in Aedibus B.G. Taubneri MDCCCXC (1890).
- Grotz**, Die Hauptkirche - Hans Grotz S.J., Die Hauptkirchen des Ostens von den Anfängen bis zum Konzil von Nikaia (325), Roma, Pont. Institutum Orientalium Studiorum, 1964 [Orientalia Christiana Analecta, 169].
- Grumel-Darrouzès** - Les registes des actes du patriarcat de Constantinople. Vol. I. Les Actes des Patriarches. Fasc. II et III, Les registes de 715 à 1206 / par Venance Grumel, Deuxième édition revue et corrigée par Jean Darrouzès.-Paris, 1989 [Le patriarcat Byzantin. Recherches de diplomatique, d'Histoire et de Géographie ecclésiastiques publiées par l'Institut Français d'Études Byzantines. Série I].
- Grumel**, La Chronologie- V. Grumel, La Chronologie, Paris 1958 [Traité d'Études Byzantines, I].
- Hecht**, Byzanz - Winfrid Hecht, Byzanz und die Armenier nach dem Tode Kaiser Manuel I.(1180-1196).- Byzantion, t. 37(1968), p. 60 -74.
- Hecht**, Die byzantinische - W.Hecht, Die byzantinische Aussenpolitik zur Zeit der letzten Komnenenkaiser (1180-1185), Neustadt-Aisch, 1967.
- Hild-Hellenkemper**, Kilikien - Kilikien und Isaurien / von Friedrich Hild und Hansgerd Hellenkemper, 1. und 2. Teil, Wien, 1990 [Österreichische Akademie der Wissenschaften, Philosophisch-historische Klasse, Denkschriften, 215. Band. Tabula Imperii Byzantini, Bd.5].
- Hunger**, Die hochsprachliche - Herbert Hunger, Die hochsprachliche profane Literatur der Byzantiner, I Bd., München 1978.
- Hunger**, Katalog - Katalog der griechischen Handschriften der Österreichischen Nationalbibliothek. Teil 3/3: Codices theologici 201-337/ von Herbert

Hunger und Wolfgang Lakner center mitarbeit von Christian Hannick, Wien 1991.

Hunger, PROOIMION - H.Hunger, PROOIMION: Elemente der byzantinischen Kaiseridee in den Arengen der Urkunden, Wien 1964 [Wiener byzantinische Studien. Band I].

Hunger, Register - Das Register des Patriarchats von Konstantinopel, 1 Teil, Edition und Übersetzung der Urkunden aus den Jahren 1315 - 1331 / Herausgegeben von Herbert Hunger und Otto Kresten, Wien 1981 [Corpus fontium historiae Byzantinae, vol. XIX / 1, Series Vindobonensis].

IC - Ioannis Cinnami Epitome rerum ab Ioanne et Alexio (sic) Comnenis Gestarum / Recensuit Augustus Meineke, Bonnæ 1836.

Inalcik, Erzurum - Halil Inalcik, Erzurum, in: EJ, t. II, p. 730-731.

Jaffé, Regesta - Jaffé Ph., Regesta Pontificum romanorum ab condita Ecclesia ad annum p. C. natum 1198, in der 2. Aufl. von W. Wattenbach-F.Kaltenbrunner-P.Evanld - S.Loewenfeld.- Berlin 1885/88, 2 Bände, photo-mech. Nachdr. Graz 1956.

Kane, The Jurisdiction- Kane Thomas A. The Jurisdiction of the Major Sees in Antiquity and in the Middle Ages, Washington 1949 [The Catholic University of America, Canon Law Studies N° 276].

Kawerau, Die Jakobitische - P.Kawerau, Die Jakobitische Kirche im Zeitalter der syrischen Renaissance, Berlin 1960.

Keshishian, The problem - Bishop Aram Keshishian, The problem of Church Unity in twelfth century. The correspondence of Nerses Shnorhali with Manuel Comnenus (1165-1173).- «Հասկ» հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ա. տարի, Անթիլիաս 1980, էջ 91-106:

Krumbacher, Geschichte - Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis zum ende des Oströmischen Reiches (527-1453) / von Karl Krumbacher, Zweite Auflage bearbeitet unter Mitwirkung von A. Ehrhard u. H.Gelzer, München 1897.

Langlois, Le tresor - Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens... / Recuellis, mis en ordre et publiés pour la première fois avec une introduction historique par Victor Langlois, Venise 1863.

Laurent, Le titre - V.Laurent, Le titre de patriarche oecuménique et la signature patriarcale (recherches de diplomatique et de sigillographie Byzantines).- Revue des Études Byzantines, t. VI (1948), fasc. I, p. 21-24.

Lilla, Codices - Codices Vaticani Graeci. codices 2162-2254 (Codices colymnenses) / Recensvit Salvator Lilla, In bibliotheca Vaticana MCMLXXV

- Lilie**, Die Schlacht - R.-J.Lilie, Die Schlacht von Myriocephalon (1176). Auswirkungen auf das byzantinische Reich im ausgehenden 12. Jahrhundert.-REB, t. 35, p. 257-275.
- Mazal**, Prooimien - Otto Mazal, Die Prooimien der byzantinischen Patriarchenurkunden, Wien 1974.
- Monachino**, Genesi - Monachino Vincenzo S.J. Genesi storica del Canone 28^o di Calcedonia. Gregorianum 33(1952).
- MS**, t. III - Chronique de Michel le Syrien, patriarche Jacobite d'Antioche (1166 -1199) / Éditée pour la première fois et traduite en français par J.-B.Chabot, t. III, Paris 1963².
- N.Ch.** - Nicetae Choniatae Historia / Recensuit Ioannes Aloysius van Dielen, Pars prior: Praefationem et textum continens, Pars altera: Indices continens, Berolini et Novi Eboraci, Apud Walter de Gruyter et Socios, 1975 [Corpus fontium Historiae Byzantinae. vol. XI/1-2, Series Berolinensis].
- Norden**, Das Papsttum - Das Papsttum und Byzanz. Die Trennung der beiden Mächte und das Problem ihrer Wiedervereinigung bis Untergange des byzantinischen Reichs (1453) / von Dr.Walter Norden, Berlin 1903.
- Palmiere**, La lettera - P.Aurelio Palmiere. La lettera del filosofo byzantino Teodoro e un testo polemico inedito di Niceta Pictoratus.- In: Bessarione (Roma 1912), pp. 8-14.
- Papadoupulos-Kerameus**, Anecdota -'Ο ἐν Κωνσταντινουπόλει Ἑλληνικὸς φιλολογικὸς. Ἀνέκδοτα ἑλληνικὰ συγγραμμάτια ἔγγραφα τε καὶ ἄλλα κείμενα κατ' ἐκλογὴν συλλεγόμενα ἐκ τῶν ἐν τῇ "Μαυρογορδατεῖῳ Βιβλιοθήκῃ" ἀναγραφομένων χειρογράφων καὶ νῦν πρῶτον ἐκδιδόμενα ὑπὸ Παπαδοπούλου τοῦ Κεραμέως, Ἐν Κωνσταντινουπόλει 1884.
- Patrum Nicaenorum Nomina** - Patrum Nicaenorum Nomina Latine, Graece, Coptice, Syriaece, Arabice, Armeniace. Sociata opera ediderunt Henricus Gelzer, Henricus Hilgenfeld, Otto Cuntz, Lipziae 1898.
- PG** - Patrologiae Cursus completus, Accurante J.-P.Migne, Series Graeca, tomus 130 & 133.
- Pothast**, Regesta - Pothast, Regesta pontificum Romanorum inde ab anno p. C.natum 1198 ad annum 1304, Berlin 1874/75, 2. Bände, photomech. Nachdr.Graz 1957.
- Quellen** - Quellen zur Geschichte des Kreuzzuges Kaiser Frederichs I. / herausgegeben von A.Chroust, Berlin 1964² [Monumenta Germaniae historica. Scriptores rerum Germanicarum, nova series, tomus V].

- Realencyclopédie - Paulis Realencyclopédie der classischen Altertumwissenschaft, neue bearb...., von Georg Wissowa, Bd. III₂, Stuttgart 1970, Bd. VIIA1 (1958).
- Ratzinger, Primat - Ratzinger J. Primat, Episkopat und Successio apostolica. In Karl Rahner - Joseph Ratzinger: Episkopat und Primat. Quaestiones disputatae 11 (Freiburg, Wien, Basel 1961).
- REB - Revue des Études Byzantines.
- Rösch, ONOMA - Gerhard Rösch, ONOMA ΒΑΣΙΛΕΙΑΣ, Studien zum offiziellen Gebrauch der Kaisertitel in spätantiker und frühbyzantinischer Zeit, Wien 1978 [Byzantina Vindobonensia, Bd. X].
- Serpos, Compedio - Compedio storico di memorie cronologiche concernenti la religione e la morale della nazione Armena suddita dell'Imperio Ottomano, Opera divisa in sei Libri e presentata alla sacra congregazione di propaganda / dal marchese Giovanni de Serpos, tomo secondo, Venezia, 1786.
- Spiteris, La Critica - Jannis Spiteris, La Critica Bizantina del Primato Romano nel secolo XII, Roma 1979.
- Staerk, Die Confessio - Dom Antonio Staerk, O.S.B., Die Confessio fidei Armenorum aus der Dubrowskischen Sammlung der Kaiserlichen Bibliothek zu St.Petersburg.- Византийский Временник, т. XIV, вып. 1(1907), СПб. 1908, с. 192-196.
- Tekeyan, Controverses - P.Pascal Tekeyan, Controverses Christologiques en Arméno-Cilicie dans la seconde moitié du XII^e siècle (1165-1198), Roma 1939 [Orientalia Christiana Analecta, 124].
- Ter-Mikelian, Die armenische - Die armenische Kirche in ihren Beziehungen zur byzantinischen (vom IV.bis zum XIII.Jahrhundert). Von Dr.Arsak Ter-Mikelian, Leipzig 1892.
- Tisserant, Codices - Codices Armeni Bibliothecae Vaticanae Borgiani, Vaticani, Barberiniani, Chisiani, Schedis Frederici Cornwallis Conybeare adhibitis / Recensvit Evgenivs Tisserant, Bibliothecae Vaticanae scriptor, Romae MCMXXVII (1927) [Bibliothecae Apostolicae Vaticanae, Codices many scripti recensiti].
- Treitinger, Die oströmische Kaiser - Otto Treitinger, Die oströmische Kaiser und Reichsidee nach ihrer Gestaltung im Hofischen Zeremoniell, Darmstadt 1969.
- Tournebize, Histoire - Histoire politique et religieuse de l'Arménie / par Fr. Tournebize, depuis les origines des Arméniens jusqu'à la mort de leur dernier roi (l'an 1393), Paris [1901].

- Wirth, Wann - P.Wirth, Wann wurde Kaiser Alexios II Komnenos geboren ? - BZ, Bd. 49[1956], S. 65 - 67.
- Vries, Orient - W.de Vries, Orient et Occident: les structures ecclésiastiques vues dans l'histoire des sept premiers conciles œcuméniques, Paris, 1974.
- Zekiyán, Nersès de Lambron - L.B.Zekiyán, Nersès de Lambron.- in: Diction. de Spiritualité, t. XI, p. 123-134.
- Zekiyán, The Armenian - B.L.Zekiyán, The Armenian Community of Philipopolis and the Bishop Ioannes Atmanos Imperial legat to Cilicia.- in: Between the Danibe and Caucasus / ed. by György Kara, Budapest, 1987, pp. 363-373.
- Zekiyán, St.Nerses - B.L.Zekiyán, St.Nerses Snorhali en dialogue avec les Grecs: un prophète de l'oecumenisme au XII^e siècle.- In: Études Arméniennes in memoriam Haïg Berbérian, Lisboa 1986, p. 861-883[Bibliothèque Arménienne de la Fondation Calouste Gulbenkian].
- Анна Комнина - Анна Комнина, Алексиада / Вступительная статья, перевод, комментарий Я.Н.Любарского, М. 1965.
- Аннинский, История - Александр Аннинский, История Армянской церкви (до XIX века), Кишинев 1900.
- Бартикян, К истории - Р.М.Бартикян, К истории взаимоотношений между Византией и киликийским армянским государством в конце XII в., Византийский Временник, том XVII, М.-Л. 1960, стр. 53-56.
- Бартикян, Об особенностях - Р.М.Бартикян, Об особенностях участия армян в правлении византийским и болгарским государствами в VIII-IX вв., в кн.: Культурное наследие Востока; проблемы, поиски, суждения, Ленинград 1985, с. 258-265.
- Бартикян, Неизданный - Р.М.Бартикян, Неизданный византийский документ о византино-армянских церковных взаимоотношениях в 1247-1248 гг., XVIII Международный конгресс византистов: Резюме сообщений, М. 1991, с. 109-110.
- Бартикян, О византийском - Р.М.Бартикян, О византийском клироторологии в Судебнике Мхитара Гоша и его армянском переводчике.- *ՊԲՀ*, 1989, № 3, с. 197 - 204.
- Бартикян, Роль - Рач Бартикян, Роль игумена Филиппопольского армянского монастыря Иоанна Атмана в армяно-византийских церковных переговорах при католикосе Нерсесе IV Благодатном (1166-1173).- «*Լրաբեր*» հասարակական գիտություններ, 1984, № 6, էջ 78-88: .

- Бозоян, Документы армяно-византийских церковных отношений XII века (императорские послания), XVIII Международный конгресс византинистов: Резюме сообщений, М. 1991, с. 166-167.
- Бозоян, Новый - А.Бозоян, Новый памятник Армяно-византийских церковно-политических и дипломатических сношений второй половины XII века, Кавказ и Византия, выпуск 4, Ереван 1984, с. 224-231.
- Каждан, Армяне - А.П.Каждан, Армяне в составе господствующего класса византийской империи в XI-XII вв., Ереван, 1975.
- Каждан, Социальный - Социальный состав господствующего класса Византии XI-XII вв., М. 1974.
- Марр, Аркаун - Н.Я.Марр, Арк'аун - монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, СПб., 1905 (Оттиск из XII тома № 1 и 2, „Византийского Временника„ 1905 г.).
- Меликсет-Бек, К вопросу - Л.М.Меликсет-Бек, К вопросу о датировке псевдоисаковских памфлетов в греко-византийской литературе.- Византийский Временник, т. VIII, М. 1956, с. 208 - 222.
- Н.Х.- Никета Хониат, История / Перевод под редакцией проф В. И.Долицкого. Т. I (1118 - 1185), СПб. 1860.
- Папазян, Указы - Персидские документы Матенадарана, 1, Указы / составил А.Д.Папазян, вып. I (XV - XVI вв.), Ереван 1956, вып. II (1600 - 1650 гг.), Ереван 1959.
- Сметанин, Эпистолагафия - Сметанин В.А., Эпистолагафия, Свердловск 1970.
- Троицкий, К вопросу - И.Троицкий, К вопросу о сближении Армянской церкви с Православной, „Христианские Чтения„ 1869, январь-май, 1870, октябрь.
- Троицкий, Изложение - Изложение веры церкви армянская, начертанное Нерсесом, католикосом армянским, по требованию Боголюбимого государя греков Мануила, СПб., 1875.
- Худобашев, Исторические - Исторические памятники верования армянской церкви, относящиеся к XII столетию / перевод с Армянского Александра Худобашева, СПб. 1847.
- Худобашев, Обзорение - Обзорение Армении, в географическом, историческом и литературном отношениях / собрал и составил А.Худобашев.- СПб. 1859.

ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Արրաբան 32,
Ագաթանգեղոս 196-197,
Աթանաս Ը 42,
Աթանաս Աղեքսանդրացի 77,156,
Ալեքսանյան Ա. 76,
Ալեքս Աքսուլյա 14,21,31,33-34,39,42,92,94-95,
97,6,140,155,167,
Ալեքս Ա. Կոմենենո 208,
Ալեքս Բ Կոմենենո 59,62,76,83-84,104,134-
135,154,
Ալեքս Գ Անգելոս 178,
Ալեքսանդր Մակեդոնացի 100,18,
Ալիշան Ղ. 25,40,42-43,131,149,26,183,6.
Ակակ 77,
Ալիմյան Ն. 133,135,172,179,189,40.
Աղեքսանդրիա 195,197-199,
Աղթամար 203,35,
Աղվանք 68,
Աղվանից կաթողիկոս 88,190,
Աղանյան Գ. 97,
Ամբրոսիոս 156,
Անանյան Գ. 130,15,
Անանյան Պ. 40,
Անարզաբա 89,171,29,190,
Անդրեաս 179-180,
Անդրոնիկոս Ա Կոմենենո 134-135,141,67,216-
217,
Անի 88-89,190,
Անիմսկի Ալ. 26,
Անկյուրիա 77,84,
Աննա Կոմենեն 208,211,
Անսբերտ 219,
Անտիոք 73,77,82,88-89,129,141,68,170,174,177,
190,192-205,
Աշնուշատ 89,190,
Ապամեա 89,190,
Ապողինար 32,151,
Առաջավորաց 33,45,
Ասկուտաս 131,7,
Ասորիք 68,89,164,
Աստվածաշունչ 15,64,77,
Ավգերյան Մ. 157-159,
Ավետիս 32,
Ավետիք Սկևռացի 187,
Ատրպատական 190,
Արեթաս (Թէտալիոս) Կեսարացի 170,179-
180,
Արիոս 84,185,15,
Արծրունիներ 8,
Արդուրյան Հ. 22,23,
Արմենիակոն 209,
Արշակունի 7,
Արուսյունյա-Ֆիդանյան Վ.208,
Արտաշիսյան 7,
Արցախ 133,
Բագրատունիներ 8,
Բակկանյան թերակղզի 28,165,203-221,
բաղարշ 45,
Բառնաբա առաքյալ 172,34,178,
Բարթիկյան Հր. 27,48,52-56,61,111,47, 208,211,
Բար Հերբեռն 66,91,1,150,34,167,
Բարծոս Կ. 154,
Բարձրաբերդ 131,7,
Բարոնիոս 18,
Բարսեղ Ա 12,14,
Բարսեղ Անցի, արքեպիսկոպոս 88,
Բարսեղ Կեսարացի 77,84,156,
Բարսեղ վարժապետ 170,
Բարսեղ Տփլիսցի, արքեպիսկոպոս 88,
Բենեդիկտոս 170,29,
Բզնունիք 89,191,
Բյուզանդիա (Հոռոմք) 8 և հետև.
բոգոմիլ 210,
Բուլղարիա 177,
Գալեմտերյան Ա 27,80,
գաղտնի թուղթ (μυστικὴ γράφη) 57,110,154,44,
Գանգրա 77,84,
Ս.Գեորգ եկեղեցի 178,189,39,
Գեորգ Բ Քսենֆիլինոս 178,
Գերամարտիկ Կլայեցի 180,
Գերմանիա 11,100,127,171,32,
գիմի 32,45,153,
Գրիգոր Բ Վկայասեր 136,
Գրիգոր Գ Պահլավունի 12,14,23,17,36,40,41,
92-93,131,136-137,
Գրիգոր Դ Տղա 11 և հետև.
Գրիգոր Զ Ապիրատ 149,26,178,60.

Գրիգոր Լամբրոնացի 170,
Գրիգոր Լուսավորիչ 64,69,77,88,119,
124,136,196,
Գրիգոր Մեծ պապ 170²⁹,
Գրիգոր Նազիանզացի 77,146¹⁷,148-149,156,
Գրիգոր Նյուսացի 77,84,156,
Գրիգոր Սկևռացի 186-187,
Գրիգոր Փիլիպոսյանցի 171,
Գրիգորի Վիզանտիոս 246⁵,
Գրիգորիոս Անտիոքացի, արքեպիսկոպոս 88,
Գրիգորյան Վ. 97,
Գրյունել Վ. 108,30-31,49,57,63,82,146,154⁴⁵,

Դանուբ 207,
Դավիթ Բաղիշեցի 11¹²,
Դարուցեզ Ժ. 82,
Դեռակորոս 66,
Դիոնիսիոս Արիոպագացի 77,156,190,199,
Դիստեն 206,
Դյուլորին Լ.Պ. 22,
Դյուլզեր Ֆր. 108,30-31,40,57,71,80,82,108-110,
Դյուլիսանյան Ա.Գ. 4,
Դուբրովսկի Պ. 38²¹,
Դվին 89,190,
Դրագարկ 170²⁷,

Եգիպտոս 90,
Եղեւիա 88-89,
Եղիշե 196¹³,
Ենոք Վահկացի 180,
Եպիփան Կիպրացի 156,170²⁸,176-177,
Եվթիմիոս Ջիզաբենոս 211,
Եվստաթիոս Թեսաղոնիկցի 216³⁵,
Եվտիքեն 52,66,84,151,185¹⁵,
Եվտիքենական 17,
Եվրոպա 9,112,
Երևան 133,186,
Երուսաղեմ 67,88,89,90,183,186,190,195-198,
Երրորդություն 52,
Եփեսոս 77,84,185¹⁵,196,
Եփրատ 85,174,
Եփրատյան գավառ 9,

Ջարևանդ 89,190,
Ջաքարիա 152,
Ջաքարիա կաթողիկոս 124⁶⁵,
Ջեննո 77,197,

Ջեքիլյան Լ. 27,30,39-40,42,59,63⁵⁵,106³²,
114,128³,145,154,160⁶⁰,166¹¹,208,211,
Ս.Ջորավար 187¹,

Էկլոզա 173,
Էջմիածին 9, 25,
Էսբրուկ վան Ս.193,199,
Թեոդոսիոս Բ Բորողիտեն 141,216,
Թեոդորոս Բար Վահբուն 150³⁴,168,172³⁵,
Թեորիանոս 3,12²¹,18-27,31,36,46-48,50-51,
53-66,68,71,90,92-94,96,105-108,110,111,115,
122,142-161,168-169,214,
Թեքելյան Պ. 27,183⁶,

թղթառաջը (protokoll) 6-7,29-126,
թղթավարտ (կամ թղթավերջ) 6-7,35-126,
Թոմսոն Ռ. 199¹⁹,
Թորոս Բ Ռուբինյան 13,19,20,137-138,140,
թուղթ,ուղերձ (ցրսֆի) 7-10,126
Թուրքերիզ Ֆ. 26,
Թրակիա 206,

Իկոնիա 12,73-74,77,80,90,139,169,174,190,
Ինոկենտիոս Բ 14²³,
Ինոկենտիոս Դ 37,
Իսաբան Անգելոս 111-112,178⁵⁷,217,
Իսաբան Գեղամացի 160-161,
Իսաբան եպիսկոպոս 149,
Իտալական պատերազմ 11,

Լամբրոն 127,
Լանգլուա Վ. 31,
Լաողիկիա 77,84,89,190,
Լամբրոն 12,13¹⁷,20,21,138,
Լեհաստան 38,
Լեմբերգ 38,
Լորան Վ. 123⁶⁴,
Լուսիոս Գ 171,215-217,219,
Լոն Ա պապ 77,198,
Լոն Ռուբինյան (թագավոր) 127-128,130¹⁵,
171³²,188-189

խաչ 32,45,
խաչակիրներ 8,165,
խաչեցար 32,45,
Խարիտոն Եվգենիոսեն 141
Խոսրով 206,

Խոտաբաշև Ալ. 23,24,

Մնունդ 32,45,152,

Մոխր 89,191,

կաթոլիկ եկեղեցի (Հոմի, պապական) 9,12,
18,129,129,163,

կաթողիկոս Հայոց Մեծազ 88,
կանոն 6,

կապաղովկիա 13,7,88-89,190,

կարալանդուլուս Հ. 108,108,110,

կարապետյան 37,18,

կարին (Թեոդոսուպոլիս) 89,190,

կարս 190,

կեսարիա 77,84,88-89,185,190,196,200,

կիլամ 170,

կիլիկիա 7 և հոս.

կիպրոս 12,89,164,177-178,190,

կիրակոս Գանձակեցի 33,36,151,39,

կղեմես Գ. 171,220,

կղեմես Գալանոս 19-22,26-27,146,149,160,

կյուրեղ Աղեքսանդրացի 67,77,103,30,151,156,

կոզյան Լ. 27,

կոկիսոն 89,190,

կոստանդին Ա Բարձրաբերդի 36-38,

կոստանդին Հերապոլսեցի 49,33,73-74,82,

90,105,168-171,173-180,

կոստանդին Ուոհայեցի 180,

կոստանդին Պանտելևս 219,42,

կոստանդնուպոլիս (Նոր Հոմ) 11 և այլն:

Հալեպ 11,12,12,190,

հակոբիկ-ասորի 10,11,18,42,91,129,133,162-

164,167-168,191,

Հայաստան (հյուսիսային) 52,129-130,137,

Հայք 13,52,

Հաղբատ 129,133,190,

Հայկագունի 13,17,

Հայամավորք 18,

Հեթում Օշինյան (Հեղի) 130-131,189,39,

Հեթում Ա. 37,17,

Հեյտո վ. 208,211,216,219,42,

Ռենեստիկոն 77,197,

Հենրի Գ. 38,

Հեր 89,190,

Հերակ Ա. 100,18,197,

Հերապոլիս (Մմբեշ) 49,33,73,80,168,174-175,
180,

Հյուսիսային Ասորիք 13-15,17-18,89,129,131,

164,168,177-178,181,211,

Հովհան Դամասկացի 34,15,

Հովհաննես Աթման (Ութման) 47-48,50,58,

61-62,68,90,96,105,115,143, 147,168-169,211-

215,

Հովհաննես Ապոկալիկոս 123,24,

Հովհաննես Դրասխանակերտցի 201,

Հովհաննես Կեսարացի, արքեպիսկոպոս 88,

Հովհաննես Կիննամոս 13,

Հովհաննես Ոսկեբերան 156,

Հովհաննես Չմշկիկ 209,

Հովհաննես Քեսուցի 149,168

Հովհաննես Օձնեցի 77,85,145,156-159,

Հովհաննոս Հայտնություն 170,28,179-180,

Հովսեփ Փլաբիոս 156,

Հուսիկ 22,51,178-180,

Հուստինոս 156,

Հուստինիանոս 99,14,198,

Հոմ 8-14,17,29,36-37,42,51,90,109,112-113,

123,162-164,166,171,193,195, 196,211,216,

Հոմսկա 10 և այլն:

Հոմսկայի ժողով 19-22,25,85,87-89,121,127,

175-176,182-191,

Ղազար Փարպեցի 196,13,

Ղին Արսլան 11,80,169,

Ղուկաս ավետարանիչ 152,

Ղուկաս Խրիստորեզես 140,66,

Մաթևոսյան Ա. 131,16,

Մակեդոն 84,185,15,

Մամեստիա 34,89,94,190,

Մանգակերտ 89,190,

Մանուել Ա Կոմնենոս 10 և այլն:

Մանուել Բ պատրիարք 36-37,

մաշտոց 171,32,

Մաշտոց Եղվարդեցի 200-201,

Մարգարյան Հ.Գ. 28,216,

Մացալ Օ. 126,68,

Մելիտեն 89,139,190,

Մելիք Շահ 12,14,

Մեծ Հայք 89,183,189,207,

Մեծ Պահր 85,139,61,184-185,

մեռոն 32,152,

Մերձավոր Արևելք 7,12,28,129,164-165-166,
172,189,203,
Միջագետք 164,
Միջերկրական ծով 12,
Միջերկրայք 12,
Միրիոկենֆալոն 12,74,78,80,90,139,166,174,
Միջբլել Ասորի 11,12,25,42,66,91,133,27,149-
150,160,62,166-169,
Միջբլել Ա. Ռանգարե 100,
Միջբլել Գ. Անքիալու 10-11,21,63,69,80,85-
87,91,106,109-110,116-117, 120,122-123,131,
140-142,155-156,169,174,180,182,184,185,
204,211,
Միջբլել թարգմանիչ 59,169,
Մլեհ Ռուբինյան (1169-1176) 11,12,
Մխիթար Գոշ 19,201,
Մխիթար Սկևռացի 201,
Մխիթարյանց Ա. 25,184,
Մկրտություն 32,45,152,
Մյունստեր 171,32,
Մնացականյան Ա. 30,
Մովսես Դապխուրանցի 201,
Մովսես Խորենացի 5,196,
Մորիկ 206,
մուտք (proximity) 35,41,
Մուրադյան Պ.Մ. 28,201,211,

Նաթանայելյան 1317,
Նալբանդյան Մ. 23,
Նախնական 89,190,
ճամակ 6,108-110,
Նեղոս Դոքսապատո 170,28,176-177,
Նեոկեսարիա 77,84,89,190,
Նեստոր 52,78,84,151,185,15,197,
ճեստորական 17,164,
Ներսես Ա 196,200,
Ներսես Դ Շնորհալի 12 և հոև.
Ներսես Լամբրոնացի 17 և հոև.
Ներսես քահանա 186,
Նիկեոսա Խոնփառես 13,141,67,216-219,
Նիկիա 77,84,156-157,185,15,195,
Նուպակտ 123,64,
ճոտարատուն (ճոտարական գրասենյակ, դի-
վանատուն, դպրատուն) 5-10,33-126,
Նոր կտակարան 5,97,
Նոյր աղ-Դիմ 11,12,
Նփրկերտ 89,190,

Շաբո ժ.Պ. 91,
Շելյենի Կ. 53,

Ուլունոյան Գ. 3720,
ուղերձ 6,
Ուսպենսկի Պ. 2465,

Չամչյանց Մ. 19-23,147,19,

Պալճյան Ս. 25,53,55,49,146,18,183,6,
Պաղեստին 139,60,
Պանփիլիա 189,39,
Պապետոն 13,17,
պավլիկյանցներ 207,209,
Պատարագի մեկնություն 172,33,175, 187,
պատկերամարտություն 45,
Պարսամյան Խ. 28
Պարսկաստան (մաս Սասանյան) 89, 100,190,
195-196,
Պետրիժիոն 214,
Պետրոս առաքյալ 13,194,
Պետրոս 77,
Պետրոս Սափիրացի 149,168,
Պողոս առաքյալ 97,128,129,8,138,
Պողոսի վանք 170,29,
Պողոս Հավկազն 17,
Պողոս Շամշտացի (Սամոսատցի) 84, 185,15,
Պողոս Տարոնացի 201,
Պորփյուր 77,
Պոական 1317,

Ռոմեր 176,
Ռուբինյանցներ 12-14,18,129,
Ռուսիա, Ռուսաստան 23-25,

Սալմաստ 89,190,
Ս.Սահակ 179-180,
Սահակ եպիսկոպոս 55,168,
Սահակ Նրոսաղենացի, արքեպիսկոպոս 88,
Սաղմոս Դավթի 64,125
Սամոսատ 89,191,
Սանահին 129,133,
Սանկտ Պետերբուրգ 38,
Սարգիս 33,45,
Սարգսյան Ա.193,
Սարգսյան Գ.Ն. 74,

Սարդիկե 77,84,
Սափիր 149,
Սեբաստիա 89,190,
Սեբեոս 196,206,
Սելեֆկ 17132,
Սելևկիա 89,190,
Սերպոս դը Զիովանի 22,
Սեւերիանոս 66,
Սև (Սուրբ) լեռ 183,
Սիմանկլա 17129,
Սիմեոն Պղնձաճանցեցի 3415,
Սիս 9,
Սիցիլիա 176,
Սկևոս 187,
Սմբատ Գերբիցի 14,39-40,42-44,151,167,
Սմբատ պատմագիր (Սպարապետ) 1317,20,
Սմբատ Պապետոցի 1317,
Սյունիք 8,88-89,190,
Սողոմոն 75,
Ս.Սոփիա 147,
Ստեփանոս վարդապետ 55,149,168,
Ստեփանոս Եղեւիացի 88,
Ստեփանոս եպիսկոպոս 1112,
Ստեփանոս, կաթողիկոս Աղվանից 88,
Ստեփանոս Ղուկասյան 160,
Ստեփանոս Սյունեցի 199,
Ստեփանոս Օրբելյան 201,

Վազգեն Ա 187,
Վասիլ Բարձրաբերդցի 1317,
վավերագիր (փաստաթուղթ, թուղթ) 5-10,29-
126
Վատիկան 37,172,186,
Վարդան Այգեկցի 19,
Վարդան Արևելցի 3717,211,217,
Վարդան վարդապետ 149,168,
Վենետիկ 1116,
Վիեննա 25,
Վիրտ Պ. 15443,
Վրաստան, վրաց 33-34,88-89,
Վրախամյաններ (Վահրամյաններ) 50,53-56,
96,
Վրաստան 190,

Տավրոս 18939,
Տարոն 89,190,

Տարսոն 12,18,20,88-89,109,128,129,10,135,139,
143,170-171,174,175,1835,189-190,
Տարսոնի ժողով 1939,1836,18838,
Տեր Հակոբյան 28
Տեր-Միքելյան Արշ. 26,40,93-94,
Տերին 1317,
Տիգրան Պոականցի 1317,
Տիեզերական եկեղեցի 16,
Տիմանչ լիկաթ 37,
Տիմոթեոս 97,
Տիմոթեոս Կուզ 66,
տիտղոսներ(ինքնակալ, ծիրանածին և այլն)
99-103,112,123,140,155,
տոմար 4,77,198,
Տրոիցկի Ի. 23,24,26,
Տփխիս 88-89,190,

Փավատոս Բուզանդ 3,196,
Փարիզ 40,133,18623,
Փիլարտոս Վարաժճունի 53
Փիլիպոսպոլիս (Պոլվիկ) 1627,48,50,90,96,
143,165,171,178,206-221,
Փոտ 12465,200,
Փոքր Ասիա 90,129,164,178,203,
Փոքր Հայք 89,207,

Քաղկեդոնի ժողով 16,27,55-56,58,77,144,156-
157,18515,197-198,210,
քաղկեդոնականներ 129,207,
Քեշիշյան Ա. 27,42,
Քեսուն 146,149,168,
Քիոս 2462,

Օշին Հեթումյան 1317,19,20,21,128,137-138,
օրթոդոքս (բյուզանդական եկեղեցի) 18,48,
12911,130,163,165,167,173,
Օրմանյան Մ. 27,42,149,1836,185,18835,

Ֆինկ Ֆ.Ն. 177,
ֆրանկ 176,
Ֆրիդրիխ Բարբարոսս 11,90,127,17132,218,

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	(5 - 28)
<i>Մասն Ա.</i>	
<i>1165 - 1178 թթ. Հայ-բյուզանդական բանակցությունների վավերագրերը</i>	
<i>գլուխ առաջին.</i>	
Փոխանակված փաստաթղթերի նկարագրություն.....	(29 - 90)
<i>գլուխ երկրորդ.</i>	
Վավերագրերի ձևաբանական վերլուծություն	(91 - 126)
<i>Մասն Բ.</i>	
<i>Հայերեն և Հունարեն ժողովածուները, մասնակիցներն ու թարգմանիչները</i>	
<i>գլուխ առաջին.</i>	
Վավերագրերի հայերեն ժողովածուն և նրա կազմողը.....	(127 - 141)
<i>գլուխ երկրորդ.</i>	
Վավերագրերի հունարեն ժողովածուն.....	(142 - 161)
<i>գլուխ երրորդ.</i>	
Բանակցությունների մասնակիցներն ու վավերագրերի թարգմանիչները.....	(162 - 181)
<i>Մասն Գ.</i>	
<i>Հռոմկլայի ժողովն ու բանակցությունների գերխնդիրը</i>	
<i>գլուխ առաջին.</i>	
Հռոմկլայի եկեղեցական ժողովը և ՊԽՄ ժողովածու չտած նրա վավերագրերը	(182 - 191)
<i>գլուխ երկրորդ.</i>	
Անտիոքի պատրիարքական աթոռի հարցը ԺԲ դարի հայ-բյուզանդական բանակցություններում.....	(192 - 205)
<i>գլուխ երրորդ.</i>	
Փիլիպուպոլսի հայկական բնակչությունը և հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունները ԺԲ դարի երկրորդ կեսին	(206 - 221)
Վերջաբան	(222 - 224)
Summary	(225 - 233)
Գրականության ցանկ.....	(234 - 250)
Հատուկ անունների և տերմինների ցանկ.....	(251 - 255)

380 pp

A ii
83818